# ԷՋՄԻԱԾԻՆ



Բ-Գ
2004

ДУБЛЕТ

Կ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Академии наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Փետրուար - Մարտ
2004

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի Հանրապետության նախագահ Միխայիլ Սահակաշվիլու այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին . . . . . . . . . . . . . . . . . . 3
ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - ԱՊՀ երկրների միջկրոնական խաղաղարարական ներկայացուցչական երկրորդ համաժողովը . . . . . . 5

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գերաշնորհ Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . 15
Հայրապետական գնահատություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 17
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առիթով . . . . . . . . . . 19
Հայրապետական օրհնություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 20
Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյան . . . . . . . . . . . . . . . . . . . . 21
Տ. Առնե աբեղա Շահինյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 22
Տ. Աբգար աբեղա Հովակիմյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 23

*Կանադայում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության առանձին թեմ ստեղծելու Անթիլիասի հակականոնական որոշման առիթով*

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերուն կողմէ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 24
Բաժանումի նոր քայլ Գանատահայոց թեմէն ներս . . . . . . . . . . . 25

Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . . 27
Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ի հիշատակ Սումգայիթյան ոճրագործության զոհերի . . . . . . . . . . . . . . 28

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Նարեկ աբեղա Ավագյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին . . . . . . . . . . . 30
Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին . . . . . . . . . . . . 32

Տ. Պարնփ վարդապետ Սարգսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Տյառնընդառաջի տոնին մատուցված Ս. Պատարագին . 35
Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ղևոնդյանց տոնին . . . . . . . . . . . . . . . . . . . . 38
Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Վարդանանց տոնին . . . . . . . . . . . . . . . . . . 41
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Բուն Բարեկենդանի տոնին . . . . . . . . . . . . . . . 44
Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Արտաքսման Կիրակիին մատուցված Ս. Պատարագին . 47
Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Անառակի կիրակիին մատուցված Ս. Պատարագին . . . 51
Տ. Պարնփ վարդապետ Սարգսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Տնտեսի կիրակիին մատուցված Ս. Պատարագին . . . . 54
Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Դատավորի կիրակիին մատուցված Ս. Պատարագին . . 57
Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին . . . . . . . . . . . . . . . . 59

## ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ** - Ներփառիոս Կ. Պոլսեցու՝ Ս. Ստեփաննոս Նախավկային նվիրված ներբողի հայերեն թարգմանությունը . . . . . . . 63
**ՆԵՔՏԱՌԻՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ** - Երանելոյն Նեքտառոսի եպիսկոպոսի բանս ներբողականս ի մեծապատիւ սարկաւագն եւ առաջին վկայն Քրիստոսի Սուրբն Ստեփաննոս . . . . . . . . . . . . . . . . . . 65
**ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ** - Հայ կանոնական մտքի մի վառ դրսևորում Գրիգոր Նարեկացու միջավայրում . . . . . . . . . . . . . . . . . . . . . 77
Խրատք հայր Յակոբա Ծպատեցւոյ իմաստասէր գիտնաւորի ընդդէմ Խոսրովա իմացմանցն . . . . . . . . . . . . . . . . . . . . . 89
**ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ** - Ստեփանոս եպիսկոպոս Յակովբացի, մականուն Տիրացու, ԺԲ. դար . . . . . . . . . . . . . . . . . . . . 101
**ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Մի դրվագ Կիլիկիայի Հայկական Թագավորության անկման նախօրյակի պատմությունից . . . . . . . . . 128
**Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Գրաբարը միջին և հաջորդող դարերում . . . . . . 134
**ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱԼՈՅԱՆ** - 1800 թվականի կաթողիկոսական ընտրությունները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 140
**ՀԵՆՐԻԿ ՄՈՔՈՅԱՆ** - Հոգևոր և բարոյական արժեքները և անձնային Ես-ի ինքնամբողջացումը . . . . . . . . . . . . . . . . . . 157

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ս. Ղևոնդյանց քահանայից տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . . 164
Ս. Վարդանանց տոնը և քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում . 165
Տ. Կտրիճ քահանա Դևեճյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 166
Տ. Շահան քահանա Մովսիսյան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 167
Տ. Տաճատ ծայրագույն վարդապետ Յարտմյան . . . . . . . . . . . . . . . . 169
Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Մոսկվայի Ս. Հարություն և
Ս. Խաչ եկեղեցիներ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 170
Ս. Սարգիս Զորավարի տոնին Վեհափառ Հայրապետը,
հանդիպեց երիտասարդների հետ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 172
ՀԱՅԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ - Հուշ երեկո՝ նվիրված Վարդանանց
հիշատակին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 172
Հայոց բանակի հոգևոր ծառայության ղեկավարը մասնակցեց
հոգևոր սպասավորների առաջնորդների միջազգային կոնֆերանսին . . 175
Մարտի 8-ին Մայր Աթոռի՝ բրեակատարողական հիմնարկների հոգևոր
ծառայությունը շնորհավորեց ազատազրկման մեջ գտնվող կանանց . . 175

Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս
Քահանայական ձեռնադրութիւն Ռիչմընտի մէջ . . . . . . . . . . . . . . . 176
Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի հանդիպումը Յունաց
Տիեզերական Պատրիարքին հետ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 178
Հիմնարկէք Շարլօթի հայ համայնքի նոր եկեղեցւոյ . . . . . . . . . . . . . 179

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում
Ռումինիայի Հանրապետության դեսպան Նիկոլաե Իորդակեին . . . . . 180
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Հայաստանում
Լեհաստանի Հանրապետության դեսպան Վիկտոր Ռոսսին . . . . . . . . 181
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Վլադիմիր Պրյախինին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 181
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռոստովի
նահանգապետի գլխավորած պատվիրակությանը . . . . . . . . . . . . . . 182
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի
Իսլամական Հանրապետության տեղեկատվության նախարարին . . . . 182
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
շախմատի աշխարհի 10-րդ չեմպիոն Բորիս Սպասսկուն . . . . . . . . . 183
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Վրաստանի դեսպանին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 183

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Հունգարիայի դեսպանին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 184
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Բուլղարիայի արտաքին գործերի նախարար,
ԵԱՀԿ գործող նախագահ Սողոմոն Պասսիին . . . . . . . . . . . . . . . 184
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
«Վնեշտորգբանկի» վարչության նախագահ Անդրեյ Կոստինին . . . . . 185

Հանգիստ Տ. Մանուել վարդապետ Երկաթյանի . . . . . . . . . . . . . . 186
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Կյանքից հեռացավ հայ
ձեռագրագիտության նահապետը . . . . . . . . . . . . . . . . . . . 187

Եկեղեցական բնմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 189

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . 192
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . . . . . 196

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



# ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻԽԱՅԻԼ ՍԱՀԱԿԱՇՎԻԼՈՒ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Մարտի 13-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց պետական-պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Վրաստանի Հանրապետության նախագահ Միխայիլ Սահակաշվիլուն:

Ողջունելով Վրաստանի Հանրապետության նախագահի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետը շնորհավորեց Միխայիլ Սահակաշվիլուն նախագահ ընտրվելու կապակցությամբ՝ մաղթելով, որ Աստծո օգնականությամբ նա իր ծառայությունը բերի բարեկաշտ վրաց ժողովրդին:

«Մենք շահագրգիռ ենք, որ Վրաստանը և աստվածասեր վրաց ժողովուրդն ապրեն խաղաղ, բարգավաճ և բարօր կյանքով, քանզի փոխկապակցված է մեր երկու ժողովուրդների կյանքը»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայ Առաքելական Եկեղեցու և Վրաց Ուղղափառ Եկեղեցու միջև առկա հարաբերություններին, ինչպես նաև՝ Վիրահայոց թեմին ու վրացահայությանը հուզող խնդիրներին:

Վրաստանի Հանրապետության նախագահ Միխայիլ Սահակաշվիլին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին ջերմ ընդունելության համար և Կաթողիկոսին փոխանցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի եղբայրական ողջույնն ու բարեմաղթանքը: Նախագահն անդրադարձավ նաև երկու հանրապետություններին հուզող խնդիրներին և հույս հայտնեց, որ դարերի փորձությունն անցած բարեկամության և համագործակցության շնորհիվ հնարավոր կլինի բարեկեցիկ կյանք ապահովել հայ և վրաց ժողովուրդների համար:

«Ես խորին հարգանք եմ տածում Ձերդ Սրբության և Հայ Եկեղեցու հանդեպ և, որպես Վրաստանի Հանրապետության նախագահ, ամեն ինչ պիտի անեմ մեր երկու եղբայրական ժողովուրդների և Եկեղեցիների միջև առկա հարաբերություններն առավել զորացնելու և ամրապնդելու համար»,- նշեց Վրաստանի Հանրապետության նախագահը:

Հանդիպման ավարտին Վրաստանի նախագահը դիտեց Վեհարանի թանգարանում պահվող հոգևոր արժեքներն ու արվեստի գործերը և մոմ վառեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարում:

Հանդիպմանը մասնակցում էին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը, ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, Վրաստանում ՀՀ դեսպան Գեորգի Խոսրոևը, Ջավախքում Վրաստանի նախագահի ներկայացուցիչ Նիկոլոզ Նիկոլոզիշվիլին, Վրաստանի կառավարության անդամներ և պատգամավորներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԵՀԱՐԱՆՈՒՄ, 1308 Թ. ԳԵՂԱՐԴԵԱՆ ԽԱՉՔԱՐԻ ՄՈՏ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԻԱԾՆԱԷՋ ՍՐԲԱՎԱՅՐՈՒՄ

# ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(2-4 մարտի 2004 թ.)

Մարտի 2-ի առավոտյան Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքում, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի նախագահությամբ, աշխատանքներն սկսեց ԱՊՀ երկրների երկրորդ միջկրոնական խաղաղարարական ներկայացուցչական ժողովը, որին մասնակցում էին համագործակցության երկրներից ավելի քան 300 կրոնական՝ քրիստոնյա, հրեա, մահմեդական և բուդդայական հոգևոր առաջնորդներ ու պետական այրեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռի պատվիրակության կազմում էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի և Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ տիար Ռաֆայել Պապայանը, ՀՀ արտաքին գործոց նախարարի օգնական տիար Կարեն Նազարյանը և ԱԺ պատգամավոր տիար Լևոն Մկրտչյանը:

Միջկրոնական խաղաղարարական ժողովի սկզբում բացման և ողջույնի խոսք ասաց Մոսկվայի և Համայն Ռուսիայի Ալեքսի Բ Պատրիարքը:

## ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ Բ-Ի ԽՈՍՔԸ

*Մեծարգո բարձրաստիճան ներկայացուցիչներ ԱՊՀ երկրների իշխանությունների, Ձերդ Սրբություններ, ԱՊՀ երկրների կրոնական կազմակերպությունների մեծարգո նախագահներ և ներկայացուցիչներ, հարգելի մասնակիցներ,*

*Ողջունում եմ ձեզ Մոսկովյան օրհնյալ հողում, որ երկրորդ անգամ է ընդունում ԱՊՀ երկրների ավանդական կրոնական առաջնորդների այս բարձր հավաքի մասնակիցներին:*

*Առաջին միջկրոնական խաղաղարարական ժողովը, որ տեղի է ունեցել այստեղ 2000 թ. նոյեմբերին, ակնհայտորեն ցույց տվեց, որ այն բարեկամական փոխհարաբերությունները, որ մարտնչող անաստվածության տարիներին ձևավորվել էին կրոնական առաջնորդների միջև, փորձության ենթարկվեցին ԽՍՀՄ-ի անկումով, ժողովուրդների միջև եղբայրասպան հակամարտություններով, հա-*

*սարակության աճող բարոյական անկումով: Միջկրոնական կապերի ավանդույթները ոչ միայն պահպանվել են, այլև բազմապատկվել՝ հարստանալով երկխոսության և համագործակցության նոր ձևերով: ԱՊՀ շատ երկրներում առաջատար կրոնական համայնքների միջև փոխըմբռնման մակարդակը մոտ է իդեալականին: Պետական և տարածաշրջանային մակարդակներում ստեղծվել են մշտապես գործող միջկրոնական կառույցներ, որոնցից ամենահեղինակավորը դարձել է Ռուսաստանի միջկրոնական խորհուրդը:*

*Անշուշտ, մտավախություն կար, որ միջկրոնական երկխոսության զարգացումը կարող էր հանգեցնել կրոնական սինկրետիզմի և դավանաբանության վերանայման, հոգևոր ավանդույթների միջև եղած սահմանների ջնջման: Բայց ժամանակը ցույց տվեց, որ կրոնների համագործակցության խելամիտ համակարգը պահպանում և ընդգծում է նրանցից յուրաքանչյուրի եզակիությունն ու յուրօրինակությունը: Դեռ ավելին, մեր կողմից ընդունված միջկրոնական երկխոսության ձևը լուրջ արգելք հանդիսացավ որոշ համաշխարհային գերկրոնների ստեղծմանն ուղղված մեքենայությունների համար:*

*Անցած տարիների ընթացքում ավանդական կրոնների առաջնորդները միասին արձագանքեցին շատ հրատապ մարտահրավերների և հիմնախնդիրների՝ իրենց հետևորդներին խաղաղության և համերաշխության կոչ անելով: Նրանց համաձայնեցված խաղաղարարական դիրքորոշումը, որն ուղղափառ քրիստոնյաների, մուսուլմանների, հրեաների և բուդդայականների բազմադարյա բարեկամության արդյունքն էր, օգնեց խուսափելու շատ վեճերից, թույլ չտվեց, որ ազգամիջյան կոնֆլիկտները վերաճեն միջկրոնականի, սահմանափակեց քայքայիչ կեղծ-կրոնական ուղղությունների տարածումը: Այժմ մենք միասին աջակցում ենք կրոնների, պետության և հասարակության միջև հարաբերությունների լավագույն համակարգի որոնմանը, նպաստում ենք մեր ժողովուրդների բարոյական վերածննդին, դիմակայում նոր ժամանակների մարտահրավերներին: «Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ տալ» (Մատթ. Է 18),- ասում է Հիսուս Փրկիչը: Տեսնելով միջկրոնական երկխոսության նշանակալի օգտակարությունը՝ մենք իրավունք ունենք այն համարելու լավ ծառ՝ բարի պտուղներով:*

*Երբեմն ԱՊՀ երկրներին մեղադրում են ոչ բավարար ազատության և ժողովրդավարության մեջ, փորձում են սովորեցնել նրանց, թե ինչպես ձևավորել հարաբերություններ կրոնների և դավանանքների միջև՝ կարծես մոռանալով, որ աշխարհի հենց մեր տարածաշրջանում է, որ կրոնական պատերազմներ չեն եղել, այլ ընդհակառակը, ձեռք է բերվել կրոնների և մշակույթների ներդաշնակ համագործակցության եզակի փորձառություն: Աշխարհում որևէ այլ տեղ հոգևոր առաջնորդների կողմից իրագործվող միջկրոնական համագործակցությունն այդքան ուշադրության չի արժանանում և աջակցություն չի ստանում աշխարհիկ իշխանությունների և զանգվածային լրատվամիջոցների կողմից: Այժմ մենք ականատես ենք դառնում այն փաստի, թե երկխոսության շնորհիվ կրոնական բազ-*

*մազանություն ինչպես է դառնում կարևոր գործոն ոչ թե բաժանման, այլ պետությունների մերձեցման համար: Վկայում եմ, որ այդ եզակի փորձառությունը պետք է կիրառվի մնացյալ աշխարհում, եթե այն ցանկանում է խուսափել ցիրքալ հակամարտություններից:*

*Վստահ եմ, որ մեր համատեղ ջանքերը կզարգանան և կծառայեն մարդկանց բարօրությանը: Կցանկանայի Ֆորումի բոլոր մասնակիցներին մաղթել արդյունավետ աշխատանք և հաջողություն բոլոր բարի գործերում:*

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

*Ողջունում եմ երկրորդ միջկրոնական խաղաղարարական համաժողովի մասնակիցներին:*

*Այսօր, երբ միջազգային հանրությունը բախվում է ծայրահեղականության դրսևորումների և իրենց անարդար նպատակներին հասնելու համար կրոնն օգտագործելու փորձերի հետ, հատկապես կարևոր է հեղինակավոր կրոնական գործիչների ձայնը՝ ի պաշտպանություն խաղաղության և մարդկային կյանքի:*

*Մեծ հարգանքի են արժանի ԱՊՀ երկրների կրոնական կազմակերպությունների ջանքերը՝ պահպանել և բազմապատկել տարբեր ազգությունների և դավանանքների պատկանող մարդկանց բարիդրացիական հարաբերությունների ավանդույթները:*

*Հուսով եմ, որ Ձեր համատեղ ջանքերն այսուհետև ևս կծառայեն հասարակական համերաշխության, ժողովուրդների միջև համագործակցության զարգացման ամրապնդմանը: Համաժողովին մաղթում եմ արդյունավետ աշխատանք, իսկ մասնակիցներին՝ ամենայն բարիք:*

Առաջին լիագումար նիստի ընթացքում խոսք ասաց և Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

*Ձերդ Սրբություն, Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Ալեքսի Բ Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսիայի,*

*Մեծարգո Նախագահ Ռուսաստանի Դաշնության Պրն Պուտին,*

*Բարձրաշնորհ Առաջնորդներ, կրոնական և հասարակական կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ, Համագործակցության երկրների պատվարժան պետական այրեր.*

*Որպես առաջին սպասավորը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, հանուն հայ հավատացյալ ժողովրդի ողջունում ենք միջկրոնական համաժողովի բոլոր մասնակիցներին:*

*Գոհություն ենք մատուցում Բարձրյալին, Ով Տերն է երկրի ու երկնի, որ համախմբել է մեզ այսօր, որպեսզի ավելի խորը զգանք և գիտակցենք Իր կամքը և մեր պատասխանատվությունը մեծ վերափոխումների ու տեղաշարժերի այս ժամանակաշրջանում, որը փորձությունների հետ միասին նոր սպասումներ ու հույսեր է բերել մեր ժողովուրդներին:*

*Աշխարհի ընդարձակ մի մասն են ներկայացնում ԱՊՀ երկրները՝ բազմազգ բնակչությամբ, ազգային կայուն ավանդույթներով և կրոնական կյանքի՝ յուրահատկություններով, ինչպես նաև՝ համատեղ պատմության ընդարձակ էջերով, տնտեսական ու մշակութային կապերով և, մանավանդ, վերջին տարիների նույնպես բոլորի համար ընդհանուր դարձած ձեռքբերումներով ու մարտահրավերներով:*

*Այսօր կրոնական կյանքի ազատությունն ունենք, վերածնություն է ապրում հավատը մարդկանց սրտերում: Պետական այրերը, ի գլուխ մեր նախագահների, աղոթքի են կանգնում մեզ հետ Տաճարներում: Սակայն անհանգստությունից փարատված չեն մեր հոգիները, քանզի վտանգված ենք տեսնում հոգևոր հավիտենական ու համամարդկային այն արժեքները, որոնք հանդիսանում են այն միակ հիմքը, որի վրա միայն կարող են բարձրանալ ու ամուր լինել հասարակական ներքին կյանքի, ինչպես և ազգերի ու պետությունների նոր հարաբերությունները: Մենք ականատես ենք բարքերի անկման, հասարակության բևեռացման, ամբողջատիրական աղանդների քայքայիչ գործունեության, ականատես ենք արատների տարածման, բռնարարքների ու ահաբեկչության:*

*Վերհիշելով վերջին տարիների ահաբեկչական գործողություններն իրենց ողբերգական հետևանքներով, մեզանից յուրաքանչյուրը կարող է հաստատել, որ դա չէ ձգտումն ու երազը մեր ժողովուրդների, ովքեր ցանկանում են ապրել ապահովության մեջ և ո՛չ վախի ու սարսափի, ցանկանում են երջանիկ տեսնել իրենց ընտանիքները, բարգավաճող իրենց հայրենիքը, ցանկանում են հավատով ու վստահությամբ նայել գալիքին: Այսօր մենք հավաքվել ենք մեր ժողովուրդների ու պետությունների կյանքում առավել ամրապնդելու խաղաղության, բարեկամության ու համագործակցության ճանապարհները, որոնք հաճելի են Աստծուն, որպեսզի մեկ անգամ ևս հավաստենք, որ մեր զենքերը ոչ թե թնդանոթներն ու հրթիռներն են, այլ՝ Բարձրյալի շնորհներն ու օրհնությունը: Նույնն է մեր Արարիչը, նույն երկինքն է ամենքիս վերևում, թեպետ միշտ չէ, որ մեր աղոթքն ենք ուղղում առ Աստված մերձավորի բարիքի համար:*

*Մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է հաջողված տեսնել իր մտահոգությունները, լուծված՝ իր դժվարությունները: Սակայն արդի դարի փոխշաղկապված իրականության մեջ դրանք՝ որքան էլ առանձնակի և յուրահատուկ, այնքան էլ հարաբերված են նաև, և նրանց կարգավորման բոլոր խնդիրները պետք է առաջ-*

*նորոգվեն միայն խաղաղ ուղիներով, օրինականության, արդարության և իրավունքի հարգումով: Դիրավի, կարևոր դերակատարություն է վերապահված մեզ՝ կրոնական առաջնորդներիս և սպասավորներիս, որ կոչված ենք հոգևոր արժեքների սերմնացանը լինելու մեր ժողովուրդների կյանքում, որպեսզի մեր հարաբերություններում արդյունավորվեն բարի կամեցողությունն ու փոխվստահությունը: Չեն կարող անդարձ մոռացության մատնվել դարավոր բարեկամության ավանդներն ու փորձառությունը, եթե մենք ունենանք իրական ձգտումը բարեկամության: Լայն բացենք մեր հոգու սահմանները և երբ աղոթենք, հիշենք նաև մեր դրացուն՝ լիովին գիտակցելով, որ նա նույնպես իրավունք ունի ազատ, ապահով և բարգավաճ կյանքի:*

*Մենք ողջունում ենք ստեղծումը ԱՊՀ երկրների Միջկրոնական խորհրդի և նրա կարևոր խաղաղարարական առաքելությունը, որը գործնական մի քայլ է մեր համագործակցությունում: Այս կառույցի աշխատանքների շրջանակում հատկապես մենք՝ կրոնական գործիչներս, պետք է ջանադրաբար քննենք ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների բոլոր դրականն ու բացասականը, որպեսզի աջակցենք նրանում եղած այն ամենին, ինչը հաճո է Աստծուն, և ընդդիմանանք այն ամենին, ինչը ընդդեմ է Աստծուն, այլապես հնարավոր է, որ առանձնաբար մենք չկարողանանք այս խնդիրները լուծել: Մաղթում ենք, որ Տերը զորացնի բոլորիս՝միասնական ջանքեր բերելու հասարակական մեր կյանքի կարգավորումներին և մեր ժողովուրդների բարի հարաբերություններին: Թող այս համախմբումը սկիզբ դառնա մեր արդյունավետ գործակցության և կարևոր հանգրվան՝ մշակույթների ու կրոնների երկխոսության ճանապարհին: Եվ այս ամենում թող մեզ առաջնորդող գաղափար լինի Տիրոջ Առաքյալի պատգամը. «Եղբայրսիրությունը թող հաստատ մնա ձեր մեջ: Մի մոռացեք նաև օտարասիրությունը (Եբր. ԺԳ 1-2): Ուր որ սերն է, այնտեղ է Աստված իր օրհնությամբ և շնորհներով:*

*Բարձրյալից հաջողություններ ենք հայցում գագաթնաժողովի աշխատանքներին և արևշատ կյանքի լավագույն բարեմաղթանքներով Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ալեքսի Բ Սրբազան Պատրիարքին, Ով նախաձեռնեց և հսկայական ջանքեր ներդրեց այս համախմբումը կազմակերպելու համար: Մեր շնորհակալությունն ենք բերում նաև Ռուսաստանի Դաշնության իշխանություններին՝ հանձին Նախագահ Վլադիմիր Պուտինի, Ում միջկրոնական գործակցության անկեղծ ցանկությունը մեզ քաջ հայտնի է, ինչպես նաև՝ նախանձախնդրությունը տարածաշրջանում կայունության պահպանման և ԱՊՀ երկրների համերաշխ համագործակցության:*

*Պահպանիչ և հույս հավատացելոց Բարձրյալն Աստված, պահյա, պահպանյա և օրհնյա աշխարհը համայն, զորացրու փոխհասկացողության և համագործակցության ոգին ժողովուրդների և առաջնորդիր ամենքին դեպի բարին և խաղաղություն:*

Առաջին նիստի ընթացքում Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյանի կողմից ընթերցվեց նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ համաժողովի մասնակիցներին ուղղված ուղերձը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

*Անկեղծորեն ողջունում եմ երկրորդ միջկրոնական խաղաղարարական համաժողովի մասնակիցներին՝ ի դեմս առաջատար հոգևոր առաջնորդների, ինչպես նաև ԱՊՀ երկրների նշանավոր պետական և հասարակական գործիչների:*

*Մեծ նշանակություն ենք տալիս տարբեր դավանանքների համագործակցությանը՝ հասարակության մեջ ավանդական հոգևոր արժեքների հաստատման, համերաշխության և կայունության ձեռքբերման, խաղաղության ամրապնդման գործում:*

*Հատկապես կցանկանայի նշել Ռուս Ուղղափառ Եկեղեցու, անձամբ Նորին Սրբություն Ալեքսի Բ-ի կառուցողական ներդրումը ԱՊՀ ամբողջ տարածաշրջանում միջկրոնական և ազգամիջյան համագործակցության գործում:*

*Երկրորդ միջկրոնական խաղաղարարական համաժողովին և նրա մասնակիցներին մաղթում եմ արդյունավետ աշխատանք:*

Մարտի 2-ին համաժողովի շրջանակներում տեղի ունեցավ նաև Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հոգևոր առաջնորդների՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի և Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր առաջնորդ շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշա-զադեի քառակողմ հանդիպումը:

Համաժողովի շրջանակներում տեղի ունեցան քննարկումներ հետևյալ թեմաներով. «ԱՊՀ տարածաշրջանում պետական-կրոնական հարաբերությունների արդի վիճակը», «Ավանդական կրոնների ջանքերի կոորդինացում՝ ընդհանուր մարտահրավերներին պատասխանելու համար», «Կրոնական կազմակերպությունների հասարակական ծառայությունը», «Կրոնական դաստիարակության պրոբլեմները», «Շրջանային մակարդակում միջկրոնական համագործակցության փորձառության տարածում», «Կրոնը և զանգվածային լրատվամիջոցները», «Կրոնական կազմակերպությունների խաղաղարարական ջանքերը»:

Ժողովի գլխավոր նպատակն էր ԱՊՀ երկրների ավանդական կրոնական կազմակերպությունների համատեղ գործունեության կոորդինացումը ազգամիջյան և միջկրոնական խաղաղության ամրապնդման, հասարակության մեջ ավանդական հոգևոր արժեքների հաստատման, հասարակության մեջ համերաշխության և կայունության ձեռքբերման, հոգևոր առաջնորդների միջև երկխոսության զարգացման և տարբեր հիմնախնդիրների հաղթահարման գործում, որոնք ժամանակակից աշխարհը առաջադրում է հավատացյալներին:

Երկրորդ միջկրոնական խաղաղարարական համաժողովի որոշմամբ ստեղծվեց ԱՊՀ երկրների Միջկրոնական Խորհուրդ:

## ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊՀ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Մենք՝ ԱՊՀ երկրների հոգևոր առաջնորդներս, վկայում ենք այն մասին, որ լիովին պահպանել և բազմապատկել ենք միջկրոնական համագործակցության բազմադարյա ավանդույթները: Ներկայումս մեր փոխըմբռնման մակարդակը մեզ թույլ է տալիս դուրս գալ պարբերաբար գումարվող միջկրոնական կոնֆերանսների շրջանակից և բարձրանալ համատեղ գործունեության ավելի բարձր աստիճանի:*

*Մշտապես գործող միջկրոնական կառույցների աշխատանքի հաջող փորձառությունը ցույց է տալիս, որ հենց իրենց օգնությամբ կրոնների միջև փոխհարաբերությունները դառնում են առավել արդյունավետ: Կարծում ենք, որ այժմ եկել է ժամանակը միավորելու Համագործակցության երկրների առաջատար հոգևոր առաջնորդների ջանքերը ԱՊՀ Միջկրոնական Խորհրդի շրջանակներում, որն իր առջև դնում է հետևյալ նպատակները.*

*ԱՊՀ երկրների ավանդական կրոնական կազմակերպությունների համատեղ գործունեության համակարգումն ազգամիջյան և միջկրոնական խաղաղության ամրապնդման, հասարակության մեջ համերաշխության և կայունության ձեռքբերման, հոգևոր առաջնորդների միջև երկխոսության զարգացման, ընդհանուր մարտահրավերների դեմ պայքարում ջանքերի միավորման, հասարակության մեջ ավանդական հոգևոր արժեքների հաստատման գործում:*

*ԱՊՀ անդամ երկրների աջակցությունն այդ համագործակցությանը՝ հոգևոր առաջնորդների և կրոնական համայնքների միջև հարաբերությունների ամրապնդման ճանապարհով:*

*Փորձի բազմակողմ և պարբերական փոխանակում պետական-կրոնական հարաբերությունների, խաղաղարարության, հասարակական ծառայության և այլ կարևոր հարցերի բնագավառում:*

*Հուսով ենք, որ ԱՊՀ Միջկրոնական Խորհրդի ջանքերը կծառայեն մեր պետությունների և ժողովուրդների, տարբեր կրոնների հետևող մեր բոլոր հայրենակիցների, հավատացյալ և ոչ հավատացյալ մարդկանց բարօրությանը:*

Խորհրդի մեջ ընդգրկված են 23 կրոնական առաջնորդներ, որոնք ներկայացնում են Համագործակցության բոլոր երկրներն ու առաջատար կրոնական ուղղությունները: Խորհրդի հիմնադիրները հանդիսանում են հետևյալ կրոնական հաստատությունները.

Հայ Առաքելական Եկեղեցի
Ռուս Ուղղափառ Եկեղեցի
Վրաց Ուղղափառ Եկեղեցի

Ռուսաստանի ավանդական բուդդայական սանգխա
Ղազախստանի Հանրապետության մուսուլմանների հոգևոր վարչություն
Ղրղզստանի Հանրապետության մուսուլմանների հոգևոր վարչություն
Տաջիկստանի Հանրապետության մուսուլմանների հոգևոր վարչություն
Ուզբեկստանի Հանրապետության մուսուլմանների հոգևոր վարչություն
Ռուսաստանում հրեական կրոնական կազմակերպությունների կոնգրես
Հյուսիսային Կովկասի մուսուլմանների կոորդինացիոն կենտրոն
Ռուսաստանի մուֆտիների խորհուրդ
Կովկասի մուսուլմանների խորհուրդ
ԱՊՀ հրեական համայնքների ֆեդերացիա
Ռուսաստանի մուսուլմանների կենտրոնական հոգևոր խորհուրդ

Խորհրդի գործերը կոորդինացնում և շահերը ներկայացնում են չորս համանախագահները, որոնք ներկայացնում են Համագործակցության երկրների չորս առաջատար կրոնական ուղղությունները՝ քրիստոնեություն, իսլամ, հուդայականություն և բուդդայականություն: Ամեն տարի համանախագահները պետք է փոխվեն՝ համաձայն յուրաքանչյուր կրոնական ուղղության ներկայացուցիչների կողմից մշակված սխեմայի:

Խորհրդի նախագահության նիստերը միջկրոնական խաղաղարարական համաժողովի շրջանակում գումարվում են երեք տարին մեկ անգամ: Նիստերի միջև ընկած ժամանակահատվածում Խորհրդի գործունեությունը պետք է իրականացնի Գործադիր կոմիտեն, որի մեջ ընդգրկված են Խորհրդի հիմնադիրները: Խորհրդի Գործադիր կոմիտեն պետք է հավաքվի տարին ոչ պակաս մեկ անգամ: Գործադիր կոմիտեի նիստերը վարում է նրա նախագահը, որն ընտրվում է երեք տարով:

Համաձայն ԱՊՀ Միջկրոնական Խորհրդի որոշման՝ միջկրոնական համաժողովները պետք է գումարվեն երեք տարին մեկ անգամ: Երրորդ միջկրոնական համաժողովը տեղի կունենա Բաքվում:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ ԽԱՂԱՂԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՐԱԳՐՈՒՄԱՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

*Երկրորդ անգամն է, որ ԱՊՀ երկրների առաջատար հոգևոր առաջնորդները բարձր մակարդակի հանդիպում են ունենում: Առաջին միջկրոնական խաղաղարարական համաժողովից հետո անցած չորս տարիների ընթացքում շատ դրամատիկ իրադարձություններ են տեղի ունեցել, որոնք ավանդական կրոնների հետևորդների խաղաղ համակեցությունը յուրց փորձությունների են ենթարկել: Աշխարհը կանգնած է գլոբալ հակամարտության իրական սպառնալիքի առջև, որի պատճառ են հանդիսանում տնտեսական, քաղաքական և հասարակական շարժառիթները, որոնք սրում են կրոնական և մշակութային տարբերությունները: Այս իրադրության մեջ քաղաքակրթությունների բախումը կանխող կարևոր գործոն է դառնում առաջատար կրոնական ուղղությունների հոգևոր առաջնորդների ընդ-*

*հանուր խաղաղարարական դիրքորոշումը, որը մշակվել է կրոնների միջև ծավալվող երկխոսության շնորհիվ:*

*Մեր տարածաշրջանում կրոնական պատերազմներ չեն եղել, այլ ընդհակառակը, ձեռք է բերվել կրոնների և մշակույթների ներդաշնակ համագործակցության եզակի փորձառություն: ԱՊՀ շատ երկրներում միջկրոնական հարաբերությունները համարյա կատարյալ են, որոնք հաստատվում են առաջատար հոգևոր առաջնորդների՝ արդի իրադարձությունների վերաբերյալ համաձայնեցված արձագանքով, բազմաթիվ և կանոնավոր կերպով իրականացվող համատեղ միջոցառումներով, մշտապես գործող միջկրոնական կառույցների ստեղծմամբ:*

*Ուրախալի է տեսնել, որ վերջին տարիների ընթացքում տեղի են ունեցել շատ դրական տեղաշարժեր պետական-կրոնական հարաբերություններում, և տարրական գոյատևման խնդիրն այլևս ծառացած չէ մեր կրոնական կազմակերպությունների առջև: Բայց մարտնչող անաստվածությանը փոխարինելու եկան նոր մարտահրավերներ՝ արմատական աշխարհիկացում, ագրեսիվ հոգևորություն, ազգամիջյան թշնամանք, ահաբեկչություն:*

*Համաժողովն անհանգստացած է, որ որոշ զանգվածային լրատվամիջոցներում թշնամանք է բորբոքվել ավանդական կրոնների և նրանց հետևորդների նկատմամբ:*

*Վկայում ենք, որ իրական հավատացյալները երբեք ահաբեկչության ճանապարհը չեն բռնի: Համոզված ենք, որ նրանք, ովքեր գիտակցաբար ահաբեկիչներ են դարձել, շեղվել են իրենց հավատքից: Ցավով նշում ենք, որ նրանց՝ անմիտ գաղափարներով մթագնված գիտակցությունը փակ է ողջախոհության փաստարկների համար, իսկ միակ լեզուն, որ նրանք հասկանում են, ուժի լեզուն է: Ավանդական կրոնական կազմակերպությունները բոլոր ջանքերն ի գործ են դնում՝ կանխելու համար ահաբեկչության աճը և ահաբեկիչների կողմից կրոնական խորհրդանշանների հրեշավոր կիրառումը: Միաժամանակ մենք օգնություն և աջակցություն ենք առաջարկում մեր երկրների կառավարություններին այդ չարիքի դեմ պայքարի գործում:*

*Կրոններն ունեն նշանակալի խաղաղարարական ներուժ, հատկապես ազգամիջյան հարաբերությունների բնագավառում: Այդ իսկ պատճառով, այնտեղ, որտեղ լարվածություն կամ բացահայտ հակամարտություն կա, նման հակամարտությունների մեջ ներքաշված ազգերի համար ավանդական համարվող կամ մեծամասնությունը կազմող կրոնների ներկայացուցիչներին կոչ է արվում ծավալել վճռական և անհետաձգելի համատեղ խաղաղարարական գործունեություն: Այնտեղ, որտեղ արյունահեղություն կամ ուժի գործադրման ուղղակի սպառնալիք կա, առկա հիմնահարցերի շուտափույթ խաղաղ և արդարացի լուծմանն ուղղված մեր համագործակցությունն առավել եռանդուն պետք է լինի:*

*Մարդկային սրտերի տարեց-տարի աճող դաժանությունը բարոյական ճգնաժամի, մարդկանց կողմից Աստծու հաստատած բարոյական չափանիշների մոռացության հետևանք է: Նոր դարաշրջանի գայթակղություններն ու արատները,*

*որոնք եռանդուն կերպով քարոզվում են որպես մարդկային կյանքի որոշ նոր-*
*մեր, կործանարար ազդեցություն են ունենում մարդկանց հոգիների վրա՝ վերա-*
*ծելով նրանց ապրանքների և ծառայությունների անմիտ սպառողների:*
*Առաջադար մշակույթների և հոգևոր ավանդույթների փոխհարաբերություն-*
*ները բարդանում են դրանց միավորման փորձերով, ժողովուրդներին կյանքի*
*միանման ապրելակերպ, հասարակական կառուցվածքի մի տեսակ, քաղաքա-*
*կրթության մեկ մոդել պարտադրելով: Այս ամենն առաջացնում է կոնֆլիկտներ,*
*պարարտ հող հանդիսանում ծայրահեղական դրսևորումների համար:*
*Վստահ ենք, որ միայն ժամանակակից քաղաքակրթության բազմաձև կենսակեր-*
*պի իրավունքն ընդունելով է, որ հնարավոր կլինի խուսափել ճակատագրական*
*բախումներից:*

*ԱՊՀ բոլոր երկրներն այժմ կրոնական վերածննդի գործընթաց են ապրում: Այդ երկրների քաղաքացիների մեծ մասն իրենց հավատացյալ են համարում: Կրոնը վերագտնում է հասարակության մեջ իրեն վերապահված տեղը՝ գործուն կերպով ներառնվելով նրա կենսագործունեության տարբեր բնագավառներում: Կրոնական համայնքների և պետության միջև զարգանում է համագործակցությունը հասարակական աշխատանքի, երիտասարդության դաստիարակության, ավանդական մշակույթի պահպանման և զարգացման բնագավառում, հասարակական բարոյականության հանդեպ մտահոգության հարցերում:*

*Համաժողովի մասնակիցները վստահ են, որ կրոնը պետք է և կարող է միավորող և հաշտեցնող դեր ունենալ ԱՊՀ տարածաշրջանում, աջակցել մեր երկրների և ժողովուրդների համագործակցությանն ու հաղորդակցությանը: Հավատում ենք, որ մեր համատեղ ջանքերը կօգնեն հաղթահարելու ազգամիջյան թշնամանքը, մեր համաքաղաքացիներից հեռացնելու ահաբեկչության, ծայրահեղականության, ազատության և անկախության կորստի սպառնալիքները:*

*Կոչ ենք անում քրիստոնյաներին, մուսուլմաններին, հրեաներին, բուդդայականներին, բոլոր մարդկանց՝ պահպանել խաղաղություն և համերաշխություն, համատեղ աշխատել մեր երկրների բարօրության համար:*

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՎԱՃՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ԱՒՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ԱՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՎԱՃԵԱՆ, ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանից զուարթնակութեամբ տեղեկացանք, որ Պոլսոյ Պատրիարքութեան եւ հաւատաւոր ժողովրդի կողմից կազմակերպւում է Ձերդ Սրբազնութեանը նուիրուած մեծարման հանդիսութիւն՝ Ձեր քահանայական ձեռնադրութեան յիսնամեայ յոբելեանի կապակցութեամբ: Այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքները:

Սիրելի Սրբազան, կամօք եւ օրհնութեամբն Աստուծոյ յիսուն տարիներ առաջ, Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում ուսումնառութիւնից յետոյ, Ձեր սրտում ունենալով մշտավառ սէրն առ Աստուած, Դուք անձնուիրումի ուխտ կնքեցիք Աստուծոյ Ս. Սեղանի առջեւ՝ ստանձնելով կուսակրօն հոգեւորականի պատասխանատու կոչումը:

Ձեր հոգեւոր սպասաւորութիւնը, որն սկսուեց երկարամեայ ուսուցչագործութեամբ, պանծալի ապացոյց է ներշնչեալ ոգու, իրաւ ազգասիրութեան եւ մեծ հայրենասիրութեան: Արդիւնաշատ է Ձեր վաստակը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում հոգեւոր սպասաւորների պատրաստման ու դաստիարակութեան գործում, քանզի Դուք, իբրեւ Ստամբոլի Ս. Խաչ դպրեվանքի փոխտեսուչ եւ ապայ տեսուչ, սրբասնունդ քաջեռանդու-

թեամբ Ձեր գովելի օրինակով շարունակեցիք զօրացնել ապագայ եկեղեցականների նա-
խանձախնդրութիւնը հոգեւորականի սրբազան առաքելութեան հանդէպ:

Հայ Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութեան յոբելենական առիթով արժան է նշել, որ Դուք ամենայն նուիրուածութեամբ ու ջանասիրութեամբ ծառայել էք Կ. Պոլսոյ Սուրբ Աթոռի շինութեանն ու պայծառութեանը՝ բարեյիշատակ Շնորհք եւ Գարեգին Պատ-
րիարքների տարիներից սկսեալ յանձն առնելով զանազան պատասխանատու պաշտօն-
ներ: Ձեր արժանիքների շնորհիւ Դուք ընտրուել էք նաեւ Կ. Պոլսոյ Կրօնական ժողովի ան-
դամ, այնուհետեւ կոչուելով նաեւ նոյն ժողովի ատենապետութեան պաշտօնին:

Սիրելի Սրբազան, ուրախ ենք, որ ներկայիս, որպէս Պատրիարքական Փոխանորդ, նոյն քաջակորով փութաջանութեամբ հայոց ազգին Ձեր քրիստոսանուէր կեանքն ու աստուա-
ծահաճոյ գործն ընծայաբերելով, աջակից էք Կոստանդնուպոլսի Ամենապատիւ Պատ-
րիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին՝ բարձր ու պատասխանատու իր առա-
քելութեան մէջ:

Մեր Եկեղեցուն բերած տասնեակ տարիների Ձեր ծառայության եւ բոլորանուէր վաս-
տակի բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու Կոնդակով Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրական Մեր սէրն ու բարեմաղթանքները եւ, ընդառաջելով Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութա-
ֆեանի միջնորդութեանը, Ձեզ շնորհում ենք Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լի-
նի եւ զօրացնի Ձեզ, պարգեւի ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի տա-
րիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու: Թող Աստուած մեր Եկե-
ղեցուն եւ մեր ժողովրդին պարգեւի Ձեզ պէս աստուածասէր հոգեւոր հայրեր եւ ժողովրդա-
նուէր մշակներ:

*«Աստուած յուսոյ լի արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ Ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Փետրուարի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 221

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. փետրվար–մարտ ամիսների ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով

**«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ»** շքանշանով պարգևատրվել է.
Պարույր Աղբաշյան (Լիբանան)

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Մերի Նաջարյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Աբրահամ Կարապետյան (Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակություն)
Ռեքս Խաչիկյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

**Օրհնության գիր է տրվել.**
Լարիսա Երիցյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Հակոբ Մելքոնյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Յուրի Նազարեթյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Արկադի Բաքայան (Ուկրաինայի հայոց թեմ)
Սերգեյ Սարգիսյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Վաղարշակ Մելքոնյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Արամ Սարգսյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Մարտին Ամիրջանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Ջորիկ Սաֆարյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Ալեքսանդր Վարդանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Տոսյա Հարությունյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Նելլի Դադոյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Սուսաննա Բեկզադյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Մարիամ Կարապետյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Կարինե Պողոսյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Սոնա Ղազարյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Լաուրա Ծովիկյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Նադյա Սարուխանյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Մարո Խաչատրյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Ալվարդ Խաչատրյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Համասփյուռ Մինասյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Սեդա Գրիգորյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Կարինե Ջոլյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Վարյա Սարգսյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Տիգրան Ծուլիկյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Սեմ սարկավագ Չալկուճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Երվանդ Պապայան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Հարություն Արսլանյան (Լիբանան)
Խաչատուրյան դպրաց դասին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

...мия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

«Կոմիտաս» երգչախմբին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Հոգևորականաց պատվական համագումարին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Հոգևորականաց համագումարին
Սուրբ Սարգիս եկեղեցու ծխական համայնքին (Բուլղարիայի հայոց թեմ)
Իրաքի հայոց թեմի եկեղեցական մարմնին

**Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է տրվել.**
Երեմիա քահանա Մակարյան (Ուկրաինայի հայոց թեմ)
Հրայր քահանա Բեջանյան (Գուգարաց թեմ)
Կորյուն քահանա Կարապետյան (Արցախի թեմ)
Հովհաննես քահանա Հովհաննիսյան (Արցախի թեմ)
Միոն քահան Սափարյան (Կոտայքի թեմ)
Մեսրոպ քահանա Ալոյան (Արմավիրի թեմ)
Եղիշե քահանա Բարսեղյան (Արագածոտնի թեմ)

**Լանջախաչ կրելու իրավունք է տրվել.**
Պարույր քահանա Ավետիսյան (Մայր Աթոռ)
Վահրամ քահանա Մելիքյան (Մայր Աթոռ)
Խորեն քահանա Կիրակոսյան (Մայր Աթոռ)
Ղևոնդ քահանա Մայիլյան (Մայր Աթոռ)
Խադ քահանա Ղազարյան (Մայր Աթոռ)
Հայկազուն քահանա Մկրտչյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Շահե քահանա Հայրապետյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Գևորգ քահանա Միրզախանյան (Արմավիրի թեմ)
Ստեփանոս քահանա Մելիքյան (Արմավիրի թեմ)
Եղիշե քահանա Կարայան (Արմավիրի թեմ)
Մկրտիչ քահանա Մուշաղյան (Արմավիրի թեմ)
Հարություն քահանա Քեսաբլյան (Արմավիրի թեմ)
Գևորգ քահանա Կրպիկյաշյան (Արմավիրի թեմ)
Սարգիս քահանա Խլղաթյան (Արմավիրի թեմ)
Գնել քահանա Մարտիրոսյան (Գեղարքունյաց թեմ)
Հարություն քահանա Ծատուրյան (Կոտայքի թեմ)
Իսահակ քահանա Աբրահամյան (Կոտայքի թեմ)
Սահակ քահանա Մարտիրոսյան (Սյունյաց թեմ)
Գրիգոր քահանա Հովսեփյան (Սյունյաց թեմ)
Վահան քահանա Ազարյան (Գուգարաց թեմ)
Ղևոնդ քահանա Գավոյան (Արագածոտնի թեմ)
Հովսեփ քահանա Ալեքսանյան (Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի)

**Ավագության պատիվ է տրվել.**
Արամ քահանա Հունանյան (Հարավային Ռուսաստանի թեմ)
Տիրայր քահանա Սահրադյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Նորայր քահանա Բաղդասարյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Օհան քահանա Լուսարարյան (Գուգարաց թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում բոլոր կանանց Մարտի 8-ի տոնական առիթով:

Մեր հայցն է, որ Աստված Իր հանապազ խնամքի ներքո պահի բոլոր մայրերին, քույրերին ու դուստրերին և զորացնի աստվածօրհնյալ հույսի, հավատի ու սիրո մեջ, որպեսզի շնորհներով ու առաքինություններով զարդարյալ՝ կրթեն ու մեծացնեն արժանավոր զավակներ և իրենց ձեռքբերումներով ու նվաճումներով նորանոր ավանդներ բերեն հայրենական մեր կյանքի տարբեր ասպարեզներում: Այսօր կանայք գիտնականներ են և ուսուցիչներ, արվեստի մշակներ, մասնակից են պետական կառավարմանը և ամենուր նախանձախնդիր են ու պատրաստակամ:

Թող Տերը քաջառողջ ու եռանդաշատ պահպանի փիկնանց և օրիորդաց, զորացնի իրենց կոչման մեջ՝ լինելու խարիսխն ընտանիքի, խտացումը սիրո, հավատարմության ու անձնուրաց նվիրումի, և միշտ ունկնդիր լինի խաղաղության, բարօրության ու երջանկության հայցով երկինք բարձրացող նրանց աղոթքներին:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին
8 մարտի 2004 թ.

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ.**

ա. Գերաշնորհ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը Սփյուռքի հայոց տարբեր համայնքներում հոգևոր ծառայությունից հետո վերադարձել է Մայր Հայրենիք՝ այսուհետ իր ծառայությունը բերելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

բ. Հոգեշնորհ Տ. Առնեն աբեղա Շահինյանը նշանակվել է Հռոմի հայ համայնքի հոգևոր հովիվ:

գ. Տ. Աբգար աբղ. Հովակիմյանը, որ ուսումը շարունակելու նպատակով Հայրապետական տնօրինությամբ մեկնել էր Եվրոպա, ավարտելով ուսումնառությունը՝ վերադարձել է Ս. Էջմիածին՝ նշանակվելով Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ:

# Տ. ԴԱՎԻԹ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ

Ծնվել է 1935 թ. Երուսաղեմում: Նախնական կրթությունն ստացել է Թարգմանչաց վարժարանում և իտալական Տեռրա Սանտա քոլեջում:

1951-1957 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում:

1957 թ., ձեռամբ Տ. Տիրան արքեպս. Ներսոյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1957-1960 թթ. վարել է փպարանի և Գյուլպենկյան մատենադարանի տեսչությունները, միաժամանակ դասավանդել է Ժառանգավորաց և Թարգմանչաց վարժարաններում:

1960 թ. նշանակվել է Ամմանի հայոց հոգևոր հովիվ և Հեթումյան վարժարանի տեսուչ:

Նույն թվականին Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպս. Տերտերյանի ձեռամբ ստացել է վարդապետական աստիճան:

1965 թ. Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի ձեռամբ ստացել է ծայրագույն վարդապետի աստիճան:

1964-1973 թթ. եղել է Լիոնի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ:

1973-1976 թթ. եղել է շվեյցարահայ համայնքի հոգևոր հովիվ:

1976 թ., ձեռամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Կենտրոնական Ֆրանսիայի հայրապետական պատվիրակի փոխանորդ:

1980 թ. նշանակվել է Հարավային Ամերիկայի կաթողիկոսական պատվիրակ:

1983–1985 թթ. ծառայել է Գերմանիայի հայկական գաղութում:

1986-88 թթ. ծառայել է Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում:

1988 թ. վերադարձել է Երուսաղեմ և նշանակվել Ս. Աթոռի դիվանապետ և ընծայարանի դասախոս:

1990 թ. Միաբանական ժողովի կողմից ընտրվել է Սուրբ Աթոռի լուսարարապետ և միաժամանակ վարել կրթական և վարչական պաշտոններ:

1991 թ. ստացել է արքության տիտղոս:

1997 թ. վերադարձել է Լիոն:

1979 թ. Ֆրանսիական կառավարության կողմից ստացել է Chevalier du Palme Academique շքանշան:

1997 թ., քահանայական ձեռնադրության քառասնամյակի առթիվ, ստացել է Chevalier de l'Ordre Nationale de Merite շքանշան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ 2004 թ. մարտի 1-ին վերադարձել է Ս. Էջմիածին՝ ծառայելու Մայր Աթոռում:

# Տ. ԱՌԵՆ ԱԲԵՂԱ ՇԱՀԻՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Շանթ)

Ծնվել է 1970 թ. հունվարի 20-ին, Բաղդադ քաղաքում:

Նախնական ուսումը ստացել է ծննդավայրում:

1989-1992 թթ. սովորել և ավարտել է Քերքուկ քաղաքի մեխանիկական գիտությունների քոլեջը:

1993 թվականից մասնակցել է Իրաքահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի կազմակերպած հնգամյա դասընթացներին: Այս ընթացքում կրթությունը շարունակել է Բաղդադ քաղաքի «Բաբելոն» հոգևոր համալսարանում:

1995 թ. դեկտեմբերի 29-ին, ձեռամբ առաջնորդ Սրբազան Հոր, արժանացել է կիսասարկավագության, ապա 1999 թ. հունվարի 29-ին՝ սարկավագության աստիճաններին:

2000 թ. մարտի 2-ին Բաղդադի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, ձեռամբ Իրաքահայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Հոգեշնորհ Հայր Սուրբը պաշտպանել է թեզ՝ «Ավետարանը և Ղուրանը» թեմայով: Արժանացել է նաև «Բաբելոն» համալսարանի Աստվածաբանական և Իմաստասիրական պսակավորի վկայականի:

2000 թ. աստվածաբանական գիտելիքները կատարելագործելու նպատակով, թեմակալ առաջնորդի օրհնությամբ, մեկնել է Հռոմ:

2004 թ. փետրվարի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Հռոմի հայ համայնքի հոգևոր հովիվ:

# Տ. ԱԲԳԱՐ ԱԲԵՂԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ծնվել է 1972 թ. Բաթումի քաղաքում (Վրաստան):

1979-1989 թթ. սովորել է տեղի Ստ. Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում:

1989-1995 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանելով ավարտաճառ «Հայ դավանաբանական մտքի արձագանքները Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ» թեմայով:

1995 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի:

2001-2004 թթ. Հայրապետական տնօրինությամբ մեկնել է Ավստրիա եւ ուսանել Զալցբուրգի աստվածաբանական համալսարանում ստանալով մագիստրոսի աստիճան:

2004 թ. վերադառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ փետրվարի 20-ին նշանակվել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

***ԿԱՆԱԴԱՅՈՒՄ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՀԱԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԻԹՈՎ***

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմական Խորհուրդներս սրտի խոր ցաւով տեղեկացանք, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վաւերացուցած է ընտրութիւնը «առաջնորդի» մը, որ իր իշխանութիւնը պիտի տարածէ Գանատայի սահմաններէն ներս ենթադրական թեմական վիճակի մը վրայ:

Հիւսիսային Ամերիկայի այլ վայրերու մէջ գտնուող Կիլիկեան ոչ-կանոնական թեմական վիճակներուն նման՝ այս մէկն ալ անշուշտ ենթակայ է նոյն առարկութեանց: Արդարեւ՝ կը յիշենք թէ Կիլիկեան «առաջնորդութեան» հաստատումը Գանատայի մէջ երկու տարի առաջ շատերու կողմէ քննադատուեցաւ:

Այս վերջին զարգացումը ի դերեւ հանեց բոլոր յոյսերը՝ որ համագործակցութեամբ եւ ողջախոհութեամբ կարելի պիտի ըլլար երկու կողմերուն համար գոհացուցիչ լուծման մը հանգիլ: Այս իրադարձութիւնը մեզի յուսախաբութիւն եւ ցաւ պատճառեց:

Ներկայի պատմական ժամանակները Հայ ժողովուրդին, մեր Եկեղեցիին եւ մեր ազգին կը ներկայացնեն բազմաթիւ եւ երկար ատենէ ի վեր սպասուած պատեհութիւններ: Բոլոր հայերու բարօրութեան ի խնդիր այդ պատեհութիւններու շահագործումը մեզմէ կը պահանջէ զօրակցութեան եւ միասնականութեան անշահախնդիր նուիրում:

Հայաստանեայց Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան բարեխնամ առաջնորդութեամբ, հիմնական դեր խաղացած է անցեալ դարերու ազգային վերանորոգումի շարժումներուն մէջ: Պատմականօրէն՝ Եկեղեցին կրցած է կոչ ուղղել սփռացած հայերու, կեանքի ինչ ասպարէզի մէջ ալ եղած ըլլային անոնք, միանալու ի խնդիր վեհ նպատակներու: Նման կոչերու բանալին - այսինքն՝ վստահութիւն ներշնչող գործօնը - Եկեղեցւոյ ի հոգեւորս ամբողջականութիւնը եղած էր, որուն մարմնացումն է անոր մէկ հաստատութիւն ըլլալու հանգամանքը:

Ցաւով կը հաստատենք թէ Կիլիկեան Աթոռի վերջին քայլը վտանգի կ'ենթարկէ Եկեղեցւոյ միասնականութիւնը, եւ ասիկա իսկապէս վիշտի պատճառ կը հանդիսանայ Հայ ժողովուրդին համար առհասարակ:

# ԲԱԺԱՆՈՒՄԻ ՆՈՐ ՔԱՅԼ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Խոր ցաւով եւ հիասթափութեամբ Գանատահայոց Թեմական Խորհուրդս կ'անդրադառնայ, որ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը «Առաջնորդի» փիտղոս շնորհած է Խաժակ արքեպս. Յակոբեանին, որը պարզապէս վաւերացումն է անցեալին փեղ գփած բաժանումին եւ պառակփումին: Ցաւ կը յայփնենք, որ սոյն քայլը աւելի կը խորացնէ պարփադրուած պառակփումը եւ բաժանումը մեր գաղութի մէջ, որու համար եւ խսփօրէն կը դափապարփենք մինչեւ այժմ գաղութիս բաժանման ուղղութեամբ ձեռնարկուած բոլոր քայլերը՝ ներառեալ, այսպէս կոչուած, «Թեմի» հռչակումը 2001 թուականին:

Դժբախփաբար, կարգ մը սփիւռքահայ գաղութներու նման, գանատահայութիւնը եւս զերծ չմնաց եկեղեցական եւ համայնքային անբաղձալի երկուութիւններէ եւ պառակփումէ: Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկ 1898 թուականի Հայրապեփական Սրբափառ Կոնդակով հասփափած է Հիւսիսային Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ թեմը (ներառեալ Գանատահայոց թեմը) Էջմիածնի Գերագոյն Իշխանութեան ենթակայ: Գանատայի մէջ առաջին Հայ Առաքելական եկեղեցին պաշփօնապէս հասփափուեցաւ 1930-ին՝ Սէնթ Քէթրինզի մէջ, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի անուամբ, հովանաւորութեամբ եւ օրհնութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան: Նոյնպէս Մոնթրէալի մէջ, առաջին հայկական եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, իսկ Թորոնթոյի մէջ՝ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցին, առաջինը այդ քաղաքին մէջ հասփափուեցաւ 1953-ին: 1984-ին ընդառաջելով գանատահայոց եկեղեցիներու փափաքին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Հոգելոյս Վազգէն Ա Հայրապեփական Կոնդակով հռչակեց սփեղծումը Գանատահայոց Առաջնորդութեան, մինչ սկսած էր բազմանալ մեր Եկեղեցիներու ցանցը այս փարածուն երկրի փարբեր հայաշափ քաղաքներուն մէջ: Այս բոլորը կափարուեցան հիմնուած օրինական եւ մեր Եկեղեցւոյ կանոններու եւ աւանդութիւններու փրամադրութեանց վրայ: Արդ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ենթակայութենէն դուրս Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմփեան, ինչպէս նաեւ Գանատայի հայոց թեմերու իրաւասութենէն դուրս կազմուած որեւէ Հայաստանեայց եկեղեցի մը եւ կամ առանձին բաժանեալ թեմական վիճակ մը հակականոնական եւ հակաօրինական է:

Փասփօրէն, մանաւանդ այս օրերուն, երբ առաւել կարիքն ունինք միաբանութեան եւ սիրոյ, ցաւ ի սիրփ դարձեալ պիփի ճաշակենք բաժանումի դառնութեան բաժակէն: Մեզ համար անհասկնալի է նպափակի հեփապնդումը, որ կը նշանակէ չհասկնալ ժամանակի նշանները: Այն յափկապէս այս ափերու վրայ նոր սերունդի մէջ հիասթափութիւն եւ անհանդուրժողութիւն յառաջ պիփի բերէ հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ ազգային գիփակցութիւնը՝ պափճառ ըլլալով անոնցմէ հեռացումի: Այս իրավիճակի յառաջացման ամբողջ պափասխանափուութիւնը կը մնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վրայ: Դափապարփելով հանդերձ կափարուածը, մենք կը մնանք միշփ միաբանութեան եւ սիրոյ պահպանումի դիր-

քին եւ կը յուսանք, որ այդքան փափաքելի միաբանութիւնը կը վերահաստատուի մեր ժողովուրդի կեանքէն ներս գործնականօրէն:

Կ'աղօթենք, որպէսզի Բարին Աստուած խաղաղութեան ու սիրոյ մէջ պահէ մեր տառապեալ Եկեղեցին եւ ժողովուրդը՝ անվնաս եւ ապահով առաջնորդելով դժուարին խանգըրուաններու մէջէն:

***ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ***
***ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ***

12 Մարտ, 2004

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Վերջին երկու ամիսների ընթացքում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին հրաժեշտ փվեց չորս արժանավոր Սրբազան Հայրերի:

Փետրվարի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հավարտ Ս. Պատարագի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ եկեղեցականների՝ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության միաբաններ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվազյանի և Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի:

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ

Փետրվարի 29-ին, Արտաքսման կիրակի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Հավարտ Ս. Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողի-կոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Բուդապեշտում ադրբեջանցի սպայի կողմից վայրագորեն սպանված ՀՀ Զինված ուժերի լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի և 16 տարի առաջ սումգայիթյան ոճրագործության զոհերի հոգի-ների հանգստության համար:

Նախորդ օրը հայ սպայի հուղարկավորությունը կատարեց ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ Տ. Արշեն աբեղա Մանոյանը: Հայր Սուրբն ընթերցեց նաև Ամենայն Հայոց Հայրապետի ուղերձը , որում ասված է.

*«Սիրելի վշտակիր ժողովուրդ և Հայոց բանակի մարտիկներ.*

*Այսօր առավոտյան մենք ծաղկեպսակներ դրեցինք Սումգայիթի զոհերի հուշակոթողի առջև և ցավի նույն զգացումով, վրդովմունքի նույն ապրումով հողին ենք հանձնում Գուրգեն Մարգարյանին: Ադրբեջանցի սպայի դավադիր ու տմարդի ձեռքը պատճառ դարձավ երիտասարդ, շնորհալի հայ սպայի մահվան, ով հպարտորեն ու պատվով ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն՝ հանուն խաղաղության» ծրագրով իրականացվող միջոցառմանը: Հայրենիքի համար զոհվեց նա, ծառայության ժամանակ, իր պարտականությունները կատարելիս: Այսօր Եռաբլուրում հայոց քաջերը, Հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած հայոց անմահները ընդունում են նրան իրենց յուսազգեստ շարքերում:*

*Մեր պատմությունը շատ օրինակներ գիտի, երբ մեր զավակները նահատակվել են հայ լինելու համար: Ե՛վ դավ ենք տեսել, և՛ ոճիր, տեսել ենք մեր տների ավերվելը, մեր հողի այրվելը, բայց դիմացել ենք ցավին, հաղթահարել ենք փորձությունները, որովհետև Հարության հուսացյալ միշտ հավատացել ենք արդարության հաղթանակին, բարու հաղթանակին, կյանքի հաղթանակին մահվան դեմ:*

*Հանցագործ ու ահաբեկող բռնարարքները չեն մարդկության ապագան: Դատապարտելի են այն քարոզչությունն ու կոչերը, որ տարվում են Ադրբեջանի քաղաքական և հասարակական շրջանակներում՝ բորբոքելով թշնամության ու ատելության ոգին իրենց քաղաքացիների հոգիներում: Ժամանակն է, որ Ադրբեջանի իշխանությունները և բոլոր պատասխանատուները հասկանան, որ թշնամությունն ու ատելությունը չեն կարող լինել իրենց ժողովրդի նոր կյանքի հույսն ու ճանապարհը:*

*Հայ սպայի եղերական մահը շարերին պիտի վկայի և ահազանգի, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չի կարող խաղաղ ու ապահով կյանք ունենալ Ադրբեջանի կազմում, ինչպես որ չի ունեցել 1923 թվականի այն օրից ի վեր, երբ քաղաքական նկատառումներով կտրվեց Մայր Հայրենիքից ու շնորհվեց Խորհրդային Ադրբեջանին:*

*Հայոց Ազգային բանակի նվիրյալ մարտիկի անյունի առջև, Մեր աղոթքն է, որ ողբերգական վախճանը Մեր զավակի վերջինը լինեն ղարաբաղյան խնդրի կարգավորման ճանապարհին, որ աշխարհի բոլոր անկյուններում մայրերը ոչ թե սգան իրենց զավակների կորուստը, այլ ուրախանան նրանց երջանկությամբ: Թող Տերը զորացնի նաև խաղաղասեր ոգին ու սրբեղծարար կամքը մեր ժողովրդի, զորացնի Հայրենյաց սերը մեր հոգում, որպեսզի շենանա ու ծաղկի մեր երկիրը և համուր հայոց կյանքը: Այս է Մեր վշտացյալ սրտից բարձրացող աղոթքը այս նոր փորված շիրիմի առջև, որ պիտի դառնա վերջին հանգրվանը երիտասարդ հայորդու երկրային կյանքի, բայց նաև՝ սկիզբը դեպի Աստծո արքայություն, ուր հանգրվանն է Հայրենիքի պաշտպան նահատակների:*

*Տեր մեր և Փրկիչ մեր, ընդունիր երկնային երանական լույսերի մեջ արդար հոգին Գուրգեն Մարգարյանի և Սուրբ Հոգվույդ շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևիր որդեկորույս հայոց ազգիս, նախապես Մեր զավակի ծնողաց ու նրա բոլոր հարազատներին: Թող Մխիթարիչ, Խաղաղարար ու Արդար Հոգիդ լինի ընդ մեզ և ընդ ամենեսեանն այսօր և միշտ. ամեն»:*

# ՔԱՐՈԶ ԽՕՍԱԿԱՆ

## Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 փետրվարի 2004 թ.)

*«Զի հաց յԱստուծոյ է որ իջանէ*
*յերկնից եւ կեանս տայ աշխարհի»:*
(Հովհ. Զ 33)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի և հավատակից եղբայրներ և քույրեր, Հայոց մեր Մայր Եկեղեցու սրբազան հայրերը հատկապես Ծննդյան այս Դ կիրակիի ընթերցանության համար ընտրել են հենց այս Ավետարանական հատվածը՝ վերստին հրավիրելով մասնակից դառնալու սիրո այս սեղանին, «որովհետև Աստծուց է այն հացը, որ իջնում է երկնքից և կյանք է տալիս աշխարհին»:

Ահավասիկ, թե ինչպես է խոսում Տերը՝ մեկ անգամ ևս անդրադարձ անելով Ս. Հաղորդության Սիրո Խորանին. «Ես եմ հացն կենաց, որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ երբեք ծարաւեսցի» (Հովհ. Զ 35): Կյանքի, ճշմարիտ կյանքի վարդապետությունն է ավանդել մեզ մեր Տերը դարեր առաջ, և այդ կյանքը սիրո դրսևորմամբ է արտահայտված, այն սիրով, որով Տերը սիրեց մեզ և պատվիրեց միմյանց սիրել, և որով պիտի Կենաց Բանին հետևողներ լինենք ու ճանաչվենք:

Մարդկային կյանքի ֆիզիկական գոյության առաջին նախապայմանների՝ ուտելիքի և ըմպելիքի համազուգորդումով հոգևոր կյանքի հավիտենական գոյության հարատև պայմանների կամ պահանջների է կոչում Քրիստոս, որպեսզի մեր կյանքը նոր՝ սիրո պատվիրանով կարողանանք միմյանց հետ միշտ կապակցել և այդ ընկերային սիրո հորդումի քաղցրությունը միախառնել Աստուծո սիրո հետ, որի կենդանի մարմնացումն է Հարուցյալ Փրկիչը, և Որը մարդու գոյության այն աստիճան անքակտելի մասն է, որ հանդիսանում է մարդկային կյանքի հաց, և Որի հետ հարատև, շարունակական հարաբերության կարիքն ունի կամ պիտի ունենա յուրաքանչյուրս:

Հիսուս ասում է. «Ես եմ հացն կենաց» և երկու կարևոր շեշտադրում է կատարում.

Երբ Քրիստոսով քաղց ենք զգում, պետք է գնանք դեպի Իրեն:

Երբ Քրիստոսով ծարավ ենք, պետք է հավատանք Իրեն:

Այսինքն՝ եթե Ս. Հաղորդության այս Խորհուրդով մեր քաղցն ու ծարավն է հագենում, ուրեմն պետք է հավատալ Քրիստոսին ամբողջ էության անկեղծությամբ և զորացած հավատքով դեպի Քրիստոս քայլ անել ճշմարտության ճանապարհով, բախել Փրկության Կենաց դուռը, և վստահ եղեք, Տերն անկեղծ հավատքի յուրաքանչյուր արտահայտության ունկնդիր է լինում և երբեք անպատասխան չի թողնում մեր խնդրանքները:

Տիրոջ Մարմինն ու Արյունը ճշմարիտ կերակուր և ըմպելի են, որովհետև մեղքերի և սայթաքած անօրինությունների դիմաց դեղ են մաքրության և հավիտենության առհավատչյա. «Որ ուտէ զմարմին Իմ, և ըմպէ զարիւն Իմ, ունի զկեանս յաւիտենականս» (Հովհ. Զ 55): Այս կապը գալիս է դեռևս մեր նախահոր՝ Ադամի ժամանակներից, ով ուտելով մեղանչեց ու հեռու մնաց, այսինքն՝ մեր բնության մեջ մեղքը ուտելով ներգործեց, և մեզ այսօր Աստված ևս մեկ անգամ առիթ է տալիս մարմնով, այսինքն՝ Փրկության Կենաց հույսով արդարանալ և անմահանալ:

Սակայն այս ահավոր խորհրդից պետք է զգուշանալ, որովհետև Պողոս առաքյալն սթափեցնում է՝ ասելով. «Թող մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից, որովհետև ով ուտում է և խմում անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ մարմինը» (Ա Կորնթ. ԺԱ 28-29):

Մեր հայրերը ճշմարիտ հաղորդության երեք կարևոր կետ են նշում՝ հավատ, գիտություն և սրբություն: Հավատալ ի Քրիստոս Իր փնօրինական բոլոր խորհուրդներով, որը քրիստոնեական կենցաղավարության սկիզբն է ու հիմքը և որը հավիտենության առաջին գրավականն է:

Անշուշտ հավատքն առանց իմացության և զատորոշման անիմաստ է, որովհետև եթե չգիտես, թե ինչի և կամ ում ես հավատում, չես կարող հավատալ:

Առավել ևս եթե ամբողջ գիտությամբ հավատք ունես առ Աստված և այդ ամենն առանց կյանքի է, այսինքն՝ սրբության ու մաքրության Քրիստոսավանդ Խաչի ճանապարհով կյանքում չի դրսևորվում, պարզապես մնում է այդպես անկենդան ու անզոր խոսք միայն:

Երեկ մեր Եկեղեցին տոնեց Ս. Սարգիս քաջազոր զորավարի, նրա որդի Մարտիրոսի և 14 զինվորների հիշատակը, ովքեր մարտիրոսացան՝ դրսևորելով անկոտրուն կամք, անսասանելի հավատք ու մշտանորոգ սեր դեպի իրենց Արարիչը: Այս սիրո ուժով Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի կարգադրությամբ Եկեղեցին հատկապես ուշադրություն է դարձնում մեր ազգի զորավոր կորիզը հանդիսացող երիտասարդների վրա, ովքեր մեր ազգին հզոր ապագա և պայծառ երազների իրականացում են ներշնչում:

Այսօր այս Ս. Խորանի վրա Քրիստոսացող նշխարն ու գինին նոր սիրո լուծի քաղցր պտուղն է, որ պիտի ներգործի մեր ժողովրդի հոգուց ներս և իր ուժով սրբագործի, զորացնի ու սիրով լցնի, «որովհետև Աստծուց է այս հացը, որ իջնում է երկնքից և կյանք է տալիս աշխարհին... և թե մեկը այս հացից ուտի՝ հավիտենապես կապրի» Քրիստոսի մեջ և Քրիստոս էլ կապրի իր մեջ:

Ես մաղթում եմ, որ Հոր Աստուծո առաջնորդությունը, Քրիստոս Աստուծո մշտամնա ներկայությունը և Ս. Հոգու մշտանորոգ ներգործությունն ամենքիս հետ լինի և մանավանդ երիտասարդներին անսասան հավատք, Աստվածային իմաստություն և սրբացող կենցաղավարություն շնորհի:

Տիրոջ շնորհը, սերը և խաղաղությունը թող միշտ մեզ հետ լինեն և մեզ միշտ հաղորդության մեջ պահեն Ամենօրհնյալ Աստուծո հետ. ամեն:

# Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 փետրվարի 2004 թ.)

*«... զի որ հաւատայ՝ ընդունի զկեանսն յաւիտենականս»:*
(Հովհ. Զ 47)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, քիչ առաջ այս սուրբ խորանից Հովհաննու Ավետարանից հնչած սույն տողերը մեր մտքի սլաքն ուղղում են մեր՝ առ Քրիստոս ունեցած հարանքը և հնարավորություն ընձեռում մեզ, որպես քրիստոնյա, էլ ավելի լրջորեն խորհելու այս խոսքերի շուրջ՝ այն պարզ պատճառով, որ քրիստոնեական ճանապարհին սկսվում է հավատքով:

Հավատքով ոչ միայն սկզբնավորվում է հոգևոր կյանքը, այլև հավատքով են պայմանավորված հոգևոր կյանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հավատքը գաղափարական համոզմունք կամ Աստծո գոյության փաստի սոսկ ընդունումը չէ, այլ մարդուն տրված ամենապատվական կարողությունն ու պարգևը՝ իր Արարչի հետ հաղորդակցություն հաստատելու համար, որի հավաստումը տեսնում ենք Հին և Նոր Կտակարանների պատմության մեջ:

Սիրելիներ, Աստծո ընտրյալ այրերի համար հավատքը եղել է հոգևոր կյանքի և սրբության առաջնային գործոն, մեծագույն արդարություն, ներքին ուխտ Աստծո հետ, աստվածսիրության գրավական, հզոր պաշտպանություն, աստվածային սքանչելիքների կատարման նախապայման, աստվածտեսության շնորհ և այլն:

Իր հավատքի համար էր, որ Ենովքը, առանց մահ տեսնելու, երկինք փոխադրվեց: Իր հավատքի շնորհիվ էր, որ Նոյը երկյուղածությամբ անսաց Աստծուց ստացած իր հրահանգին՝ գալիք և դեռ անտեսանելի բաների մասին, և տապանը պատրաստելով՝ իր ընտանիքը փրկեց: Նույն Աստծուն հավատալով՝ իր ժամանակի աշխարհը դատապարտեց և ժառանգեց հավատքից եկող արդարությունը: Իր հավատքով էր, որ Աբրահամը հնազանդվեց Աստծո կոչին, որպեսզի ելնի ու գնա այն տեղը, որն իբրև ժառանգություն պիտի ստանար, և նույն հավատքին հետևելով Աբրահամը ճամփա ելավ՝ առանց իմանալու, թե ուր է գնում:

Հավատքով էր, որ պանդուխտի պես ապրեց այն օտար երկրի մեջ, որն Աստված խոստումով իրեն էր տվել: Իսահակը նույն հավատքով սիրելի եղավ և օրհնեց Հակոբին ու Եսավին: Հավատքով էր, որ Հովսեփն իր վախճանման պահին հիշեց Իսրայելի ժողովրդի՝ Եգիպտոսից ելնելու խոստումը, և խնդրեց, որպեսզի իր աճյունը նույնպես փոխադրեն այնտեղ: Մովսեսն իր հավատքով սքանչելի գործություններ գործեց, իր հավատքով օծ դար-

ծած գավազանի փասը հարվածներով սպանեց եգիպտացիներին, հավատքով ճեղքեց-բաժանեց ծովը և իր ժողովրդին անցկացրեց, հավատքով փայտը գցեց դառնահամ աղբյուրի մեջ, և ջուրը քաղցրացավ: Հավատքով մանանա իջեցրեց՝ իր ժողովրդին փացնելու, նույն հավատքով փարածեց իր բազուկները և հաղթեց Ամաղեկին:

Հավատքի միջոցով Աստծո ողորմությանն արժանանալու շատ ու շատ օրինակներ կան նաև Նոր Կտակարանում: Մեր Երկնավոր Տերն Իր երկրավոր քարոզության ընթացքում բազմիցս մեծարեց ու գովատեց հավատքը՝ որպես մարդու հոգևոր կյանքի էական հատկանիշ: Սիրելի հավատացյալներ, եթե ուշադիր կարդանք Նոր Կտակարանը, ապա կտեսնենք, որ Տիրոջ կողմից կատարված հրաշագործ բժշկությունները զուգորդված են Իրեն մոտեցողների հավատքով:

Հավատքով մարդը մասնակից է դառնում աստվածային գործերին, որ անճառելի են և վեր մեր մտքից ու իմացումից, և ոչ միայն այս. հավատքով կարելի է խնդրել և ստանալ ամեն բան և նույնիսկ գործել այն, ինչ հնարավոր չէ մարդկային բնությանը, քանզի ինչպես մեր Տերն է ասում «Եթե հավատաք և չերկմտեք, չկա այնպիսի բան, որ չկարողանաք անել» (Հմմտ. Մարկ. ԺԱ 23): Հավատքը մուտք է դեպի երկնքի արքայություն և հոգևոր բարիքներ, հավատքով է տեղի ունենում մարդու ներքին վերափոխման հրաշքը:

Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի շնորհիվ էր, որ կույրի աչքերը բացվեցին, Հիսուսին մոտեցած մարդու նույն հավատքի զորությամբ իր հիվանդ որդին բժշկվեց, ժողովրդապետի դուստրը Քրիստոսի հանդեպ ունեցած նույն հավատքով հարություն առավ, նույն հավատքով բժշկվեց տեռատես կինը, Քրիստոսի բարեկամ Մարթայի հավատքի շնորհիվ էր, որ Մեր Տերը հարություն տվեց նրա եղբորը՝ չորսօրյա մեռած Ղազարոսին:

Պետրոսն իր հավատքի համար վեմ անվանվեց և նույն հավատքի շնորհիվ կարողացավ քայլել ծովի վրայով, սակայն երբ երկմտեց, սկսեց ընկղմվել ջրերի մեջ:

Սակայն ի՞նչ է հավատքն իր այս խորունկ ու անպարփակելի իմաստի մեջ:

Հավատքը վերստեղծումն է այն «նոր մարդու», ով սիրով ինքն իրեն, խաչանման արվեստով, ընծայում է կամավոր ինքնապվչության այն ճշմարտություններին, գաղափարներին և արժեքներին, որոնք խաչով չեն խաչվում և հողով չեն թաղվում:

Սիրելի հավատացյալներ, հոգևորի հետ հաղորդակցություն հաստատելը մարդկային հոգու որոշակի կարողությունն ու օժտվածությունն է, որը գործում է աստվածային լուսավորության պայմաններում: Ինչպես մարմնավոր տեսողությունը գործում է զգայական լույսի ներգործությամբ, այնպես էլ հոգևոր տեսողությունը գործում է Աստծո շնորհական լույսի հետ միավորվելով: Մարդկային հոգու՝ Աստծո հետ հաղորդակցության մեջ մտնելու այս շնորհական կարողությունը կոչվում է հավատք:

Հետևաբար, սիրելիներ, հավատքը մեր մտքի ու տրամաբանության արգասիքը չէ, կյանքի փորձառությունից քաղված եզրակացություն չէ, զգացական ներթափանցում կամ մտքի թռիչք չէ, այլ Աստծուց տրված շնորհ, նույն Աստծուն ճանաչելու և հետևելու համար, ուստի հավատալ իր կրոնական իմաստի մեջ՝ նշանակում է վստահել այն բոլոր հայտնություններին, որոնք տրված են Աստծուց, և որոնք ըմբռնում ենք իբրև բացարձակ և անժխտելի ճշմարտություն: Այս իմաստով հավատքը կյանք է, քրիստոնյայի պարագային՝ մարդու ապրելու միակ ձևը:

Հավատքի այս միակ ձևով ապրեցին մեր նախնիները և մեր երկիրը զերծ պահեցին երևելի ու աներևույթ բոլոր թշնամիներից: Նույնիսկ ավելին, մեր նախնիներն այդ հավատքի ձևը պահեցին մանավանդ մեր պատմության ամենից փխուր, հուսահատեցուցիչ. խավարամած շրջաններում, հեթանոսության խավարը փարատելով Լուսավորչի՝ Արագածի կատարին վառած լույս կանթեղի զորությամբ, խափանելով օտարացման արհավրալից վտանգը Օշականի ամենասուրբ գերեզմանի սրբազնասուրբ, այբբենաստեղծ ու գրագյուտ վարդապետի ոսկեղենիկ լեզվով ու գրի անժանգելի պայծառությամբ և իր հաղթանակած բարձունքում մնացած և հազկերտյան սպառնալիքը խորտակած Կարմիր Վարդանի սրով:

Սիրելիներ, այսուհետ առավել մոտենանք հավատքին, քանի որ այսպիսի բազում զորություններ ունի այն: Հավատքը Եղիային երկինք բարձրացրեց, հավատքով հաղթվեց ջրհեղեղը, հավատքով ամուլները զավակներ ծնեցին, փրկվեցին սրից, ազատվեցին կապանքներից, ելան գբից, աղքատները բարձրացան, հալածվողները փրկվեցին, բաժանեցին ծովը, վեմը պատռեցին, ծարավներին ջուր տվեցին, քաղցածներին հագեցրին, մեռյալներին կենդանացրին, ալիքները կանգնեցրին, հիվանդներին բժշկեցին, հաղթեցին զորություններին, պարիսպները կործանեցին, առյուծների բերանը փակեցին, կրակը մարեցին, ամբարտավաններին խոնարհեցրին, խոնարհներին փառքի ու պատվի հասցրին, այս բոլոր զորությունները հավատքով գործվեցին:

Սիրելի հավատավոր ժողովուրդ, եկեք, ուրեմն, անսասան պահենք Քրիստոսի հավատքը մեզանում և մեր գործերով այն թարգմանելի դարձնենք ու հավետ հիշենք երկնքում մայր և երկրում հայր չունեցող մեր Տեր Հիսուս Քրիստոսի կենարար խոսքերը. «...զի որ հաւատայ՝ ընդունի զկեանսն յաւիտենականս» (Յովհ. Զ 47):

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. ամէն»:*

# Տ. ՊԱՐԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 փետրվարի 2004 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօրվան Ավետարանին մեջ՝ Ղուկասու Ավետարանին մեջ, շատ հստակ, բայց և հակիրճ կերպով կխոսվի Քրիստոսի տաճարին ընծայման մասին, որ սովորությունն էր հրեաներուն Մովսեսի Օրենքի համաձայն: Եվ սովորությունն այն էր, որ երբ երեխան 40 օրական կըլլար, որպես անդրանիկ երեխան՝ տղան, ծնողքը զինքը կբերեին տաճար՝ ընծայելու Աստուծո և զույգ մը աղավնիներ և կամ տատրակներ կնվիրեին տաճարին:

Ճիշտ այն ատեն մարդ մը կը գտնվեր տաճարի մեջ՝ Սիմեոն անունով, որ կսպասեր, աչք ուներ Աստուծո մխիթարությանը: Եվ այս մարդը թերևս վերջին մարգարեներեն մեկն էր, որ Սուրբ Հոգիին թելադրությամբը և հրահանգով կսպասեր՝ տեսնելու Աստուծո Օծյալը, այն հրամանին համաձայն, որ ինքը մահը պիտի չտեսնե, մինչև Օծյալն Աստուծո ներկայությունն զգա: Ճիշտ, երբ որ Քրիստոսի ծնողքը զԻնքը տաճար կբերեին, նույն ատեն Սուրբ Հոգիին առաջնորդությամբ, առանց ճանչնալու, թե ծնողքը զԻնքը տաճար կբերեն, ինքն ալ կնրթար տաճար և անհավասիկ կտեսներ Մանուկը և ծնողքին գիրկեն կառներ և իր գիրկը կդներ և կըսեր. «Արդ, արձակեա զծառայս Քո Տէր ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն Քո» (Ղուկ. Բ 30):

Թելադրված Սուրբ Հոգիեն՝ ինքը կսպասեր այն մանուկին, Ով պիտի ըլլար Օծյալն Աստուծո՝ զգալու խոստումը Սուրբ Հոգիին իր գիրկին մեջ, և մարգարեանալու, թե այս նորախան աշխարհ եկած է որպես լույսը հեթանոսներուն և բոլոր ժողովուրդներուն, ինչպես նաև ժողովուրդին Իսրայելի:

Հետաքրքրական է, որ նույն ատեն Սիմեոն կմարգարեանա ապագային լինելիք դեպքերուն, հատկապես Տիրամոր կրելիք չարչարանքներուն և պիտի վկայեր այն բոլորը, որոնք խոստացված էին կամ մարգարեացված էին Քրիստոսի համար, թե Ան պիտի չարչարվեր, պիտի խաչվեր և ապա հարություն պիտի առներ: Բայց մոր մը համար, անցնելու այդ փառապացին խորհուրդներեն, զոր Սիմեոն ծերունի կմարգարենանար, Մարիամ այդ բոլորը մտիկ կըներ՝ զարմացած, թե ինչ կըսեր այս մարդը:

Ինչպես մենք գիտենք Ավետարանի սկզբնական բաժինեն, երբ որ Քրիստոս ծնավ, հրեշտակներն օրհներանեցին, հովիվները եկան, ինքը, որպես խնլացի անձ մը Սուրբ Հոգիեն թելադրված, ամեն բան իր մտքին մեջ կպահեր: Եվ ահավասիկ Մանուկը գրկին մեջ այդ ծերունի մարգարեին, կանխատեսությունը մարգարեներուն, խոստումը Աստուծո Իր Սուրբ Հոգիին, որ պիտի գա Օծյալն Աստուծո փրկելու համար բոլոր ժողովուրդները այս աշխարհին և ավետիսը ըլլալու հատկապես քրիստոնյաներուս՝ բարի լուրը տալու մեզի,

ճանչնալու այն առավելությունը, որ Քրիստոսով մեզի տրվեցավ որպես ավետիքը Ավետա-
րանի այն քաղցր լուծին, որ մեզմե յուրաքանչյուրս իր ուսերուն վրա պիտի կրեր՝ դառնալու
համար այն առաքյալները, որ պիտի խոստանային ըլլալու, վերջիվերջո, Քրիստոսի ճամ-
փուն Իր նախատակները: Եվ այդ չարչարանքին մեջն էր, որ շատեր զգացին իրենց փրկու-
թյունը: Եվ անոնք, որոնք կրցան այդ չարչարանքը իրենց մեջ ընդունիլ և այդ չարչարանքի
ընդմեջեն տեսնել Աստված, անոնք է, որ իսկապես պիտի ընդունեին Աստուծո արքայու-
թյունը:

Երբ որ Սիմեոն մարգարե կըսե նույն ատեն, թե հակառակություն պիտի ըլլար որպես
նշան մարդոց մեջ, այսինքն՝ կցանկանար ըսել, թե մարդոցմե շատերը պիտի ճանչնային
զԻնքը և շատերը պիտի ուրանային Իրեն: Այսինքն՝ Ինքը եկած էր շատ հստակորեն և որո-
շորեն ճշտելու արդարներուն տեղը և անոնց, որոնք արդար չէին, և այդ հոլովույթին բաժա-
նումը շատերուն որպես գլորումը և շատերուն որպես բարձրացումը և հարությունը անոնց,
որոնք պիտի հավատային Օծյալն Աստուծո: Եվ ահավասիկ մարգարեն երբ որ իր գրկին
մեջ կընդուներ Մանուկը, արդեն ինքը կզգար, որ այլևս հաշտված էր մահվան հետ: Եվ
ճիշտ անոր համար էր, որ ինքը Աստուծմե խնդրեց. «Այլևս իմ ժամանակս վերջացած է, իմ
հոգիս, խնդրեմ, առ, ես այլևս տեսած եմ Աստուծո փրկությունը, այն մխիթարությունը, որ
բոլոր հրեաները կսպասեին»,- այսինքն՝ մխիթարությունը այստեղ կնշանակե բոլոր այն
խոստումները մեսիական, որոնք խոստացված էին մարգարեներու կողմե՝ գալու այն
Փրկիչը, Օծյալն Աստուծո, որ պիտի ըլլար փրկությունը աշխարհիս: Եվ փրկությունը ուրիշ
բան չէր, եթե ոչ փրկությունը մեր հոգիներուն, մեր մտքերուն և մեր սրտերուն:

Այսօր, երբ մենք կտոնախմբենք Տյառնընդառաջի տոնը, գիտեք, սովորություն է կրակ
վառել: Շատերը ատոր մեջ կտեսնան հեթանոսական սովորություն մը, որը, անշուշտ, ճիշտ
է: Բայց ատոր մեջ և ավելի կա քրիստոնեական ըմբռնումը, ինչպես երեկ տաղին մեջ մեր
ժառանգավորները կերգեին և կըսեին. «Բոլոր նահապետներուն, մարգարեներուն, վարդա-
պետներուն, սարկավագներուն, առաքյալներուն, քահանաներուն, դպիրներուն, ժողովուր-
դին և հատկապես մեզի՝ քրիստոնյաներուս համար մեծ ավետիս է»: Եվ ճիշտ անոր համար
է, որ երբ Սիմեոն մարգարեն կմարգարեանար, կըսեր. «Օծյալը՝ այս Մանուկը, եկած է ըլլա-
լու լույսը հեթանոսներուն, լույսը աշխարհին, լույսը հրեա ժողովուրդին»: Բայց ոչ միայն
հրեային վերապահված, այլև հրեա ժողովուրդին միջոցավ բոլոր ժողովուրդներուն, անոնք,
որոնք պատրաստ էին զԻնքը ընդունելու»:

Հետո մենք պիտի տեսնենք Պողոս առաքյալի վարդապետության և աստվածաբանու-
թյան մեջ, թե ինչպես ինքը պիտի դառնար հեթանոսաց առաքյալը: Եվ հոս է, որ Ավետա-
րանին ճշմարտությունը երևան կելլեր. Հիսուս աշխարհ եկավ ո՛չ միայն հրեաներուն հա-
մար, այլև բոլորիս՝ հեթանոսին և մեզի այն ատեն լույսը տարածելու, լույսը զգացնելու մե-
զի: Երբ որ մենք երեկ վառված կրակին առջև կկենայինք, այդ կրակը պարզապես կրակ
չէր, փայտերու ճենճերումը չէր, ատոր տաքությունը պարզապես ֆիզիկականորեն չէր, այլ
այդ տաքությունը որպես լույս՝ ճշմարտությունը տարածելու համար մեր տուներուն միջոցավ
յուրաքանչյուրս իր տունեն ներս, հատկապես մեր սրտերուն մեջ՝ ըլլալու համար յուրա-
քանչյուրս առաքյալը լույսի, տարածելու համար Աստծո խոսքը Ավետարանի միջոցավ բո-

յորին անխտրաբար: Եվ ճիշտ հոն է, որ մենք կըսենք. «Քրիստոնյաներուս համար ավետիս թող ըլլա»:

Յուրաքանչյուրս պարտականություն ունինք Ավետարանեն մեզի ժառանգված, թե մենք ալ առաքյալներ ենք, մենք ալ Ավետարանի պաշտոնյաներ ենք, մենք ալ մարգարեներ ենք և մենք ալ ունինք այդ պատասխանատվությունը Ավետարանի ճամփով մեզի տրված և վստահված՝ տարածելու համար լույսը բոլոր ժողովուրդներուն, քարոզելու համար Ավետարանը, և այդ բարի խոսքերը, որ Աստված մեզի տված է Ավետարանի ճամփով: Միավասիկ հոս էր, որ մարգարեն, ծերունին կմարգարեանար և ինքը իր աչքերով տեսավ: Երանի բոլոր անոնց, որոնք իրենց աչքերով կտեսնեն Աստուծո փրկությունը, այսինքն՝ երանի բոլոր քրիստոնյաներուս, որ մենք կզգանք մեր սրտերուն մեջ, մեր հոգիներեն ներս, թե Աստված աշխարհ եկած է փրկելու համար մեզի մեր բոլոր մեղքերեն: Եվ ատիկա ուրիշ բան չէ, եթե ոչ մենք, որ կընդունինք զԱստված մեր սրտերուն մեջ, մեր հոգիներեն ներս՝ ըլլալու համար Անոր իսկական առաքյալները:

Մարիամ ինքը այդ ցավին մեջեն անցավ, բայց Աստված այդ ցավը շատ անգամ կուտա փոխան խաղաղության՝ ապահովելու համար, վերջիվերջո, փրկությունը մեր բոլորին հոգիներուն, ինչպես որ պատահեցավ Տիրամոր. զլացավ անոր խաղաղությունը, բայց, վերջիվերջո, անոր համար ապահովեց փրկությունը, այսինքն՝ Վերափոխմամբ անոր աս աշխարհեն դեպի երկինք բարձրացում: Երեակայեցեք, մեր բոլորին ապագան այդ այիտի ըլլա, երբ որ մենք կհավատանք Աստուծո, որովհետև Անիկա պիտի ըլլա մեր հարության երաշխիքը: Պարզապես մենք պետք է որ ընդունինք, որ Աստված Ինքը եկավ, Սուրբ Հոգիի միջոցավ թելադրեց մեր բոլորին, որ եթե մենք կուզենք հավատալ, պետք է Անոր ճամփան բռնել:

Մեզմե քանիներ պիտի կարողանան ըսել՝ կարևոր չէ տարիքը. անիկա կըլլա երկու տարեկան, անիկա կըլլա քսաներկու տարեկան և անիկա կըլլա ութսունչորս տարեկան, ինչպես որ մարգարեն էր, ըսելու համար շատ հանգիստ կերպով. «Երբ որ խաղաղություն կզգաք ձեր հոգիներեն ներս, արդ, Տեր իմ, արձակե իմ հոգիս ալ, որովհետև ես զգացի կատարումը փրկության»: Եկեք բոլորս ալ այդ խոստումը ընենք Աստուծո և պատրաստ ըլլանք՝ Անոր ճամփան հարթելու և մենք ալ հարթելու մեր սրտերը, ընդունելու զԱյն մեր հոգիներեն ներս և ավետելու աշխարհին, թե լույսը հեթանոսներուն եկած է և այդ լույսը մեր մեջն է և այդ լույսը ուրիշ բան չէ, եթե ոչ Քրիստոս՝ Օծյալն Աստուծո, որ է օրհնյալ հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԻՆ

(17 փետրվարի 2004 թ.)

*«Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել՝ ոչ հրեշտակները և ոչ էլ մարդիկ. ո՛չ սուրը և ոչ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառը հարված»:*
(Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին)

Սիրելի հոգևոր եղբայրներ և բարեպաշտ ժողովուրդ.

Մեծ պահքին նախորդող շաբաթվա մեջ մենք հիշատակում ենք հիշարժան փոներ՝ Ղևոնդյանց և Վարդանանց սուրբ նահատակներին նվիրված, ընդ որում այսօր Ղևոնդ Երեցի, Հովսեփ Հողոցմեցի Կաթողիկոսի ու ևս յոթ հոգևորականների նահատակության հիշատակումն է: Նահատակներ, որոնք ճակատամարտից հետո շղթայակապ տարվեցին Պարսկաստան, բանտարկվեցին ու բազմաթիվ չարչարանքներից հետո մահվան դատապարտվեցին՝ ընդունելով Երկնային Արքայության անթառամ պսակը: Չնայած նրանց նահատակությանը հաջորդեց Վարդանանց նահատակությունը, բայց մեր Տոնացույցը թելադրում է հակառակ դասավորությունը: Եվ դա բնական է. Ղևոնդյանները Վարդանանց շարժման ոգին էին: Այդ նրանք էին համարվում այն ուժը, որը Վարդանանց ոգքի կանգնեցրեց: Եթե չլինեին Ղևոնդյանները, չէին լինի Վարդանները: Ղևոնդյանները մեզ ոգեւորող և հաղթանակների մղող ուժն են:

428 թ. Հայաստանում վերացվեց Արշակունյաց թագավորությունը: Հայաստանի՝ պարսկական տիրապետությանն անցած մասը դարձավ մարզպանություն և մարզպան նշանակվեց Վասակ Սյունին: Պարսից թագավոր Հազկերտը՝ Վռամի որդին, խիստ մոլեռանդ էր իրենց կրոնի օրենքները պահելու հարցում և ձգտում էր իր տերության սահմաններում բնակվող բոլոր ժողովուրդներին զրադաշտությանը դարձնել: Այդ ծրագիրն իրականացնելու համար նա 449 թ. մի հրովարտակ է արձակում, որով իր տերության սահմաններում գտնվող բոլոր ժողովուրդներին պարտադրում է զրադաշտական կրոնը: Շատերը, սակայն, հրաժարվում են ընդունել արքայի՝ աստվածուրացման այդ հրահանգը:

Այս ընթացքում հայ նախարարները, սպարապետ Վարդան Մամիկոնյանի և Կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցու գլխավորությամբ, Արտաշատում ժողով են գումարում և Հազկերտին պատասխան են գրում. «Այս հավատից մեզ ո՛չ ոք չի կարող խախտել՝ ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառը հարված»:

Ուր վտանգված է մեր ինքնությունը և պետականությունը, Ղևոնդյանները այնտեղ են: Զինվորներ միշտ կգտնվեն, ովքեր զենք կվերցնեն, բայց պետք է Ղևոնդ Երեցի ոգին ու նվի-

րումը, որն Ավնտարանի քաջ հովվի նման իր ժամանակին կախազանգի վտանգի վրա հասնելու մասին:

Ազգակիցներին օգնելու, փրկելու առաքելությունը մեծագույն շնորհ է, որովհետև չկա ավելի մեծ բան, քան այն, երբ մարդ իր կյանքը նվիրում է ուրիշին փրկության առաջնորդելու գործին, ինչպես Քրիստոս ասաց. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. ԺԵ 13): Ճիշտ նույն ապրումներն ուներ նաև Պողոս առաքյալը, երբ ասում էր. «Ես ինքս երդումով փափագում էի նզովվել Քրիստոսից իմ ազգակից եղբայրների համար» (Հռոմ. Թ 3):

Հայաստանում լսելով նախարարների ուրացության լուրը՝ ժողովուրդը ոտքի է կանգնում: Ծաղկոտն գավառի Անգղ ավանում աստվածասեր Ղևոնդ Երեցը և Եկեղեցու միաբաններն ու ժողովուրդը փայտերով ու քարերով հարձակվում են մոգերի վրա և ծեծելով քշում նրանց: Պարսից մոգպետը, տեսնելով հայերի ընդդիմությունը, հասկանում է, որ անհնար է նրանց բռնությամբ ստիպել՝ ուրանալ Քրիստոս Աստծուն և կրապաշտ դարձնել: Սակայն նա օժանդակություն է գտնում Վասակ Սյունուց, որն այդ ժամանակ Հայաստանի մարզպանն էր, և պարսիկների հետ համագործակցելով՝ այս կերպ ցանկանում էր բազմել հայոց գահին:

Այսօր էլ մենք կանգնած ենք զանազան ազգադավ և հավատուրաց, պարտադրվող հրովարտակների առջև: Հագկերտները չեն փոխվում, նրանք միշտ մնում են նույնը՝ միշտ կործանող ոգով ու մտադրությամբ: Դեմքերը փոխելով, զանազան դիմակներ հագնելով՝ այսօրվա բազմազան աղանդավորական շարժումները ոչ այլ ինչ են, եթե ոչ նույն այդ հազկերտյան հրովարտակները: Հենց այստեղ են պետք Ղևոնդները, որ ի չիք դարձնեն այդ հրովարտակների ազդեցությունը, տեր կանգնեն իրենց հոտին, թույլ չտան իրենց հոտին օտարամուտ կերակուրներով սնվելու: Ղևոնդյանները միավորող ուժ են:

451 թվականին, գարնանը, պարսկական զորքը, Մուշկան Նյուսալավուրտի գլխավորությամբ, մտնում է Հայաստան և հասնում Արտազ գավառ՝ բանակ դնելով Տղմուտ գետի աջ ափին: Պարսկական զորքը երկու հարյուր հազար էր, հայկականից երեք անգամ ավելի, սակայն հայերը չէին երկնչում, որովհետև Ղևոնդյանները միավորել էին թե՛ բանակը և թե՛ ժողովրդին: Վարդան Մամիկոնյանը՝ հայոց սպարապետը և զորավարը, քաջալերիչ խոսքերով խրախուսում է զորքին՝ ասելով. «Վախը թերահավատության նշան է: Թերահավատությունը մենք վաղուց մերժել ենք մեզնից, նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքից ու խորհուրդներից»:

Հոգևորականները մկրտում են չմկրտվածներին: Բոլորը Ս. Ավետարանի վրա երդումով միաբանվում են, միակամվում, որով հայոց բանակատեղին նմանվում է շարժական Եկեղեցու՝ Ս. Ավազանով, Ավետարաններով, խաչերով, սրբերի նշխարներով և անգամ Եկեղեցու նվիրապետությամբ՝ կաթողիկոսից մինչև սաղմոսասաց: Հավաքվածներին կարելի էր նմանեցնել ոչ թե զինվորների, այլ ավելի շուտ կրոնավորների, ովքեր պատրաստ էին մահվան՝ հսկումով, աղոթքով, սաղմոսերգությամբ, աստվածաշնչյան ընթերցումներով, աստվածային խոսքի վարդապետությամբ, մկրտությամբ և Հաղորդության խորհրդով:

Մենք եկեղեցասեր ժողովուրդ ենք՝ միավորված Ղևոնդյանց ոգով: Անհնար է պատկերացնել հային այլ Եկեղեցու հովանու ներքո: Եկեղեցին է մեր հայրենիքը, մեր հոգևոր հայ-

րենիքը. որով էլ արժեվորվում է բուն հայրենիքը: Այսօր առավել քան երբեք մենք միավոր-
վել ենք Աստծո կողմից մեզ շնորհված Հայոց աշխարհի շուրջ՝ Հայաստանի և Արցախի.
որոնց առանցքը դարձյալ Ղևոնդյանների ոգին է: Այդ ոգին է. որ մղում է մեր զինվորներին
առանց վախի կանգնել թշնամու առաջ. ինչպես Դավիթը՝ Գողիաթի:

Վարդանանց պատերազմից անցել են դարեր. բայց նրանք միշտ կենդանի են մեր
խոցում, և յուրաքանչյուր հայ պարտավոր է իր հոգու մի գողտրիկ անկյունում հիշել ու խո-
նարհվել նրանց հիշատակի առաջ. քանի որ մեր այս սրբերի ճգնությամբ և նահատակու-
թյամբ մեր ժողովուրդը հավատարիմ մնաց մեր Փրկչի երկնային վարդապետությանն ու
հարատևեց դարեր: Այսօր էլ նրանք Աստծո առաջ բարեխոս են մեզ համար՝ հանուն հավա-
տի և Եկեղեցու, ժողովրդի և պետականության պահպանության: Ղևոնդյանների ոգին չի
մարում, այն ծիլեր է արձակում և ծգտում դեպ ապագան, դաստիարակում նոր սերունդ՝ հա-
վատարիմ ու նվիրված, այն սերունդը, որը Քրիստոսի լույսով է լուսավորված, և որը հաղ-
թանակած դուրս կգա ամեն տեսակի փորձություններից ու իրեն դարանակալած ծուղակնե-
րից:

Ղևոնդյանների խորհուրդը հարատև է: Պատմության քառուղիներում այն միշտ ուղեկ-
ցել է մեզ և այսօր էլ երաշխավորն է մեր հաղթանակի ինչպես անցյալ դարավերջին Արցա-
խում, այնպես էլ այս նոր՝ 21-րդ դարում: Հիմա էլ մեր հոգևոր հայրենիքը, մեր հավատը, մեր
Տիրոջ երկնային վարդապետությունը Ավարայրի դաշտի է վերածվել օտարամուտ զանա-
զան աղանդների՝ Հայաստան ներխուժումից, որոնք ուզում են իրականություն դարձնել
հազկերտյան հրովարտակը: Բայց մենք մեզ հայր ենք ճանաչում Ս. Ավետարանը և մայր՝
Առաքելական Սուրբ Կաթողիկե Եկեղեցին: Եվ թող ոչ ոք իբրև չար անջրպետ մեջ ընկնե-
լով՝ մեզ սրանցից չբաժանի: Թող Ղևոնդյանների ոգին այսօր մեզ՝ քահանաներիս, նոր լիցք
հաղորդի՝ մեր հավատարմությամբ ու նվիրումով հաղթելու և մեր հավատքի դրոշը հանդի-
սացող Ս. Էջմիածնի լուսավորչաբույր ոգով մեր Տեր Հիսուս Քրիստոսի լույսը տարածելու
մեր ժողովրդի մեջ:

Վեհափառ Տեր, համազգային այս տոնի կապակցությամբ գալիս ենք ողջ հոգևորակա-
նաց դասի անունից շնորհավորելու Ձերդ Սրբության քահանայապետական տոնը, որպես-
զի Աստված Ձեզ ուժ և առավել եռանդ պարգևի՝ առաջնորդելու մեր Սուրբ Եկեղեցին դեպի
խաղաղության նավահանգիստը՝ Ս. Ղևոնդ Երեցի և Ս. Հովսեփ Կաթողիկոսի փառավոր
օրինակով:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրհնությունը, Աստծո սերը և Սուրբ Հոգու շնորհը լինի
ձեզ բոլորիդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ

(19 փետրվարի 2004 թ.)

*«Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն»:*
(Մատթ. Ե 11)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ.

Տիրոջ ավետարանական այս պատգամն օրհնություն դարձավ բոլոր այն քրիստոնյաների համար, ովքեր քրիստոնեությունը դարձրեցին իրենց անունը, իրենց մաշկի գույնը և պատրաստ եղան նահատակության և իրենց արյան միջոցով պահպանեցին քրիստոնեական հավատքը, որովհետև այդ ամենը գաղափար էր, մտածողություն, գիտակցություն, և ոչ ոք չի կարող հանում Քրիստոսի նահատակության պատրաստ քրիստոնյայի միջից հանել այդ ամենը:

Եվ ահա այսօր, մանավանդ Սրբոց Վարդանանց այս նվիրական տոնի օրը, երբ մենք ողջ Եկեղեցով նշում ենք հիշատակը Ավարայրի ճակատամարտում հոգևոր և բարոյական հաղթանակ տարած Սուրբ Վարդան Մամիկոնյանի և նրա հետ նահատակված հազար երեսունվեց զինվորների, այս օրը դառնում է մեզ համար ավելի նվիրական, ավելի սուրբ. այսօր մենք կարծես թե ավելի քրիստոնյա ենք դառնում, որովհետև Վարդանանց ոգին, Վարդանանց շունչն է այսօր մեզ ներշնչում, որովհետև այսօր հավաքված ենք այս Սուրբ Տաճարի մեջ Սրբոց Վարդանանց նահատակ սուրբ հոգիների հրավերով:

Այո, Տղմուտ գետի ափին հասած հայոց բանակն իր ունեցած փոքրաթիվ ուժերով կանգնել էր Հազկերտի մեծաթիվ զորքի դեմ: Շատերս գիտենք, անշուշտ, Սրբոց Վարդանանց պատմությունը, և այսօր պատմությունն ապրելու և այդ պատմության խորհուրդը գիտակցելու օրն է: Մենք կարող ենք տեսնել, թե ինչպիսին է այսօր Սուրբ Վարդանը մեր մեջ: Արդյոք այսօր մենք Սուրբ Վարդանի հոգին մեր մեջ կրողնե՞րն ենք, այսօր մենք այս հազար երեսուն և վեց նահատակների ոգին մեր մեջ կրողնե՞րն ենք, մենք է՞լ ենք այսօր պատրաստ մեր ժամանակների մարտահրավերներն ընդունելու:

Գուցե այսօր մեզ չեն հալածում մեր հավատքի համար, գուցե այսօր շատ չեն խանգարում մեզ, որ մենք ազատորեն պաշտենք մեր քրիստոնեական հավատքը, սակայն այսօր էլ մենք կանգնած ենք աշխարհի բազմաթիվ մարտահրավերների առաջ: Եթե այն օրերին կրոնական հալածանքն էր Հազկերտի կողմից, ապա այսօր մենք տեսնում ենք տարբեր հարձակումներ մեր Եկեղեցու վրա՝ լինեն դրանք աղանդավորներ, լինեն տարբեր գործողու-

թյուններ, որոնք որ ուղղված են այսօրվա մարդու դեմ, որոնք խանգարում են նրա քրիստոնյա ավելի կենդանի դարձնելու: Ահա մի կարևոր խորհրդանական ապրումներն ու զգացումներն ավելի կենդանի դարձնելու: Ահա մի կարևոր խորհրդանական ապրումներն ու զգացումներն ավելի կենդանի դարձնելու: Ահա մի կարևոր խորհրդանշում, որ յուրաքանչյուր մարդ այսօր իրեն պիտի կրա. որքանո՞վ է ապրում իր ներսում Վարդանանց այդ հերոսամարտը:

Մենք գալիս ենք Վիրահայոց թեմից և այնտեղից գիտենք, որ այդ պատերազմին մասնակցություն է ունեցել նաև վրաց Նշանավոր զորականներից Վախթանգ Գորգասալը, և Կովկասի մեր քրիստոնյա եղբայրները ևս մեզ հետ միասին էին: Նույն կերպ այսօր էլ շատ մարտահրավերներ կան, որոնք ոչ միայն մեզ են սպառնում, այլ նաև ողջ մարդկությանը և ողջ քրիստոնյա ժողովրդին:

Մի պահ, սիրելիներ, այսօր կանգ առնենք ու նայենք պատմական այդ օրերին. Քաղկեդոնում հավաքված տարբեր քրիստոնեական Եկեղեցիների՝ներկայացուցիչներ փորձում էին այդ օրերին տարբեր խնդիրներ լուծել, սակայն մեր ժողովուրդն այդ օրերին կենաց-մահու և ճշմարիտ քրիստոնեական հավատի համար պատերազմ էր նահատակության: Մենք այդ օրերին կարիքը չունեինք ճշտելու աստվածաբանական տարբեր խնդիրներ, դրանք մեզ համար այլևս ճշտված էին, սակայն մենք կարիքն ունեինք մեր հայրերի աստվածաբանական օրհնությունը, գաղափարներն ու մտածողությունն այլևս կյանքի կոչելու: Եվ ահա Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցներն իրենց կյանքով ցույց տվեցին, որ ճշմարիտ քրիստոնյաներ են:

Ահա թե ինչու հայերի կյանքը եղել է, սիրելիներ, ոչ թե քրիստոնեության մասին խոսելը, վարդապետելը, այլ այդ ամենի հետ նաև սեփական կյանքով ապացուցել քրիստոնեական հավատի զորությունն ու ուժը:

Այսօր, սիրելի հավատացյալ հայորդիներ, Ս. Վարդանանց տոնը հաջորդեց երկու օր առաջ Ղևոնդյանց նահատակաց մեծ տոնին, երբ մենք նորից անդրադարձանք մեր հոգևոր դասի նահատակությանը Վարդանանց պատերազմում, երբ Ղևոնդյանց՝ Հովսեփ Կաթողիկոսի և Ղևոնդ Երեցի գլխավորությամբ, պարսն Խուժիստանի խորքերը և այնտեղ նահատակեցին՝ ջարդելով, փշրելով նրանց ոսկորները: Սակայն մի վայրկյան իսկ մեր Եկեղեցու հայրերը, մեր քահանա հայրերը երբեք չընկրկեցին ու մնացին անհողդողդ:

Ահա այդ շունչն է, որ այսօր մեր նվիրական այս երկու երիտասարդներին հրավիրել է սարկավագությունից դեպի քահանայություն:

Առաջինը՝ Տ. Կյուրեղ քահանան, որ ավազանի անունով Արմեն է, ծնվել, մեծացել և կրթվել է Միացյալ Նահանգներում: Վաչե արքեպս. Հովսեփյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ, ապրել եկեղեցական կյանքով: Եվ ահա արդեն մի քանի տարի է, ինչ հրավերով Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ընտանյոք հանդերձ տեղափոխվել է այստեղ՝ ապրելու և իր կյանքը շաղախելու մեր եկեղեցական կյանքին: Այսօր Տ. Կյուրեղ քահանան քահանայական օծում ստացավ՝ ապրելու Ղևոնդյանց կյանքով, ապրելու մեր նահատակ հայրերի կյանքով:

Եվ նրա կողքին մյուս, այս գեղեցկատես քահանան՝ Տ. Շահան քահանան (ավազանի անունով՝ Վարդան), ծնվել և կրթություն է ստացել այստեղ՝ ուսանելով Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանում: Այնուհետև որպես վերակացու իր ծառայությունն է բերել հենց այդ նույն նվիրական հարկի ներքո և ապա աշխատել Երջանկահիշատակ Գարեգին

Ա Կաթողիկոսի անունը կրող աստվածաբանական, հայագիտական կենտրոնում: Եվ այժմ նա էլ իր օծակից եղբոր հետ միասին կոչվում է քահանայության՝ արձակելու և կապելու մեր մեղքերը, տալու մեր հավատացյալներին Հաղորդություն և շարունակելու առաքելական մեր քահանայագործությունը:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության անունից շնորհավորելու մեր այս հրաշալի երիտասարդներին, ինչու չէ, նաև հանուն մեր հոգևոր դասի շնորհավորելու Ձերդ Սրբությանն այս նվիրական և սուրբ օրվա առիթով, որովհետև գիտենք, որ Դուք մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետևողությամբ, միշտ նայելով մեր ժողովրդին, մտածում եք. «Ահա հունձքն առատ է, բայց մշակները՝ սակավ» (Մատթ. Թ 37): Եվ ահա այդ հոգևոր դաշտն այսօր մեր երկու քահանաների օծմամբ ավելանում է:

Մենք շնորհավորում ենք նաև մեր նորաօծ քահանաների ծնողներին և բոլոր հարազատներին, որոնք որ այստեղ են և մեծ ուրախություն են ապրում:

Սիրելիներ, Վարդանանց տոնին, Ս. Պատարագի ավարտին, մենք նաև կատարում ենք Հայրապետական մաղթանք, որովհետև այս տոնը մեկ ուրիշ ուրախություն է պարգևում մեզ. այսօր անվանակոչության օրն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի, որովհետև Եղիշեի պատմությունից գիտենք, թե ինչպես առաջադեմն Գարեգինը, որ դարձավ հայոց ազնվականներից առաջին նահատակն այդ պատերազմի, ինչպես իր թափված արյամբ պահպանեց մեր քրիստոնեական հավատքը: Մենք գիտենք այսօր, որ առաջադեմ Ս. Գարեգինի, Վարդան Մամիկոնյանի և մեր հազար երեսունվեց սուրբերի աղոթքներն առատապես իջնում են դեպի մեր Հայրապետը՝ Նորին Սրբությանը արևշատ բազում տարիներ պարգևելու, որպեսզի հովվի մեզ, որպեսզի հոգևոր դասին և նրանց հետևող ժողովրդին առաջնորդի դեպի խաղաղության նավահանգիստ:

Այսօր, սիրելիներ, որքա՜ն մենք կարիքն ունենք հոգևոր խոսքի, Ավետարանի խոսքի, անկեղծ մտերմության ու անկեղծ բարեկամության: Այս ամենը դրված է Եկեղեցու ուսերին: Պատկերացրեք, թե որքան բարդ ու դժվար է մեր Եկեղեցին առաջնորդող հովվապետի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի կրած ծանրությունը: Մնանք աղոթող մեր Վեհափառի համար, որպեսզի Հայոց Եկեղեցին ուղիղ վարդապետությամբ առաջնորդի, և մենք, որպես նվիրյալ զինվորներ, նման այն հազար երեսուն և վեց նվիրյալներին, Հայոց Հայրապետի կողքին շարունակենք մեր հոգևոր ծառայությունը:

Ու թող Աստված օրհնի մեր ժողովրդին այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն:

# Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՏՈՆԻՆ

(22 փետրվարի 2004 թ.)

*«Յորում ցնծայր զուարթութեամբ*
*անփխրական խնդութեամբ»:*
(Շարակնոց):

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սույն տողերը Բուն Բարեկենդանի օրհնության շարականի երկրորդ փան բառերն են: Այնտեղ սրբազան շարականագրի կողմից նկարագրվում է, թե ինչպես Բանը Հոր և Սուրբ Հոգու հետ ստեղծեց աշխարհը և մարդուն: Եվ վեցերորդ օրը ստեղծված մարդն ապրեց դրախտի մեջ, ինչպես շարականագիրն է ասում, դրախտի մեջ «անփխրական խնդութեամբ» ապրեց, այսինքն՝ փխրություն, ցավ և հոգս չունեցող խնդությամբ ապրեց:

Այսօր Հայաստանյայց բոլոր եկեղեցիների խորանները փակված են, և Բուն Բարեկենդանի տոնն է: Բուն Բարեկենդան ենք կոչում, որովհետև շաբաթապահքերին նախորդող բարեկենդանների մեջ ամենակարևորն ու գլխավորն է: Բարեկենդան՝ բարի կենդանություն բարդ բառն է, որ կնշանակե եկեղեցական իմաստով պատրաստության մի շրջան, սնունդով և զվարճությամբ անդրադառնալու, որ այսօրվա ճոխ սեղաններին պիտի հաջորդի այն պատրաստությունը, որը մեզ պիտի առաջնորդի քառասնօրյա պահեցողության շրջանի հոգևոր վերելքի:

Քառասնօրյա պահեցողության շրջանը մեր հայրապետների կողմից թելադրված և հաստատված մի շրջան է, որի ընթացքում պահեցողությունը գլխավոր դերն է կատարում մեր կյանքի մեջ, պահեցողություն նախ ուտելիքի հետ առնչված, թե ինչպես մենք մեզ պետք է զրկենք կենդանական աշխարհի սնունդից: Պահեցողությունը նաև մեր կամքի ուժը թրծելու և զորացնելու մի շրջան է: Բայց պիտի ըսենք, թե քրիստոնեությունը ուտելի՞ք է կամ խմելի՞ք: Ո՛չ երբեք:

Պահեցողությունը նաև, սիրելի հավատացյալներ, մեր բերանները պահելն է ո՛չ թե միայն ոչ պահոց կերակուրներից, այլ նաև մեր խոսելակերպի արտահայտության մեջ: Պետք չէ մենք հայհոյենք կամ չարախոսենք կամ բամբասանքներով զբաղվենք, այլ պետք է ընդհակառակը՝ կարողանանք զսպել մեր բերանները, որպեսզի չբամբասենք, չչարախոսենք, ուրիշների մասին վատ չարտահայտվենք: Նրանց մասին, որոնցից մենք դժգոհ ենք, նրանց մասին ևս վատ բան չպետք է ասենք: Ավետարանն ասում է, չէ՞ «Նախ քո աչքի միջի գերանը տես, հետո եղբորդ, դրացիիդ, թշնամիիդ աչքի միջի շյուղը» (Հմմտ. Մատթ. Է 3-5): Մեծ պահքը նաև ապաշխարության շրջան է մեզ համար, հատկապես աղոթքի շրջան է. աղոթել մեզ համար, աղոթել մեր Եկեղեցու ազատության համար, աղոթել մեր ընտանիքի

զավակների համար, աղոթել մեր ընկերների համար, աղոթել բանտերի մեջ տառապող մարդկանց համար: Տառապյալ զիջող մարդը կկարողանա և արդարության հասնել: Պետք է աղոթենք նաև հիվանդների համար, ծերունիների համար, որոնք տնից չեն կարող դուրս գալ ցրտի և կամ հիվանդության պատճառով:

Մի խոսքով, պետք է կարողանանք աղոթել նաև աշխարհի խաղաղության համար, Արցախի համար, Հայաստանի համար, պետք է աղոթենք նաև Հայաստանի ղեկավարության համար, որպեսզի Աստված նրանց հոգիները լույսով լցնի, և կարողանան ճշմարտության ճանապարհով առաջանալ և արդարություն գործել մեր երկրի մեջ: Արդարության պակասն այսօր ամբողջ աշխարհով մեկ զգալի է, թե ինչպես մարդիկ տառապում են, որովհետև իրենք անարդարության են հանդիպում: Տեսնո՞ւմ եք, բերանը զսպելը հաց ուտելու հետ միայն կապված չէ, նաև խոսքի հետ է կապված, նաև աղոթքի հետ է կապված, և մենք քառասնօրյա այս շրջանին անընդհատ, առանց հուսահատվելու, առանց ձանձրանալու պետք է աղոթենք մարդկության բարօրության համար:

Ապաշխարությունը շատ կարևոր մի երևույթ է մեր կյանքի մեջ: Մկրտությամբ եկեղեցու ավազանի մեջ մենք ադամական մեղքից ենք ազատագրվում, բայց մեր առօրյա կյանքի մեջ միշտ մոլորության ենթակա ենք, միշտ մեղքի ճիրանների մեջ ենք ընկնում և պետք է անընդհատ աղոթենք, մեր կապը Աստծո հետ հաստատենք ամուր կերպով և զԱստված ճանաչենք որպես մեր Տերը, մեր Առաջնորդը և մեր Փրկությունը: Ապաշխարությունը շատ կարևոր է քրիստոնյայի համար, որովհետև ապաշխարության միջոցով նա տառապում է իր գործած մեղքերի համար և Աստծուց քավություն խնդրում, որպեսզի Աստված իր մեղքերին քավություն շնորհի:

Ապաշխարության լավագույն օրինակներից է Պողոս առաքյալը, որ Սողոս էր հին հեթանոսական անունով: Քրիստոսի հարությունից հետո նա հալածում էր բոլոր քրիստոնյաներին, նրանց բռնում, չարչարում, դատապարտում և բանտարկել էր տալիս՝ հասցնելով մահվան դուռը: Եվ սակայն մի օր, երբ նա Երուսաղեմից գնում էր Դամասկոս, իր մեղքերի գիտակցությունը հավանաբար ունեցավ, իր՝ քրիստոնյաների հանդեպ ունեցած սխալ վերաբերմունքին անդրադարձավ հավանաբար, և ճանապարհին Աստծո լույսը հանկարծ լուսավորեց նրան:

Նրա աչքերը կուրացան և իրեն տարին Դամասկոս քրիստոնյա Անանիայի տունը: Այնտեղ և Անանիան իմացավ, թե ով էր քրիստոնյաներին հալածող այս «հերոսը»: Աղոթեց նրա վրա, և Աստծո օրհնությունը իջավ նրա վրա: Նրա աչքերը վերստին բացվեցին, և քրիստոնեության ամբողջ պատմության ընթացքին ամենաուժեղ ջատագովը դարձավ քրիստոնեության: Օր կա՞, որ Պողոս առաքյալի թղթերից մեկը չընթերցվի եկեղեցու մեջ:

Նույնն է պարագան նաև Տրդատ Երրորդ թագավորին, որ Հռիփսիմյանց, Գայանյանց կույսերը սպանել տվեց և մինչ այդ էլ, 290 թ., հրովարտակ հանեց Հայաստան աշխարհի քրիստոնյաներին հալածելու և մահվան դատապարտելու: Բայց ի՞նչ եղավ վերջը: Երբ Գրիգոր Լուսավորչին բանտարկեց, Գրիգոր Լուսավորչի Աստվածն այնքան ուժեղ էր, որ Հայոց արքային անդրադառնալ տվեց իր սխալները, և նա հիվանդացավ՝ խոզի կերպարանք ստացավ և գնաց Արաքս գետի ճահճուտները: Եվ Գրիգոր Լուսավորիչը կարողացավ Տեսիլքի միջոցով Տրդատի Խոսրովիդուխտ քրոջ՝ Խոր Վիրապի գուբից դուրս գալ և աղոթ-

քով բուժել հիվանդ արքային: Այդպիսով ապաշխարության շնչով արքան քրիստոնյա դարձավ և այս եկեղեցու հիմնադրության մեջ. հաստատության մեջ իր բաժինը ևս բերավ: Ագաթանգեղոս պատմիչը կըսե, թե «նա իսկ քարեր շալակում և բերում էր Արարատի սարորոտից, որպեսզի հայոց Մայր Տաճարը՝ Սուրբ Էջմիածինը կառուցվի»:

Ապաշխարությունը, տեսեք, ինչ հրաշքներ է գործում: Արդյոք մենք ևս կարո՞ղ ենք հրաշքների արժանի դառնալ՝ պահեցողության այս շրջանին ապաշխարելով, աղոթելով, մեր պահքը պահելով, խոտի և գեշ սովորություններից հեռու մնալով:

Ես ճանաչում էի Մանչեսթրում մի քահանայի, որ օրը երկու տուփ սիգարետ էր ծխում, սակայն Մեծ պահքից առաջ, Բուն Բարեկենդանին դադարեցնում էր ծխելը և հիսուն օր բերանը ծխախոտ չէր դնում, հակառակ որ այդքան մոլի էր: Իր կամքի ուժով կարողանում էր հաղթահարել իր այդ ցանկությունը:

Մենք ևս կարող ենք մեր ներքին կամքի ուժով հատկապես պահեցողության այս շրջանին մեծ գործունեություն ունենալ՝ մաքրելով մեր անձը, մաքրելով մեր ներքին անձնավորությունը կապանքներից և դեպի արդարություն առաջնորդվելով:

Թող Քրիստոսի լույսը լուսավորե մեզ բոլորիս:

*«Լուսով Քո Քրիստոս, լուսաւորեա եւ պայծառացո զմիտս մեր, զխորհուրդս մեր, եւ առաջնորդեա մեզ ի բարին այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

# Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(29 փետրվարի 2004 թ.)

*«Որ զդառնութեան պտղոյն ճաշակն,*
*որով մեռաք արդարութեան՝ պահելով*
*քո քառասնօրեայ, փոխեցէր ի քաղցրագոյն*
*օրհնաց քոց ճաշակումն: Աղաչեմք, արբո մեզ,*
*Տէր, զուրախարար սիրոյ քո զբաժակն»:*
(Շարակնոց)

Հոգևոր եղբայրներ, քույրեր, հարազատներ,

Աղոթանվեր և հավատավոր կյանքի այս փորձառութենեն եկած բառերով այսօրվան շարականը մեզի կարծեք լավագույն կերպով կբացատրե, թե ինչո՞ւ մենք քառասուն օր պահք պետք է պահենք, ինչո՞ւ քառասուն օր որոշ սննդանյութերե պետք է զրկվինք և մանավանդ ինչ է պահեցողության հիմնարար ուժը և կարողությունը: Ի վերջո մարդիկ հաճախ ինծի կըսեն. «Մեր կերածը ինչ է այս օրերուն, մեր ստացած սնունդը ինչ է այս օրերուն, որ Եկեղեցին մեզմե կպահանջե, որ հիսուն օրեր շարունակ մենք ջանանք սնանիլ այնպիսի սննդանյութերով՝ բանջարեղենով, խոտերով, որոնք չկան այս ցուրտ եղանակին և կամ այնքան թանկ են»:

Սիրելիներ, երբեք պահեցողությունը միայն ուտելիքի հետ կապված չէ. պահեցողությունը մեր հոգևոր կեցվածքին, մեր բարոյական անձնավորության անձնավորությունն է, և եթե կուզեք՝ մեր Եկեղեցվո հասկացողությամբ աստվածադիր, աստվածահաստատ և Աստծո կողմե կիրարկված աստվածային բացարձակ օրենք է: Աստված ո՛չ միայն ըսավ՝ պահք պետք է պահել, երբ դրախտը ստեղծեց և այնտեղ դրավ ծառը և մեր նախահայրերուն պատվիրեց չուտել անկե, այլ նաև Ինքը կատարեց այդ օրենքը, երբ Իր առաքելության սկսելեն քառասուն օրեր առաջ անապատ գնաց, պահք պահելու փոխարեն ծոմ պահեց:

Աստվածային այդ հնազանդության կակնարկե մեր շարականագիրը, երբ կըսե. «Տեր, մեր նախահայրերը կերան, չհնազանդեցան Աստծույն, կերան այդ պտուղը: Մենք արդար և աստվածաշեն և աստվածային բարի, արդար նկարագրով կյանքին համար մեռանք: Բայց Դուն ինչ ըրիր, Քրիստոս Աստված՝ Փրկիչ մեր: Գացիր, պահքը պահեցիր և Աստծո պատվիրաններուն ամենաքաղցր ճաշակը տվիր: Երբ մենք անհնազանդ գտնվեցանք, մեռանք դառնութենեն նույն այն կյանքին, որ Աստուծո հանդեպ անհնազանդ, ապստամբ կյանքն է, Աստուծո մերժումն է, Աստուծմե հեռացումն է: Բայց Դուն երբ Աստուծո պատվիրաններուն հնազանդեցար, պատվիրանները ճաշակեցիր, անոնց քաղցրությամբ, անոնց

բույրին և համին մեջեն մեզի հավիտենական կյանքը փվիր: Եվ արդ, կաղաչենք Քեզ, այնպես մը մեզի խմցուր Քո սիյտ բաժակեն, որ այլևս մէ.նք Ասփուծո անջ հասփափ, կանգուն և ապահով մնանք»:

Ըսփի եկեք միասին մփածենք, որ այս բարեպաշփական զգացումը այս օրերուն մենք ինչպե՛ս և ինչո՛վ պիտի թարգմանենք մեր աշխարհային կյանքի մեջ քառասուն օրերու այս ընթացքին: Ի՞նչ պիտի ընե Եկեղեցվո յուրաքանչյուր փորձառու անդամը՝ երիփասարդը կամ երեխան, երբ Եկեղեցի պիտի գա և Ասփուծո պիտի ուղղե իր խոսքը կամ իր հայացքը: Տեսեք, վարագույրը փակ է եկեղեցվո՝ մեզի զգացնելու, որ մենք Ասփուծմե հեռու ենք. ինչպե՞ս մենք գործնական քայլերով Ասփուծո կրնանք մոփենալ.

Առաջին՝ ինքնազսպում: Մարդիկ կսխալին, երբ իրենք զիրենք չեն կրնար զսպել: Եթե մենք մեր ներքին ցանկությունները չզսպենք, կդառնանք անբարո մարդիկ, եթե աշխարհեն մեզի եկած ֆիզիկական երապույրները մենք չզսպենք, կդառնանք այնպիսի ագահ մարդիկ, որ արդար, խաղաղ, հանգիսփ կյանքը ոչ միայն մեզի համար կզլանանք, այլև կզլանանք ընդհանրապես հասարակության համար: Ասփված մարդը սփեղծել է իշխանությամբ: Մարդ կսխալի, երբ այդ իշխանությունը կգործածե ուրիշին համար: Ամեն բանե առաջ մարդը այդ իշխանությունը ինք իր վրա պիտի փարածե: Այն մարդը, որ չի կրնա ինքզինքին զսպել, ինքզինքը ի կարգ հրավիրել, այդ մարդը իրավունք չունի ուրիշներուն հրավեր փալու:

Ասփուծո փված իշխանությունը ներքին կարգապահությունը, մեր անձնավորության ներքին կառուցվածքը ամուր և հասփափ պահելու միակ ձևն է: Եթե ինքզինքնին զսպեին մեր նախահայրերը, եթե մերժեին սափանային առաջարկներուն և հրավերին, որ օձի ճամփով ներկայացավ, Ասփուծո պափվիրանին մեջ հասփափ մնային, չպիտի սխալեին: Եթե կուզեք որևէ մեկ արդար, որևէ մեկ ճշմարիփ կյանքի մեջ ապահով, հասփափ մնալ, դուք ինքզինքնիդ պիտի զսպեք, սիրելի քույրեր և եղբայրներ: Կյանքի մեջ ամենամեծ գործերը ինքնազսպումով, կենփրոնացումով կիրագործվին: Եվ այդ է այսօրվան մեր շարականագիր վարդապեփին առաջին աղոթքը:

Թող Հայոց Եկեղեցվո զավակները ինքնազուսպ և ինքզինքնին որոշ կարգավոր կյանքի և պափվիրանապահ կյանքի մեջ պահեն, որպեսզի կարենան իրենք Ասփուծո պափվիրաններուն ուրախության բաժակը վայելել և հասնել անոր:

Երկրորդ՝ մեզի հսփակ թելադրանքը մեր Եկեղեցվո մեկ վարդապեփին աղոթքեն եկած, ան է, որ ուփելիքեն, խմելիքեն, հաճույքներեն մի պահ հեռու մնալով՝ մենք կենփրոնանանք Ասփված ճանչնալու և Ասփուծո պափվիրանները իմանալու, ուսանելու և հասկնալու մեր կարևոր պարփականության մեջ:

Մենք այսօր կշվարինք մեր կյանքի մեջ, որովհեփև չենք գիփեր, թե Ասփված ի՞նչ կըսե, Ասփված մեզմե ի՞նչ կպահանջե: Պափահականորեն սփեղծված կյանքի մեջ մփած մարդիկ չենք մենք: Ասփված Ինք բլլալով փիեզերքի այս սփեղծիչը, Ինքը գիփե այս համակարգին ամեն մեկ փոքր, թե մեծ օրենքը, Ինքն է, որ մարդիկը կղրկե, որպեսզի Իր համակարգը աշխափի բարվոք, լավ և արդար վիճակին մեջ, Ինքն է, որ Իր պափվիրաններուն փվչությամբ կուզե լուսավորել մեր սիրփը, մեր միփքը և հոգին, որպեսզի կարենանք լավ,

իրական մասնակցություն բերել այս աշխարհի մեջ Աստուծո առաքելությունը, Աստուծո սկսած գործը շարունակելու:

Մեր կյանքերը մեր գործերը փնօրինելու համար չեն, մեր կյանքերը Աստված տված է մեզի, որպեսզի Իր գործը, Իր արդարությունը, Իր սերը, Իր խաղաղությունը այս աշխարհին վրա տարածվի, աշխարհը մնա նույն մաքուր, այն առողջ միջավայրը, որուն մեջ մարդիկ իրենց բոլոր կարիքները, բոլոր ուրախությունները և ամեն տեսակի ձեռնարկները հաջողացնեն: Բայց առանց Աստուծո միտքը կարդալու, առանց Աստուծո ծրագիրը այս աշխարհին համար իմանալու մենք չենք կրնար Աստուծո օգնել, չենք կրնար Աստուծո կյանքին մասնակցիլ:

Անոր համար է, որ քառասուն օրեր Հիսուս սերտեց, թե աշխարհը փրկելու համար Աստված Իրեն ինչ առաքելություն տված է, աշխարհը փրկելու համար Աստված ինչ ուժ պետք է տա մեզի, ինչ պատվիրաններ, ինչ շնորհ կփոխանցե մեզի: Աստուծո պատվիրանները մեզ զրկելու համար չեն: Մարդիկ քրիստոնյաները շատ հաճախ կքննադատեն մեկ բանի համար. կըսեն. «Դուք մեզի կըսեք՝ էս մի՛ ըներ, էն մի՛ ըներ, էս մի՛ ուտեր, էս մի՛ խմեր կամ ամեն տեսակ աշխարհական ուրախություններն մեզ կզրկեք»:

Ատ չէ Աստուծո պատվիրաններուն հիմնական մտահոգությունը: Անոնցմե անդին անմահությունը, մնայունը, տևականը, ամբողջականը տալն է Աստուծո պատվիրաններուն հիմնական նպատակը: Դուք մի ժամ մի ժում հաց մի՛ ուտեք, ձեր հացը տվեք կարոտյալին, տեսեք, որքան ավելի կկշտանաք և որքան ավելի կհզորանաք: Դուք անարդար գործերով ուրիշներուն ունեցվածքը մի՛ խլեք իրենց ձեռքեն և տեսեք, թե աշխարհը որքան կհարստանա: Աստուծո ամեն մեկ պատվիրանին նպատակը այս աշխարհին մեջ բարիքը, առատությունը շատցնելն է, բոլորին հերիքող հարստություն տալն է այս աշխարհին վրա: Բայց պետի սերտել Աստուծո այս պատվիրանները, պետի իմանալ նրանց ճիշտ իմաստը:

Այս քառասուն օրերուն ընթացքին առավելապես ճաշակեցեք Աստուծո պատվիրանները՝ բացեք Աստվածաշունչը, նայեցեք՝ ո՞վ է ձեր Տերը, ճանչցեք իրապես աշխարհի ղեկավարը, Կառավարիչը, տիեզերքի ամբողջ հիմունքները դնող Անձը: Լսեցեք Նրան, տեսեք, թե ինչ կըսե: Անիկա ձեզ չպիտի զրկե, Անիկա ձեզ պիտի հարստացնե, Անիկա ձեզ չպիտի ստորացնե՝ էս մի՛ ըներ, էն մի՛ ըներ ասելով, քեզի էնպես ազատություն պիտի տա՝ այս աշխարհին մեջ գործելու բարին, ճշմարիտը, արդարը, որով դուն պիտի հզորանաս, դուն պիտի մեծանաս: Աստուծո պատվիրաններուն ունենալը, Աստուծո պատվիրաններուն իմացումը ունենալը և Աստուծո պատվիրաններուն ընդառաջ գնալը Մեծի պահոց՝ քառասնօրյա այս պահոց ամենեն կարևոր գործն է, որ յուրաքանչյուր հավատացյալ պետք է իրեն համար և աշխարհին համար ընե:

Երրորդ՝ հնազանդություն Աստուծո: Ինչ օգուտ և ինչ հետևանք կրնա ունենալ պատվիրանները գիտնալ, Աստուծո սքանչելի էակ ըլլալը գիտնալ, բայց սիրո ճամփով և հնազանդության ճամփով չմասնակցիլ Անոր կյանքին, այդ Աղբյուրեն չխմել ամբողջ շնորհները, որոնցմով մենք Աստուծո կնմանինք: Աստուծո նմանիլը արարչագործության մեջ խոստացված է, որ Աստուծո կողմե մարդուն տրված ամենամեծ պատիվն է: Մենք ուրիշ բաներու չենք կրնար նմանիլ, մենք Աստուծո պիտի նմանինք և Աստուծո նմանությունը միայն ու միայն կիրագործվի Աստուծո հնազանդությամբ, Անոր պես գործելով, Անոր պես նայելով

գեղեցկացնելով և պայծառացնելով՝ հավիտենական
ուրիշներին և Անոր պես այս աշխարհը գեղեցկացնելով և պայծառացնելով՝ հավիտենական
և հիմնարար առաքինություններու և սկզբունքներու կապվել:
շարականագիր վարդապետը

Այս պահոց ընթացքին եթե մենք չխմենք, ինչպես մեր շարականագիր վարդապետը կըսէ՝ «Ուրախարար սիրո բաժակը», այն, որ Քրիստոս Իր կյանքով, Իր զոհողությամբ, Իր չարչարանքներով, Իր խաչով և Իր հարությամբ մեզի բաշխեց, մենք Աստուծո չենք կրնար նմանիլ և Անոր խարազատ զավակները չենք կրնար ըլլալ: Աստուծո ուժը, Աստուծո շնորհքը, Աստուծո գեղեցկությունը այս աշխարհին մեջ չերևիր մարդոց: Մեր պարտականությունը ոչ միայն զԱստված սիրել է մեր սեփական անձին համար, այլ զԱստված սիրել է, որպեսզի մենք դառնանք ցուցանիշ. ամեն մարդ որ մեզի նայի, մեզ չտեսնե, զԱստված տեսնե, մեր փառքը չհյուսե, այլ Աստուծո փառքը հյուսե, մեզ չգովաբանե, այլ գովաբանե այն Տերը, որ այդ ամբողջ շնորհքը և կարելիությունը մեզ տված է:

Հռոմեական կայսրության շրջանին Եկեղեցին առաքյալների Եկեղեցի էր, ոչ մի ուժ ունեն, բայց այդ համեստ մեծ, հեղինակավոր անձինք իրենց ստրուկներուն՝կյանքին նայելով՝ Քրիստոսը տեսան, Քրիստոսը սիրեցին և Քրիստոսի հնազանդեցան: Կարևոր չէ, թե դուք որքան խոնարհ ընկերային դիրք ունիք. մարդիկ եթե ձեզ նային և ձեր մեջ ձեր Աստվածը տեսնեն, ձեր Տերը տեսնեն, Անոր կերթան և Անով դուք ալ կբարձրանաք, դուք ալ կհզորանաք:

Քառասնօրյա պահքը Աստուծո մասին վկայություն պետք է լինի մեր կողմե՝ Աստուծո էության և ինքնության մասին այս աշխարհին տրված: Եվ դուք Աստուծո պատվիրանները սիրելով, նրանց համը, ճաշակը ունենալով երբ ապրեք, դուք այդ վկայությունը անպայման կուտաք, սիրելիներ:

Թող այս քառասուն օրերը ինքնաքննության, խորհրդածության, բայց մանավանդ ինքնազսպումի, աստվածաճանաչության և աստվածասիրության այնպիսի առաքինությամբ հորդեցնեն մեր կյանքը, որ իրոք Աստված այս աշխարհին մեջ փիրաբար երևի և փիրաբար գործե, առանց Որուն ոչ մեկ փրկություն մեզ համար, ոչ մեկ մխիթարություն մեզ համար և ոչ մեկ հույս մեզ համար:

Բայց մեր Եկեղեցին իր աղոթքով մեզի այսօր կըսե. «Որքան թերանաք, Աստված այնքան ձեր մոտ պիտի մնա: Կարևոր է, որ դուք ձեր աչքերը բանաք, տեսնեք ձեր կողքից քայլող ձեր Տերը, ձեզ համար մինչև վերջ այս աշխարհին մեջ գործող, այս աշխարհին մեջ փիրաբար ներկա ձեր Փրկիչը: Եվ Իր պատվիրանները սիրելով և գործադրելով՝ դուք հասնիք Իր բոլոր խոստումներուն»:

*Աստուծո շնորհը, սերը, խաղաղությունը բոլորիս հետ ըլլա մեր կյանքի կարևոր այս հանգրվանին. ամեն:*

# Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 մարտի 2004 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ.

Այսօր լրացավ Քառասնօրյա Մեծ պահքի երկրորդ շաբաթը: Մեր Եկեղեցու հայրերը Մեծ պահքի յուրաքանչյուր կիրակիին փվել են հատուկ իմաստ և այդ կիրակիներին Ս. Գրքի ընթերցումների միջոցով մեզ ուսուցանում են զղջում ու ապաշխարություն և այդ զղջման ու ապաշխարության միջոցով մեզ առաջնորդում դեպի մեծահոգություն և դեպի ներողամտություն:

Այս օրը մեր Եկեղեցու Տոնացույցում անվանվում է Անառակի կիրակի, որովհետև այսօր ընթերցվում է Ս. Ավետարանից այն առակը, որ պատմել է Քրիստոս և որ ծանոթ է մեզ Անառակ որդու առակը անունով (հմմտ. Ղուկ. ԺԵ 11-32): Ես վստահ եմ, որ բոլորդ էլ ընթերցել եք այդ առակը, տեղյակ եք այդ առակի պատմությանը, և ամեն տարի, ամեն այս օրը մենք նորից անդրադառնում ենք այդ պատմությանը Հայ Եկեղեցու բեմերից, և խոսվում են քարոզներ՝ նվիրված այս առակին: Սակայն ամեն անգամ, երբ մենք կարդում ենք այն, ամեն անգամ, երբ լսում ենք այդ պատմությունը, մեզ համար մի նոր երբևրանգ է ի հայտ գալիս և նոր մտածումներ են ծնվում: Ես ցանկանում եմ շատ կարճ, համառոտակի կերպով հիշեցնել ձեզ այդ պատմությունը և այնուհետև մի քանի մտածումներ կիսել ձեզ հետ, որոնք այսօր ես ունեցա, երբ առավոտյան մի անգամ ևս ընթերցեցի այն:

Մի աշխարհում մի մեծահարուստ մարդ էր ապրում: Նա երկու որդի ուներ: Ավետարանում մինչ այդ ոչինչ չի ասվում այս մարդու և երկու որդիների մասին: Մենք սակայն ենթադրում ենք, որ նրանք ապրում էին իբրև մեկ ընտանիք և նրանք ապրում էին հաշտ և խաղաղ: Ես ցանկանում եմ շեշտել մեկ ընտանիքի կարևորությունը, որովհետև հնում ընտանիքը շատ ավելի լայն հասկացողություն ուներ, քան թե այսօր: Այսօր ընտանիքը մարդ է, իր կինը, իր երեխաները, իսկ այն ժամանակ այդ ընտանիքի մեջ մտնում էին նաև իր ծնողները, իր եղբայրները, և եղբայրներն այն ժամանակ շատ-շատ էին, այսինքն՝ ընտանիքի անդամների թիվը կարող էր հիսուն և ավելի հոգիներ լինել: Եվ հանկարծ երկու որդիներից մեկը որոշում է բաժանվել իր ընտանիքից:

Ավետարանիչն ասում է, թե նա ցանկացավ առանձին ապրել և հորից խնդրեց իրեն հասանելիք այն ժառանգությունը, որ ինքը պիտի ստանար հոր մահվանից հետո: Թեև դա սովորական և ընդունելի երևույթ չէր հին աշխարհում, սակայն հայրը ընդառաջում է իր որդու խնդրանքին, մի խնդրանք, որ անօրինական խնդրանք էր, և տալիս է նրան իր ունեցվածքի կեսը: Մենք այստեղ ականատես ենք լինում ոչ միայն հարստության բաժանվելուն, դա

երկրորդական նշանակություն ունի այս պատմության համար, այլ ականատես ենք լինում ընտանիքի փլուզվելուն:

Կրտսեր որդին վերցնում է իրեն բաժին ընկածը և մեկնում օտար աշխարհ: Այնտեղ նա վատնում է ամբողջ հարստությունը: Եվ երբ անդրադառնում է, թե ինչ կատարվեց իր հետ, հիշում է այն ընտանիքը, որտեղ ինքն ապրում էր, այն ընտանիքը, որտեղ ինքը թեև որդի էր, սակայն այդ ընտանիքում նույն լիառատ բարիքներն էին վայելում նույնիսկ ծառաները: Նա զղջում է: Նա զղջում է ոչ թե այն բանի համար, որ կորցրեց այն ամենը, ինչ որ ուներ, այլ կարոտում է ընտանեկան այն մթնոլորտին, որն ինքը կորցրեց: Եվ նախընտրում է վերադառնալ և ծառա դառնալ, քան թե մնալ որդի, սակայն հեռու իր հորից և իր ընտանիքից: Եվ վերադառնում է որդին:

Հայրը, որի սիրտը, անշուշտ, շատ էր ցավել, որը շատ էր կարոտել և գրեթե ամեն օր հիշում էր իր կորուսյալ որդուն, որին այլևս մահացած էր համարում, երբ տեսնում է որդուն, նա այլևս որևէ բանի մասին չի մտածում: Նրա սիրտը լցվում է մեծահոգությամբ և ներողամտությամբ և հրամայում է վերականգնել իր կորուսյալ որդուն իր որդիական հանգամանքի մեջ: Նրան ծիրանի է հագցնում և ձեռքին մատանի դնում: Մորթում են «եզն պարարակ» և խնջույք անում: Այդ պահին վերադառնում է ընտանիքի ավագ որդին, որը լսելով, թե ինչ է տեղի ունեցել, վրդովվում է և ներս չի մտնում, այսինքն՝ իր ավագ որդին չի ցանկանում կամ չի կարողանում խնդակցել իր հոր ուրախությանը, նա չի ուրախանում, որ իր եղբայրը հայտնվեց, նրա համար ուրիշ արժանիքներ գոյություն ունեին կամ արժեքներ:

Հայրը գալիս և համոզում է իր տղային. «Տղաս, ներս արի»: Իսկ նա ասում է. «Ոչ, հայր: Քո այդ զավակը վատնեց քո հարստության կեսը, իսկ դու ինձ մեկ ուլ չտվեցիր, որպեսզի ես իմ ընկերների հետ ուրախանամ, այն դեպքում, երբ ամբողջ կյանքում ես ծառայել եմ քեզ»: Առաջին հայացքից արտաքուստ թվում է, թե ավագ որդին ճիշտ է, այսինքն՝ նա ոչ թե վիրավորված էր, որ իր հարստությունը կիսվեց, այլ վիրավորված էր այն տարբերությունից կամ այն խստությունից, որ հայրն ամբողջ կյանքի ընթացքում ցուցաբերել էր իր նկատմամբ:

Քրիստոսի առակը սակայն այլ իմաստ ունի: Քրիստոս մատնանշում է մեծահոգության պակասը ավագ որդու մոտ, Քրիստոս մատնանշում է ներողամտության պակասը և շեշտում դրա կարևորությունը, որովհետև այս պատմության մեջ ոչ թե նյութականը՝ ոչխարները, հանդերը և կովերն արժեք ունեն, այլ ընտանիքի վերամիավորումն արժեք ունի, այլ զղջումը, ապաշխարությունը մի կողմից և մեծահոգությունն ու ներողամտությունը՝ մյուս կողմից: Կրտսեր որդին զղջաց և ապաշխարեց: Հայրը մեծահոգի գտնվեց և ներեց: Սակայն ավագ որդին չկարողացավ այդ անել:

Սիրելի հավատացյալներ, Մեծ պահքի քառասուն օրերն այն բանի համար են, որպեսզի մենք կարողանանք անդրադառնալ այս ամենին, որպեսզի մենք կարողանանք մի կողմից զղջալ – մեզանից յուրաքանչյուրն էլ կյանքում սխալվում և հանցանքներ է գործում, սակայն շատ ժամանակ մենք չենք կարողանում քաջություն ունենալ և խոստովանել, որ՝ այո, ես սխալվեցի: Անձնական հպարտությունը երբեմն սփիպում է մեզ, որ մենք չխոստովանենք մեր մեղքերը, մենք անձնական հպարտության գերին ենք դառնում և չենք կարողանում բացահայտել մեր սիրտը: Այդ ժամանակ մյուս կողմում կանգնած մեծահոգի Հայրը,

որ պատրաստ է մեզ ընդունելու, չի կարողանում ընդունել, որովհետև մենք առաջին քայլը չենք արել:

Ինչ վերաբերում է ավագ որդուն, շատ ժամանակ մենք էլ ենք նման երևույթների առջև կանգնում, երբ երկրորդականն ավելի ենք գնահատում, քան առաջնայինը, և երկրորդականին ավելի արժեք տալով՝ չենք կարողանում ցուցադրել և ցուցաբերել մեծահոգություն և չենք կարողանում ցուցաբերել ներողամտություն: Սակայն Քրիստոս կոչ է անում մեզ, կոչ է արել երկու հազար տարիներ առաջ, կոչ է արել երկու հազար տարիներ շարունակ և կոչ է անում ամեն տարի, Անառակի կիրակի օրը, որպեսզի մենք կարողանանք քաջ լինել, գիտակցել և խոստովանել մեր մեղքերը, կարողանանք պատրաստ լինել՝ կրելու այն պատիժը, որին մենք արժանի ենք այդ մեղքերի քավության համար, և միաժամանակ, որպեսզի մենք կարողանանք ցուցաբերել մեծահոգություն և ներողամտություն մեր շրջապատի նկատմամբ:

Եկեք միասին աղոթենք, սիրելի հավատացյալներ, որ Աստված մեզ բոլորիս ուժ և կարողություն տա, որպեսզի մենք հետևենք Քրիստոսի պատվիրաններին այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից ամեն:

# Տ. ՊԱՐԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 մարտի 2004 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ. ամէն»:

Հիսուս Իր առաքելության շրջանին հաճախ առակներով խոսեցավ Իր աշակերտնե-րուն և երբեմն ժողովուրդի հետ: Եվ այդ առակները թերևս ամենեն անմիջական միջոցներն էին, որպեսզի ժողովուրդը դյուրավ հասկնար այն, ինչ որ Ինքը կուզեր իրենց հասկցնել:

Եվ այսպես պատմեց բազում առակներ: Եվ այդ առակներն ունեին դաստիարակչական բնույթ: Մեր Տերը կզգուշացներ, կխրատեր, կթելադրեր և ապա պատասխանատվության կկանչեր մեզ բոլորս անհատապես և ժողովուրդը՝ առհասարակ, իրենց արարքներուն համար այս աշխարհիս մեջ, որ կգործեն՝ իրենց ցույց տալով հավիտենականին առավելությունները, քան երկրայինին՝ ժամանակավորին առավելությունները: Եվ այսպես յուրաքանչյուր առակ իր իմաստն ուներ:

Եվ այս կիրակի այդ առակներեն մեկը Տնտեսի կոչված պատմությունն է, ուր Հիսուս կպատմե, թե ինչպես հարուստ մարդ մը կար, որ տնտես մը ուներ: Եվ երբ իր մասին ամբաստանություններ եղան, անմիջապես կկանչե իր տնտեսը և կըսե, որ «Ես քո մասին բազում ամբաստանություններ կլսեմ, դուն պետք է, որ անմիջապես հաշիվը տաս ինծի: Եվ ապա գործեն կարձակվիս»:

Տնտեսը կմտածե, թե ինչ պիտի ընե, երբ որ գործեն արձակվի: Ամոթով պիտի մնա մարդոց առջև, այլ գործ պիտի չունենա, պիտի չուզե մուրալ: Ուրեմն, միջոցի մը կդիմե. կկանչե իր տիրոջը կողմե այն բոլոր պարտապաներուն, որ մասնավոր պայմանագիր կնքած էր, և այդ յուրաքանչյուրը անհատապես կանչելով՝ կհամաձայնի հետերնին: Եվ այսպես, եթե մեկը ըսենք թե հազար դրամ տալիք է տիրոջը, կըսե, որ հոս նոր պայմանագիր մը ստորագրե և հինգ հարյուր գրե: Մյուսը կկանչե, կըսե, որ «դուն հինգ հարյուր ցորենի պարկ տալիք ես տիրոջս, հոս նոր պայմանագիր մը ստորագրե՝ չորս հարյուր դուն միայն պիտի տաս»: Եվ իր տերը երբ որ կտեսնե տնտեսին այս արարքը, կգովե անոր հնարամտությունը և կըսե. «Այս աշխարհային որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերունդների մեջ»:

Այս առակը հասկնալը մեր բոլորին համար, անշուշտ, իր դժվար կողմերն ունի: Մեկնաբաններ տարբեր ձևով կմեկնաբանեն, բայց ես նկատի առնելով մեր նախնիքներուն այսօրվա հաստատած օրը՝ թերևս համարձակությունը պիտի առնեմ իրենցմե այն հուսով, որ մեր նախնիքները սխալ բան մը չեն ըրած և այս կիրակին ճիշտ հասկնալով՝ ուրեմն զետեղած են այս Քառասնօրյա պահոց ընթացքին:

Ատկե մեկնելով ես կուզեմ ձեզի ըսել, թե այսօրվա առակը խորունկ իմաստ մը ունի և առնչություն մը ունի Անառակի կիրակիին հետ: Թե ինչո՞ւ այդպես է. նախ պետք է, որ հասկնանք, երբ որ տերը կկանչե տնտեսը, նախ ինքը չամբաստաներ տնտեսին, հատկա-

պես, երբ որ մենք կկարդանք Ավետարանին մեջ և կիմանանք այդ մասին, թե ինչու համար փնտրեսը կոչված է անիրավ փնտես: Երբ որ մենք կկարդանք Ս. Գիրքը, ետն չենք տեսներ, որ տերը իրեն ուղղակիորեն ամբաստանած է որպես գող: Չի ամբաստանած, ընդհակառակը՝ իրմե հաշիվ պահանջած է, և ատիկա շատ կարևոր է առակը հասկնալու տեսակետեն: Եթե տերը հաշիվ պահանջած է, ուրեմն առիթը տված է, որ փնտեսը ինքզինքը արդարացնե: Եվ փնտեսը շատ խորագետ մեկը ըլլալով՝ կդիմե այն միջոցին, ինչ որ Ավետարանը արդեն բացատրած է մեզի:

Այս պարագային մենք չենք գիտեր, թե իսկապես ո՞վ էր անիրավը՝ փնտե՞սը և կամ իր տե՞րը: Այն պայմանագիրները, որոնք ստորագրված էին որպես մուրհակներ սկիզբեն, թերևս անոնց մեջը անարդարություն կար: Եվ ինչպես պիտի տեսնենք Ավետարանին մեջ, երբ որ փնտեսը կկանչե յուրաքանչյուրը և նոր պայմանագրեր ստորագրել կուտա, ետն թերևս մեր միտքեն կանցնի, թե իր տերը ինքը ավելի շահագործած է իր պաշտոնյաները, քան փնտեսը, կըսեմ թերևս: Եվ ճիշտ անոր համար է, որ փնտեսը կուզե առիթն օգտագործել: Շատ կարևոր է առիթն օգտագործել՝ ինքզինքը ազատելու և կամ չքմեղելու:

Այս աշխարհին մեջ Տերը մեզ բոլորիս առիթը կուտա, որ մենք արդարանանք մեր ապագա հաշիվներուն համար: Եվ փնտեսը կատարեց այն, ինչ որ իր տերը իրեն առիթը տված էր: Եթե մեզմե յուրաքանչյուրիս այս աշխարհիս մեջ առիթ տրվի և այդ առիթը մենք չկրնանք օգտագործել, այն ատեն մենք ենարամիտ չենք կրնար ըլլալ այս աշխարհիս մեջ: Լույսի որդիները պետքը չունին ատիկա անելու, որովհետև անոնք արդեն կապրին այդ իդեալ աշխարհիս մեջ՝ ընդունելով Տիրոջը այն վարդապետությունը, որ «Դուք բոլորդ, որ իմ ետևես պիտի գաք, արդեն իսկ դուք ժառանգած եք Աստուծո արքայությունը»: Իսկ անոնք, որոնք երկրի վրա կապրին և չեն ըմբռներ Իր ետևեն գալու կոչը և առիթը չեն օգտագործեր, անոնք արդեն կրնան մեղանչել:

Անառակի կիրակիին անառակ որդու առակը կկարդացվի: Անառակը մսխեց իր ողջ ունեցածը, բայց իրեն անգամ մը ևս առիթ տրվեցավ, որպեսզի ինքը զղջա: Եվ եկավ, զղջաց, և իր հայրը ներեց իրենց:

Այս պարագային փնտեսին, երբ որ առիթը տրվեցավ, օգտագործեց առիթը լավագույնս և ուզեց մարդոց բարիք ընել, որպեսզի ապագային, երբ որ ինքը գործ չունենար, մարդոց առջև չամչնար ելլելու և խպարտորեն, երեսը բաց մարդոց տուներ այցելեր: Եվ անոր համար է, որ տերը փնտեսին ենարամտությունն է, որ կգովե, ոչ թե անոր անիրավությունը: Եվ ապա կշարունակե Ավետարանը իր խոսքը և կըսե. «Ձեզմե յուրաքանչյուրդ պետք է, որ բարեկամներ ընեք անիրավ մամոնայեն» (Ղուկ. ԺԶ 9):

Դրամը ուրիշ է և Աստծո ծառայելը ուրիշ է: Այսինքն՝ դրամին ծառայելը ուրիշ է և Աստծո ծառայելը ուրիշ բան է: Մենք երկու տերանց չենք կրնար ծառայել, միայն մեկ Տիրոջ: Եվ Աստված, որ մեզ ստեղծեց, Ինքն է, որ մեզի առիթը տված է այս երկրի վրա արդարանալու ապագային հաշվուն: Մենք պետք է, որ առիթը օգտագործենք լավագույնս և ենարամիտ ըլլանք, ինչպես որ փնտեսը ենարամիտ գտնվեցավ իր արարքին մեջ: Եվ թերևս, երբ որ մենք կգործածենք բառը՝ Անիրավ, ես կխորհիմ այս պարագային պետք է չակերտներուն մեջ առնենք այդ բառը այն իմաստով, որ փնտեսը կրցավ ինքզինքը արդարացնել, երբ որ

իր տերը իրեն առիթը տվավ արդարանալու, այսինքն՝ ըսավ՝ հաշիվներդ կուզեմ քեզմե: Եվ ինքը հաշիվները տվավ, տվավ այն ձևով:

Թերևս խարդախություն է, անշուշտ, երբ որ բան մը կկեղծես և ճիշտը չես ըներ, ատիկա խարդախություն է, խաբեբայություն է: Բայց Մովսիսական Օրենքի դեմ, որ կմերժեր տոկոս տալը, արդյո՞ք ատիկա խաբեբայություն էր, թերևս, երբ որ այդ բոլորը տոկոսային կերպով օգտագործված էր, և ինքը հնարամտություն մը ունեցավ այդ բոլորը մաքրելու մի անգամ ընդմիշտ: Թերևս հոն է, որ ինքն ալ իրեն առիթը տվավ արդարանալու, այն, ինչ որ իր տերը իրմե կսպասեր:

Ուրեմն, սիրելի ժողովուրդ, առակին իմաստը եկեք փորձենք ճիշտը հասկնալ. ոչ թե որպես երկրի որդիներ իրարու կարենանք խաբել, որպեսզի արդարանանք՝ ոչ, այլ հնարամիտներ ըլլանք, ինչպես որ մեր Տերը կըսե. «Խորագետ եղեք, ինչպես օձը, և միամիտ՝ ինչպես աղավնին» (Մատթ. Ժ 10): Ուրեմն խորագիտությունն է այս պարագային կարևորը և ոչ թե օձին հետ նմանությունը և կամ աղավնիին հետ նմանությունը և միամտությունը, որպես բարություն: Եվ ճիշտ ատ է, որ Աստված մեզմե կպահանջե, երբ որ մենք այս երկրին վրա կգտնվինք, այս երկրին բոլոր բարիքները մենք կվայելենք և այս երկիրը մեզի որպես առիթը ընծայված է՝ արդարանալու և զղջալու: Մենք բոլորս այս կամ այն ձևով մեղանչողներն ենք, մեղք գործողներն ենք, մեղք կգործենք, ինչպես որ տնտեսը գործեց, ինչպես որ տնտեսին իրական տերը գործեց, իր ագարակին մեջ օգտագործեց ատ բոլոր մարդիկը, և անոնց չարաշահեց: Նույնը պիտի ըներ տնտեսը, նույնը մենք կընենք բոլորս այս դաշտին մեջ, բայց երբ որ առիթը կտրվի մեզ արդարանալու, ինչպես որ տրված է, երբ որ մենք ատիկա չենք կրնար օգտագործել, այն ատեն է, որ մենք մեր կորուստը կպայմանագրենք:

Եկեք բոլորս ալ ճիշտ իմաստը ըմբռնելով մեր կյանքը կոչենք Աստուծո կյանքին հետ ըլլալու, որպեսզի կարենանք ժառանգել այն, ինչ որ Աստված մեզի տված է որպես ժառանգ: Փարիսեցիները չհասկցան Քրիստոսին և անոնք դարձան միայն արծաթասերներ, անոնք զուտ օրենքին կառչած՝ օգտագործեցին օրենքը իրենց շահերուն համար անձնական, և մոռցան իրական բարիքը, որ իրենց չորս կողմն էր: Եթե մենք կուզենք տարբեր ըլլալ փարիսեցիներեն, կուզենք լույսի որդիներ ըլլալ, քան այս երկրի, ուրեմն ջանանք մենք ալ բարիքներ ընել չորս կողմը, մենք ալ կարենանք տալ այն, ինչ որ Աստված մեզի տված է: Եթե մենք կրնանք ատիկա ընել, մենք արդեն իսկ առիթը օգտագործած ենք դեպի լավը երթալու համար, որ հավիտենական կյանքն է, ջանանք այս երկրի վրա ընել այն, ինչ որ մեզի խոստացված է Ավետարանին: Այսինքն մեր մեղքերեն հեռու մնալ, մեր մեղքերը զղջալ և Աստուծո ապաշխարությունը խնդրել:

Եվ որովհետև այսօրվան խորհուրդը ուղղակիորեն կապված է Անառակի, Դատավորի կիրակիներուն հետ, այսինքն՝ զղջման և արդարացման պատմության հետ, ուրեմն մենք ալ պետք է ջանանք ինքզինքնիս արդարացնել ճիշտ ձևով՝ հնարամիտ ըլլալով, ոչ թե խաբելով: Խաբեբայությունը երկնքում կիմացվի, եթե մենք խաբեբայություն ընենք այս աշխարհիս մեջ...

# Տ. ԴԱՎԻԹ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 մարտի 2004 թ.)

*«...Եվ հարատևորեն աղոթել առանց ձանձրանալու»:*
(Ղուկ. ԺԸ 1)

Մեծի պահոց հինգերորդ կիրակին, որ կկոչվի Դատավորաց կիրակի, այդ անունը ստացած է այն առակեն, որ այսօր Ճաշու Ավետարանի ընթացքին կարդացվեցավ:

Քաղաքի մը մեջ անիրավ դատավոր մը կար, որ Աստուծմե չէր վախնար և մարդոց նկատմամբ հարգանք չուներ: Նույն քաղաքին մեջ կգտնվեր խեղճ որբևայրի մը, այրի կին մը, որ դատ մը ուներ իր գլխավոր ոսոխին դիմաց, թշնամիին դիմաց: Քանիցս այդ այրին կբախե դուռը դատավորին, սակայն դատավորը կանտեսե այրիին խնդրանքը: Բայց այրին հարատևաբար, մնայուն կերպով դուռը կբախե, և օր մը այդ դատավորը ինքն իրեն կըսե. «Թեև ես Աստուծմե չեմ վախնար, մարդոց նկատմամբ հարգանք չունիմ, բայց դատը տեսնեմ այս այրիին, որպեսզի այլևս գիս չձանձրացնե» (Ղուկ. ԺԸ 4-5): Ուրեմն անիրավ դատավոր մը երբ դատը կտեսնե այրիի մը, հապա որքան բարեգութն Աստված պիտի լսե խնդրանքը, աղոթքը Իր հավատացյալներուն:

Աղոթքը գլխավոր կապն է Արարչին և արարածին միջև, մտերմիկ հարաբերությունը մարդուն և Աստուծո միջև: Գերագույն սիրողները եղած են աղոթասաց մարդիկ, աղոթող մարդիկ: Հին Կտակարանի Դավթեն սկսյալ մինչև Հոբ, և Նոր Կտակարանի Հովհաննեսն ու Պողոսը և Ստեփաննոսը, Շնորհալիները, Նարեկացիները մեր Եկեղեցվո մեջ, Օգոստինոսները, Թովմաս Գեմբացիները Տիեզերական Եկեղեցվո մեջ եղած են մեծագույն աղոթողներ, որոնք սիրած են զԱստված և սիրած են մարդ էակը:

Դուն ալ, ով հավատացյալ, անդրադարձիր պահ մը աղոթքի այս կիրակիին և հարց տուր դուն քեզի: Մի՞թե քու սենյակիդ մենության մեջ, առանձնության մեջ կաղոթես, կրնաս ստեղծել մտերմիկ հարաբերություն Աստուծո և քու միջև. եթե քու հոգիդ կխպի Անոր Հոգիին, Աստծո հետ առանձին մտերմիկ պահեր կրնաս ստեղծել: Եթե այո, կրնաս հիշել ավելի երջանիկ պահ մը, երբ գերզմայլանքի և հոգեկան հափշտակության մեջ կգտնվիս և դեմ հանդիման կըլլաս Աստուծո հետ: Աղոթքի պահեր Եկեղեցին ստեղծած է միշտ:

Դատավորներ եղած են հաճախ անարդար, բայց երբեմն նաև արդար, որոնք դատը տեսած են անձերու և կամ ժողովուրդներու: Մեր ազգային կյանքի ընթացքին ունեցած ենք երբեմն դատավորներ, երբ մեր աղոթքներով, հարատև աղոթքներով կրցած ենք մեղմացնել անոնց սրտերը, ամոքել զիրենք, որպեսզի արդարությամբ նային մեր դատին: Բայց երբ արհամարհած են արդար դատերը, այդ պարագային առաջնորդությամբ և ղեկավարությամբ մեր մեծ նախնյաց՝ կրցած ենք մեր աջ ձեռքին պահել խաչն ու Ավետարանը և ձախ ձեռքին հայոց պատմության մեծ գիրքը և, ինչու չէ, նաև՝ սուրը:

Այսպես, մեր պատմության ընթացքին, IV դարուն, երբ Վաչեյանց շարժումը փեռի կու- Այսպես, մեր պատմության ընթացքին Վրթանես Կաթողիկոսը՝ որդին Գրիգոր Լուսավոր- ննար Նպատ լեռան վրա, հայրենասեր Վրթանես Կաթողիկոսը՝ որդին Գրիգոր Լուսավոր- չի, կքաջալերեր խաչով մարտիկները այդ պատերազմին:

Երբ Ավարայրի դաշտին վրա Վարդանանց պատերազմի ընթացքին ուխտապահ նա- խարարներ կպայքարեին պարսիկ բանակին դեմ, Ղևոնդ Երեց մը կքաջալերեր հայ մար- տիկները իր խաչով:

Երբ յիսնեւ-ջիններու գերագույն պահը հասած էր հայ ժողովուրդին Մեծ եղեռնեն ետք, 1918-ի Մայիսյան կռիվներուն, Գարեգին վարդապետ Հովսեփյանց, ապա եպիսկոպոս և կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, խաչով կքաջալերեր հայ ժողովուրդի զավակները, և անոնք կհաղթեին և կկերտեին հայրենիքի ազատությունն ու անկախությունը:

Դապավորաց այս կիրակին կարելի է կոչել նաև աղոթքի կիրակի մը, աղոթքի կիրակի մը մեր հայրենիքի, Մայր Աթոռի, հայ ժողովուրդի բարգավաճման, հառաջդիմության, ան- շարժության և անսասանության համար:

Եվ ուրախ եմ, որ այս կիրակիին հանդիպեցավ իմ առաջին ձևով ուխտի քարոզը, երբ վերադարձա Մայր Աթոռ՝ ծառայելու համար Հայ Եկեղեցվո՝ ընդ հովանյավ Ամենայն Հա- յոց Վեհափառ Հայրապետ Գարեգին Երկրորդին: Այս առիթով իմ ուխտն ամբողջությամբ կվերանորոգեմ ըլլալու համար մին այն միաբաններեն Մայր Աթոռի, որը կձգտի փակավին շարունակել իր հոգևոր և ազգային գործը մեր Եկեղեցվո բարօրության, անշարժության և անսասանության համար:

Այս առթիվ կոչ կուղղեմ իմ բոլոր միաբան եղբայրներուս՝ ըսելու համար անոնց, որ բո- լորս ալ անկեղծությամբ պետք է հավաքվինք Վեհափառ Հայրապետի շուրջ, սեր, պատ- կառանք, հնազանդություն և հավատարմություն ունենանք իր անձին նկատմամբ, որովհե- տև ով որ կձեռնադրվի և կօծվի կաթողիկոս, ձևով մը իր մեջ կմարմնացնե մեր նախնյաց, մեր նախահայրերու առաքինությունները և շնորհները: Եվ ուրախ եմ, որ ունինք կորովի, աղոթող երիտասարդ, առաքինություններով լեցուն Հայրապետ մը, և բոլորս աղոթենք Նո- րին Սրբության համար, հայցենք Տիրոջմե, որ իր ազգանվեր, եկեղեցանվեր և մարդկու- թյան հանդեպ ունեցած իր բոլոր առաքինությունները ի կատար ածվին և հաջողությամբ պսակվին, հաջողությամբ պսակվին վասն փառացն Աստուծո և ի վայելումն ազգիս հայոց. ամեն:

# Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 մարտի 2004 թ.)

*«Գալոց է նովին մարմնովն եւ փառօք*
*Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս»:*
*«Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝*
*դատելու ողջերին և ննջեցյալներին»:*
(Նիկիական հանգանակ)

Մեծ Պահքի ողջ շրջանն է ընկած հիմքում այս Կիրակի օրվա խորհրդի, որ եկեղեցական մեր Տոնացույցում անվանվում է Գալստյան կիրակի՝ առանցքում ունենալով մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստյան իրողությունը: Վստահաբար դժվար պիտի լինի ըմբռնել Երկրորդ Գալստյան խորհուրդը՝ առանց անդրադառնալու Մեծի պահոց այս շրջանի կիրակիների վրա բաշխված մյուս տոների խորհուրդներին: Ուստի և անդրադառնանք այդ կիրակիներին:

Ոսկե այս շղթայում առաջին կիրակին կոչվում է Բուն Բարեկենդան՝ մատնանշելով աստվածաշնչյան այն իրողությունը, երբ մեր նախահայրեր Ադամն ու Եվան դրախտում վայելում էին Աստծո ներկայությունը: Սակայն երկար չտևեց այդ վայելքը, քանի որ նրանք մեղանչեցին Աստծո դեմ և արտաքսվեցին դրախտից: Արտաքսման այս իրողությունն է ընկած երկրորդ կիրակի օրվա հիմքում, որ կոչվում է Արտաքսման կիրակի:

Եվ քանի որ մարդու հոգևոր կյանքի զարգացումներին ներդաշնակ են հարափոփոխ ելևէջումները, կրկին մարդկությունը փորձեց վերադառնալ դեպի դրախտ՝ վերստին հաստատելու իր աստվածաստեղծ պատկերը, իր ինքնությունը:

Այս պատճառով է, որ երրորդ կիրակին կոչվում է Անառակ որդու կիրակի, որում ներկայացվում է անառակ որդու, անհնազանդ որդու հեռացումն իր հայրական հարկից և ապա նաև զղջմամբ և ապաշխարությամբ վերադարձը: Սրանում արտահայտվում է մարդկության՝ դեպի իր արմատները վերադառնալու բուռն ձգտումը՝ վերադարձ դեպի Աստծո ներկայությունը վայելելու նախնավանդ վիճակը:

Վերադարձի ճանապարհին գործադրվելիք միջոցների ուսուցումներն են արտացոլված չորրորդ կիրակի օրվա խորհրդում, որ կոչվում է Տնտեսի կիրակի, երբ Քրիստոս ուսուցանում է, թե դեպի Աստված վերադառնալու ճանապարհին ինչպես պետք է վարվենք նյութի հետ, նյութ, որ ընդհանրը ծառայեցվում է որպես միջոց մեր վերադարձը դեպի Աստված ապահովելու նպատակով:

Հինգերորդ կիրակին, որ կոչվում է Դատավորի կիրակի, խորհրդանիշն է հարատև աղոթքի, ինչու չէ՝ նաև համառության՝ մեր վերադարձի ճանապարհին չընկրկելու, չտապամնելու, երբեք երկմտանք չապրելու, այնպես, ինչպես այն այրի կինը, որ նույնիսկ անի-

բավ դատավորի առջև չկորցրեց երբեք իր հույսը, այլ տևական համառությամբ հետամուտ եղավ իր խնդրի լուծմանը:

Եվ այսօր՝ Մեծի պահոց շրջանի վեցերորդ այս կիրակին, կոչվում է Գալստյան կիրակի:

Այն ամենը, ինչ արտահայտված են նախորդ կիրակիների խորհուրդներում՝ Բուն բարեկենդանը, Արտաքսումը, Անառակ որդու վերադարձը, Տնտեսի առակը, ինչպես նաև Անիրավ դատավորի առակում, բոլորն արձանագրված լինելով Աստվածաշունչ մատյանում՝ իրական կյանքից քաղված պատմական իրողություններ են: Սրանք պատմական իրադարձություն և դեպք լինելու հետ նաև, ինչպես արդեն ասացինք, անձի հոգևոր կյանքի զարգացումների հանգրվաններ են:

Այնպես, ինչպես մարդկությունը մեղանչեց՝ զրկվելով Աստծո բարեհաճությունից, այնուհետև արտաքսվեց իր մեղանչումի հետևանքով, ապա կրկին վերադարձավ և փորձեց իր ձգտումն արդարացնել, ճանապարհներ որոնել իր վերադարձն ապահովելու, այնպես և յուրաքանչյուր անձ իր ներքին՝ հոգևոր կյանքի զարգացումներում և ճանապարհներին ամեն անգամ հանդիպում է նման ելևէջումների, մերթ անսահման մոտ է Աստված և ինքը՝ Աստծուն, մերթ հեռանում է Աստծուց՝ իր մեղանչումների հետևանքով, և այսպես շարունակ:

Ահա վեցերորդ՝ Գալստյան կիրակին մեր առջև շատ բարդ և լուրջ խնդիր է հարուցում: Այն ամենը, ինչ որ կապված է մարդու անցյալի և ներկայի հետ, մեզ հնարավորություններ է տալիս խոսելու, դատողություններ անելու: Բայց այն, ինչ որ կապված է ապագայի հետ, ինչպես և Քրիստոս ասաց, մարդկանց տրված չէ քննելու: Մարդկային կարողությունները, իմացական հնարավորությունը սահմանափակ են և թույլ չեն տալիս ապագայի մասին կանխագուշակումներ անելու, ավելին՝ դա նույնիսկ անհրաժեշտ չէ՛ մեր փրկության համար, քանի որ Երկրորդ Գալստյան մասին, ինչպես Քրիստոս ասաց, գիտի միայն Աստված, որ ամենքի Հայրն է: Եվ մենք Երկրորդ Գալուստի մասին չենք կարող այլ խոսքերով արտահայտվել, եթե ոչ՝ միայն Ավետարանում Քրիստոսի կողմից արված Հայտնությունը:

Ի՞նչ է Երկրորդ Գալուստը: Հիսուս այս աշխարհից ելնելուց առաջ առաքյալներին այլաբանական խորհրդով ասաց, թե դուք չպետք է անցնեք, մինչև ես գամ, որի համար Քրիստոսի հարությունից արդեն մի քանի տարիներ հետո ինչպես առաքյալները, այնպես էլ մյուս հավատացյալները Երկրորդ Գալստյանը սպասում էին մեծ ջերմեռանդությամբ:

Երկրորդ գալստյանը սպասել են նաև առաքյալներից հետո ուրիշներ, ինչպես 1000 թվականին, երբ մարդկության սպասումի զգացումը սրված էր: Նաև մեր օրերին այն շահարկման նյութ է դարձել շատ-շատերի կողմից՝ մարդկանց լարվածության, պրկվածության մեջ պահելու համար: Սակայն, ինչպես պարզ և մեկին ասաց Քրիստոս, պետք չէ մտահոգվել Երկրորդ Գալստյան ժամանակը կռահելու վրա ջանքեր վատնելով: Մեզանից պահանջվելիքն ընդամենը մեկ բան է՝ մշտապես պատրաստ լինել Երկրորդ Գալստյանը: Եվ Քրիստոս չափազանց պատկերավոր կերպով արտահայտեց այս գաղափարը. «Եթե տանտերը գիտենար, թե որ ժամին գող կգա, կհսկեր և չէր թողնի, որ իր տունը մտնեն: Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև այն ժամին, երբ դուք չեք սպասում, մարդու Որդին կգա» (Մատթ. ԻԴ 43-44):

Երկրորդ Գալստյան հետ կապված կարևորագույն երկրորդ կետն այն է, որ նրա հիմքում ընկած է հատուցման գաղափարը: Մեր Հավատո խոստովանության մեջ մենք արձա-

նագրում ենք, որ «արդարներին լինելու է կյանք հավիտենական, իսկ մեղավորներին՝ պատժանք հավիտենական»: Եվ իրապես հատուցման գաղափարն է, որ գերիշխում է քրիստոնեական մեր մտածողության վրա: Եվ առհասարակ, բոլոր կրոնների մեջ է առկա հատուցման գաղափարը: Եվ սակայն քրիստոնեական մեր ընկալումների մեջ, քրիստոնեական մեր վարդապետության մեջ է, որ այն ճշմարտությամբ արտահայտվում է:

Երբեմն մարդիկ փորձում են Ավետարանի մեջ տեսնել բարոյական դրույթների մի համակարգ: Երբե՛ք ու երբեք Աստվածաշունչը բարոյագիտական խնդիրների առաջնահերթություն ունեցող մի գիրք չէ: Եթե քրիստոնեական մեր ընկալումներից դուրս բերենք Երկրորդ Գալստյան իրողությունը, եթե երբեք մեր քրիստոնեական ընկալումների միջից դուրս բերենք երկրային կյանքից հետո հատուցման գաղափարի իսկությունը, ապա խարխուլ շենքի պես կփլչի բարոյագիտական մի ամբողջ համակարգ: Քրիստոնեությունը միմիայն և ընդամենը բարոյական հասկացողությունների համակարգ չէ՛, այն հիմնված է Աստծո գոյության և Երկրորդ Գալստյան իրողության վրա:

Եվ հատուցումը, անկախ նրանից՝ անձը հավատացյալ է, թե անհավատ է նկատում ինքն իրեն, իր ներքին զգացումների մեջ անպայմանորեն առկա է և զգալի: Մեզանից շատերը հոգևոր կյանքի իրենց փորձառությամբ հաճախ հանդիպել են պահերի և համոզվել, որ այս կամ այն արարքի դիմաց իրենց հատուցումը չի ուշանում նաև հենց այս կյանքում: Եվ սա պարբերաբար կրկնվում է, նախապատկերը դառնում այն հատուցման, որ լինելու է Երկրորդ Գալուստին:

Աստված չի թողնում իր հավատացյալին, որպեսզի միանգամից, մեկեն հանդիպի Երկրորդ Գալստյան իրողությանը, այլ այս կյանքի մեջ հնարավորություն է տալիս այդպիսի դրսևորումներով համոզվելու, որ իրապես Երկրորդ Գալուստը գոյություն ունի, Երկրորդ Գալստյան ժամանակ հատուցման իրողությունը գոյություն ունի, Երկրորդ Գալստյան ժամանակ իրապես արդարները մեղավորներից զատվելու են: Եվ դրա համար է, որ այս կյանքի մեջ մեր այս կամ այն արարքի դիմաց մենք զգում ենք, մեր ներքին ապրումներով համոզվում ենք, որ հատուցումն իրապես լինում է, հատուցումը լինում է մեզանից յուրաքանչյուրի կյանքում: Համոզվում ենք, որ հատուցումը լինում է նաև այն անձանց կյանքում, ովքեր մեր առջև կանգնած են, և սակայն, չգիտես ինչու, մեզ թվում էր, թե հատուցումը միայն մենք ենք ապրում, դժբախտություններն ու անհաջողությունները միայն մեզ են հետապնդում: Ամեն անձ ինքը գիտի, թե իր ներքին կյանքում ինչպիսի ապրումներ է ունենում: Ահա այս նկատառումով է, որ յուրաքանչյուր քրիստոնյա իր կյանքը պետք է կառուցի հատուցման իրողության լույսի ներքո: Եթե երբեք Երկրորդ Գալստյան իրողությունը, հատուցման, դատաստանի իրողությունը, հավիտենական կյանքի ակնկալությունը դուրս բերվի քրիստոնեական մեր մտածողությունից, ապա այլևս որևէ պատճառ չի մնալու, որպեսզի մենք շարունակենք լինել բարոյական, լինել ազնիվ, լինել բարի և ավելի լավը: Եվ միայն այս ձգտումն է, հավիտենական կյանքը ժառանգելու ձգտումն է, որ մեզ մղում է բարոյականության:

Այսօր հասարակությունների մեջ փորձ է արվում ստեղծել իդեալական, այսպես կոչված, քաղաքակրթություններ, ձևավորել անվտանգության անխոցելի թվացող համակարգեր, պայքարել սոցիալական այս կամ այն չարիքի դեմ, դիցուք Հայաստանի մեջ պայքա-

ըել աղքատության դեմ։ Մշակվում են ծրագրեր, ստեղծվում են համակարգեր, մտածվում են կատարյալ մեխանիզմներ՝ ինչպես կարելի է հասնել չարիքի վերացմանը։ Եվ սակայն շեշտը մշտապես պետք է դնել մարդկանց հոգեբանության մեջ, մարդկանց մտածողության մեջ այս կյանքի անցողիկության, այս կյանքի ունայնության գաղափարի ամրապնդմանը։

Ներքին բարեշրջությունը մարդկանց, հոգևոր բարեշրջությունը միայն կարող է երաշխիք հանդիսանալ հասարակական այս կամ այն չարիքի վերացման, մարդկանց համար իրապես անվտանգության համակարգ ստեղծելու համար։ Եվ այս ճանապարհին է, որ մարդկանց սևեռակետը պետք է լինի, մեր ամենքիս սևեռակետը պետք է լինի Երկրորդ Գալստյան իրողությունը, որովհետև ամենքիս ձգտումը ոչ թե ինքնին այսրաշխարհային անվտանգությունն է, այլ այնպիսի անվտանգությունը, որով հնարավոր կլինի հասնել փափագելիներից փափագելիին՝ մեր փրկությանը։

Բարոյական կատարյալ համակարգ, անվտանգության իրական երաշխիքներ հնարավոր է ստեղծել միայն ու միայն այն ժամանակ, երբ մարդկանց մտածողությունը բևեռվի Երկրորդ Գալստյան իրողության միջով։ Եվ միայն այդ պարագային են իրագործելի փափագելի այն հասկացությունները, որոնք կոչվում են հավասարություն, եղբայրություն, արդարություն, իրավունք։ Սրանք կմնան սոսկ բառեր, եթե մենք իրապես ներքին բարեշրջություն և Երկրորդ Գալստյան իրողության վրա խարսխած կյանք և մտածողություն չունենանք։

Եվ ահա Մեծի պահոց շրջանի վեցերորդ կիրակին անվանվել է Գալստյան կիրակի, որպեսզի այս գիտակցությամբ մենք մուտք գործենք Տիրոջ հետ Ծաղկազարդին Երուսաղեմ և որպեսզի Տիրոջ հետ նաև ընթանանք Գողգոթայի ճանապարհով և հարություն առնենք։ Եվ միայն այս մտածումը, այս սևեռակետն ունենալով է, որ մենք իրապես կկարողանանք զգջում ապրել, կկարողանանք մեր կյանքը, մեր ընթացքը ուղղորդել այնպիսի ուղիով, որն ի վերջնումն Տիրոջ հետ հարության է արժանացնելու ամենքիս։

Ուստի, սիրելի քույրեր և եղբայրներ, այսօր վերստին մեր մեջ արթնացնելով քրիստոնեական ապրումի լավագույն դրսևորումները, վերստին արժևորելով այն շնորհը, որ տրվել է մեզ Աստծուց՝ զանազանել չարը բարուց, սևեռակետ ունենալ իրապես այն կյանքը, որը կոչված ենք մենք ժառանգելու, անհրաժեշտ է վերստին և վերստին թարմացնել քրիստոնյայի մեր զգացումը, մեզ սևեռակետ ունենալ Տիրոջ Երկրորդ Գալստյան իրողությունը և երբեք չմտահոգվել, թե երբ կլինի այդ Գալուստը։

Այդ Գալուստը մի շարք նախանշաններ ունի՝ սով և սրածություն, պատերազմներ, հալածանքներ, որ այսօր իսկ ընթանում են, և երբեք չի եղել մի ժամանակ, որ սով ու սրածություն և պատերազմներ ու հալածանքներ չլինեն։ Այնպես որ Տերն Ինքը նաև Տերն է ժամանակի և Ինքը կորոշի Երկրորդ Գալստյան ժամանակը։ Իսկ մեզանից պահանջվելիքը մշտապես պատրաստ լինելն է Երկրորդ Գալստյանը, պատրաստ լինելն է մեր արդար գործերով, մեր բարի կամեցողությամբ, բարեգործություններով, մեկմեկու հանդեպ դրսևորած սիրով ու լավին ձգտելու աստվածպարգև շնորհով։

Թող Տերը զորացնի մեզ մեր առաքելության մեջ՝ ի փառս մեր Սուրբ Եկեղեցու այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն։

# ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

## ՆԵՔՏԱՌԻՈՍ Կ. ՊՈԼՍԵՑՈՒ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐԲՈՂԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Աստվածաբանի հրաժարումից հետո, 381 թ., Նեկտարիոսը ընտրվում է Կ. Պոլսի Պատրիարք, և այդ պաշտոնին մնում մինչև իր մահը՝ 397 թ.:

Ծնվել է Կիլիկիայի Տարսոն քաղաքում «յազնիւ տոհմէ և հռչակաւոր առ ժամանակակիցսն առաքինի վարուքն և բարեմասնութեամբք»: Պատրիարքական Աթոռ բարձրանալիս տակավին մկրտված չէր, ինչը առաջ է բերում ժողովի մասնակից հայրերի լուրջ ընդդիմությունը: Սակայն տեղի տալով Թեոդոս կայսեր պնդումին, ընտրվում է:

Հույն Եկեղեցին Նեկտարիոսին կարգել է սրբոց դասը: Հիշատակը կատարվում է հոկտեմբերի 11-ին:

Եկեղեցական մատենագրությանը նա հայտնի է Ս. Թեոդորոս վկայի տոնի առիթով գրած ճառով[1], որն առկա է նաև հայերեն թարգմանությամբ[2]: Հայերեն թարգմանությամբ մեզ է հասել նաև Նեկտարիոսի՝ Ստեփանոս Նախավկային ձոնված ներբողական խոսքը, որի հունարեն բնագիրն անհայտ է: Նեկտարիոս Պատրիարքի այս երկը պարունակող մեզ հայտնի միակ ընդօրինակությունն առկա է ՄՄ թիվ 1522 ձեռագրում (թ. 504բ-508ա), ուր նրան կցված է Ստեփանոս Նախավկայի նշխարների առաջին գյուտի պատմությունը, որն սկսվում է «Բայց աւն առեալ մեր զբանս ի պատմութիւն անդր նորա ձգեսցուք» բառերով (թ. 508ա-512ա):

Ըստ խորագրային տվյալի, այդ գյուտը տեղի է ունեցել Հովհաննես Երուսաղեմացու եպիսկոպոսության օրոք (386-417 թթ.): Ինչպես երևում է, այդ գյուտի առթիվ էլ Նեկտարիոս Պատրիարքը շարադրել է Ներբողը: Փարիզի Ազգային մատենադարանի թիվ 45 ձեռագրում Գյուտի պատմությունն ունի հետևյալ խորագիրը. «Մասնաւոր ինչ ի գիւտ նշխարացն Ստեփանոսի եւ որք ընդ նմա. Գամաղիէլ աւրէնսդիրն որ ի Գործս առաքելոցն բարիոք խրատեաց զհրէայսն, եւ Նիկոդիմոս, որ ի Քրիստոսէ ի ջրոյ եւ ի Հոգւոյ ասաց զար-

---

[1] Migne, PG, t. 39, col. 1821-1840. Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 632-633:

[2] «Սրբոյն Նեկտարեայ Կոստանդինուպօլսի եպիսկոպոսին, Յաղագս տաւնի սրբոյ եւ ճգնազգեաց վկային Թէոդորոսի, զոր յառաջնումն շաբաթու Քառասնորդացն տաւնեն ամենայն հաւատացեալք Քրիստոսի ի փառս ամենասուրբ Երրորդութեանն» (Հրատ. Ա. Ց. Սրճունի), «Էջմիածին», 1975, Ժ, էջ 24-26: Երկը հայտնի է նաև վրացերեն, արաբերեն թարգմանություններով. CPG 4300:

քայութիւնն ընդունէր. Նեքտարիոսի ասացեալ» ներբողը ունի հետևյալ սկսվածքը. «Որպէս ի Գործս առաքելոցն պատմի եւ ասի բան»[3]:

Հենվելով խորագրային այս տեղեկության վրա՝ կարելի է հաստատել, որ Գյուտի պատմությունը ևս պատկանում է Նեքտարիոսի գրչին: Ուստի և այն թիվ 1522 ձեռագրում ներկայացվել է իբրև շարունակություն Ներբողի: Վերջինիս սիրված, հանրահանաչ լինելու մասին է վկայում այն իրողությունը, որ նրա մի շարք հատվածները ներառնվել են Ստեփանոս Նախավկային նվիրված Աթանաս Ալեքսանդրացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Պրոկղ Կ. Պոլսեցու համաքնույթ ճառերից կազմված մի խմբագիր ճառում[4]:

Նեքտարիոս Պատրիարքի Ներբողը հրապարակվում է նշխարների գյուտի պատմության հետ միասին՝ իբրև մեկ ամբողջական միավոր, ինչպես այն ընկալված և ներկայացված է թիվ 1522 ձեռագիր ճառընտիրում. *Ժամանակ*՝ ԺԲ դ.: *Վայր*՝ Հովհաննավանք (՞): *Գրիչ*՝ Հովհաննես: *Ստացող*՝ Ռուբեն քհն.: *Թերթ*՝ 570: *Նյութ*՝ թուղթ: *Մեծություն* 52,5 x 33: *Գրություն* երկսյուն: *Գիր*՝ բոլորգիր: *Տող*՝ 37[5]:

[3] Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ. էջ 633: Այս նույն խորագիրն ու սկսվածքն ունեն նաև Երուսաղեմի թթ. 145 (43ա-50ա), 609 (32բ-36բ) ձեռագրերը. Նորայր արքեպս. Պողարեան, Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ա., Երուսաղեմ, 1966, էջ 411, հտ. Գ., Երուսաղեմ, 1968, էջ 6-7:

[4] Տե՛ս ՄՄ ձեռ. 2273, թ. 234ա-250ա, Երուսաղեմ, ձեռ. 609, թ. 1ա-32բ:

[5] Նկարագրությունն ըստ Ցուցակ ձեռագրաց, հտ. Ա., էջ 573-574:

# ԵՐԱՆԵԼՒՈՅՆ ՆԵՔՏԱՌԵԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲԱՆՍ ՆԵՐԲՈՂԱԿԱՆՍ Ի ՄԵԾԱՊԱՏԻՒ ՍԱՐԿԱՒԱԳՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ, ԸՆԴ ՈՐՈՒ ԵՒ ԱՌԱԾ ԻՆՉ ՄԱՍՆԱՒՈՐ Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԱՌԱՋԻՆ ԳԻՒՏԻ ՆՇԽԱՐԱՑ ՆՈՐԻՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՁԵՌՆ ՂՈՒԿԻԱՆՈՍԻ ԵՐԻՑՈՒ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑՒՈՑ, ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ՅԵՏ ՍՈՒՂ ԻՆՉ ԱՄԱՑ ԱԾԵԱԼ ԵՂԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆՇԽԱՐՔ ՆՈՐԱ Ի ՆՈՐՆ ՀՌՈՎՄ, Ի ՀՌՉԱԿԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔՆ Ի ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊԱՒԼԻՍ

Տէր մեր Յիսուս Քրիստոս ի ձեռն փրկագործ մարմնով գալստեան Իւրոյ գործ մի բարւոք եդ առաջի ամենեցուն, որք հաւատացին ի Նա: Զի ոչ յաղագս ինքեան եկն եւ խաչեցաւ անպարտականն մահու այն, որ «ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան Նորա»[6], այլ վասն ամենայն աշխարհի: Վասն զի պատարագեալ եղեւ ի վերայ Խաչին Գառն անարատ առ ի մշտնջենաւոր բառնալ զմեղս աշխարհի եւ յաւիտենակ բարի սիրելեաց իւրոց, որք կամաւք իւրեանց հետեւին զհետ շաւղոյ Նորա: Վասն զի Նա եղեւ նախաշաւիղ եւ սկիզբն ամենայն սրբոց իւրոց, որ իբրեւ կատարեաց զամենայն ներմարդութեանն տնտեսութեամբ յարուցեալ իշխանութեամբ եւ նստաւ ընդ աջմէ Ծնաւղին Իւրոյ քաջալերս տուեալ իւրայոցն «Քաջալերեցարուք Ես յաղթեցի մահու»[7]:

Եւ ոչ մինչեւ ցայսոսիկ դադարեցոյց զբարեգործութիւնն, այլ եւ զաթոռակիցն Իւր եւ զհաւատարմակից Ծնաւղին Իւրոյ ի կերպարանս հրոյ առաքեաց ի վերայ ընտրելոցն Իւրոց, որք սպասեալ ակն ունէին Նմա ի սուրբ Վերնատանն, որոյ եկեալ հանգեաւ ի լեզուս նոցա, լցոյց զնոսա աստուածային իմաստութեամբն Իւրով, եւ յիշեցուցեալ նոցա զյառաջագոյն ասացեալսն ի Փրկչէն, առաքեաց զնոյն աւետարանել ընդ ամենայն տիեզերս: Իսկ նոցա սկիզբն արարեալ յԵրուսաղէմէ, լցին զընդհանուրս Հոգւով իմաստութեան ձեռնադրութեամբն իւրեանց ի ձեռն աւազանին լուսոյ վերստին ծննդեանն:

Արդ, ի սոցունց յայսցանէ ընտրելոցս մի էր երիցս երանեալ անուանակիրն Ստեփանոս՝ Պսակ հայկականին թարգմանեալ, առաքելականին այնորիկ եկեղեցւոյ: Որով եւ սա լցեալ նոյն ճշմարիտ շնորհաւք Հոգւոյն Սրբոյ ընտրեցաւ ձեռնադրութեամբ գլխաւորացն ի վերակացութիւն որբոցն եւ այրեացն: Այլ եւ ի վերայ այսոցիկ առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս ի ժողովրդեանն՝ նահատակեալ Հոգւովն Սրբով ընդդէմ ուրացողացն զճշմարտութիւնն, որ եւ յընտրելոցն երկոտասանիցն ոչ վերջացեալ սպասաւորակից նոցա լինելով մարմնացեալ Բանին, եւ ի պարս մարգարէիցն վեհացոյն գտեալ՝ ոչ նախնացուշակ

[6] Եսայի ԾԳ 9, Ա Պետ. Բ 22:

[7] Յովհ. ԺԶ 33:

անաղաւտ տեսլեամբ, այլ միրովս նեռպառութեամբ անճառելի փառաւք ընդ աջմէ Հաւր նստեալ, այլ եւ մեծ Քահանայապետին եւ Պատարագին նախասարկաւագ ընտրեալ, բոլորապտուղ զինքն պատարագեաց ընդունողին Տեառն: Վասն զի յառաջագոյն քան զամենայն առաքեալսն մկրտեցաւ զմկրտութիւն մահուն չարչարանաց Տեառն Իւրոյ եւ արբ զբաժակ խաչի Նորա, եւ մարտիրոսական հանդիսիւն եցոյց զհանդիսատեսն ակներեւ բացեալ զերկինս ի հանդէս Նորին, եւ ամենեցուն զան գնալ ի ընթացսն պատրաստեաց:

Այս է պատւի հանդիսի մեծի նախընթաց կարապետին մարտիրոսացն զնդի ի հրաւէր առաջին վկային ի խաչն վերանալոյ:

Այս է հանդէս պսակաւորին այնորիկ կոշկոճմամբ քարանձիգ լինելով ընդելուզեալ փոխանակ, զի փշոց պսակ յանձն առողին վասն մեր:

Եկայք արդ, եւ մեք, ո՛վ սիրելիք, ի ձեռն սուղ բանից մերոց զնա բարեհամբաւեսցուք, զայն, որ մարտիրոսական հանդիսիւ տեսիլ եղեւ ամենայն աշխարհի՝ ե՛ւ հրեշտակաց, ե՛ւ մարդկան:

Պատուեսցուք զայն, որ պատուեաց զՏէրն արեամբն իւրով: Զնա, որ փոխանակ ամենեցուն եհեղ զարիւն իւր սուրբ:

Փառաւորեսցուք զայն, զոր փառաւորեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ բացեալ զերկինս ի հանդէս վկայութեան նորա:

Եկեսցուք եւ մեք հոգւոյ աչաւք ի տեսիլ մարտի նորա եւ յանձն առցուք յաւժարութեամբ մերով զքարինս նորա, զի եւ պսակի փառաց նորա արժանի լիցուք:

Եւ քաջ գիտեմ զայս այսպէս Սուրբ Գրոց վկայութեամբ: Զոր եթէ յաւժարական մտաւք ոք նայեսցի ի ճգնաւորական նահատակութիւն սրբոցն, ոչ պակասեսցին յարդիւնաւոր պսակէ փառաց նոցա: Եւ զայս մանաւանդ նոյն Ինքն եցոյց Տէր մեր Յիսուս Քրիստոս յԱւետարանի անդ սրբում: Ասէ. «Որ զձեզ ընդունի, Զիս ընդունի»[8]: Եւ ո՞ր արդեաւք պսակ այնպէս, մեծավայելչագոյն քան զՏէրն իսկ գլխովին. ընդունել զծառայս Նորա, զի զՆա ընդունիցիմք, յորժամ ցանկասցուք վկայական ճգնութեանց նոցա, յորժամ նախանձեսցուք ընդ առաքինութիւնս նոցա, յորժամ արթնութեամբ եւ զգաստութեամբ լուիցուք զհանդէս վկայութեան նոցա, յորժամ հաւատովք կատարեսցուք զյիշատակս նոցա, յայնժամ ընդունիցիմք զնա: Վասն զի յամենայն ժամ գտանի ընդ սուրբս Իւր Տէրն՝ կցորդելով նոցա ճգնութեանցն. «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի»[9]:

Զի թէ ոք զփոքունս ի նորայոցն արբուսցէ բաժակ մի ջուր ցուրտ, զնա արբուսցէ, եւ ոչ պակասեն վարձք նոցա. որչափ եւս առաւել զկատարեալս արեամբ պատուելով զնոյն ինքն զՏէրն փառաւորեմք եւ ի Նմանէ փառաւորիմք. «Զփառաւորիչս իմ, ասէ փառաւորեցից»[10]: Եւ եթէ որք բարեկամացուցանեն զաղքատս վերակացութեամբն իւրեանց, ընկալցին զյարկսն յաւիտենից: Յայտ է. եթէ որք յիշատակաւ սրբոցն, որք փառաւորեցան չարչարանաւք, բերկրեսցին ընդ նոսին եւ թագաւորեսցեն յարքայութեանն երկնից:

Արդ, եթէ որպէս յայտ եղեւ արժան է պատուել զփառաւորեալսն չարչարանաւք, ապա եւս առաւել՝ զայն, որ նախ սկիզբն եղեւ այնր ճանապարհի: Զերանելին ասեմ զՍտեփա-

---

[8] Մատթ. Ժ 40:

[9] Մատթ. ԻԸ 20:

[10] Ա Թագ. Բ 30:

նոս, որոյ եւ յիշատակս իսկ կատարի: Վասն զի սա նախ պսակեցաւ քարամբք կոչկոճեալ յետ առաջին պսակեցելոյն չարչարանաւք Խաչին: Եւ ամենեքեան, որք յետ սորա եղեն, ի սորայս հայելով հանդէս, քաջալերէին: Իսկ սա ի յին եւ եթ նշանակն, որ ի վերայ Խաչին:

Զի թէպէտ եւ վկայեցին յառաջագոյն մարգարէքն, այլ խորհրդով Խաչին քան թէ ակ-ներեւ տեսլեամբ զնոյն ինքն զՏէրն մարմնով ի Խաչին:

Եւ արդ, զի՞նչ եւս ի մէնջ բանս հեռացելոց յիմաստից եւ ի ժամանակէ նահատակու-թեան նորա: Եկեսցէ ի մէջ երանելին Ղուկաս ականջալուր եւ ականատեսն եւ ստուգապէս արձանագրողն աւետարանական եւ առաքելական մատենից: Վասն զի նա սկիզբն արարեալ ի յարութենէն Քրիստոսի, պատմէ մինչեւ ցվերանալն նորա եւ մինչեւ ցՍրբոյ Հոգւոյն իջումն: Եւ անտի եւս յառաջ մատուցեալ մինչեւ ցբազմութիւն հաւատացելոցն, յորում եւ ընտրեցաւ իսկ երանելին Ստեփանոս, այր լի հաւատովք եւ Հոգւով Սրբով ի վե-րակացութիւն որբոցն եւ այրեացն հանդերձ այլ եւս ընկերաւքն, եւ յետ այնորիկ պատմէ իսկ զհանդէս նորին պսակեցելոյ:

Ստեփանոս, ասէ, այր լի շնորհաւք եւ զաւրութեամբ, առնէր նշանս եւ արուեստս մե-ծամեծս ի ժողովրդեանն[11]:

«Լի էր, ասէ, շնորհաւք», այսինքն՝ ոչ մասն ինչ շնորհաց ընկալեալ, այլ զնոյն ինքն զզաւրութիւն Հոգւոյն Սրբոյ զգեցեալ: Ըստ որում եւ ասաց իսկ Տէրն. «Նստարուք ի քաղա-քիդ Երուսաղէմ մինչեւ զգենուցուք զաւրութիւն ի բարձանց»[12]: Եւ ընդէ՞ր արդեաւք Հոգւով միայն. այլ վասն զի ուր Հոգին Սուրբ է, անդ Հայր եւ Որդի հանգուցեալ են: «Եթէ ոք սիրէ Զիս, ասէ, զպատուիրանս իմ պահեսցէ: Եւ Հայր իմ սիրեսցէ զնա. եւ առ Նա եկեսցուք եւ աւթեւանս առ Նմա արասցուք»[13]:

Սիրեաց, արդարեւ Ստեփանոս զՏէրն, եւ զպատուիրանս Նորա պահեաց, այլ եւ մեռաւ իսկ ի վերայ պատուիրանաց Նորա: Եւ ոչ այս միայն, այլ եւ զՍրբոյ Երրորդու-թեանն զմիաբուն զաւրութիւնն, որ ըստ նախախնամողական տեսչութեանն ներգործէ յաշ-խարհս, յինքն բովանդակեալ ցուցանէր երանելին Ստեփանոս: Զի որպէս զՀաւրէ ասէ, թէ «զարեգակն իւր ծագէ ի վերայ բարեաց եւ չարեաց»[14], եւ «ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց»: Եւ զՈրդւոյ, թէ՝ «Ոչ եկի պաշտաւն առնուլ, այլ պաշտել»[15]: Այսպէս եւ Հոգին Սուրբ ի ձեռն Ստեփանոսի սպասաւորէր բազմութեան հաւատացելոցն. «Առնէր, ասէ, նշանս եւ արուեստս»: Եւ զո՞ր արդեւք «Նշանս եւ արուեստս» եթէ ոչ զնոյն աւրինակ, զոր յԱւետարանսն պատմի, զոր ետ Քրիստոս իշխանութիւն իւրոց հաւատացելոց, ասէ. «Զգործսն, զոր ես գործեմ, եւ Նա գործէ»[16]: Եւ եթէ ոչ գրեցաւ ի Պասկս սրբոց առաքելոցն, բայց եթէ մասնաւոր, յայտ է, եթէ եւ ոչ Նորուն իսկ Տեառն գրեցաւ բովանդակն:

Եւ զի՞նչապա լինէր նմա, որ այսպիսին էր: Զգեալ լինէր, ասէ, յատեան քահանայա-պետիցն ի ժողովելոց անդր հրէիցն, որք ըստ լիբեացւոց եւ կիւրենացւոց, եւ աղեքսանդ-

[11] Գործք Զ 8:

[12] Ղուկ. ԻԴ 49:

[13] Յովհ. ԺԴ 23:

[14] Մատթ. Ե 45:

[15] Մատթ. Ի 28:

[16] Յովհ. ԺԴ 12:

րացւոց եւ կիւղիկեցւոց եւ ասիացւոցն էին[17]: Վասն զի ինքեանք ոչ կարէին զդէմ ունել զինուորին Քրիստոսի, որ զգեցեալն էր զզօրութիւն Հոգւոյն Սրբոյ եւ իմաստութեամբ Նորին յանդիմանէր զանաւրէնութիւնս նոցա, եւ յաւրինաց անտի իւրեանց եւ ի մարգարէից: Եւ ապա վկայս կացուցանէին սուտս՝ պարտաւորելով զանմեղ եւ զանարատ անձնն զհայհոյութեան բանս ի նա ձգելով, որպէս եւ ի նոյն ինքն իսկ ի Տէրն, որ յաղագս տաճարին: Իսկ նա ի մարմնի գոլով եռանդեամբ սիրոյն փոփոխեալ լինէր ի կերպարանս հրեշտակի: Վասն զի եւ վայել էր իսկ սպասաւորին հրեշտակաց Տեառն ըստ նմանութեան սպասաւորացն իւրոց տեսանել: Այլ եւ պարտ իսկ էր հրեշտակակերպ դիմաւք զդիւրատեսակսն յամաւթ առնել:

Ցայնժամ ապա զկարծիս մոլորութեան նոցա սկսեալ ի նախահարց անտի մինչեւ ցզալուստ Բանին Աստուծոյ յայտ յանդիման հրապարակէր: Արք եղբարք, ասելով նոցա, որք յոյժ հեռացեալ մերժեալ էին ի հոգեւոր ազգակցութենէն Նորա: Զի թերեւս այսպիսի բանիւք ձգեսցէ զնոսա յիւր բարեպաշտութեանն ազգակցութիւն: Ածէ ի մէջ զԱբրահամ, զի նիւք... թերեւս նախանձաւորք լիցին հաւատոց Նորա, եւ ժառանգեսցեն զաւրհնութիւնս խոստացեալ զաւակի Նորա: Ասէ եւ վասն Յովսէփայ՝ յուշ առնելով նոցա, եթէ որդիք են նոքա այնպիսեաց հարց, որ նախանձեալ վաճառեցին զեղբայրն իւրեանց ի ծառայութիւն, որպէս եւ սոքա զՏէրն իւրեանց ի մահ Խաչին:

Բերէ ի մէջ եւ զՄովսէս յիշատակելով նոցա, թէ որում այժմ կեղծաւորեալ վրէժխնդիր լինիք, յայնժամ ուրացեալ ասէիք, թէ «ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի վերայ մեր», եւ եթէ ոչ, արդ, ինչ եւ եթ ապստամբեալ ի բաց կացէք յեկեալ հասեալ փրկութենէ ձերմէ: Այլ եւ յայնժամ մինչեւ զմանանայն հանդերձ այլովք երախտեաւքն ընկալեալ ի կռապաշտութիւն կործանէիք: Յիշատակէ եւ զԴաւիթ եւ զՍողոմոն, զի առաջնովն թերեւս ուսցին զհեզութիւն եւ ի խոստմանէ զաւակի Նորա, որ ըստ աւետեացն հաւատասցեն ի Յիսուս Քրիստոս՝ ծնեալ ի Կուսէն Մարիամայ, որ էր ի զաւակէ Դաւթի, եւ երկրորդաւն, զի մի՛ պարծեսցին տաճարաւն, զի ոչ եթէ Բարձրեալն ի ձեռագործ տաճարս բնակէ, որոյ երկինք աթոռ են եւ երկիրս պատուանդան ոտից Նորա[18], այլ զանձինս իւրեանց յարդարեսցեն արժանաւոր տաճար Նմա ի բնակութիւն:

Արդ, իբրեւ զայս ամենայն ի սկզբանց անտի աւետեացն մինչեւ յերկրորդ խոստումնն համառաւտաբար երկրորդեաց առաջի նոցա եւ ծանեաւ Հոգւովն Սրբով զանհաւան միտս նոցա: Զի՞նչ ապա այնուհետեւ հաւատարիմ վկայն Քրիստոսի. ի նոսա դարձուցեալ զբանն յանդիմանէր զանհնազանդ եւ զսպանող բարս նոցա՝ անթլփատս կոչելով սրտիւք եւ ականջաւք, զի ոչ եթէ այժմ եւ եթ ի Յիսուս Քրիստոս Բանն Աստուծոյ ապստամբեցէք, այլ եւ յառաջագոյն իսկ ի Հայրէ Նորա սպանանելով զմարգարէս Նորա՝ զառաքեալսն առ ձեզ:

Եւ զի՞նչ ապա նոքա. իբրեւ զգայլս վայրագեալս կրճտեցին, ասէ, զատամունս իւրեանց եւ յարձակեցան ի վերայ անարատ ոչխարին, որ պատարագելոց էր փոխանակ առաջնոյ պատարագին այնորիկ «Գառինն անմեղի, որ եբարձ զմեղս աշխարհի»[19]:

---

17 Գործք Զ 9:

18 Համմտ. Եսայի ԿԶ 1:

19 Յովհ. Ա 29:

Իսկ նա, լի էր, ասէ, Հոգւով Սրբով, հայեցեալ յերկինս ետես զփառսն Աստուծոյ զՅիսուս, զի կայր ընդ աջմէ Աստուծոյ[20]:

Ո՞վ սքանչելեացս, լի գոլով Հոգւով Սրբով եւ զՀայր եւս տեսանէր հանդերձ Որդւով՝ նստեալ ընդ աջմէ Նորա յԱթոռ փառաց: Եւ զի՞նչ այսու տեսութեամբ հաստատէ մեզ երանելի վկայն Ստեփանոս, եթէ ոչ, զի ի բոլոր Երրորդութեանն փառսն վայելելոց են, որք վասն Քրիստոսի չարչարին: Եցոյց եւ զսոյն զայս եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս. «Որպէս Դու Հայր յիս եւ Ես՝ ի Քեզ, այսպէս եւ նոքա Իմ եղիցին»[21]: Ետես զփառսն Աստուծոյ զՅիսուս, վասն զի Յիսուս իւրայոցն երեւի: Եւ թուի ինձ, թէ վասն այսորիկ յետ յարութեանն առաքելոցն երեւէր յաւուրս քառասունս մինչեւ ցվերանալն առ Հայր, եւ ոչ հրէիցն որպէս եւ նախ քան զխաչն: Զի՞նչ ապա նմանատիպն Տեառն իւրոյ, որ փոփոխեալն էր ի հրեշտակակերպ տեսիլ: Ոչ զանխլացուցանէր զայնպիսի հրաշալի տեսիլ իբրեւ զմախացողովք այլոց փրկութեանց: Այլ ձայնէր ի լուր ամենայն ռամկին, զի թերեւս սթափեսցին յիմարեալքն ի սէր այնպիսի փառաց տեսլեան:

Ահա տեսանեմ զերկինս բացեալ, ասէ, եւ զՈրդի մարդոյ, զի կայ ընդ աջմէ Աստուծոյ[22]:

Զոր դուք սոսկ մարդ կարծելով, սպանէք, ասէ. «Ես կենդանի տեսանեմ, ոչ եւս յերկրի, այլ՝ յերկինս, ոչ ի Խաչի բեւեռեալ, այլ՝ ընդ աջմէ Աստուծոյ»: Ո՞վ հաւատարիմ վկայ, որ հաստատեաց զՏեառն իւրոյ կանխասացութիւնն. «Տեսանիցէք, ասէ զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զաւրութեանն»[23]:

Ո՞վ նախաշաւիղ կարապետին ամենայն մարտիրոսացն զնդից, որ իբրեւ մատամբ իւիք եցոյց զհանդիսադիրն խոնարհեալ ի տեսիլ վկայիցն հանդէս: *Տեսանեմ զբացեալ զերկինս.* զփակեալ հեշտութեամբ ճաշակմամբ պտղոյն՝ բացեալ վկայական արեամբ: Եւս բացեալ երկնից, զի յայտ լիցի, եթէ ոչ միայն զՏէրն փառաւք եւ աւրհնութեամբ ընկալցին վերինքն ի հրամայեալն համբառնալ դրանց երկնից[24], այլ եւ զծառայսն Նորա, որք կերպարանակից լինին մահու Տեառն իւրեանց:

Արդ, նա այսպիսի: Իսկ ուրացեալ տիրասպանիցն որպիսի՞ ինչ: Խցին, ասէ զականջս իւրեանց իբրեւ զաւձի քարբի, զի մի՛ լսիցեն զբանն կենաց, վասն զի եւ ոչ իսկ էր արժան ապականելոց լսելեաց լսել զերկնային բարբառն, եւ ախտացելոց մտացն ընդունել զաստուածային խորհուրդն:

Եւ հանեալ, ասէ, արտաքոյ քաղաքին, քարկոծէին[25].

Որպէս եւ զՏէրն արտաքոյ այգւոյն, այսպէս եւ զծառայն Նորա արտաքոյ քաղաքին: Ո՞վ խորհրդոյ զաւրութիւն, որ մինչեւ յեւս սրբոցն ի նոսին կատարի խորհուրդ տէրունական նմանութեանն: Արտաքոյ քաղաքին խաչեցին զՏէրն հրեայքն աւրինազանցք, արտաքոյ քաղաքին քարկոծեցին եւ զծառայն Նորին նոյն հրեայք տիրասպանք: Արդ, պա-

---

[20] Գործք Է 55:
[21] Յովհ. ԺԷ 21:
[22] Գործք Է 55:
[23] Մատթ. ԻԶ 64:
[24] Սաղմ. ԻԳ 7:
[25] Գործք Է 57:

տառեցան ոփկըն հնացեալ՝ ոչ կարելով ընդունել զնորն եւ զանապակ վարդապետու-
թիւնն Տեառն: Ցանկլն, եթէ «Տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զաւրութեանն
եւ եկեալ ընդ ամպս երկնից»: Եւ աստ խցան ականջք ապականեալք՝ ոչ կարելով լսել
զվկայութիւն ճաւատարիմ ծառայրն, որ ասէր. «Ահա տեսանեմ զերկինս բացեալ եւ զՈրդի
մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստուծոյ»:

Արդ, աղաղակեաց, ասէ Յիսուս ի ձայն մեծ եւ արձակեաց զհոգին ասելով. «Հայր ի
ձեռս Քո յանձն առնեմ զՀոգի իմ»[26]: Զամենայն զմարդկութեանս զհոգիս՝ զյափշտա-
կեալսն ի սատանայէ ի ձեռն երկնաւոր Հաւրն աւանդելով: Եւ աստ նմանող եղեալն
Տեառն իւրոյ կարդայր եւ ասէր. Տէր Յիսուս ընկալ զհոգի իմ[27]՝ հաստատելով զգրեալսն,
եթէ «Հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են»[28]: Արդ, Տէրն ի խաչին գոլով ասէր «Հայր
թող սոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն», եւ աստ երանելի Ստեփանոս քարկոծ լինելով.
ծունր եդեալ, բարձրաձայն աղաղակէր. «Տէր մի՛ համարիր սոցա զայս մեղս», բայց ոչ
իբրեւ զՏէր, այլ իբրեւ զհաւատարիմ վկայ եւ զհետեւող Տեառն իւրոյ: Վասն զի նա որպէս
Որդի առ Հայր ասէր. «Հայր, թող սոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն», իսկ սա որպէս ծառայ
առ Տէր. «Տէր մի համարիր սոցա զայս մեղս»:

Եւ որպէս անդ յետ աւանդելոյ Տեառն զմարդկեղէն հոգին միացելոյ ի նմա Աստուածու-
թեանն վէմք պատառեցան եւ վարագոյր տաճարին ցելեալ խայտառակեր զհրէիցն յան-
դգնութիւնն, եւ չարչարակցելով արարածոցս Արարչին, այլ եւ փոխարկելով զհինն ի
նորս: Այսպէս եւ ի չարչարանս մեծի վկայիս երկինք ցելեալ լինէին ի պատիւ տեառին
աստուածային փառացն եւ ի նախատինս կուրացելոց ազգին: Եւ որպէս անդ հարիւրա-
պետն յետ խոցելոյ զկողն արդարեւ Որդի Աստուծոյ խոստովանէր զՆա, այսպէս եւ աստ
յետ քարկոծման երանելոյ վկայիս կամակիցն սպանմանն, որ պահէր զհանդերձս սպա-
նողացն Սաւղոս յանկարծակի հափշտակեալ ի սատանայէ, քարոզ անուանն Քրիստոսի
լինէր աղաւթիւք սրբոյն, եւ լինէր Պաւղոս փոխանակ Սաւղոսի, որ եւ ետեւ իսկ զնոյն տե-
սիլ եւ լուաւ զեւս անճառելի բանսն, այլ եւ ընդ ամենայն տիեզերս ընթացեալ, սկսեալ
յԵրուսաղէմէ մինչեւ ի Լիւրիկիայ շրջապատեալ ելից զաւետարանն Աստուծոյ ընդ ամե-
նայն աշխարհս, եւ ի վերայ այսր ամենայնի վկայական արեամբ գլխատեալ մեռաւ վասն
անուանն Յիսուսի Քրիստոսի:

Արդ, այս է հանդէս նախաշաւիղ վկային յետ առաջնոյ խաչելոյ վկային Յիսուսի
Քրիստոսի Տեառն մերոյ, զոր փոքր ի շատէ ասացաւ ի մէնջ ի պատճառս իմաստնոց լսո-
ղաց:

Բայց աւն, առեալ մեր զբանս ի պատմութիւն անդր նորա ձգեսցուք, որ յաղագս գիւտի
նշխարաց երանելոյն եւ մուծանելոյ նախ յԵրուսաղէմ, եւ ապա ի թագաւորեալն Կոստան-
դինուպաւլիս:

Արդ, ըստ մատենագրութեանն Ղուկայ կարծելով հրէիցն ի ձեռն քարանցն ի բաց բառ-
նալ զկեանս Ստեփանոսի որպէս յայնժամ որդիքն Յակովբայ՝ զեղբայրն իւրեանց[29] ոչ

---

[26] Ղուկ. ԻԳ 46:

[27] Գործք Է 58:

[28] Իմաստ. Գ 1:

[29] Տե՛ս Ծննդ. ԼԷ:

ցիտելով յանապականն կեանս զնա փոխարկեցին, քանզի նա իբրեւ զթագ ականակապ ընդելուզեալս յոսկւոյ սրբոյ զքարինսն ընդունելով, եւ իբրեւ զծիրանիս պատուական զբղխումն արեան թագաւորեալ լինէր ի վերինն Երուսաղէմ, որպէս եւ Յովսէփն այն՝ ի յԵգիպտոս, որ եւ յետ սուղ ինչ ժամանակի ի թիկունս հասանէր սովելոյ ազգին, որպէս եւ նա՝ եղբարց իւրոց: Քանզի բարձին, ասէ, զնա արք երկիւղածք եւ ըստ աւրինացն կատարելով ի վերայ նորա: Եւ ո՞վ արդեաք իցեն արքն, թէ ոչ աւրէնսուսոյցն Գամաղիէլ, որ ի Գործս առաքելոցն զբարւոք խրատն տալով հրէիցն պատմի, եւ Նիկոդեմոս, որ ի ջրոյ եւ ի Հոգւոյ ընդունէր զարքայութիւնն ի Քրիստոսէ յԱւետարանի անդ վարդապետի:

Քանզի որպէս ասի բանն առաջի անկեալ նոցա խնդրեցին ի սրբոց առաքելոցն զմարմին երանելւոյն: Եւ առեալ հրաման, եկեալ գիշերի, տարեալ թաղեցին յագարակին իւրեանց, որ կոչի Կապար Գամաղեա՝ հեռի ցոլով յԵրուսաղէմէ քսան վտաւանաւ: Որ եւ ինքն իսկ երանելին այս Գամաղիէլ հանդերձ եղբօրորդւովն իւրով Նիկոդեմոսիւ եւ որդւովն իւրով Աբիբասեաւ մկրտեալք ի գլխաւորէն Պետրոսէ եւ յետ սուղ ինչ ժամանակի կատարեալք ի Քրիստոս եւ եդան ընդ սրբոյն Ստեփանոսի:

Իսկ ապա անցին ժամանակքն այն դառնութեան, եւ բարեպաշտութիւն տարածեցաւ ընդ ամենայն ազգս: Յայնժամ եւ երանելին այն յայտնէր զինքն զանձ անապական աշխարհի: Եւ եթէ որպէ՞ս յայտնի է ի յիշատակարանէ անտի ուսումնասիրաց եւ աշխատասիրաց անձանց, զոր մեր փոքր ի շատէ առեալ ինչ անտի պատմեսցուք: Այր ոմն ծաղկեալ իմաստութեամբ եւ կատարեալ ամենայն առաքինութեամբ պաշտէր քահանայական սպասաւորութեամբ զագարակն զայն, յորում ծածկեալ կայր զանձն աստուածային բազմագին մարգարիտն երանելին Ստեփանոս: Եւ զի՞նչ ապա լինէր. երեւէր նմա տեսիլ հրեշտակական չքնաղ եւ զարմանալի ի կերպարանս սքանչելւոյ առնն Աստուծոյ Գամաղիէլի երիցս անգամ, որոյ զգեստն իւր լոյս փայլատակէր ի չորեսին տտունսն նկարեալ գիր ոսկի վերագրեալ ի նմա նշանն տէրունական խաչին, այլ եւ հողաթափս ոսկէփոկս ագնեալ յոտսն: Եւ ասէր, եթէ հան զմեզ աստի առ ի յաւգնականութիւն վտանգելոց ժամանակի մարդկանս: Եւ յիրաւի սպիտակազգեստ երեւէր տեսիլն հանդերձ ոսկէգիր նշանակաւն եւ վերագրեալ խաչիւն, վասն զի զլոյսն զգենլոց են սուրբքն յետ աստեացս անդր երթալոյն՝ ունելով զպատճառսն յոսկէտեսակ անապական առաքինութեանցն եւ խաչակցութեանցն ընդ Քրիստոսի: Նա եւ նոյն ինքն իսկ առաքինութիւնն պայծառ եւ անապական զգեստ է եւ արժանի երկնաւոր թագաւորութեանն պատուոյ, թէպէտ եւ այժմ ծածկեալ է ի զգալի տեսանելեացս: Զսոյն եւ երանելի առաքեալն ցուցանէ. «Քանզի մեռարուք, ասէ, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած: Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք»[30]:

Իսկ զաւազանն ոսկի, զի ունէր յաջոյ ձեռինն, զմշտնջենաւոր թագաւորելն ընդ Քրիստոսի նշանակէ եւ զաջակողման դասուն՝ զահակալութիւն սրբոցն: «Եթէ համբերեմք, ասէ, ընդ նմին եւ թագաւորեսցուք»[31], ասէ աստուածայինն առաքեալ: Իսկ զի ետես յերկրորդ տեսլեանն չորս կողովս. երեքն ոսկի եւ միւսն արծաթի, եւ երկուքն լցեալ էին վարդով սպիտակ եւ միւսն՝ կարմիր, եւ արծաթին պատարուն էր անուշահոտ քրքմով: Եւ այսու ոչ է, թէ

[30] Կողոս. Գ 3:

[31] Բ Տիմ. Բ 12:

զծանաւթութիւնն տապանացն նոցա եւ եթ յայտ ունէր տեսիլն: Այլ եւ զանազանեալ զփառս նոցա նշանակէր ըստ իւրաքանչիւր վաստակոց, ըստ այնմ թէ «Ի տան Հաւր իմոյ յաւթեւանք բազում են»[32]: Վասն զի եւ երանելւոյն Ստեփանոսի լի գոլով կարմիր վարդով, վասն զի նա նախ եհեղ զարիւնն իւր փոխանակ այնորիկ, որ վասն ամենեցուն ի վերայ խաչին եհեղ զարիւնն Իւր սուրբ:

Իսկ երկու եւս այլքն, որ ունէին յինքեանս զվարդն սպիտակ, որք էին Նիկոդեմոս եւ Գամաղիէլ, որ նշանակէ, որ թէպէտ եւ ոչ արեամբ կատարեալք, սակայն յաւժարութեամբ եւ անուամբ զնոյն անուշահոտութիւն առաքինութեան յինքեանս ժողովեցին, որպէս եւ զերանելին զՍտեփանոս: Իսկ չորրորդն արծաթի գոլով՝ ունելով յինքեան անուշահոտ քըրքում, որ էր Աբիբայ որդին Գամաղիէլի, նշանակէ արծաթովն զյստակութիւն կուսութեանն: Իսկ քրքմովն զնմանութիւն յինքեանս բերելով զկարմիր վարդին զերանելւոյն զՍտեփանոսի արեամբ չափ նահատակեալ ընդդէմ բնութեանս: Իսկ յերրորդ տեսլեանն, որ ասէ, թէ յափշտակեալ լինէր երանելին Ղուկիանոս ի քաղաքն Երուսաղէմ, եւս պատմէր եպիսկոպոսին զտեսիլն եւ լսէր ի նմանէ զլինելոցն: Վասն զի այսպէս սուրբ եւ անպարտ առաքինութիւնն ի մարմնի գոլով անմարմինս գործէ զընդունողսն, եւ ճառագայթեալ զհոգիսն տեսանողս առնէ հանդերձելոցն: Այսպէս երանելին Պաւղոս յափշտակեալ յերրորդ յերկինս զանճառ բանսն լուաւ: Այսպէս մարգարէքն ամենայն լուսաւորեալք հոգւով պատմեցին զհանդերձեալսն իբրեւ զտեսեալս, զոր պարտ է մեզ համառաւտել զբանս ի պատմութիւն անդր առաքելով զլսողսդ:

Արդ, իբրեւ յայտնեցաւ գանձն աստուածային, եւ բուրեաց հոտ անուշահոտութեան եւ հրեշտակաց ձայնք լսելի լինէին, որք փառք ի բարձունս երգէին Աստուծոյ: Եւ բազում բժշկութիւնք ի տեղւոջն լինէին: Յայնժամ սուրբ եպիսկոպոսին Յովհաննու առեալ զծառանգաւորս եկեղեցւոյն, եւ հանդերձ այլ եպիսկոպոսաւք անդր հասանէր, եւ ապա ըստ նախացուցակ տեսլեանն եւ ըստ առակաւոր մարգարէութեանն առեալ զնշխարս երանելւոյն Ստեփանոսի, որ էր եզն ամոլոյն առ ի սպասահարկութիւն մեծի սայլին սրբոյ քաղաքին: Վասն զի անդր արժան էր սպասաւորել մեծի նախասարկաւագին, ուր մեծ քահանայապետն մեր Քրիստոս պատարագեցաւ: Եւ որպէս սայլիւ ջորայս, այսպէս զբազմութիւն մարդկանն ի ձեռն մեծամեծ սքանչելեաց իբրեւ զսուրբ ցորեան յաստուածային շտեմարանս ժողովեր: Եւ բերեալ ասէ սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եդին ի սուրբն Սիովն, զոր յետ սուղ ինչ աւուրց Աղէքսանդրոս ոմն վկայասէր շինեաց տաճար անդրէն ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ բազում աղերսիւ խնդրեալ ի հայրապետէն, անդ փոխեաց զմեծապանծ պարգեւն զսուրբ Նախավկայն Քրիստոսի:

Բայց արդ յայսմհետէ բանս մեր ի պատմութիւն անդր ընթանայ, եթէ որպէս վերափոխեալ եղեւ սուրբ Նախավկայն յԵրուսաղէմէ ի Կոստանդինուպոլիս պատճառանաւք յառաջասացեալ վկայասէր առն Աղէքսանդրոսի, որ էր սենեկապետ թագաւորին եւ ի ձեռն կնոջ նորա Յուլիանէ:

Արդ, իբրեւ անցին ամք հինգ շինուածոյ տաճարի սրբոյն եւ ինքն Աղէքսանդրոս փոխեալ լինէր յաշխարհէս անդէն ի նմին սուրբ քաղաքի: Եւ նախ քան զվախճանն իւր եւ

[32] Յովհ. ԺԴ 2:

կազմել տապան մարմնոյ իւրոյ, ըստ նմանութեան տապանի սրբոյն Ստեփանոսի, եւ հրաման ետ մատ առ սուրբն դնել զտապանակ մարմնոյ իւրոյ, եւ ննջեաց ի Քրիստոս: Իսկ յետ ութ ամի վախճանի նորա հարկեցուցանէին զամուսին նորա, վասն զի յոյժ գեղեցիկ էր, լինել առն այլում: Իսկ նորա ոչ հաւանեալ խորհեցաւ առնուլ զմարմին առն իւրոյ եւ գնալ առ հայր իւր ի Կոստանդինուպալիս, վասն զի էր դուստր գլխաւորի իշխանի քաղաքին:

Եւ երթեալ կնոջն առ եպիսկոպոս սուրբ քաղաքին հայցեր ի նմանէ հրաման տալ նմա՝ առնուլ զայրն իւր եւ գնալ անտի: Իսկ նա ոչ հաւանեալ: Եւ կինն վաղվաղակի գիր առաքեալ առ հայրն իւր՝ ծանուցանել զիրն թագաւորին: Յայնժամ ապա թագաւորական հրամանն հասանէր առ հայրապետն՝ անյապաղ տալ զխնդրելին: Իսկ սրբոյ եպիսկոպոսին, կոչեցեալ առ ինքն զկինն, հեզութեամբ ասեր ցնա. «Ո՜վ կին դու, զիա՞րդ խնդրես զմարմին առն քո, որ ի միասին թաղեալ կայ ընդ սրբոյն Ստեփանոսի՝ մի արդեւք անգիտանալով զսուրբն առցես, վասն զի մի աւրինակ ունելով երկոցունց տապանակացն»: Ասէ ցնա կինն. «Այլ ես, ո՜վ տէր իմ զկազմել տապանակ առն իմոյ ստոյգ գիտեմ միայն հրամանաւ քո երթեալ առից զնա»:

Ասէ ցնա հայրապետն. «Եթէ ստուգապէս ճանաչես, ո՜վ որդեակ, առեալ երթիցես ի խաղաղութեան»: Եւ կինն լուեալ զհրամանն գնաց վաղվաղակի ի տաճար անդր: Եւ բացեալ զդիրն վերնական իմն նախախնամութեամբն մոլորեալ եթող անդէն զայր իւր, եւ առ զտապանակն, յորում կայր զանձն աստուածային: Եւ եթէ ոչ էր այս աստուածային իմն տնաւրէնութիւն գնալ սրբոյն ի թագաւորեալն Կոստանդինուպոլիս, զիա՞րդ անգիտանայր կինն, զոր բազում մաղթանաւք եւ թագաւորական հրամանաւ խնդրէր, եւ կամ որպէս հայրապետն ոչ ինքնին երթեալ տայր ցնա զայր իւր թողլով անդրէն զսուրբն ի տեղւոջն:

Եւ քանզի թագաւորական էր հրամանն, եւ նա ստուգապէս կարծէր, եթէ մարմին առն իւրում է՝ ոչ ինչ զանգիտեալ յումեքէ լծեալ կառս եւ եդեալ անդ զտապանակն, եւ հրաժարեալ աւրհնութեամբ ի հայրապետէն եւ ի բազմամբոխ քաղաքէն, եկն եհաս յԱսկաղոն քաղաք, որ է յեզր ծովուն: Բայց ո՞ կարասցէ զամենայնն պատմել, զոր այնմ գիշերի ի ճանապարհին եղեւ սքանչելիք, վասն զի ձայնք հրեշտակաց լսելի լինէր, որք նուագէին Աստուծոյ ի գնացս կառացն, յորոյ վերայ եդեալ կայր սուրբ տապանակն, եւ բուրումն անուշահոտ խնկոց զամենեցունց հոտոտելիս անուշացուցանէր: Եւ ի մտանելն ի քաղաքն բազում այսահարք ընդ առաջ ելեալ աղաղակէին ասելով. «Վա՜յ մեզ, վա՜յ մեզ, զի եկն եհաս այսր սուրբն Ստեփանոս տանջել զմեզ»:

Արդ, յայսմ ամենայն եղելոցս ստուգեալ գիտաց կինն, եթէ մոլորեցաւ ի տապանակէ առն իւրոյ: Սակայն զանխլաբար նաւ ի վարձու կալեալ նաւէր ի Կոստանդինուպալիս՝ նախախնամութիւն Աստուծոյ զիրսն վարկանելով: Եւ հողմոյն աջողակ դիպեալ երասանակեցին զնաւն քաջանաւեալք մինչեւ ի մէջ ծովուն: Եւ ապայ յանկարծակի ծովն զայրացին իմն խռովեալ զալիսն ի նաւն զեղոյր մինչեւ մերձ յընկղմել նոցա: Եւ նոքա ահիւ մեծաւ ըմբռնեալք սկսան արտասուալից պաղատանս առ սուրբն մատուցանել անկեալ առաջի սրբոյ տապանակի ոսկերաց նորա, եւ յանկարծակի շարժեցաւ տապանակն, եւ հոտ անուշութեան բուրեաց ի նմանէ: Եւ ձայն լսելի եղեւ, որ ասէր. «Մի՛ երկնչիք, զի ես ընդ ձեզ եմ»:

Եւ նոյնժամայն դադարեաց ծովն եւ եղեւ խաղաղութիւն մեծ. եւ ծագեաց լոյս ի տապանակէ անտի. ըստ նմանութեանն ջահի եւ լուսաւորէր զամենեսեան, որ ի նաւին էին. քանզի գիշեր էր ժամն, եւ ձայնք հրեշտակաց լսելի լինէր, որք քաղցրաձայնիւ երգէին Աստուծոյ: Եւ նոցա նաւեալ հասին մինչեւ յԱբիդու մեծաւ խնդութեամբ: Եւ իբրեւ եկին մերձ ի նա, հնարէին, զի թերեւս գաղտ անցուցեն զնաւն վասն չարադեւ բնակչացն այնոցիկ: Եւ կարդացին զսուրբն ի բարեխաւսութիւն եւ յանկարծակի շարժեալ դղորդեցաւ երկիրն նոցա մինչեւ անց նաւն ի սահմանաց անտի:

Յայնժամ ապա արք ոմանք մանաւանդ եթէ դեւք զաղաղակ բարձեալ ձայն ետուն առ իշխանն Աբիդու եւ ասեն. «Փութա, պատրաստեա նաւս երագահաս եւ հաս այնր նաւու, որ անցանէ եւ հրկէզ արա զնա: Ոչ գիտես եթէ յաղանդոյ անտի, որ անդր կայ, շարժեցաւ քաղաքս մեր»: Եւ նորա փութացեալ առաքեաց նաւակս հինգ պատերիչս զկնի նորա հասանել եւ հրկէզ առնել զնա: Եւ իբրեւ մերձ եղեն ի նաւն, որ բարձեալ ունէր յինքեան զգանձն աստուածային զաւրութիւն իմն աներեւոյթ հասեալ լուծանէր զձեռս նոցա: Եւ անգործ եղեալ ի զաւրութենէ դարձան անդրէն: Իսկ նոքա այսպիսի նախախնամութեամբ ապրեալք, նաւեալք հասին մինչեւ ի Քաղկեդովն քաղաք: Եւ անդ ի քաղաքին դադարեալք աւուրս հինգ, բազում սքանչելիք կատարէին անդ ի վերայ զանազան ախտից: Քանզի այսք պիղծք զաղաղակ բարձեալ ի մարդկանէ անտի ասէին. «Ո՞վ դու սուրբդ Ստեփանոս, որ քարկոծեցար յԵրուսաղէմ ի հրէից, եկիր այսր՝ հալածել զմեզ»: Եւ զայս ասացեալ փախստական լինէին ի մարդկանէն, յորում բնակեալն էին: Եւ զգաստացեալքն անկանէին առաջի սրբոյ տապանակին գոհանային զԱստուծոյ: Եւ ամենեքեան առ հասարակ փառաւորէին զԱստուած, որ այսպէս սքանչելագործէ ի ձեռն ծառայից իւրոց ի կեանս եւ ի մահ:

Յայնմ վայրի համբաւ սքանչելեացն տարածեալ եհաս մինչեւ ի լսելիս բարեպաշտ թագաւորին Թէոդոսի: Եւ ուրախութեամբ մեծաւ լցեալ լինէին ամենեքեան, որք ըստ բարեպաշտութեանն էին: Եւ խռովութիւն յոյժ ըմբռնէր, զոր տակաւին ըստ հեղլական մոլորութեանն դանդաչէին: Յայնժամ բարեպաշտուհին Յուլիանէ եկն եկաց առաջի թագաւորին եւ հայրապետին, պատմեաց զամենայն եղելսն կարգաւ: Եւ նոցա զարմացեալ փառաւորեցին զԱստուած, որ զայս այսպէս տնաւրինեաց բարեհաճութեամբ: Եւ ապա կոչեցեալ այր մի եբրայեցի ընթերցաւ զվերագրեալսն ի նմա, եթէ այս է տապանակ առաջին վկային Քրիստոսի: Եւ առժամայն աղաղակեաց. «Եւ ես, ասէ, խոստովանիմ զՔրիստոս Որդի Աստուծոյ եւ զսուրբն Ստեփանոս առաքեալ Նորին եւ վկայ, քանզի տեսին աչք իմ այսաւր մեծամեծ սքանչելիս»:

Զայս լուեալ թագաւորին լի եղեւ ուրախութեամբ, եւ հրամայեաց սրբոյ եպիսկոպոսապետին որպէսզի հանդերձ ամենայն բազմութեամբն մեծաւ պատուով մուծցեն ի քաղաքն զսուրբ տապանակն, քանզի դեռ արտաքոյ էին ի տեղին, որ կոչեցաւ Լծումն կառաց, վասն զի անդ լծեալ զջորիսն երասանակեցին զկառսն ի թագաւորական քաղաքն:

Բայց ոչ է մեզ բաւական ժամս պատմել մի ըստ միոջէ զամենայն սքանչելիսն, որ գործեցաւ, սակայն ասացից համառաւտաբար, զի բայց յայնմանէ, որ ի ճանապարհին եւ ի ծովուն գործեցաւ եւ զայս եւս սքանչելիսս պատմեմ:

Արդ, մինչդեռ պատրաստեալ երանէին ամենայն քաղաքն ընդ առաջ սուրբ Նշխարացն, կին ոմն, յորում էր այս պիղծ, աղաղակեաց եւ ասէ. «Ո՞վ բռնութեանս եւ անհնարին տանջանացս, որ եկն եհաս ի վերայ մեր»: Վասն զի եկն եհաս այսր Նախավկայն Քրիստոսի սուրբն Ստեփանոս ի քաղաքիս յայսմիկ բնակիլ եւ ի մէջ բազմութեանն գտանեալ զկինն, ել գնաց եւ ոչ ինչ վնասեաց նմա: Էին անդ բնակեալ կանայք ոմանք, որք ունէին ախտս տեռատեսութեան: Եւ մի ոմն ի նոցունց յայնցանէ լուեալ զձայն ամբոխին, ի հիացման եղեալ լինէր, եւ յանկարծակի լուեալ, որ ասէր զնա. «Արի՛, յարեաց ի կառսն Ստեփանոսի Նախավկայի, վասն զի եղեալ յՆրուսաղէմէ գայ մտանէ այսր»:

Եւ նորա յարուցեալ ել ընդ առաջ, ըստ ազդման ձայնին, որ եղեւ առ նմա եւ չեւ եւս քաջ հպեալ ի կառսն, վաղվաղակի ցամաքեցաւ աղբեւր արեանն նորա: Եւ նորա գիտացեալ զկատարեալ առողջութիւնն իւր, սկսաւ փառաւորել զԱստուած: Եւ յետ այնորիկ այլ ոմն քաջ եւ առաքինի ի զինուորական կարգէն, որոյ էր նորա որդի մի ութուտասնամեա անդամալոյծ ի ծնէ: Սա տեսեալ զսքանչելիսն, որ լինէր ի ձեռն սրբոյն, փութացաւ, եբարձ զնա յուս իւր եւ բերեալ ընկեց զնա յանցս կառացն: Եւ նորա առժամայն յարուցեալ, եկաց ի վերայ ոտից իւրոց, եւ վազվազէր եւ երթայր առաջի կառացն, եւ ձայնիւ մեծաւ աղաղակէր եւ աւրհնէր զԱստուած:

Եւ ամենայն ժողովրդոցն տեսեալ զսքանչելիսն, փառաւոր առնէին զԱստուած: Եւ այսպիսի սքանչելեաւք եւ փառաւորութեամբ հայրապետն եւ ժառանգաւորքն եւ ամենայն բազմութիւնն շուրջ կալով զկառաւքն, եկին հասին մինչեւ ի տեղին, յորում «Կոստանդիանոսի ասպարեսն» անուանի: Եւ անդէն լծեալ ջորիքն զտեղի առեալ իբրեւ կապանաւք իմն կապեալ ընդ այն տեղի անցանել ոչ կարացին, զի թէպէտ եւ երասանակակալաքն խստագոյնս հարկանէին, սակայն նոքա անշարժք մնային: Զայսոսիկ ծանուցեալ թագաւորին, երկոտասան ջորիս այլս փոխանակ առաջնոցն հրամայէր ի կառսն լծել իբր ութէ այնոքիկ աշխատեալք են: Եւ նոքա նոյնպէս աստուածային զաւրութեամբն իբրեւ կապանաւք իմն կապեալք անշարժ մնային:

Յայնժամ ձայն լսելի լինէր ի միջոյ կառացն, որ ասէր. «Մի՛ ի զուր աշխատիք, վասն զի աստ հաճեցաւ Տէր բնակել սրբոյ Նախավկայիս»: Զոր լուեալ հայրապետին եւ ժառանգաւորացն հանդերձ ամենայն բազմութեամբն փառաւորեցին զԱստուած իբրեւ ի միոջէ բերանոյ, որ այսպէս սքանչելագործէ ի ձեռն սրբոց Իւրոյ: Նոյնպէս եւ թագաւորն հիացեալ զարմացաւ ի վերայ այսպիսի սքանչելեաց, եւ մեծ գոհութիւն Ամենատեառնն մատուցանէր, որ ոչ եթէ միայն ի հանդերձեալսն, այլ եւ յայսմ աշխարհի փառաւորէ զսուրբս Իւր: Եւ ապա հրամայէր թագաւորն, եւ անդէն ի նմին տեղւոջն բազմացն ձեռնարկութեամբ կանգնեալ եղեւ տաճար մեծապայծառ եւ վայելուչ հանգիստ եւ վկայարան սուրբ եւ առաջին մարտիրոսին:

Եւ տաւն մեծ զարդն զայն կատարեցին ամ յամէ տաւնել, որ աւր երկու էր Աւգոստոս ամսոյ, որ եւ բազում բժշկութիւնք կատարին անդ մինչեւ ցայսաւր ի վերայ հիւանդաց աղաւթիւք սրբոյն: Եւ ոչ միայն այս, այլ եւ մեղաց եւս թողութիւն գտանեն, որք հաւատով եւ ճշմարիտ սրտիւ հայցեն ի Տեառնէ բարեխաւսութեամբ սրբոյն: Զի նա, որ քարկոծչացն թողութիւն հայցէր, յայտ է, եթէ տաւնողացս եւս մաղթեսցէ զքաւութիւն, վասն որոյ եւ անդէն իսկ եւ իսկ առ զհայցելին:

Զգլխատր սպանութեանն յափշտակեալ ի սատանայէ. առաքեալ եւ աւետարանիչ եւ քարոզ հեթանոսաց կացուցանէր, այլ եւ զայակասութիւն չարչարանացն Քրիստոսի ի տկարութիւն մարմնոյ իւրում բովանդակ...[33]: Զայս ամենայն... սիրելիք ի յու[սա]ցեալ բանից մե[րոց մի՛] երկմտեսցուք... բարուք մտաւք պ... զվկայսն վկայէ յաւժարութեամբն: Զի եթէ չարեացն ցանկացողք չարք վկայեցան առանց գործոց՝ որչա՞փ եւս առաւել վկայիցն ցանկացողքն լինին վկայք առանց արեան եւ ճրոյ եւ այլոց չարչարանաց:

Արդ. եւ մեք, եղբարք բարսք յաւժարութեամբ կատարեսցուք զյիշատակ սուրբ վկայիցն, մանաւանդ զերիցս երանեալն Ստեփանոսի, որ է անդրանիկ ամենայն մարտիրոսացն գնդին, ու եւ նոցուն պսակացն արժանաւորեսցուք շնորհաւքն եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ընդ որում Հաւր, միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ փառք, պատիւ եւ իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

[33] Բազմակետով հատվածները պատռված:

*ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ*
*Դավանական գիտությունների դոկտոր*

# ՀԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԻ ՎԱՌ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

(Հակոբ Ծպատեցու կանոնամեկնողական թուղթը)

Գրիգոր Նարեկացին որպես հոգևորական ձևավորվել և գործել է Վասպուրական աշխարհում[1]: Նրա կենսագրության մասին մեր գիտելիքները սահմանափակվում են մեզ հասած սակավաթիվ սկզբնաղբյուրներով: Վերջին հարյուրամյակի ընթացքում հայտնաբերվեցին բազմաթիվ նոր վավերագրեր, որոնք մի նոր լույս են սփռում մեր միջնադարի ամենալուսավոր անհատականություններից մեկի՝ Գրիգոր Նարեկացու միջավայրի և դարաշրջանը հուզող խնդիրների վրա: Նման հետազոտությունները հատկապես առավել արդյունավետ դարձան Գալուստ Տեր-Մկրտչյանի կողմից 1897 թ. «Արարատում» Անանիա Մոկացու թղթերի հրապարակումից հետո[2]:

Գալուստ Տեր-Մկրտչյանը մոռացության փոշուց հանեց հայ մատենագրության չափազանց կարևոր մասունքներ, շնորհիվ որոնց վեր հանվեցին Անանիա Մոկացի կաթողիկոսի և Աղվանից Աթոռի ու Սյունյաց մետրոպոլիտության հակամարտության պատճառները: Հմուտ բանասերն Էջմիածնի Մատենադարանի ձեռագրերում Անանիա Մոկացու երեք թղթերի հետ միասին կարողացավ գտնել նաև Արամի թուղթը[3] և Հակոբ Ծպատեցու կանոնագիտական-մեկնողական երկը: Վերջինը, ցավոք, ցայսօր հրապարակված չէ[4]:

Ներկա աշխատանքը, որը զեկուցման տեսքով առաջին անգամ ներկայացվել է անցյալ տարվա դեկտեմբերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած Գիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» երկի գրության 1000-ամյակին նվիրված գիտաժողովին, վերաբերում է այդ բնագրերի և դրանց ստեղծման միջավայրի հետազոտությանը:

Ժ դարի առաջին կեսին, երբ կաթողիկոսական իշխանությունը Եղիշե Ա Ռշտունի (941-946) կաթողիկոսից անցավ Անանիա Մոկացուն (946-968)[5], դրությունը Հայաստանում բարդ էր և հակասական: Շուրջ 60 տարի առաջ վերականգնվել էր Հայաստանի անկախությունը: Անիի Բագրատունիները ձեռնամուխ էին եղել երկրի մասնատման վերաց-

[1] Տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Էջմիածին, 1996, էջ 21-57:

[2] Տե՛ս «Արարատ», 1897, էջ 91-96, 124-144, 275-288, հմմտ. Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Գիրք Բ / Աշխ. պրոֆ.Պ. Հ. Հակոբյանի, Էջմիածին, 1998, էջ 77-152 (Այսուհետև՝ Գ.Տեր-Մկրտչյան, ՀՈՒ):

[3] Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, հտ. Ա, Եր. 1979, էջ 128-129, 135-138:

[4] Այս վավերագրի մասին տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, ՀՈՒ, էջ 80, 85: Սույն հոդվածի վերջում բերվում է այդ թղթի բնագիրը, կազմված Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի երկու ձեռագրերի հիման վրա:

[5] Անանիա Մոկացու գահակալությունը Գալուստ Տեր-Մկրտչյանը թվագրում է 941-968 թթ. (տե՛ս ՀՈՒ, էջ 85):

մանը, սակայն նրանց այս ձգտումը խոշընդոտների էր հանդիպում առանձին երկրամասերում, հատկապես երկրի ծայրամասերում, ուր գլուխ էին բարձրացնում կենտրոնախույս իշխանությունները՝ ապավինելով արտաքին ուժերին, Բյուզանդական կայսրությանն ու դեպի անկում գնացող Արաբական խալիֆայության սատելիտներին: Հայաստանում նշմարվում էր տեղական իշխանությունների չորս խումբ խոշոր միավորումներ. ա) Անիի Բագրատունիները, որոնց օրոք սկսվել էր ֆեոդալական երկպառակությունը, և երկիրն իրար մեջ էին բաժանում Անիի, Կարսի, Գուգարքի իշխանությունները, բ) Արծրունիները, որոնք արաբներից թագավորական տիտղոսներ ստանալուց հետո կարողացել էին իրենց իշխանության ներքո միավորել Վասպուրականը և միևնույն ժամանակ մերթընդմերթ պայքարում էին ողջ Հայաստանում բացարձակ իշխանություն ձեռք բերելու համար, գ) Սյունիքի գահերեցները, որոնք կարողացել էին իրենց շուրջը համախմբել Մեծ Սյունիքը և հիմնական մրցակիցներն էին Վասպուրականի արքաների, և վերջապես, դ) Արցախի և Փառիսոսի իշխանությունները, որոնցից մի քանիսի ինքնուրույնությունը ճանաչում էր նույնիսկ Բյուզանդական կայսրությունը, ներկայացնելով նրանց բյուզանդական ստորակաների ընտանիքում[6]: Այնուամենայնիվ, այս բազմազանության մեջ բոլորը դեռևս ճանաչում էին Անիի Բագրատունիների առաջնությունը, թեպետ այն բավական երերուն էր Սմբատ Ա-ի եղերական սպանությունից (914 թ.) և Գագիկ Արծրունու թագադրումից հետո (928՞)[7]: Պիտի նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի մի շարք տարածքներ խալիֆայության վտարումից հետո վերածվել էին Հայոց պետականությանը խորթ ամիրայապետությունների (Դվինի և Գողթնի Սաջյաններ, Մանազկերտի Կայսիկներ, Ութմանիկներ, Ատրպատականի ամիրաներ և այլն)[8]:

Բացի ներքին ուժերից, երկրի երկպառակությունները պայմանավորված էին նաև օտար պետությունների, հատկապես տարածաշրջանում Բյուզանդական կայսրության աշխուժացմամբ: Բյուզանդա-արաբական հակամարտության թեժ սահմանային (սուղուր) գո-

---

[6] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Եր. 1970, էջ 151 (Բյուզանդական աղբյուրներ, Ա):

[7] Histoire des Arméniens / sous la direction de G.Dédéyan, Toulouse 1982, p. 250. Պիտի նկատի ունենալ, որ հիշատակված իրադարձություններից հետո կաթողիկոսական իշխանությունը ևս փոխադրվել էր Վասպուրականի տարածք (տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ՍՊբ. 1885, էջ 169 և հտն. (Այսուհետև՝ Ասողիկ)): Հատկանշական է, որ Անանիա Մոկացու թղթերում հիշատակվում են Բագրատունի և Արծրունի թագավորները հետևյալ հերթականությամբ և տիտղոսներով. «...քաջատոհմիկ հզօրագոյն երկոցունց ինքնակալացն Հայոց թագաւորացն քրիստոսասիրաց տեառնն Գագկայ Արծրունւոյ Հայոց թագաւորի և տեառնն Աբասայ Բագրատունւոյ խաղաղասիրի և հեզահամբոյր հզօրի և Մեծի Հայոց արքայի» (Գ. Տեր-Մկրտչեան, ՀՈՒ, էջ 93, հմմտ. նաև էջ 101): Անանիա Մոկացին ժամանակի համահայկական կարևորագույն հարցերից մեկը՝ Արցախի Աթոռի կարգավիճակը ճշտելու համար սկզբում դիմում է Արծրունիներին, ապա Անիի Բագրատունիներին (տե՛ս նույն տեղում, էջ 97), իսկ ավելի ուշ՝ Աբաս (՞) Բագրատունուն (Գ. Տ.-Մ., ՀՈՒ, էջ 99), այնուհետև Աշոտ Բագրատունուն (Գ. Տ.-Մ., ՀՈՒ, էջ 123, 124):

[8] Հայաստանում հաստատված արաբական իշխանությունների մասին տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր. 1965:

տիճներից էին Կարինը, Բասենը, Մանազկերտը, Տարոնը[9]: Բյուզանդական զորքերը ձեռքի հետ հետզհետե նվաճում էին նաև արաբների դեմ իրենց ամենահավատարիմ դաշնակցի՝ Հայոց թագավորի տունը: Բյուզանդիայի Արևելյան քաղաքականության շարժիչ գործոններից էր նաև դավանական ճնշումը: Այս դարաշրջանում այդ ճնշումն անգամ չէր ենթադրում բյուզանդական զորքերի առկայություն: Օրինակ. Հյուսիսից կարող էր երկիր ներխուժել Աբխազաց իշխան Բերը և իր դեսպանի միջոցով սպառնալ թագավորին. «...մի օրհնել... զեկեղեցին[10] ըստ ուղղադաւան հաւատոյ սրբոյն Գրիգորի, վասն զի ասէր իւր գալ կատարել քաղկեդոնական սահմանաւն»[11]:

Մի շարք իշխանական տների նկրտումների իրականացման համար ևս, կենտրոնախույս ձգտումների պատվար էր դառնում քաղկեդոնականության հակադրումը Հայոց հակաքաղկեդոնական դիրքորոշմանը: Անանիա Մոկացու կաթողիկոսության տարիներին նման վարքագիծ ընտրեցին Արցախի և Սյունիքի տեղային աթոռները[12]: Բյուզանդիայի կողմից Մեծ Հայքի արևմտյան տարածքների (Տայք, Բարձր Հայք և այլն) նվաճումով Ժ դարի կեսերին մեծ թվով հակաքաղկեդոնական վանականներ հաստատվեցին Հայաստանի արևելյան տարածքներում և բազմաթիվ վանքեր հիմնեցին երկրի գրեթե բոլոր կողմերում[13]:

Հայոց Եկեղեցին ստիպված էր շատ զգույշ լինել հիշյալ զարգացումների առջև: Սխալ դիրքորոշումը կարող էր հասցնել ազգային եկեղեցական կառույցների քայքայմանը: Նկատի ունենալով իրադարձությունների սրընթաց զարգացումը, Հայոց Հայրապետ Անանիա Մոկացին, իրեն շրջապատող ուղղափառ վարդապետների հետ խորհրդակցությամբ, դիմում է աննախադեպ քայլի, հրամայում է. «...զքաղկեդոնական մկրտեալսն կրկին անգամ... մկրտել»[14]: Հայոց Եկեղեցու պատմության մեջ աննախադեպ նման կտրուկ միջոցառման դիմելով, Անանիա Մոկացին և իրեն շրջապատող հոգևորականները օգտվում էին հակառակորդի զինանոցից, այն է՝ Ռոմանոս Լեկապենոս կայսեր (914-944 թթ.) Արևելքում նվաճված տարածքներում հակաքաղկեդոնականների դեմ սանձազերծած հալածանքներից[15]: Այդ ժամանակաշրջանից է մեզ հասել Գագիկ Արծրունու դավանաբանական թուղթը՝ ուղղված Բյուզանդական կայսրին և պատրիարքին[16], ուր հավաստվում է հայոց

---

[9] Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական սահմանային ամրությունների գոտին (սուղուր), ՊԲՀ, 1981, 2, էջ 134-149: Տարոնի իշխանության մասին տե՛ս Գ. Գրիգորյան, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Եր. 1983:

[10] Խոսքը հավանաբար Կարսի կաթողիկեի մասին է:

[11] Ասողիկ, 1885, էջ 171-172:

[12] Ստեփաննոս Օրբելյանը թեև բամբասանք է համարում Հակոբ Սյունեցու քաղկեդոնականությունը հարելը, սակայն և պախարակում է Արցախի արքեպիսկոպոս-կաթողիկոս Սահակի դիրքորոշումը, որը Հակոբի դաշնակիցն էր ընդդեմ կաթողիկոսական իշխանության (տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մ., 1861, էջ 204-206):

[13] Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, 1912, էջ 1000-1105, § 759-762:

[14] Տե՛ս Ասողիկ, էջ 180:

[15] Օրմանյանն արդարացիորեն ենթադրում է, որ կաթողիկոսին այդ քայլը հուշել են բյուզանդական բանակներից հալածված հոգևորականները, որոնք հաստատվել էին Բագրատունիների և Արծրունիների տարածքներում (տե՛ս Ազգապատում, § 763):

[16] Գիրք Թղթոց, Երուսաղեմ 1994, էջ 540-549:

դավանանքի ուղղափառությունը: Պատմագրության մեջ պահպանված ակնարկներից կարելի է եզրակացնել, որ այս նույն դարաշրջանում Անանիա Մոկացու միավորիչ ջանքերի դեմ, Քաղկեդոնի դրոշի ներքո էին գործում նաև Աղվանքի կաթողիկոսական Աթոռն ու Սյունիքի մետրոպոլիտությունը, որոնց դեմ պայքարում կաթողիկոսը կարողացավ հասնել լուրջ հաջողությունների[17]:

Իր առաջին թղթում խոսելով Սյունիքի Հակոբ մետրոպոլիտի բռնած մասնատողական դիրքորոշման մասին, Անանիա Մոկացին գրում է. «Եւ երանի թէ զինքեան միայն սիրել զկորուստ, այլ և զբազումս ի սուրբ եպիսկոպոսաց չարասադիր նամակօք դրդեաց ի սուրբ Լուսաւորչի աթոռոյս, մանաւանդ թէ այսու ոչ շատացեալ, այլ և Եղեալ յերկինս զբերան (Սաղմ. ՀԲ, 9) և զունակ հայրանախատն Քամայ արհամարհանս զսուրբ Լուսաւորչի աթոռակալէն գրէր յԱղուանից թագաւոր: Եւ ծաղածական բանս հայհոյութեան տայր վինել քաղկեդոնականացն զմերոյ աթոռակալացն»[18]:

Հայոց Եկեղեցու միասնությունը սասանողները հանդես էին գալիս Քաղկեդոնի դրոշով, այդ իսկ պատճառով կաթողիկոսն իր պայքարի սլաքն ուղղում է առաջին հերթին բյուզանդական եկեղեցական կառույցի պաշտպանների դեմ. «Եւ նախ կամեցաք մաքրել զընծիւղեալ աղանդն Քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց իբր քաղցկեղ ճարակէր և զբոլոր աշխարհս էր կալեալ...»[19]: Այս շարժման դեմ քայլեր ձեռնարկելու համար կաթողիկոսը դիմում է Հայոց Աբաս արքային, որն էլ «...նոյն ժամայն զհրաման թագաւորասաստ պայմանին դնէր, զի մի ոք իշխեսցէ ամուսնանալ ընդ երկաբնակսն, և աւազակացն զգլխահատմանն տայր վճիռ, և եկեղեցեաց զշինութեան տայր զհրաման»[20]:

Անանիա Կաթողիկոսն իր գործունեությամբ նպատակադրվել էր վերականգնել երկպառակտչական պատերազմների հողի վրա թուլացած Հայոց Եկեղեցու նվիրապետական կառույցը, որը հիմք կարող էր դառնալ նաև Հայոց տարամետ իշխանությունների միավորման համար: Թեպետ Սամուել Անեցին վկայում է, որ Անանիա Մոկացին իր կաթողիկոսության հինգ տարին անցկացրել է Աղթամարում[21], իսկ մնացած 17-ը՝ Վարագում,

---

[17] Գ. Տէր-Մկրտչեան, ՀՈԻ, էջ 92-125:

[18] Նույն տեղում, ՀՈԻ, էջ 95:

[19] Նույն տեղում, ՀՈԻ, էջ 99

[20] Նույն տեղում, ՀՈԻ, էջ 100:

[21] 927 թ. Աղթամարում հաստատված Հովհաննես Դրասխանակերտցուց հետո, Ստեփանոս Բ Ռշտունին (929-930), Թեոդորոս Ա Ռշտունին (930-941) և Եղիշե Ա Ռշտունին (941-946) պաշտոնավարում էին Աղթամարում, Վասպուրականի թագավորների իշխանության ներքո: Հատկանշական է, որ նրանք կամակատարները չեն եղել Արծրունի արքունական տան: Սամուել Անեցու բավական անորոշ վկայությունից կարելի է ենթադրել, որ Վասպուրականի արքունիքի և կաթողիկոսարանի միջև հակամարտությունը սկսվել է դեռևս Եղիշե Ա-ի կաթողիկոսության տարիներին. «ՋԽԱ: ի տէր Եղիայէն (այսպես-Ա.Բ.) էառ զԱղթամար Գագիկ՝ և ետ նմա զիւր. շինեաց և կատարեաց անդ զեկեղեցին: Եւ է թաղած ի Բերդաձոր» (տե՛ս Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց.../ յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 99, այսուհետև՝ Սամուել): Կարծում ենք, նման վերաբերմունքի է արժանացել նաև Անանիա Մոկացին: Այդ իսկ պատճառով անհիմն եմ համարում Մ. Օրմանյանի ենթադրությունը, թե Անանիան գտնվում էր Արծրունի իշխանների ազդեցության ներքո (տե՛ս Ազգապատում, § 750): Իլի և Բերդաձոր վանքերի մասին խոսում է Հ. Ոսկյանը՝ ցավոք վրիպելով Սամուելի հիշատակարանը (տե՛ս Վասպուրականի վանքերը, Ա մաս, Վիեննա, 1940 (Ազգ. Մատ., ճԽԹ), էջ 158-161, 146-148):

մեջ հաճախ ենք նրան տեսնում Սյունիքում, Անիում, Կարսում: Վերջապես նրա մարմինը հանգիստ է գտել Արգինայում[22], որն էլ նրա մահից հետո դարձավ պաշտոնական կաթողիկոսանիստը: Պատմական սկզբնաղբյուրներում նյութեր չեն պահպանվել՝ հավաստելու Անանիա Մոկացու և Արծրունի արքունական տան հակամարտությունը, այդ մասին կարելի է ենթադրել նրանից հասած թղթերից, ուր համահայկական գործերում առաջնությունը միշտ տրվում է Անիի Բագրատունիներին[23]:

Այն փաստը, որ Անանիան հովանավորել է վանական շարժումը Հայաստանում և նրանց շրջանում ունեցել է համախոհներ ողջ Հայաստանի տարածքում, փաստում է Ասողիկ պատմագիրը[24]: Սակայն հոգևորականության շրջաններում Անանիա Մոկացին ունեցել է նաև հզոր հակառակորդներ: Դրանց մեջ են եղել Աղվանքի կաթողիկոսները, Սյունիքի Հակոբ եպիսկոպոսը և Գրիգոր Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձևացին:

Թեպետ Խոսրովը Անձևացյաց եպիսկոպոս էր ձեռնադրվել Անանիա Մոկացու կողմից[25], Հայոց ՆԳ (=954/5) թվականին, «...ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իրիք հակառակութեան...»[26], հակադրվում է Հայոց Եկեղեցու ավանդույթներին և ինքնատիպ բարեփոխություններ է առաջարկում՝ հակադրվելով կաթողիկոսական իշխանությանը: Մինչև Անանիա Մոկացու թղթերի հայտնաբերումը, նրա բնած դիրքի մասին հայագիտությունը տեղյակ էր Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Սյունեցու թռուցիկ պատմություններից[27], որոնց հիմնական աղբյուրը, ինչպես պարզվեց ԺԹ դարի վերջին, Գալուստ Տեր-Մկրտչյանի հրապարակումներից հետո, Անանիա Մոկացու թղթերն են: Ըստ այդ սկզբնաղբյուրի՝ Խոսրովը Եկեղեցուն առաջարկում էր հետևյալ «բարեկարգություն-նորամուծությունները».

ա) «...ըստ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ Եռուսաղէմ...»,

բ) «...հրամայէր մինչչև մօրուսն եկեալ՝ զգլուխ խուզել մանկանց, թէ Այսր աղագաւ կոչի կտրիչ, և զկնի մորուացն զհերսն ապա թողուլ, երկայնել և մանել ցարունսն, զի այսր աղագաւ կոչին մանուկ...»,

գ) «...յաղագս քրիստոնեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն, որ քահանայքն աւրհնեն և այլ՝ զոր ոչ աւրհնեն, միապատիւ է, և աւելորդ զաւրհնելն վարկանիմ» (տե՛ս Գ. Տ.-Մ., ՀՈԻ, էջ 126):

Սակայն հիշատակված երեք անհարկի «նորամուծությունները», որոնք ժամանակին ներվել են անհնազանդ եպիսկոպոսին, սկիզբն են եղել հերձվածի: Ինչ-որ ժամանակ անց, Խոսրովը կրկին հանդես է եկել նոր «բարենորոգչական» խնդրով, այն է.

---

[22] Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859, էջ 32, հմմտ. Օրմանյան, Ազգապատում, § 767:

[23] Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, ՀՈԻ, էջ 114, 119:

[24] Տե՛ս Ասողիկ, էջ 173:

[25] Այդ մասին վկայություն է պարունակում Անանիա Մոկացու Բ թուղթը. «...Խոսրով...հաստատացեալ էր մեր ձեռն զվիճակն Անձևացեացն» (Գ. Տեր-Մկրտչյան, ՀՈԻ, էջ 126):

[26] Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, ՀՈԻ, էջ 126:

[27] Կիրակոս, 1961, էջ 85-87, Ստեփաննոս, 1861, էջ 200-210:

ա) «Մի պատիւ եւ մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց. ըստ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին. տարացոյց տալով. //(127) թէ Գրեալ Է՝ կոչեն զայս ոք ի դպրութենէ յաշտիճան սարկաւագութեան և զայն ոք կոչեն ի սարկաւագութենէ յաշտիճան քահանայութեան. ահաւասիկ դեռ ի վերանալ է աշտիճանօք: Եւ զի այս ոք, ասէ, կոչեն ի քահանայութենէ յաթոռ եպիսկոպոսութեան, չիք աշտիճան այլ, ահա՛ ցնրադրեցաւ յաթոռ: Եւ զայն ոք կոչեն յեպիսկոպոսութենէ յաթոռ հայրապետութեան, և չի՛ք այլ

անուանց յոյլզորլզումն, մի աթոռ է և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին»,

բ) «Եւ զերկրորդ կոչումն լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն» (տե՛ս Գ. Տ.-Մ., ՀՈՒ, էջ 126-127):

Ինչպես հավաստիացնում է իր թղթերում Անանիա Մոկացին, ինքը փորձել է աղաչանքով և «արտասուօք իսկ» Խոսրով Անձևացուն ետ կանգնեցնել բռնած դիրքից, սակայն ապարդյուն: Այդ իսկ պատճառով, կաթողիկոսը ստիպված է եղել. «...հարկեալ ի հրամանէ Աստուծոյ կտրել հրեղէն սրովն և զբաժինն ընդ կեղծաւորսն դնել, որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալսն պաշար կորստեան, զի ոչ զղջացաւ մինչեւ ի վերջին շունչն» (տե՛ս Գ. Տ.-Մ., ՀՈՒ, էջ 127):

Հատկանշական է նաև, որ լայնախոհ կաթողիկոսը Խոսրովի հարուցած խնդրին մանրամասնաբար անդրադառնում է միայն նրա մահից հետո. «...առ յապա եկեղցն, զի զգուշացին յայնպիսի ընդվայրայած քննութեանց և ուղղութեամբ նկատեսցեն զաւելոտի առ հանդերձեալ կեանսն, զի Ծառ է աւուրն չար իւր (Մատթ. Զ 34)» (տե՛ս Գ. Տ.-Մ., ՀՈՒ, էջ 127): Խնդիրը վերարծարծելու պատճառն այն է, որ Խոսրովի մահից հետո այդ շարժումը շարունակվել է:

Խոսրովի դեմ գրված Անանիա Մոկացու երեք վավերագրերում էլ չեն շոշափվում Աղվանքի և Սյունյաց Աթոռների հետ կապված խնդիրները, ինչը և թույլ է տալիս մեզ Անանիա Մոկացու «առ Խոսրով» երեք (բ, գ, դ) թղթերը ենթադրաբար թվագրել 958 թ. հետո[28]: Նրա երկու (բ և գ) թղթերի գրման ներքին սահմանը կարելի է քիչ ավելի վեր բարձրացնել, քանի որ երկուսում էլ նկատվում է, որ վեճը գնում է գաղափարի շուրջ և ոչ թե նրա կրողի, արդեն մահացած Խոսրով Անձևացու, որը հեռացել է կյանքից 958-965 թթ. միջև, հավանաբար՝ 960 թ.[29]: Հավանաբար, միայն Անանիայի մեկ (դ) թուղթն է գրված Խոսրովի կենդանության ժամանակ (տե՛ս Գ. Տ.-Մ., ՀՈՒ, էջ 145): Այս նույն ժամանակ, առանց հակառակորդ անձի անունն ակնարկելու, շարադրում է իր թուղթը նաև Վասպուրականի Մոկք գավառի նշանավոր վանքերից մեկի՝ Ծպատի վանական Հակոբ Ծպատեցին:

Անանիա Մոկացու (Գ և Դ) ու Հակոբ Ծպատեցու պահպանված թղթերը 960-ական թթ. շուրջ գրված կանոնական-հակաճառական մեկնություններ են, որոնց հեղինակները, ձեռքի տակ ունենալով Խոսրով Անձևացու մեզ չհասած հակաճառական երկը, քննության են ենթարկում նրա արտահայտած հերձվածողական, այս դեպքում՝ Եկեղեցու նվիրապետական կարգը քայքայող մտքերը: Հաճախ կաթողիկոսը դիմում է առանց անունը տալու,

---

[28] Գ.Տեր-Մկրտչյանը դրանք թվագրում է 954-965 թթ. միջև: Վերջին տարեթիվը Անանիա Մոկացու մահվան թվականն է (տե՛ս ՀՈՒ, էջ 85):

[29] Խոսրով Անձևացու մահվան թվականի ճշգրտման մասին ենթադրությունը տե՛ս Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 45:

հռետորական հնարանքով Խոսրովին. «աղէ՛ սաս» (ՀՈԻ, էջ 129, ), «կարե՞ս ասել» (ՀՈԻ, էջ 129, ) և այլ արտահայտություններով:

Անանիա Մոկացին իր թղթում (Գ) ցավով գրում է, որ փառախնդիր ամբարտավանությամբ Հայոց Եկեղեցու որոշ ներկայացուցիչներ ապստամբել են Գրիգոր Լուսավորչի Աթոռի դեմ, որը արքեպիսկոպոսության (եպիսկոպոսապետական) ձեռնադրություն է ստացել Կեսարիայի «պատրիարքից»[30]: Նրանք իրենց նպատակին հասնելու համար «...արդենացիտ նորաձայնութեամբ՝ բառնան զերիցութիւն սուրբ աթոռոյն, համապատիւ զեպիսկոպոսունս և զհայրապետսն ասելով, թէ միապէս ունին զանուն եպիսկոպոսութեան՝ հայրապետն նոյն զունակ և զպատիւն, և չէ ինչ առաւել ո՛չ պատիւ և ո՛չ կոչումն, և եթէ է՝ կոչումն ձեռնադրութեան չկայ յեպիսկոպոսութենէ ի հայրապետութիւն, և թէ զանազան անուանք՝ մետրոպօլիտք և արքեպիսկոպոսք և պատրիարգ՝ մարմնական անուանադրութիւնք են»[31] (նորաձևությամբ վերացնում են Ս. Աթոռի առաջնությունը՝ համապատիվ հայտարարելով եպիսկոպոսներին և հայրապետներին, իբրև թե մետրոպոլիտը, արքեպիսկոպոսը և պատրիարքը մարմնական [իշխանական կամ աշխարհիկ] անվանադրություններ են):

Ապա հեղինակը դիմելով իր ընդդիմախոսին՝ բացատրում է միջնադարյան նոմինալիզմի հիմնաքարային դրույթը «Եւ իմացեալ, թէ չի՛ք անուն, որ ոչ զիրն նշանակէ»[32] (գիտենք, որ չկա անվանում [կամ գաղափար], որն իր իրը [կամ առարկան] չունենա): Այնուհետև բացատրում է սարկավագ (սպասավոր), քահանա (սրբիչ), եպիսկոպոս (այցելու), հայրապետ բառերի նշանակությունն ու կիրառությունը, տալիս է դրանց հոգևոր իմաստները և ապա հարց է տալիս, թե ի՞նչն է խախտում համանվանությունն ու բազմազանությունը: Կաթողիկոսը հարց է տալիս ընթերցողին. Մի՞թե հիշատակված բոլոր անունները նաև կաթողիկոսի իրավասությունները չեն, «Կարե՞ս ասել, թէ չէ հայրապետն սարկաւագ Աստուծոյ, կարե՞ս ասել, թէ չէ սրբիչ, կարե՞ս ասել, թէ չէ այցելու»[33]: Անանիա Մոկացին իր հոգու խորքում հասկանում է, որ ընդդիմախոսների նպատակը Եկեղեցու նվիրապետական կառույցը քայքայելն է: Նման արդյունքը նա անհնարին է համարում («Գիտեմ, զի զպետութիւն բառնալ կամիս, զոր ոչ կարես») (ընդգծումը Ա.Բ.-ի), քանի որ հիշատակված հաստատությունների անունները ավելի շատ ամրացնում, քան թե քայքայում են շենքը («Արդ՝ զի՞նչ քակիչ են այդոքիկ անուանք պետութեանն, թէ ոչ առաւել հաստիչ»)[34]:

Այնուհետև կաթողիկոսն անդրադառնում է Աստծո, հրեշտակների և մարդու հարաբերությանը, որոնք բոլորն էլ լույս են անվանվում: Ապա հարց է տալիս իր ընդդիմախոսին. մի՞թե դրանք համապատիվ են, կամ թեպետ ասում ենք երկինք երկնից, Աստված Աստծուց, այսինքն՝ Արարիչ և Տեր, ինչպես դիմում ենք նաև իշխաններին ու թագավորներին: Այս տրամաբանությամբ, ուրեմն, շեշտում է Անանիա Մոկացին, իշխանին ու թագավորին

---

[30] Գ. Տ.-Մ., ՀՈԻ, էջ 128:

[31] Նույն տեղում:

[32] Նույն տեղում, էջ 129:

[33] Նույն տեղում:

[34] Նույն տեղում:

Է՞լ կարելի է Աստված անել[35]: Տրամաբանական այս վարժանքի իմաստն է՝ ցույց տալ, որ յուրաքանչյուր գաղափար միևնույն ժամանակ և՛ առանձնակի է, և՛ միաձուլված այլ գաղափարների:

Այս առաջաբանից հետո, գիտնական կաթողիկոսն օրինակներ է բերում Աստվածաշնչից: Համեմատում է Մովսեսին և Ահարոնին ու ցույց տալիս, որ նրանք որքան էլ համանման պատվանունով (երեց) են ներկայացված Ս. Գրքում, այնուամենայնիվ Մովսեսը գերադասվում է Աստծո կողմից[36]: Կամ ասում է. և՛ Մելիքսեդեկը, և՛ Քրիստոսը քահանա են կոչվում Ս. Գրքում, մի՞թե այդ անվան ստվերում չի կարելի նաև տեսնել եպիսկոպոսությունը, որը պարունակում է իր մեջ նաև քահանայությունը[37]:

Հետևելով Քրիստոսի կյանքին. Անանիա Մոկացին ցույց է տալիս, որ Քրիստոս նախ գրակարդաց էր, հետո՝ սարկավագ, այնուհետև՝ քահանա, երբ Պետրոսը հավատաց՝ եպիսկոպոս էր, իսկ երբ Ս. Հոգին վերնատուն առաքեց՝ եպիսկոպոսապետ, քանի որ եպիսկոպոս դարձրեց իր առաքյալներին: Այնուհետև Անանիա Մոկացին կրկին հարց է տալիս իր ընդդիմախոսներին. մի՞թե խանգարում են այդ կոչումները Կատարելագունին (Քրիստոսին-Ա. Բ.)[38]:

Գիտնական կաթողիկոսը ցույց է տալիս, որ Աստվածաշնչում տերմինները այդքան էլ հստակ չեն: Օրինակ՝ Փիլիպպոսը սարկավագ լինելով մկրտում է ներքինուն, կամ միթե Հովհաննես Մկրտիչը եպիսկոպո՞ս է, որ մկրտում է Քրիստոսին, կամ մենք համարատի՞վ ենք Քրիստոսին, որ նա մեզ կանչում է երկնային արքայություն[39]: Այնուհետև Անանիա Մոկացին իրավացիորեն նկատում է, որ առանց գլխի կարելի է ողջ շենքը քանդել[40], այսինքն փլել եկեղեցական նվիրապետության հարյուրամյակների ընթացքում կառուցված շենքը:

Անանիա Մոկացին այնուհետև անդրադառնում է հայրապետ-եպիսկոպոսապետի ձեռնադրության խնդրին, որը հավանաբար ամենագլխավոր փաստարկներից մեկն է եղել իր ընդդիմադիրների: Կաթողիկոսը հավաստում է, որ ճիշտ է, մեզանում դրա համար հատուկ ծես չկա, սակայն ուրիշ ազգեր ունեն այդ, պարզապես մենք չենք թարգմանել, ինչպես շատ ու շատ այլ կարևոր գրվածքներ: Քանի որ մեր նախնի վարդապետները չգիտեին, թե ծնվելու է նոր Աբիսողոմ՝ քանդելու համար Նոր Սիոնի դռները, «պառակտել կամելով զհայրենի թագաւորութեան զպատիւն նոր և տարաժամ դատաստանաւ»[41]: Եկեղեցական մատենագրության բնագավառում Անանիա Մոկացու ունեցած լայն իմացությունների մասին է վկայում այն փաստը, որ նա հավաստում է, որ մենք ձեռագրերում և իր-

---

[35] Նույն տեղում:

[36] Նույն տեղում: Հղումները Սաղմ. ՂԸ, 6, Ելից, Լ, 22: Իր ասածն ավելի համոզիչ դարձնելու համար դիմում է Գրիգոր Աստվածաբանին (հղումը հստակված չէ):

[37] Նույն տեղում, էջ 130: Շեշտվում է նաև, որ քահանայությունը նաև թագավորություն է անվանվում:

[38] Նույն տեղում:

[39] Նույն տեղում, էջ 131:

[40] Նույն տեղում:

[41] Նույն տեղում:

-ջև ավանդություն ունենք սարկավագի «բեմական ձեռնադրություն», որն էլ մյուս ազգերը ...չունեն[42]:

Գիտնական կաթողիկոսն օրինակներ է բերում Սոկրատի Եկեղեցական պատմությու-...նից (Պրոկղի հայրապետության գալը, Եփեսոսի ժողովին ներկա եպիսկոպոսապետների ...և եպիսկոպոսների քանակը) և մեր Եկեղեցու ավանդույթից (Հովսեփ Հողոցմեցու տեղա-...պահությունը)՝ ցույց տալով, որ եպիսկոպոսից եպիսկոպոսապետության աստճան ստա-...նալիս «կրկին...հոգին զաւրանայ ի վերայ, որպէս յԵղիայէ յԵղիսէէ»[43]: Այնուհետև մեր հե-...ղինակը շեշտում է, որ վերևում բազմաթիվ օրինակներ է բերել, ըստ որոնց նույն անունով ...են կոչվում զանազան աստիճանների վրա գտնվող հոգևորականները (ինչպես եպիսկո-...պոսը և հայրապետը)[44]:

Անանիա Մոկացին իր ասածը բավական համարելով, չի անդրադառնում Դիոնիսիոսի ...նվիրապետական Աթոռների ինն դասերի դասակարգմանը, որը շահարկում են հակառա-...կորդները («զխարդախող հնարիմացութիւնս նորանայն խորագիտ հակասութեան կարող ...է պարսաբանել»)[45], սակայն ընդգծում է, որ նման կարծիք դեռևս չէր հնչել Լուսավորչի Ա-...թոռը ժառանգած 53 կաթողիկոսների գահակալության տարիներին: Այդ է պատճառը, որ ...բոլոր ընդդիմադիրներին զգաստության կոչ է անում, քանի որ նման կեցվածքը կարող է ...Քրիստոսի Եկեղեցու կործանման պատճառը դառնալ.«...բառնալ առաջնորդական հաս-...տատութեան և սահմանի, որպէս և Իւրաքանչիւր առանձին լինել քույմ և տուն և հասա-...րակաց չարադիւթութիւն»[46]:

Հաջորդ թղթում (դ) Անանիա Մոկացին անդրադառնում է ընդդիմադիրների այն տե-...սակետին, թե.«Ո՛չ ասի աշտիճան եպիսկոպոսի, այլ աթոռ»[47]: Հեղինակը, հերքելու համար այս կարծիքը, վկայություններ է բերում Դիոնիսիոս Արիոպագացուց[48], Եվսեբիոս Կեսա-...րացու Եկեղեցական պատմությունից[49], Ագաթանգեղոսից[50], վերջում իր ասածը հաստա-...տելով ավետարանական վկայակոչումներով[51] և Դիոնիսիոսի երկով[52]: Եկեղեցական ...նվիրապետության աստիճաններին անդրադառնալուց հետո, օրինակներ է բերում Կոմի-...տաս Կաթողիկոսից, Խոսրովից, Նիկիայի, Նեոկեսարիայի (թե՞ Անկյուրիայի), Երկրորդ Նիկիական կանոններից, Բարսեղի և Ծահապիվանի կանոնախմբերից այն մասին, որ եթե ցածր աստիճաններում գտնվող հոգևորականը խախտում է օրենքը, եպիսկոպոսն էլ ներառյալ, իրենցից բարձր կանգնած հոգևորականի կողմից կարող է պատժվել[53]:

---

[42] Նույն տեղում:
[43] Նույն տեղում, էջ 131:
[44] Նույն տեղում, էջ 132:
[45] Նույն տեղում, էջ 133:
[46] Նույն տեղում, էջ 134:
[47] Նույն տեղում, էջ 134:
[48] Նույն տեղում:
[49] Նույն տեղում, էջ 135:
[50] Նույն տեղում, էջ 135-136:
[51] Նույն տեղում, էջ 136:
[52] Նույն տեղում, էջ 137:
[53] Նույն տեղում, էջ 137-138:

կանոնական այս մեկնաբանություններից հետո Անանիա Մոկացին անդրադառնում է
իր հակառակորդների բարձրացրած «...առանց Բ կամ Գ եպիսկոպոսաց...անհնարին է ու-
մեջ ձեռնադրել եպիսկոպոս» խնդրին[54]: Հիշեցնելով վերևում բերած իր վկայակոչումները
սկզբնաղբյուրներում եպիսկոպոս և հայրապետ աստիճանների նույն տիտղոսով կոչվելու
մասին, Անանիա Մոկացին այն տեսակետն է զարգացնում, որ այդ կանոնը վերաբերում է
ոչ թե պարզ եպիսկոպոսին, այլ հայրապետին և իր ասածն ապացուցելու համար նոր
վկայակոչումներ է բերում Եվսեբիոսի և Սոկրատի Եկեղեցական պատմություններից. Ա-
ցաթանգեղոսից, Նոր Կտակարանից[55]: Երևում է, որ հակառակորդները Հայոց Հայրապե-
տին աստիճանով չեն հավասարացրել քույր Եկեղեցիների առաջնորդների հետ, քանի որ
նրա նստավայրը արքայանիստ մայրաքաղաքում չէր: Այդ իսկ պատճառով Անանիա Մո-
կացին բերում է Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի՝ եպիսկոպոսների օրինակը և
հարց տալիս. «յոյժ կրտսերագո՞յնք եմ, վասն ոչ զոք ունել թագաւոր, ի ձեռն որոյ զահա-
փառեալ բարձրանային քան զընկերսն»[56]:

Անանիա Մոկացու քննարկած հաջորդ հարցը Եկեղեցուն և կաթողիկոսական Աթոռին
Անանիա Մոկացու քննարկած հաջորդ հարցը Եկեղեցուն և կաթողիկոսական Աթոռին
տրվող տուրքերն են, որոնց նախատիպերը վկայված են Հին և Նոր Կտակարաններում[57]:
Ըստ Անանիայի՝ իր ընդդիմախոսի ուսուցիչն այս հարցում Արամն է, որը «...թերևս
զգտուղ երախայրեացն միայն արգելուլ բաջաղեր»[58], իսկ աշակերտն ավելի առաջ է գնա-
ցել, քանի որ «...բնաւին զհայրապետականս բառնալ զաթոռն ձեռնարկեցեր. զի անհոգ
յընծայաբերութենէ ստասցիս կեանս»[59]:

Նկարագրված նորաբողբոջ աղանդը Անանիա Մոկացին նմանեցնում է Վաղենտիա-
նականության հետ[60], որոնց խոսքերով իսկ՝ «...հոգևոր եմք և գիտունք, քան զԱրարիչն
մեր»[61]: Նույն օրինակով հարցնում է իր ընդդիմախոսին, «թէ այսօր կենդանի էր սուրբ Լու-
սաւորիչն՝ ասէի՞ր զքեզ հաւասար նմա և բնաւ ոչի՞նչ ունել նմա աւելի: Եւ եթէ ասես, եթէ՝
Ոչ ես դու նման նմա, ապա և ոչ դու սրբոյն Ալփիանոսի»[62]:

Այնուհետև Անանիան կրկին վերադառնում է Եկեղեցում երեք աստիճան լինելու խոս-
րով Անձևացու տեսությանը, որը հիմնված է Դիոնիսիոս Արիոպագացու երկնային քահա-
նայության ուսմունքի ինն աստիճանների վրա[63]: Եկեղեցու նման կառուցվածքն արտացո-
լումն է այդ դասակարգման, որի համար օրինակներ են բերվում Հին և Նոր Կտակարան-

[54] Նույն տեղում, էջ 138:

[55] Նույն տեղում, էջ 138-143:

[56] Նույն տեղում, էջ 144:

[57] Նույն տեղում, էջ 144-147:

[58] Նույն տեղում, 144: Արամին վերագրվող մեկ թուղթ պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 3710 ձեռագրում, թղ. 317ա-319բ: Այս թղթից մեկ հատված տե՛ս Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխատ. Պ. Խաչատրյանի և Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 318-321:

[59] Նույն տեղում, էջ 144:

[60] Նույն տեղումէջ, 147:

[61] Նույն տեղում:

[62] Նույն տեղում:

[63] Նույն տեղում, էջ 147-148:

ներից[64]: Սակայն այդ ամենում Անանիան որևէ վկայություն չի գտնում այն բանի, որ պարզ եպիսկոպոսի ձեռնադրության համար պետք է հավաքել այլ եպիսկոպոսների[65]: Չկա նաև սկզբնաղբյուրներում, որ երեքն են Եկեղեցու աստիճանները (սարկավագ, քահանա, եպիսկոպոս), Դիոնիսիոսը ևս ինն աստիճան է վկայակոչում[66]:

Վերջում, Անանիա Մոկացին, անդրադառնալով Խոսրով Անձևացու հիմնական դրույթին, հերքում է այն. «Նաև բազումք ի հայրապետաց Հայոց յեպիսկոպոսութենէ կոչեցան, բայց ոչ են ըստ մեզ լուծեալք, այլ առաւել աստուածատեսակեալք: Այլ քեզ ըստ քոյդ եղիցի հաւատոց և մեզ՝ ըստ մերոց...»[67]:

Հակոբ Ծպատեցու կանոնական մեկնությունը ևս իր թափով չի զիջում Անանիա Մոկացու թղթերին: Մեկնաբանված հարցերը գրեթե նույնն են, տարբեր են քննարկման հարթությունները: Մոկաց աշխարհում գործող վանականն անհանդուրժելի է համարում և Նիկիայի ժողովի կանոններով մերժում այն կեցվածքը, երբ հոգևորականը փորձում է իրեն շահագրգռող որևէ խնդիր լուծել ոչ թե իրեն գերագահ հոգևոր առաջնորդի միջոցով, այլ «դիմեալ առ թագաւորն», այդպիսի հոգևորականին, եզրակացնում է Ծպատեցին. «ցոյց արասցեն և ընկեսցեն և մերժեսցեն ոչ միայն ի հաւասարութենէ, այլ և ի պատուոյն ևս, զոր ունէր»[68]:

Այդպիսի իրավունք է վերապահում Հայոց կաթողիկոսին Հակոբ Ծպատեցի գիտնական-վանականը՝ բերելով հետևյալ օրինակը. «...զՀռոմայ եպիսկոպոսն...զերիցունս արձակիցէ իշխանութեամբ եպիսկոպոսութեանն...ընդ եպիսկոպոսացն զդատն ասիցէ»[69]: Եզրափակելով իր մեկնությունը, Մոկաց աշխարհի կանոնագետը գրում է.«...եպիսկոպոս տեսուչ և կաթուղիկոս առ բոլորեսին պետաւորեալ ունի զանուն, զի գլուխ է եպիսկոպոսացն ամենեցուն...»[70]:

Երկու հեղինակներն էլ, թե՛ Անանիա Մոկացին և թե՛ Հակոբ Ծպատեցին, քանիցս վկայակոչում են Աստվածաշունչը, Կանոնագիրք Հայոցը և Եկեղեցու Ս. Հայրերի երկերը (Դիոնիսիոս Արիոպագացի և ուրիշներ): Անանիա Մոկացին, բացի հիշատակված սկզբնաղբյուրներից, իր ասածը հիմնում է նաև եկեղեցական պատիչների (Եվսեբիոս Կեսարացի և Սոկրատ Սքոլաստիկոս), իսկ Հակոբ Ծպատեցին՝ Գրիգոր Աստվածաբանի, Հովհան Ոսկեբերանի, Ս. Սահակի տեսիլքի, Գուգենտիոս եպիսկոպոսի, Ակակի առ Պետրոս և Պետրոսի առ Ակակ թղթերի վրա:

Եզրակացություն. Վերևում հիշված կանոնագիտական մեկնությունները Վասպուրական երկրագավառի ծնունդ են: Դրանք արդյունք են Հայաստան աշխարհում մեծ թափ

---

[64] Նույն տեղում, էջ 148-149:

[65] Նույն տեղում, էջ 149:

[66] Նույն տեղում, էջ 149-151: վկայակոչումներ են բերվում Կղեմեսից և Առաքելական կանոններից:

[67] Նույն տեղում, էջ 152:

[68] ՄՄ-2966, էջ 142ա: Այս բնագրի հրատարակությունը տե՛ս հոդվածի վերջում: Հմմտ. նաև Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 47:

[69] ՄՄ-2966, էջ 142բ:

[70] Նույն տեղում:

ստացած այն վանական շարժման[71], որի մասին գրում է Ասողիկ պատմագիրը: Մեզ հասած երկերից երևում է, թե ինչ բարձր մակարդակի էր հասել մեկնողական արվեստը Ժ դարի կեսերին, պատկերացում է տալիս վանական դպրոցներում կանոնագիտական կրթության մակարդակի մասին:

Ինչպես գիտենք, զուտ կանոնագիտական դպրոցները Եվրոպայում ձևավորվում են ԺԱ դարում և հիմք են դառնում եվրոպական համալսարանների կրթական համակարգի, որը վերածննդի գաղափարների հիմնական կրողն էր: Հայաստանում այդ շարժումը, ինչպես տեսանք, սկսվել է ավելի վաղ: Ավաղ, պատմական պայմանները թույլ չտվեցին Հայաստանում այդ զարգացումների խորացումը: Ինչևէ, քննարկված երկերի մակարդակը մեզ թույլ է տալիս ասել, որ Ժ դարի կեսերին Հայաստանում, մանավանդ Վասպուրական աշխարհում գոյություն ուներ կանոնագիտական մեկնությունների ուրույն դպրոց, որը հետևողականորեն հետևում էր հայկական հասարակության և Եկեղեցու ավանդական կանոնական պատկերացումների զարգացման բնական ճանապարհի պահպանմանը:

Ներկա հրապարակման մեջ հետազոտողների ուշադրությունն ենք հրավիրում նաև Հակոբ Սյունեցու նամակի բնագրի վրա, որը հրապարակվում է առաջին անգամ ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի երկու ձեռագրերի: Այս ձեռագրերի մասին ավելի մանրամասնորեն խոսվում է Գալուստ Տեր-Մկրտչյանի աշխատություններում և Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակում: Բերում ենք թղթի մեր կազմած համեմատական բնագիրը:

[71] Վանական շարժման հիմնական դրսևորումների մասին տե՛ս Գիւտ եպիսկոպոս, Արևելեան անապատականը եւ «Նարեկ»ը (Ուսումնասիրութեան փորձ), Երուսաղէմ 1937 (Դուրեան Մատենադարան, թիւ 11):

# ԽԱՒՍՔ ՀԱՒՐ ՅԱԿՈԲԱՅ ԾՊԱՏԵՑՒՈՅ ԻՄԱՍՏԱՍԷՐ ԳԻՏՆԱՒՈՐԻ ԸՆԴԴԷՄ ԽՈՍՐՈՎԱՅ ԻՄԱՑՄԱՆՑՆ

[Ս]կիզբն կենաց*, որ տուաւ նախահաւրն՝ խաղաղութեամբ էր պսակեալ, մինչ չարն բարւոյն չէր հակառակ, եւ այնու պայծառացեալ հրաշագեղ վայելչանաւք դրախտին: Վկայէ Մովսէս ի վեցերորդ աւուրն յետ զմարդն առնելոյ, եթէ Ետես Աստուած զի բարի է (Ծննդ. Ա. 31): Վկայէ եւ աւձն, որ արտաքոյ[1] դրախտին կայր, եւ խաւսէր ընդ Եւայի, եւ նա ոչ փախչէր ի նմանէ, զի ոչ միայն աւձին, այլ եւ ամենայն անասնոց անընդունակ էր դրախտն: Զի անապականին //(139ա) միայն վայել էր անապական կեանքն, զի Աստուծոյ պատկերաւն մարդն[2] միայն ճոխանայր: Այլ յորժամ չարն զինեալ[3] հակառակ բարւոյն, ստասէր սայրիւն սրեալ՝ զճարակող աղանդն եմոյծ, նախ ընդ լսելիսն, որովք կախարդեալք հնգիւքն զգայարանաւքն[4] մահացուցեալ տարամերժեաց յԱստուածունակն յայն երջանիկ կենացն, ապա յանասնական բարոյիցն եւ կենացն զուգակցեալ[5], ոմանց վայելաւղ եղեալ եւ յոմանց ընդ երկիւղիւ փակեալ, որպէս աւձն թշնամութեամբ ըստ արժանի սպասէ զարշապարացն (Ծննդ. Գ. 15)՝ ի Տեառնէ իսկ հրամայեալ: Նոյնպէս եւ յայլ գազանացն խուսափեալ սարսէ, վկայի այս եւ յայնցանէ, որք խաղաղութեանն Աստուածայնոյ չոգան զկնի, որպէս եւ Դանիէլ ի մէջ առիւծացն ոչ տխրեալ (Դան. Զ. 16), եւ Պաւղոս յիժէն ոչ վնասեալ (Գործ. ԻԸ. 3), եւ սուրբն Գրիգոր Հայոց Լուսաւորիչն ի մէջ աւձիցն ոչ տարակուսեալ:

Եւ այլք բազումք, որոց գիտնականք տեղեակ են, եւ այնմ ամենայնի նախանձն[6] առաջնորդեաց, որպէս եւ ասէ գիր, եթէ Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ (Իմաստ. Բ. 24), եւ ինքն իսկ սատանայ յաղագս նախանձու կործանեցաւ: Եւ սուր ի ձեռս ետ մարդկային բնութեանս ընդ իրեարս մարտնչել անհաշտ պատերազմաւ, զի որ զԿայեան ընդ եղբաւրն զինեաց ի կռիւ, եւ ետ մոռանալ զեղբայրութեանն աղէխարշանք: Եւ մանաւանդ զբազմակարաւտ աւգնականութեանն առ ի նմանէն խնամս, ի դժնդակութենէ գազանացն յարձակմանց, եւ կամ յայլ իրս յորս վայելեն բազմադիմի ջերմագութ խնամող եղբայրական սիրովն պարսպեալք: Նա եւ ի Յովսէփ[7] ոչ խնայեաց եղբարցն (Ծննդ. ԼԷ. 28), նախանձու մաշեալ յաղագս երազոցն՝ կանուխ զապառնեացն ծանուցեալ զնորայն

---

* Բնագիրը կազմելիս հետևել ենք հիշատակված երկու ձեռագրերին. Ա - ՄՄ - 2966, թղ. 138բ - 143ա

Բ - ՄՄ - 3062, թղ. 212բ - 216բ, Աստվածաշնչային հղումները այս ձեռագրում հիմնականում նշված են:

[1] Բ - արդաքոյ.

[2] Բ - մարդ.

[3] Բ - լինել.

[4] Ա - սգայարանօք.

[5] Ա - զիւգակցեալ.

[6] Բ - ] նա անձն.

[7] Բ - Յուսէփ.

զփառս, եւ տոլրսակ պսակաձեռ ի նոցանէ զհոնրպացութիւնն[8]: Ցաղագս որոյ սուղ ինչ միջոցաւ ի մահուանէ ճողոպրեալ շահու աղագաւ յԵգիպտոս վաճառեցին, զկեալն նմա երախտիս առաջի կացուցեալ (Ծննդ. ԼԸ):

...ի ճաշ գահակցեցաւ (Ծննդ. ԻԲ), եւ

Այլ Աստուած հարց նորա, որ ընդ Աբրահամու ի ճաշ գահակցեցաւ (Ծննդ. ԻԲ), եւ Այլ Աստուած հարց նորա, որ ընդ Աբրահամու յայտնի տպաւորելով, որ-խսահակաւ զամենայն իւրոց չարչարանացն զխորհրդանական յայտնի տպաւորելով, որ-պէս ասաց իսկ ինքն յԱւետարանին առ հրեայսն, եթէ Աբրահամ ցանկացաւ տեսանել զաւր իմ (Յովհ. Ը. 56): Եւ ընդ Յակոբայ այրաբար գիշերամարտ զաւտկակոիւն[9] լեալ, միչեւ ցառաւաւտն, եւ նա ի հարցն ապաւինեալ առաքինութիւն, եւ ժուժկալեալ մինչեւ առաւաւտուն զչքնաղ խորհուրդն յանունն տպաւորեաց (Ծննդ. ԼԲ. 24), քանզի Յակոբ խա-բող կամ արժանի կոչուլ, որ զեղեցիկ խաբէութեամբ զԵսաւ խաբեաց, եւ գողացաւ զան-դրանկութիւնն եւ զաւրհնութիւնն (Ծննդ. ԻԵ. 32-34): Եւ արժանացաւ ընդ Աստուծոյ կռուիլ, եւ աւրհնութեանցն հասանիլ յանունն[10] ճշգրտեալ Իսրայէլի (Ծննդ. ԻԷ. 27), այսինքն Աստ-ուածատես, որ եւ զնոր խորհուրդս ինքն իսկ խոստովանի, եթէ ոչ է սա, եթէ ոչ տուն Աս-տուծոյ, եւ նոյն ինքն դուռն երկնից (Ծննդ. ԻԸ. 17): Եւ անգոյ զուղեղ փայտիւքն եւ խայտա-խար//(139բ) իւր ծննդիւքն Լաբանայ ոչխարացն զխաչին եւ զաւազանին սուրբ խորհուրդն գուշակեաց (Ծննդ. ԼԳ. 19):

Եւ յայնժամ նոյն ինքն Աստուած, սքանչելի արանցն այնոցիկ ընդ նմա, էջ եւ պահպա-նողական աջակցութեամբն պարսպեաց: Թէպէտ եւ ի կնոջ անզգամութենէն դաւաճա-նեալ է երկուս ամս ի բանտին[11] նուաճեցաւ, այլ զազատութիւնն ամբողջ պահեալ, ոչ ծա-ռայեցոյց Քանանու ազգին՝ իսպառ ստրկացելոյն, որով լի էր Եգիպտոս պղծառատեալ անիծիւքն Նոյին, որ զՔամայ զծաղրն մարգարէական ակամբ ի ծնունդն գուշակեաց: Զայս եւ ինքն Տէրն ասէր թէ, Որ ի փոքու անիրաւ է, եւ ի բազմին անիրաւ է: Այլ որպէս Քամ հրապարակացուժ կամեցաւ առնել զմերկութիւն հաւրն, եւ եղբարքն յետս յետս գնա-յով ձորձով ծածկեցին (Ծննդ. Թ. 22-23):

Նոյնպէս թէպէտ եւ ժառանգն Քամայ՝ անզգամն այն, զչքնաղագեղն զայն եւ զպայծա-ռակերպն, զգեղեղէշ զերկուց սքանչելատես զունացն զհոգոյն ասեմ, եւ զմարմնոյն կամե-ցաւ մերկ կողոպուտ առնել, այլ նա ի հարցն առաքինութիւնն ապաւինեալ, ծածուկ իսկ պահեաց եւ ոչ ետ ծաղրել զգեղեցկափայլ գեղոյն բարեզարդութիւնն: Ցաղագս որոյ եւ Աստուած ի տեսիլս բազմադիմիս ի բանտի[12] եւ ի յարքունիս երեւեցուցեալ, թէպէտ եւ անարժանք էին՝ հրապարակացոյժ առնէր, զծածկեալ զանձն Աստուածային, եւ հանեալ տայր ի ձեռս զքառառաջեա զլծեալ կառս արքունականս: Ընդ նմին եւ զզաւազան թագա-ւորութեանն տիրելով ամենայն Եգիպտոսի (Ծննդ. ԽԱ. 42), ի դէպ ժամու ժողովելով եւ սփռելով զցորեանն ըստ կարեաց տարացելոցն եւ աշխատելոցն յայնոսիկ հացին կարաւ-տութեանց: Մանաւանդ զիւրային ազգին պահելով զնշխար, զոր աճեցոյց ի բազմութիւն

[8] Բ - երկրպագութիւնն,

[9] Բ - զօտակոիւն,

[10] Բ - յանուանն,

[11] Ա - բանդին,

[12] Ա - բանդի,

անթիւ զաւրաց կամ անհամար ծովու աւազոց, ա՛ծ, մատոյց[13] Մովսէսի (Ելք. ԺԴ): Եւ նա խաղաղասոյր ցաւազանաւն բաժանեալ ցամաքեցոյց զանդունդն, եւ եհան սքանչելեաւքն յանապատ: Զսիրողս կուսոյն ի թիկանց կացուցեալ, մանաւանդ դաւանանութեամբ ճանապարհին ի ներքս ընկալեալ զփարաւոն[14] կառաւք եւ երիվարաւք իւրայովքն, ամենեքեամբք խաչասաստ փայտիւն զերկուս լեռնաձեւ[15] անդունդս յիրար հեղուսեալ, գերեզմանն գործեաց կուուասէր ժողովոյն իւրոցն առաջնորդելով մեծաւ սքանչելեաւք. ի տուէ ամպով[16] հովանեաւ յարեգական տապոյն օժանդակեալ, եւ զգիշերոյն անտեսութիւնն բոցաձեւ հրով լուսաւորեալ՝ աստանաւր մեզ անմոլար առաջնորդեսցեն Մովսէս եւ Ահարոն երիցունք[17] նորա, որպէս ասէ մարգարէն (Սաղմ. ՂԸ. 6):

Աստ հասարակաց պատուով գուշակեաց երիցունս[18] ասելով, այլ[19] ահա յայտ է ի պատմութենէն, թէ Մովսէս գերագոյն Ահարոնի է, զի զնմանէ ասի. բերան ի բերան խաւսել ընդ Աստուծոյ: Եւ այլքն[20] ի հեռաստանէ զձայն արհաւրացն[21] եւ զտեսիլս հայէին, եւ զաւրէնսն նա էառ եւ զեղջիւրն աւծութեան, ուստի թագաւորքն եւ մարգարէքն եւ քահանայքն աւծանէին: Ուստի՞ զԱհարոն եւ զորդիսն//(140ա) նորա էառ ի քահանայութիւն, եւ եթէ ինձ ոչ հաւանիս հաւանեա Գրիգորի Աստուածաբանի եւ նորա անունն իսկ զքեզ պատկառեցուսցէ, քանզի ասէ իսկ Առ որս բանիւն են պաճուճեալ քո բանքս: Եւ զի ի գրոց սկսեալց ահաւասիկ ես ի վերա քո թշնամանողիդ, քանզի են ոմանք որոց լսելիքն մարմաջեն, որպէս արդեն իսկ տեսանեմ, եւ լեզուք պիղծք[22] ունայնաձայնութեամբ, եւ հակառակացիրք սուտանուն գիտութեամբ, եւ ոչ պէտս բերեալք բանակռուութեամբ:

Այսպէս եւ Պողոս կոչէ զամենայն, որ բանիւքն[23] է աւելորդ եւ ընդ վայրաքննին: Եւ զի՞նչ ասէ յերկրորդ ճառին. լսեմ, ասէ, ի նոյն ինքն ի Մովսիսէ. յորժամ հրամայեաց նմա Աստուած յոլովից ի լեառնն[24] կոչեցելոց[25]. յորոց մի էր եւ Ահարոն հանդերձ որդւովք[26] իւրովք երկոքումբք քահանայիւք, իսկ այլոցն երկրպագելի հեռաստանէ հրամայեցաւ. բայց մերձենայր Մովսէս միայն, ոչ ելանել ժողովրդեանն ընդ նմա: Եւ փոքր ինչ յառաջ քան զայս՝ զայլսն փայլատակմունքն եւ որոտմունքն եւ փողքն, եւ բովանդակ ծխեալ լեառնն եւ սպառնալիքն զարհուրեցուցանէին: Եւ այնպիսի արհաւրաւք կային ի խոնարհ, եւ մեծ նոցա այն էր զԱստուծոյ զձայնն լսել միայն սրբեցելոցն, բայց Մովսէս ի վեր ելա-

---

[13] Բ - չիք. մատոյց.
[14] Բ - զփո՛ւոն.
[15] Բ - լեռանաձեւ+փայտիւն+,
[16] Բ - ամպով.
[17] Ա - իրիցունք.
[18] Բ - երիցունք.
[19] Բ - չիք. այլ.
[20] Բ - այլք.
[21] Ա - արհուրացն,
[22] Բ - պիղծ,
[23] Բ - բանիւն.
[24] Բ - լեառն,
[25] Բ - կոչեցելոյ.
[26] Բ - որդւովքն,

նէր, եւ ամպն ի ներքս մտանէր եւ ընդ Աստուծոյ բնակէր, եւ ընդունէր ամէնս գրաւորականս:

Եւ դարձեալ գիտեմ զՀեղի քահանայ, եւ փոքր ինչ յետոյ զՈզայ ումն, զմինն յաղագս որդոցն անաւրէնութեան պահանջեալ դատաստան զօրս յանդգնէն ի զոհսն, եւ այն զի ոչ ընդունէր զնոցա զամբարշտութիւնն, այլ[27] բազում անգամ եւ սաստէր (Ա Թագ. Բ. 29-32): Եւ զմիւսն ի տապանակն հայել իշխեաց, որ թիւրեցաւ ի զուարակէն՝ զնա պահեաց, բայց ինքն կորեաւ Աստուծոյ զտապանակին[28] Աստուծոյ սպասաւորութիւնն:

Գիտեմ եւ ոչ յորմս տաճարին մերձենալ զգուշացոյն, եւ վասն այնորիկ այլոց որմոց կարաւտացան արտաքուստ, եւ ոչ զնոյն ինքեանց զզոհս, յորոց եւ յորժամ: Եւ ոչ յորժամ, ոչ էր պարտ ծախել, այնքան եւ արժան[29] լինել ի սրբութիւն սրբութեանցն մերձենալ, վստահանալով ի վարագոյրն եւ ի քաւութեանն կամ ի տապանակն, եւ կամ տեսանել ամենեցուն եւ հայել: Եւ դարձեալ յայլում ճառի ասէ. ո՞վ սիրելի եւ պատուականդ ինձ գլուխ, եւ Ահարոնին այնմիկ արժանաւոր յորոյ վերա կաթէր հոգեւորաւ քահանայականն իւղն մինչեւ ի մօրուսն եւ ի զգեստն (Սղմ. ՃԼԲ. 2): Ընդ է՞ր զի յոլովս հաստատել տակաւին եւ աւժանդակեալ[30], կատարելով եւ համայն պաշտամանէս զաւրութեամբ հոգւոյն ցուպ ի ներքս դնես հոգեւորականաց գործոց, եւ նեցուկ, եթէ զայն գիտացիր եւ լուար, թէ ընդ Ահարոնին այնմիկ եւ ընդ վեղին[31], ածանէ զԵղիազար, եւ ի[32] Թամար որդիքն Ահարոնի, քանզի զՆաբատաւ[33] եւ զԱբիուդաւ կամաւքն զանց առնես[34] երկիւղիւ անհնազանդութեան (Ղևտ. Ժ): Եւ Մովսէս վասն *կիւր* զՅեսու կացուցանէր (Բ Օրին. ԼԴ. 9) մինչդեռ//
(139բ) կենդանի էր փոխանակ աւրինադրի եւ զաւրավարի յերկիր [երկիր Ամաղեկայ ի վերա եկն][35]լոց, վասն զի Ահարոն եւ Ովր [եղին ի գլուխ բլրոց, եւ հաստատ][36] էին զձեռսն[37] Մովսէսի ի վերա լերինն, զի Ամաղէկ հերքեաց ի[38] խաղիւն ի հեռաստանէ՝ նկարագրեցելովն եւ տպաւորելով, թուի ինձ լքումն կամաւոր, որպէս ոչ յոյժ ըստանեցոյն է մեզ եւ ազտակար, զի ոչ աւրինադրակիցս առնոյր զնոսա Մովսէս, այլ աղաւթիցն ազնական, եւ աշխատութեան ձեռացն նեցուկ: Եւ արդ հերքեցին զքեզ Մովսէս եւ Ահարոն Գրիգորիս, մանաւանդ թէ Աստուծոյն բանիւ, հալածելով ի քեն զանամաւթութեանդ անզգամութիւն, թէ

---

27 Բ - այլ+եւ+,
28 Բ - զտապանակէն,
29 Բ - արժանի,
30 Բ - օժանդակել,
31 Բ - վեհին,
32 Բ - ի] զի,
33 Բ - քանզի զՆաբատաւ] քան զՆեզնաբատու,
34 Ղևտ.Ժ.1,
35 Ա ձեռագրից երեւում է, որ ընդօրինակության մայր ձեռագիրն այս հատվածում անընթեռնելի է եղել: Ա ձեռագրի գրիչը նման տեղերում համապատասխան քանակի տեղ է բաց թողել՝ մտածելով բացը լրացնել այդ ընդօրինակությունից: Նման տեղերում, հետևելով ձեռագրին, մենք դնում ենք ուղիղ փակագիծ և վերականգնում բնագիրը Բ ձեռագրով:
36 Վերականգնվում է ըստ Բ ձեռագրի:
37 Բ - զձեռս,
38 Բ չիք. ի,

եւ[39] այլ ոք եւս պիտոյ է ի ճակատ պատերազմիս կոչել զոք ի սրբոց աւժանդակեսցէ ինձ ի պատերազմիս:

Եւ սուրբն Դիոնեսիոս, առաջադրելով ի խնդիրս յերկնային քահանայապետութեանցն ձեռնարկութեամբ, եւ զմերս ի ներքս նուաճելով քահանայապետութենէ, ասէ. ըստ իս կարգ սրբազան եւ հանճար եւ ներգործութիւն առ Աստուածնատեսակն նմանութիւն, որպէս հասանելի է նմա: Եւ առ տուեալն նմա յԱստուծոյ լուսափայլութիւնս համեմատաբար յԱստուածանմանն կոյս համբարձեալ, անխառն է բոլորովիմբ ամենայն նմանութեամբ, եւ հաղորդեցուցիչ ըստ արժանաւորութեանն իւրաքանչիւր ումեք, ինքանն[40] լուսոյն: Եւ դարձեալ, ոչ էր[41] արժան սրբազանիցն կատարողաց կամ սրբազնա[........] ներգործել բնաւին, աւելի զլիւր կատարողապետութեան սրբազան կարգաց յայտնաբանութեամբ թուի ասացեալսս, թէ քահանայապէտն Աստուծոյ նման է որպէս մարդոյ, մարթ է նմանել եւ հասանել: Եւ առ տուեալսն նմա շնորհ յԱստուծոյ, այլ ոչ պարգեւել, որ ոչ են նման նմա, ոչ կարեն ընդ նմա ներգործել, որ ինչ նմա անգնէ, եւ ասեմք. ասէ, զի ըստ ամենայն սրբազան զարդուն գերազանցացոյնք կարգք ունին[42], եւ զնուաստագունիցն զարդուց լուսափայլութիւնս եւ զզաւրութիւնս, բայց յետինքն ոչ են հաղորդ նոցա գերակայութեանն[43]:

Արդ զսուրբսն, կարգս գերագոյնս էութեանցն եւ զնոսա հրեշտակս կոչեն Աստուածաբանքն, քանզի եւ նոքա պատմիչք են աստուածապետականին լուսափայլութեանց, բայց զհետին կարգս երկնայնոցն իմացութեանց, ոչ ունի բան անուանել պետութիւնս կամ աթոռս կամ սերովբէս[44], քանզի ոչ են հաղորդ գերագունիցն զաւրութեանց: Այլ որպէս սա զմերս Աստուծով քահանայապետութիւնս ամբառնայ առ ծանուցեալն իւր աստուածապետութեանն ճառագայթ, նոյնպէս եւ որ նախ քան զսա *զբազան(*)* զաւրութիւնք վերամբարձականք են առ աստուածութիւնն հրեշտակականացն քահանայապետութեանցն զարդուց, բայց միայն անուամբ են հաւասար հրեշտակք. վասն պատգամաւորութեանն: Թէ ո՞վ միջին, կամ ո՞վ առաջին, եւ ո՞վ վերջին կարգք հրեշտակապետացն, զի զսուրբսն աթոռս եւ զբազմաչեայս եւ զբազմաթեւ կարգս սերովբէիցն եբրայեցոցն ձայնիւ, եւ սերովբէս[45] անուանեալսն, քան զամենայն գերակայ մերձաւորութեամբն եւ անընդմիջաբար հաստատեալ ասեն, //(140ա) աւանդեալ սրբազանիցն յայտնաբանութիւնք:

Արդ՝ զերրորդականս զայս զարդ, որպէս մի համակարգ եւ արդար եւ առաջին[46] քահանայապետութիւն ասաց բարեփառ առաջնորդն մեր[47]: Եւ դարձեալ, ասէ, թէ ամենայն երկնայնոցն իմացութեանցն մականունութիւն յայտնումն ունի իւրաքանչիւրումն աստուածատեսակ առանձնաւորութեանն, եւ զսրբոցն սրովբէից անուանակոչութիւնս ասեն, որք

---

[39] Բ չիք. եւ,

[40] Բ - ինքեանք,

[41] Բ - էր] է,

[42] Բ - ունէին,

[43] Բ - գերակայութեան,

[44] Բ - սերոբէս.

[45] Բ - ] քերովբէս,

[46] Բ - առաջի,

[47] Բ - մերո,

զեբրայեցոցն գիտեն, կամ զկիզիչս երեւեալ, կամ ջեռուցիչս, իսկ զքրովբէիցն կամ բազմութիւն գիտութեան, կամ հեղումն իմաստութեան վայելչաբար ուրեմն առաջին քահանայապետութիւն երկնայնոցն առ ի գերգոյիցն էութեանցն սրբազնագծի զայն կարգ ունելով, որքան զամենայն բարձրագոյն զառ Աստուած անմիջաբար հաստատելն: Եւ զնախագծութիւնս աստուածայնոյն երեւմանց, եւ զկատարմունսն ի նա, որպէս հպագոյնս իշխանաբար անցուցանել, զի ի նոսա լինի առաջին աստուածային երեւմունք:

Արդ՝ ջեռուցիչքն իմանին, եւ աթոռքն, եւ հեղումն իմաստութեան յայտնաբանականի անուամբ՝ աստուածատեսակաց նոցա ունակութեանց, քանզի մշտաշարժութիւն նոցա աստուածային են, եւ անդադար, եւ ջեռուցիչ, եւ սուր, եւ գերագոյն եռանդն զգուշացող[48]: Եւ անթոյլ եւ անխոտոր մշտաշարժութեան, եւ նուաստագունիցն համբարձչաբար, իսկ քերովբէիցն զգիտողական նոցա եւ զաստուածատեսական,՝ եւ գերագունին լուսաւորութեանն ընդունակ, եւ տեսողական նախագործ զաւրութեամբ աստուածապետականին վայելչութեան, եւ իմաստացուցիչ հաղորդութեամբ լցեալս, եւ հաղորդական առ պէտս առ երկրորդս հանդիպման, պարգեւեցելոյ նմա իմաստութեամբ:

Իսկ բարձրագունիցն, եւ համբարձելոցն աթոռոցն յամենայն հետեւակ նուաստութենէ՝ զանխառնաբար համբառնալն, եւ ի բարձրն կոյս գերազարդաբար վերաբերեալ, եւ յամենայն յետնութենէ անշեղաբար վերաբնակել, եւ առ արդարեւ բարձրեալն՝ բոլորիւք զաւրութեամբ անշարժաբար բարեաւք կարիւք[49] հաստատեալ: Եւ աստուածայնոյ գալըստեանն ամենայն անախտութեամբ, եւ աննիւթութեամբ ընդունական, բայց ասելի է, թէ զի՞նչ համարեսցուք զնոցա քահանայապետութիւն: Քանզի ամենայն քահանայապետութեանն դիմումն[50] աստուածանման աստուածատեսութեանն՝ յարինուածի անշեղաբար զոլն, եւ բաժանել զամենայն քահանայապետական իրողութիւն ի սրբազան հաղորդութիւն, եւ հաղորդեցուցանել անխառն մաքրութեան, եւ աստուածայնոյն լուսոյ, եւ տեսողակաց, ոչ իբրեւ զգալեաց նշանակաց իմանալի տեսութեանս, այլ որպէս ամենայն աննիւթ գիտութեան՝ բարձրագունին լուսով լցեալ:

Եւ երեք երեւական տեսութեամբ միոյն ասէ. Աւրհնեալ են փառք Տեառն ի տեղոջէ իւրմէ (Եզեկ. Գ. 12), եւ միւսն՝ Սուրբ ես[51] (Ես. Զ. 3), իսկ Յոհան Ոսկեբերանն, Յանհասիցն անուանեալ գիրք, այսպէս ճշմարտէ յաղագս խնդրոյս այսորիկ. Ընդէ՞ր ասա ինձ զթեւսն առաջի արկանեն սերոբէքն, վասն առաքելականին ի լոյս բնակեալ //(140բ) յանմերձանալի գործովքն յառաջանայնեն: Ոչ նոքա միայն, այլ եւ որ զեր ի վերոյ են քան զնոսա քերովբէքն, քանզի քերովբէքն մերձ կան, իսկ քերովբէքն աթոռ են Աստուծոյ, իբր ոչ եթէ աթոռոյ ինչ կարաւտանա Աստուած, այլ զի զառաքինութիւն զաւրութեանն իմասցիս: Եղեւ ասէ. Բան տեառն առ Եզեկիել՝ որդի Բուզեայ, ի վերայ Քոբար[52] գետոյն (Եզեկ. Ա. 3): Եւ սա մերձ առ գետն Տիգրիս կայր, յայնժամ եւ զինչ ետես. ահա ամպ ասէ ի հիւսիսոյ գայր, եւ ճառագայթիւք շուրջ, եւ որ զհետ: Եւ որ միջոցին, նմանութիւն չորից կենդանեաց, եւ

---

[48] Բ - զգուշացող.

[49] Բ - կարգիւք.

[50] Բ - դիպումն.

[51] Բ - ս՛րբեւ] սուրս սուրբ սուրբ ես.

[52] Բ - Քոբար.

նմանութիւն մարդոյ ի վերա նոցա եւ չորք երեսից[53] միոյ. եւ չորք թեւք[54] միոյ, եւ բարձրութիւնք էր նոցա (Եզեկ. Ջ): Եւ ահաւորք էին, եւ թիկունք նոցա էին աչաւք շուրջ զչորեցունց, եւ ի վերա հաստատութեանն իբրեւ տեսութիւն շափիւղա քարի՝ ի նմանութիւն աթոռոյ, ի վերա նորա եւ ի վերա աթոռոյն՝ իբրեւ տեսակ մարդոյ, զի զորաւրինակ հրեշտակ ասի. զի յԱստուծոյ առ մարդիկ առաքի պատմաւղ, եւ հրեշտակապետն, զի հրեշտակացն իշխէ[55]:

Նոքա նոյնպէս անուանս ունին, զիմաստութիւն իւրեանց եւ զմաքրութիւնն մեզ յայտնելով: Եւ որպէս թեւքն զբարձրութեանն[56] երեւեցուցանելով զբնութիւնն, զի եւ Գաբրիէլ թռուցեալ երեւեցաւ, իբր ոչ եթէ թեւք են հրեշտակապետին, այլ զի ուսցիս եթէ ի բարձրացունցն տեղեացն ի մեր բնութիւնս էջ. Նոյնպէս եւ նոցա ոչ այլ ինչ զեկուցանեն թեւքն: Եւ զոր աւրինակ, թեւքն զբնութեանն բարձրութիւնն յայտնեն, եւ աթոռն Աստուծոյ ի նոսա հանգչելն, եւ աչքն զտեսողականն, եւ մերձ լինելն յաթոռն, եւ յարաժամ, զնա աւրհնելն, զարթնութիւնն եւ զհսկումն, նոյնպէս եւ անուանքն կիսոց զիմաստութիւնն, եւ կիսոց զմաքրութիւնն յայտ առնեն, քանզի զի՞նչ է քերոբէն՝ յաճախութիւն գիտութեան, եւ զի՞նչ սերոբէն՝ հրեղեն բերան: Տեսե՞ր զիարդ զմաքրութիւն եւ զիմաստութիւն անուանցն յայտնեաց:

Արդ. զոր սուրբն Դիոնեսիոս համակարգեաց զսերոբէս, եւ զքերոբէս, եւ զաթոռս, երիցս երանեալն[57] երջանիկն Յոհան զաստոյց զքերոբէսն, եւ զերազոյն ասաց անուամբ եւ իրաւք, քանզի յաճախութիւն գիտութեանն, եւ աչքն յամենայն կողմանց զնոյն նշանակեն: Զնոյն եւ երանելին Կիւրեղ Աղէքսանդրի հայրապետն ի մեկնութեանն Եզեկիէլի, ասէ. Այժմ մեզ եւ զերեւեալն նմա զկենդանեացն ձեւ, ասէ. Այս է տեսիլն նոցա[58] նմանութիւն մարդոյ ի նոսա, եւ չորք երեսք միոյ, եւ չորք թեւք միոյ, եւ բարձք նոցա ուղղորդք[59], եւ ոտք նոցա թեւաւորք, եւ ձեռք մարդոյ ի ներքոյ թեւոց նոցա, ի չորեսին կողմանս[60] իւրեանց: Արդ՝ տեսակ երեւ[ում]ին ուղղորդ լինել ասէ, եւ մարդանման չորեքդիմի իւրաքանչիւր, եւ չորեքթեւեան հաւասարաթեւ զթեւսն ասաց, եւ զձեռսն, ասէ. լի թեւաւք լինել, եւ զոտսն յայտնէ՝ թռուով երեսացն, եւ թռուցն զաստուածային զկոտսն բերողացն զաւրութեանցն զամենաթագաւորին՝ Աստուծոյ զամենամեծ երեւմանն: Իսկ ի ներքոյ թեւոցն նշանակէ զբնութեան[61] նոցա զարգութիւնն, //(141ա) իսկ պայծառագոյն նմանեցուցանել զփայլումն զերեւելի իմաստիցն նշանակէ զսրբութիւն, քանզի ասաց. եթէ փայլակնացայտ իբրեւ զփայլիւն պղնձոյ, իսկ ներքոյ թեւոցն ծածկեալ ձեռքն զաներեւոյթ, եւ զպէսպէս ներգործութիւն, եւ նմանութիւն ասէ երեսաց նոցա Դէմք մարդոյ եւ դէմք[62] առիւծու յաջմէ չորեցունց, ի ձեռն այսոցիկ[63] ակնարկէ զթագաւորութիւնն, զի թագաւորական է կենդանին:

---

53 Բ - երեսք.
54 Ա - երեսք.
55 Բ - իշխանք.
56 Բ - զբարձրութիւնն,
57 Բ - երանեալ.
58 Բ - չիք. տեսիլն նոցա,
59 Բ - ուղղորդ.
60 Բ - կողմանց,
61 Բ - զբնութիւն,
62 Բ - դէմ,
63 Բ - այնոցիկ.

վասն[64] եզին՝ զքահանայութիւն, քանզի վասն քահանայականի մատուցանի զուարակ[65]. վասն արծուին՝ զմարգարէութիւն, քանզի բարձրաթռիչ է կենդանին եւ յոյժ սրատես, այսպիսի է մարգարէութիւն՝ բարձրագոյն ունելով զտեսութիւն: Եւ ի հեռուստ զլինելոցն նախատեսակ ուսուցանէ ի ձեռն ասացելոցս. վասն զի ամենայն մարդկային բնութիւն հանդերձ իւրով գլխաւորաւն ամենաթագաւորին բոլորեցուն հնազանդեալ է: Եւ ահա ի վերա քան զհաստատութիւնն, որ ի վերա գլխոյ քերովբէիցն, որպէս եւ զտեսակ շափիւղայ ի նմանութիւն աթոռոյ: Աստանար յայտնի այնուհետեւ, եւ ես զկենդանիսն քերոբէսն անուանէ:

Նշանակէ անունն, որպէս ասաց բազմութիւն գիտութեան, եւ ասաց առ այրն, որ զգեցեալն էր զաբողոնն մուտ ի մէջ անուանցն, որ ի ներքոյ քերոբէիցն: Եւ լից զբուռն քո կայծակամբք հրոյ ի միջոյ քերոբէից, եւ ցանեա[66] ի վերա քաղաքիդ. եւ եմուտ առաջի իմ: Եւ քերովբէքն կային ընդ աջմէ տանն ի մտանէ յեառնն[67], եւ ամպ ելից զսրահն ներքին գիտել արժան է, զի ոչ միոյ ի քերովբէիցն հրամայեաց մերձենալ, այլ որ զքահանայականն զգեցեալ էր զաբողոնն: Ահա աստ յայտնապէս մեկնէ, զոր խնդրեմքս, քանզի զոր սուրբն Դիոնեսիոս երրորդական, եւ զերակատար կատարողապետութիւն ասաց, եւ անյառնանմանից եւ կարող զայլս ի հաղորդեցուցանել իւրեանց լուսոյն: Մարգարէն քահանայական զգեցեալ, եւ ես Աղաբողոն եւ ամենայն սուրբ հայրապետացն՝ պաշտաւն քահանայական անուամբ պաշտօին ի սուրբ եկեղեցիս[68]: Եւ մարգարէին նախաձայնել[69], քահանայք քո զգեցցին զարդարութիւն: Եւ Մովսէս եւ Ահարոն երիցունք[70] նորա:

Այլ Մովսէս ընդ Աստուծոյ բերան ի բերան խաւսէր, եւ իւղոյն աւծման եւ աւրինացն բերաւղ: Ուստի քահանայքն են՝ մարգարէքն, են՝ թագաւորքն աւծանէին, նաեւ քերովբէքն, իսկ որ [........] կատարին ի նոսա որ զքահանայականն էր զգեցեալ, նմա[71] հրամայեցաւ սպասաւորութիւնն այն: Նաեւ կերպարանքն իսկ քերովբէիցն, առիւծուն[72] զթագաւորութիւնն, եւ եզինն՝ զքահանայութիւնն, եւ արծւոյն[73] զմարգարէութիւնն: Որպէս եւ տուաւ իւղն այն սուրբ յաւծումն, տուաւ երիցդ այդոցիկ, որպէս եւ յառաքելականսն ասէ, թէ անդէն ի նմին ժամու առաւաւտուն մեծի կիւրակէին ամբարձեալ զձեռս իւր տեառնն եդ ի վերա գլխոյ մետասան աշակերտացն շնորհելով նոցա զաստիճանն քահանայութեան: Եւ դարձեալ, եթէ ընկալան զքաջ քահանայութեանն, իբրեւ զՄովսէս. եւ զԱհարոն, զի խորհուրդ տէրունական մարմնոյ եւ արեանն[74] նովաւ կատարի, եւ խաչն նովաւ աւրհնի, եւ երկրպագի: Եւ յորժամ յաղագս //(141բ) Արտաշիրի թագաւորի Հայոց ժողովոցն նախա-

---

64 Բ - վասն] զի.

65 Ա - զուր*կ.

66 Բ - ցանեսցես.

67 Բ - մտանէ [եառնն] մտանել առնն.

68 Բ - եկեղեցի.

69 Բ - նախաձայնեալ.

70 Ա - իրիցունք.

71 Բ - նմա] կամ.

72 Բ - առիւծոյն.

73 Ա - արծվուն.

74 Բ - արեան.

իարք Հայոց առ սուրբն Սահակ, զի միաբանեսցի ընդ նոսա, տարամերժել զնա ի թագաւորութենէն[75] յաղագս անառակ պոռնկական գործոյն, մատնելով թագաւորին Պարսից Վռամա, իբրեւ ոչ առ յանձն միաբանեալ ասէն, թէ փոխանակ զի ոչ լուար բանից[76] մերոց, եւ ի միաբանութենէս մերմէ զանձն ի բաց մերժեցեր: Գիտասջիր, զի որպէս եղեալ էր ի մտի չթագաւորել նմա ի վերա մեր, ջանամք[77] չքահանայանալ եւ ոչ քեզ առ յերկարսն[78] ի վերա մեր: [........] համազգի էր սր[79] [........] ի[80] վեցերորդ ի նմանէ նորին պատուով եւ առաքինութեամբ զարդարեալ, եւ քահանայական անունն[81] ոչ էր[82] թշնամանք կաթողիկոս անունն[83]: Եւ Քրիստոսի իսկ ասաց մարգարէն. Դու ես քահանայ յաւիտեան (Սաղմ. ՃԹ. 4), իսկ[84] առաքեալ միայն զպետն յաւել, եթէ՝ այլ Քրիստոս եկեալ քահանայապետ (Եբր. Թ. 11): [Ե]ւ արդ՝ եթէ ի վայր խոնարհի կաթողիկոսութեանն[85] պատիւ քահանայական անուամբն, զի զի՞նչ է քահանայ. քաւիչ մեղաց[86] ժողովրդեանն: Եւ քաւիչն սրբէ եւ սերովբէին անունն կիզիչ, նոյն է սրբիչ, զի որպէս հուրն ծախէ եւ հալէ զաղտ[87] արծաթոյն, եւ զոսկոյն[88], եւ թագաւորական թագին, արժանի առնէ նոյնպէս եւ քահանայն իւրով սուրբ վարիւքն: Եւ վարդապետութեամբն կիզու զմեղս[89] ժողովրդեանն, եւ զերակատարին արժանի առնէ սուրբ քահանայապետին Քրիստոսի, զոր եւ սուրբն Դիոնէսիոս ասաց, թէ ըստ ամենայն սրբազան զարդուն զերազանցագոյն կարգքն ունին, եւ զնուաստագունիցն զարդուց լուսափայլութիւնս եւ զզաւրութիւնս, բայց յետինքն ոչ են հաղորդք նոցա զերակայութեանն:

Եւ արդ՝ ոչինչ է սքանչելի, թէ քահանայական անուամբ յիշին ուրէք, եւ ոչ անկումն նոցա ի պատւոյն իւրեանց, զի եւ ոչ Մովսէս եւ առաքեալքն, եւ սուրբն Սահակ անպատուեցան, եւ անկանի հայրապետականն կարգէ: Տեսցուք զեպիսկոպոսական եւ զկաթողիկոս[90] անուանքն, թէ որպէս ընկալեալ զիւրաքանչիւր զպատիւս, եւ հասին մինչեւ ի մեզ: Թէպէտ եւ այդու ամենայնիւ, յայտ եղեւ, բայց եւ այլ յայտ եկեսցեն, եւ նախ Դաւիթ առաջնորդեսցէ բանիս, որ ի նոյն ինքն Աստուծոյ ունին զվկայութիւնն, թէ գտի զԴաւիթ, որդի յԵսսեա՛ այր ըստ սրտի իմում (Գործ. ԺԳ. 22): Եւ որ ածաւ յԱստուծոյ արժանապէս, եւ առ

---

75 Բ - թագաւորութենէ,
76 Բ - ծայնից.
77 Բ - ջանամչ,
78 Բ - չիք. եւ ոչ քեզ առ յերկարսն.
79 Բ - սր՛յն,
80 Բ - չիք. ի.
81 Բ - անուն.
82 Բ - էր+ոչ էր+,
83 Բ - անուանն.
84 Բ - +ըստ կարգին+ իսկ.
85 Բ - կաթողիկոսութեան.
86 Բ - չիք. մեղաց.
87 Բ - զախտ.
88 Բ - զոսկւոյն,
89 Բ - զմեղ.
90 Բ - զկաթողիկոսական.

Սաւուղ. եւ առ ամենայն Իսրայէլ, բարերարք եւ ննաց չափ երախտաւոր. եւ այսոյն Սաւուդայ հալածիչ: Եւ աւրէնս ունէր ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, եւ ոտն ընդ ոտին, այլ Սաւուղ զերախտաւորն զիւր եւ զկենաց տուիչ: Եւ յահացին բռնութենէ այսոյն զդիւրացուցիչն հանապազ ջանայր կորուսանել, եւ նա զբազում անգամ ի նորա ձեռս զտուեալն, եւ յիւրոցն քաջալերելոյ սպանանել զմահու արժանաւորն, եւ յերկիւդէն անկասկած մնալ, եւ յթագաւորութեանն ժառանգորդ լինել:

Զի՞նչ առնէր պատասխանի. թէ Քաւ լիցի ինձ արկանել ձեռս յաւծեալն Տեառն, եւ արիւն անարինաց ելցէ, եւ ձեռն իմ[91] իմ մի եղիցի[92], որպէս եղեւն, իսկ ինքն իւր սնանոտէնութեամբն սրովն, //(142ա) որով զնա ի մահն որսայր. անձինն արարեալ, վճարեաց զկեանսն: Եւ զթագաւորութիւնն նա էառ, որում[93] Աստուած եղեւ աւժանդակ. որ ասաց իսկ Եղից զաւգնութիւն ի[94] վերայ հզաւրին (Սաղմ. ՁԸ. 20): Եւ բարձր արարից զընտրեալսն ի ժողովրդենէ իմմէ, եւ որ նմայն հակառակեաց յափշտակել զթագաւորական պատիւն՝ յափշտակեցաւ ընդ երկինն եւ ընդ երկիր (Բ Թագ. ԺԸ. 9-10):

Եւ վկայէ կաղնին, որ զհերացն բռնահարեաց, եւ արդ՝ եկեսցեն սուրբ հայրապետացն հոյլք ի մէջ մանաւանդ Սուրբ Հոգւոյն շնորհացն հոյլք. եւ հանցեն զմեզ յանմոլար ճանապարհն: Եւ եղից նախ առաջին զկղեմ[95], որ յառաքելական դասուն երեւի ԼԲ. (32) համարին:

Զեպիսկոպոս նախ գիտել պարտ է զաւագին առաջին, եւ համարել զնա իբրեւ զգլխաւոր, եւ ոչ ինչ գործել առանց նորա, այլ եւ նա առանց նոցա կամաց՝ այսինքն եպիսկոպոսացն, եւ այս յայտ է, թէ եպիսկոպոս է, այսինքն՝ կաթողիկոս: Զի եւ Դիոնիսիոս զերկնայնոցն պետութեանցն ասաց, թէ հրեշտակի անուամբքն ամենայնքն համապատիւք են, բայց ամենայն դասուն պետ երեւի, նաեւ յերկնային հեծելազաւր զաւրականացն հոյլս պէտք երեւին մեծամեծք եւ փոքունք, որ ամենեցուն յայտնի են, եւ ոչ կարեն ըստ չափ անցանել, եւ որք անցանեն պատժոց ակն ունին:

Ի Նիկիա սուրբ ժողովոյն այսպէս ասէ ի Դ. (4) համարին, վասն եպիսկոպոսաց արժանաւորք վիճակին, որք յաշխարհին եպիսկոպոսքն իցեն նովիմք նստուցանել յաթոռն, ապա եթէ վասն փութոյ ինչ վասն հեռաւորութեան ընկերացն երեք եպիսկոպոսք կամ այնոցիկ, որք հեռին են՝ թղթովք վկայութեամբ նստուցանելոյ զպատիւս: Եւ զշնորհս զգլխաւորին արժան է տալ, այսինքն՝ կաթողիկոսն[96] յԱնտիոքայ սուրբ ժողովոյն զի՞նչ սահմանեցին ի Ժ. (10) համարին, որք յիւրաքանչիւր յիշխանութեան եպիսկոպոսք են: Ցիմասցին[97], զի մայրաքաղաքաց եպիսկոպոսքն թիկունք է[98] նոցա, եւ հոգաբարձու: Եւ ամենայն ո՞ք, զինչ եւ պատասխանի կամեսցի առնուլ՝ առ նա ընթանալ: Եւ մուրհակ արքունի, եւ թէ

---

[91] Բ - չիք. իմ.
[92] Բ - եղիցի] մեղիցէ.
[93] Բ - որու.
[94] Բ - +իմ+ ի.
[95] Բ - զկղէմ.
[96] Բ - կաթողիկոսին.
[97] Բ - իմասցին.
[98] Բ - է] են.

իշխանաց, վասն իրաց եկեղեցւոյն, եւ կարգաց հասարակաց: Վասն այսորիկ կամ եղեւ, զի պատուով յառաջ իցէ, եւ առանց նորա մի ոք իշխեսցէ գործել ինչ ըստ նախնեացն սովորութեան հարցն մերոց, որպէս կարգեալ են կանոնք, բայց միայն զայս իշխեսցեն յիւրում իշխանութեանն, եթէ գեաւղք, եւ եթէ գաւառք աւծմունք սարկաւագաց, եւ երիցանց, կամ զի՞նչ վարք իցեն իւրոյ գաւառին եւ իշխանութեանն, ամենայն հոգաբարձութեամբ ընտրութեամբ[99], եւ խնամով գործիցէ, այլ այլոց ամենեւին մի իշխեսցէ գործել, եւ ձեռնամուխ լինել, քան զկամս մայրաքաղաքաց եպիսկոպոսացն, եւ ոչ նմին կաթողիկոսին, առանց հաւասարութեան այլոց եպիսկոպոսացն գործել ինչ ԺԲ. (12) համարին:

Եւ դարձեալ, թէ եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ, կամ ո՛վ եւ իցէ՝ արտաքոյ[100] զկամս, որ գաւառին եպիսկոպոսն իցէ, եւ կամ, որ մայրաքաղաքացն իցէ, եւ դիմեսցէ առ թագաւորն, զայնպիսին ցոյց արասցեն, եւ ընկեսցեն, եւ մերժեսցեն ոչ միայն ի հաւասարութենէ, այլ եւ ի պատուոյն, զոր ունէր, զի ի՛ր եւ ծանծրացուցանել կամեցաւ //(142բ) զաստուածասէր թագաւորին մերոյ զլսելիս արտաքոյ զկարգ եկեղեցւոյ, ապա թէ հարկ ինչ իցէ իրաց եւ ոչ առ թագաւորն դիմել, գործեսցէ խորհրդով եւ կամաւք ըստ իշխանութեանն, որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն իցէ, նոցին թխտով[101] գուշակեսցի ճանապարհն, յոր դիմեաց ժողովոյն, որ ի Սարդիկէ Դ. (4): Գուցենտիոս եպիսկոպոս ասէ, զի թէ ոք յեպիսկոպոսաց՝ ի կարգէ եպիսկոպոսացն ի բաց անկցի, դատավճիռ եպիսկոպոսացն[102], որ դրացիքն են, եւ ասասցէ միւսանգամ իւրոյ պատասխանատուութեան իրս:

Պարտ է ի ներքս բերել, մի ոք իշխեսցէ զայլ ոք յաթոռս նորա կարգել, մինչ ոչ[103] Հռոմայ եպիսկոպոսն գիտասցէ, եւ վասն այնորիկ յառաջ բերիցէ Է. (7) համար:

Ոսիոս եպիսկոպոս, ասէ. Հայոց թուեցաւ, զի թէ ոք եպիսկոպոս ամբաստանեսցի, եւ ժողովեալ եպիսկոպոսունքն նորայն գաւառի, եւ նա ապաւինեսցի առ երանելին Հռոմայ եպիսկոպոսն, եւ կամիցի լսել զնորա դատաստան, եւ իրաւացի կարծիցէ նորոգել զնորա իրաց հարց եւ զքննին գրել արժան է առ եպիսկոպոս այնոցիկ, որ մաւտիցն յայն գաւառ, զի եւ նոքա զգուշութեամբ եւ հեզութեամբ մի ըստ միոջէ քննեսցեն, եւ ըստ ճշմարտութեանն հաւատոյ զդատավճիռն ի վերա ածիցեն:

Եւ թէ ոք դարձեալ աղաչիցէ, եւ միւսանգամ զիւրն լսելի արասցէ, եւ իւրոյ խնդրուածին զՀռոմայ եպիսկոպոսն շարժել[104] յիւրմէ կողմանէ, զերիցունս արձակիցէ իշխանութեամբ եպիսկոպոսութեանն իւրոյ, զոր բարեաւք[105] գոլ փորձիցէ, սահմանիցէ, եթէ պարտ է առաքել, որ ընդ եպիսկոպոսացն զդատն ասիցէ, ունելով զիշխանութիւն նորա: Վասն որոյ առաքեցաւ, եւ այս խնդրելի է սոցա, թէ բովանդակ կարծիցէ առ ի յետին գիտութիւն, եւ սահմանադրութիւն զեպիսկոպոսացն արասցէ[106], զոր ինչ նոքա իմաստագոյն խորհր-

---

[99] Բ - չիք. ընտրութեամբ.

[100] Բ - արտաքոյ+քան+.

[101] Բ - թղթով.

[102] Բ - եպիսկոպոսացն+այնոցիկ+.

[103] Բ - ոչ] որ.

[104] Բ - շարժեալ.

[105] Բ - բարւոք.

[106] Բ - չիք. արասցէ.

դոյն[107] բարիոք[108] զոյ թուղթի: Ընկալայ առ Պետրոս թուխտ[109] կարդացի եւ ընդունիմ զամենայն, զոր ինչ յառաջագոյն գրեալ էր, եւ յայսմ թղթի[110], զոր գրեաց ձեռն քո հայր Պետրոս, եւ գլուխ եպիսկոպոսաց, եւ հայրապետ Աղեքսանդրացոց՝ Է. (7). Պետրոս հայրապետ Աղեքսանդրացոց առ Ակակ գլուխ եպիսկոպոսաց, որ են ի Կոստանդնուպալիս Թ. (9). Պետրոս հայրապետ Աղեքսանդրացոց առ Ակակ՝ պաշտաւնակից իմ եւ ընկերակից, եւ հայրապետ եպիսկոպոսաց, որ են ի Կոստանդնուպալիս:

Կարծեմ, թէ արդար պարտեցար ի գերագունէն այնորիկ գահէ, եւ ի քո անհասանելոյ, զի[111] ոչ սատանայ թէպէտ եւ նախանձու մաշեալ ոչ եհաս որով, քան զինքն վեհագոյն էին, այլ եւ ի վայր իսկ կործանեցաւ: Եւ անունն իսկ խրատեսցէ զքեզ, որպէս եւ երկնային պետութեանցն, որ վերագոյնսն ճառեցաւն, զի եպիսկոպոս՝ տեսուչ եւ կաթողիկոս առ բոլորեսին պետաւորեալ ունի զանուն, զի գլուխ է եպիսկոպոսացն ամենեցուն, որպէս կաթողիկէ անուանեալ թուղթքն, զի ոչ մասամբ ի[112] մի գաւառ կամ քաղաք, այլ ընդհանուր տիեզերաց: Աստանաւր եկեսցէ բանս ի կատարումն, բաւական համարեալ զասացեալսդ. զսակաւ ի բազմաց առ ի յանդիմանութիւն այնոցիկ, որք այնպէսն խորհին, եւ լինի այսպիսի իմացմունք, յորժամ մարդկային փառաց ոք ցանկանայցէ //(143ա) չիք ինչ չա՛ր քան զհպարտութիւն: Լա՛ւ է մորոսութիւն, քան զհպարտութիւն, զի մորոսութիւն միայն յանմտութենէ է, եւ աստ եւս չար մորոսութիւն եւ մոլորութիւն, յորմէ զմեզ[113] փրկեսցէ Քրիստոս յոյսն մեր. որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս[114]:

*Համեմատական բնագիրը*
*կազմեց Ա. Ա. Բոզոյանը*

---

[107] Բ - չիք. խորհրդոյն.
[108] Բ - բարւոք.
[109] Բ - թուղթ.
[110] Ա - թխթի.
[111] Բ - զի+եւ+,
[112] Բ - ի ] առ.
[113] Բ - չիք. զմեզ.
[114] Բ -յաւիտեանս+ամէն+

*ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ*

# ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈՎԲԱՑԻ, ՄԱԿԱՆՈՒՆ ՏԻՐԱՑՈՒ. ԺԲ. ԴԱՐ

(Նորայայտ վաւերական դիմանկարի առիթով)

*Մաշտոցեան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) մեր աւագ գործակից Սամսոն Լալաֆարեանը, կարճատեւ հիւանդութեամբ մահուան մահճին գամուած ժամանակ՝ 1994 թ. Յուլիսի 26-ին մեզ հրաւիրեց, ցաւօք, ի վերջին տեսութիւն (վախճանուեց Օգոստոսի 1ին) եւ յանձնեց հայերէն 6 եւ վրացերէն 2 ձեռագրական պատառիկ-մասունք, որոնք ստացել էր յայտնի պատմաբան եւ հնագէտ Սմբատ Տէր-Աւետիսեանի կնոջից: Բնականաբար, բոլորը գրանցեցինք Մատենադարանի համապատասխան հաւաքածուների մէջ:*

*Վերջերս առիթով կրկին անդրադարձանք նրանցից առաւել ուշագրաւ մէկին՝ Հայերէն պատառիկների հաւաքածուի Հ° 2098 միաւորին, որ, մայր ձեռագրից կոպտօրէն պատռելով հանած լինելու պատճառով ձախից անկանոն եզրագիծ ունեցող, ամենալայն մասերում 19,5x15,8 սմ չափսի մագաղաթէ մի թերթ է եւ որի առաջին երեսը սկզբնապէս եղել է չգրուած, բայց այժմ ունի ուշ շրջանի երկու մակագրութիւն. ա. ԺԸ. դարի վերջի նոտրանման շղագրով եւ սեւ թանաքով «Խորհուրդատետր Սրբոյ Պատարագի, զոր ժամաբար քահանայք միշտ ընթեռնուն ի ժամ Սրբոյ Պատարագին. ուրեմն յիշեա՛, ո՛վ սուրբ հայր, կաթողիկոս, եպիսկոպոս եւ քահանայ», բ. շղագիր, մանուշակագոյն թանաքով «Թղթատիր, նիւթն եւ յիշատակն գրած [է]. Վահրամ վարդապետ Կանաչեան, միաբան Կտուց անապատի, 1904 փ[րկչի] թ[ուականի] Յունիս 28: / Յիշատակ է գիրքս Կտուց անապատի / 231երդ»:*

*Ըստ առաջինի՝ պատառիկի մայր ձեռագիրը եղել է Խորհրդատետր (Պատարագամատոյց), ըստ երկրորդի՝ եղել է Կտուց անապատի[1] Հ° 231 ձեռագիրը եւ ունեցել է յիշատակարան, որ 1904 թ. օրինակել է նոյն Կտուցի միաբան Վահրամ վ. Կանաչեանը:*

---

[1] Յայտնի է, որ Սմբատ Տէր-Աւետիսեանը (18 Ժ. 1875 - 27 Բ. 1943) «1915-17թթ. [Ռուսաստանի] կայսերական գիտութիւնների ակադեմիայի գործուղմամբ, Վանի, Բիթլիսի ու Էրզրումի վիլայէթներում հաւաքել է աւելի քան հազար ձեռագիր, պատմ. վաւերագիր եւ ազգագր. նիւթեր». տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երեւան, 1985, էջ 663. Տմմտ. Օննիկ Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.- Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ա, Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ներածութիւնը՝ Օ. Եգանեանի, Խմբագրութեամբ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, սիւն 94-5. Վասպուրականի հաւաքածուների մասին՝ սիւն 93-105:

Ակնյայտ է եւ այն, որ այս թերթը 1904 թուականից յետոյ է անջատուել[2] մայր ձեռագրից, որի այլ հետքեր երկար փնտրեցինք Վասպուրականի ձեռագրերի 1910ական թուականներին Երուանդ Լալայեանի արած՝ անտիպ մնացած նկարագրութիւնների եւ նրանց վերաբերող մեր ունեցած նիւթերի, Ղեւոնդ վ. Փիրղալէմեանի գրառած յիշատակարանների ստուար հատորների[3] մէջ եւ չգտանք (ուրեմն՝ նրանք այս «Խորհրդատետրը» չեն տեսել): Փնտրեցինք նաեւ հիմնականում Արեւմտեան Հայաստանից ծագող ամերիկեան պետական, համալսարանական, մասնաւոր[4] եւ անձնական[5] հաւաքածուների մէջ. կրկին չկար, ուրեմն. ամենայն հաւանականութեամբ, ձեռագիրը չի պահպանուել:

Այս. Կտուց անապատի եւ Վասպուրականի այլ վայրերի ձեռագրերի զգալի քանակի չպահպանուածութեան հանրայայտ պատճառը հետեւեալն է. Վասպուրականի ձեռագրերն Էջմիածին փոխադրած՝ Լիմ անապատի վերջին վանահայր Յովհաննէս վ. Հիւսեանը Կտուցի ձեռագրերի մասին գրել է. «Ունէր նաեւ մօտ հինգ հարիւր կտոր ձեռագիր մատեաններ, որոնցմէ 320 կտոր[6] միայն յաջողուեցաւ ինձ բերելու Էջմիածին, իսկ մնացածը՝ ամենաընտիր մասը, եկեղեցական բոլոր հնութեանց եւ սրբութեանց հետ, մնացին եւ բաժին եղան Թիւրքերուն, շնորհիւ նոյն անապատի միաբան, անհեռատես եւ կամակոր Ստեփան աբեղային, որուն դարձեալ՝ նման Վարագայ գործակալ Պետրոսին, շատ խնդրեցի ցուցնել ինձ պահարանը (իմա՛ թաքստոցը - Գ. Տ-Վ.) եւ յանձնել Էջմիածին փոխադրելու, սակայն չլսեց եւ չհամաձայնեցաւ: 1918 թուին Վան վերադարձող ժողովրդեան երկրորդ

---

[2] Մեր նկարազարդ ձեռագրերից մանրանկարների, խորանների, կիսախորանների, ճակատազարդերի, լուսանցային նկարների, լուսանցազարդերի եւ յիշատակարանների պատռում-կտրում-հանման դէպքերը բաւական շատ են, նոյնպէս եւ յիշատակագրութիւնների մէջ շատ են ձեռագրերն այդ եղանակով եղծողներին ուղղուած զգուշացում-անէծքները: Յարութիւն Քիւրտեանն իր անձնական հաւաքածուի միաւորներից թերթեր կամ նրանց մասեր կտրողների ձեռքը կոչում էր «լորձնային». յօդուածիս հետագայ շարադրանքի մէջ տեսնելով այս պատառիկի գիտական եւ գեղարուեստական մեծ արժէքը, նրա պատառողի ձեռքին այս որակումը չպէտք է տանք, որովհետեւ եթէ ապագայում բուն ձեռագիրը երջանիկ պատահմունքով չյայտնաբերուի, ապա առայժմ պէտք է արձանագրենք, որ այսօր նոյնպիսի պատահմունքով փրկուած է գոնէ այս մի արժէքաւոր թերթը:

[3] Սրանց վերաբերող մանրամասները տե՛ս մեր «Հայերէն ձեռագրերի կորուսած հաւաքածուների ցուցակների հրատարակման խնդիրը (Նախնական հաղորդում. Լիմ անապատի 1282 թուականի վերագտնուած Նոր կտակարանի առիթով)».- Էջմիածին, 2003/Ա., էջ 57-60:

[4] A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By *Avedis K. Sanjian*, University of California Publications. Near Eastern Studies, 16. University of California Press, Berkeley, Los-Angeles, London, 1976 (XIX + 863 *էջ. նկարագրուած՝ ԱՄՆի 13 նահանգների եւ Մոնրէալի (Կանադա) 35 հաստատութիւնների պատկանող 180 ձեռագիր)*, Medieval Armenian Manuscripts at the University of California, Los Angeles, [by] *Avedis K. Sanjian*, with contribution by *Alice Taylor* and *Sylvie L. Merian* and with the assistance of S. *Peter Cowe*, University of California press, Berkeley, Los Angeles, London, 1999 *(382 էջ, 34 նկար, նկարագրուած՝ 91 միաւոր). Նաեւ՝* Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, Edited by *Thomas F. Mathews* and *Roger S. Wieck*, The Pierpont Morgan Library, New York, Princeton University Press, 1994 *(231 p., նկարագրուած է ցուցահանդէսային 88 միաւոր):*

[5] *Նկատի ունենք նշանաւոր երկու Յարութիւնների՝ Հազարեանի եւ Քիւրտեանի հաւաքածուները. ձեռքի տակ ունենք առաջինի՝ Օննիկ Եգանեանի կազմած, երկրորդի՝ տիրոջ կազմած եւ մեր խմբագրած-լրացրած անտիպ ցուցակները:*

[6] *Ըստ Օ. Եգանեանի ճշգրիտ հաշուումների (տե՛ս նշ. աշխ., սիւն 100), Կտուց անապատից Էջմիածին է բերուել 202 ձեռագիր, այսինքն՝ երկու հինգերորդ մասը:*

*նահանջին 10-12.000 գերի մնացողներէն ողջ մնացող 400 անձեր, երբ... դրկուեցան Հայաստան, նոցա պատմութեամբ, որոնք ականատես եղած են եւ այժմ ողջ կան ի Հայաստան, Թիւրքեր մտնելով կղզիներ, կը խուզարկեն եւ կը գտնեն պահարանները՝ Թէ՛ Կտուց անապատին ամբողջապէս եւ Թէ՛ Վարագայ այն պահարանը, որը չուզեց յայտնել Պետրոսը, եւ եղած ամբողջ հարստութիւններն ու ձեռագրերն կամբարեն Վան. գերի մնացող հայերէն Արսէն Կիրակոսեանի եւ մի քանի ուրիշներու կը կանչեն իմանալու, քննելու, Թէ ի՛նչ գրքեր են ատոնք, որոնք կիսագրագէտ ըլլալով, միայն այսքան կը հասկացնեն, Թէ «Այս գրքերը ձեռքով գրուած են, հին գրքեր են, տպուած չեն՝ որ մենք կարենանք կարդալ եւ ձեզ հասկացնել» եւ այլն:*

*Այս եղելութիւնը պատմողներու համեմատ՝ ամբարուած այդ հնութիւններն եւ ձեռագրերը փոխադրուած են, բայց իրենք չեն կրցած իմանալ՝ ո՞ւր արգեօք՝ Անկիւրի՛, Թէ՝ ուրիշ քաղաք մը»[7]: Ռուսական զօրքի նահանջին յաջորդած վերագրաւումից յետոյ՝ 1915 Թ. վերջերին, ձեռագրերն ու հնութիւնները հաւաքելու եւ փրկելու համար Վասպուրականում շրջող մտաւորականները[8] մեր բոլոր եկեղեցիներում եւ վանքերում միշտ տեսնում էին «այստեղով Թուրքն է անցել» պատկերը (տե՛ս նկ. 1)[9]: Մեր պատառիկից երեւում է, որ նրա մայր ձեռագիրն «ընտիր» է եղել, ուստի եւ պէտք է «ամենաընտիր մասի, եկեղեցական բոլոր հնութեանց եւ սրբութեանց հետ» մնացած լինի չյայտնաբերուած Թաքստոցում եւ անցած Թուրքերի ձեռքը[10]:*

*Պատառիկի երկրորդ էջին կայ 14,7x10,3 չափսի կարմիր շրջանակով (շրջանակի գծի լայնքը 3 մմ)՝ ձեռնադրութեան տեսարան պատկերող մանրանկար. ձեռնադրողը եւ ձեռ-*

---

[7] *Յովհաննէս վ. Հիւսեան, Համառօտ նկարագրութիւն Վասպուրականի մէջ եղած մի քանի նշանաւոր վանքերու, որոնք մինչեւ 1915 թուակ[ան]ը շէն եւ միաբանական վանքեր էին. եւ իրենց մէջ գտնուած ազգային-եկեղեցական թանգարժէք հնութիւնները, հարստութիւնները եւ հարիւրաւոր դարաւոր մեծարժէք գրչագիրքը կը մնային անկորուստ.- Մաշտոցեան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ Հ№ 92, էջ 9բ-10բ (շուտով տպագրելու ենք նկարագրական այս տետրի ամբողջական բնագիրը):*

[8] *Նիկողայոս Մառը, Նիկողայոս Ադոնցը, Յովսէփ Օրբէլին եւ Սմբատ Տէր-Աւետիսեանը Ռուսական կայսերական հնագիտական ընկերութեան նշանակած արշաւախմբի անդամներ էին, իսկ Յովհաննէս վ. Հիւսեանը Գէորգ Ե. կաթողիկոսից յանձնարարութիւն ունէր ձեռագրերը ժողովելու եւ Էջմիածին փոխադրելու:*

[9] *Լուսանկարի բնագիրը գտնւում է Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Հնագիտութեան ինստիտուտի (Ս. Պետերբուրգ) դիւանական բաժնում՝ «Սմբատ Տէր-Աւետիսեանի արխիւ». պատճէնը 1980ական թթ. Երեւան է բերուել վաստակաշատ պատմաբան-բանասէր Պարոյր Մուրադեանի ջանքերով:*

[10] *Վերջերս յաճախ ենք լսում ո՛չ-հրապարակային խօսակցութիւններ այն մասին, որ Անկարայի գրադարանային դիւանական հաստատութիւններում կան եօթ փակի տակ պահուող հայերէն հազարաւոր ձեռագրեր: Արեւմտահայութեան նկատմամբ թուրքերի կազմակերպած անօրինակ եղեռնի փաստը ճանաչել տալու եւ նրա շարունակութիւն-պահանջատիրութեան առաջին խնդիրը պէտք է լինի բռնագրաւուած այդ ձեռագրերի՝ մե՛ր ժողովրդի մշակոյթի եւ պատմական յիշողութեան անփոխարինելի յուշարձանների վերադարձը: Այս գաղափարն անպայման համեմատելի է այն տխուր փաստի հետ, որ բոլորովին վերջերս Գերմանիան Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի գրադարանից «վերստացաւ» հարիւրաւոր ձեռագրեր եւ հազարաւոր տպագիր գրքեր, որոնք գուցէ պէտք էր համարել Համաշխարհային երկրորդ պատերազմում զոհուած երեք ու կէս հարիւր հազար հայ զինուորների արեան գինը, սակայն Հայաստանի իշխանաւորների մտքով անգամ չանցաւ դրանց դիմաց պահանջելու Գերմանիայի գրադարաններում գտնուող հայերէն հարիւրաւոր ձեռագրերը, որոնց մի մասը, անկասկած, այնտեղ հասել է Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, ամենայն հաւանականութեամբ՝ եղեռնն իրագործած թուրքերի գերմանացի հրահանգիչների ձեռքով:*

*նագրուողը կանգնած են երկխորան եւ եռագմբէթ (միջնորդինը գնդաձեւ է, կողքերինը՝ սրագագաթ) եկեղեցում, առաջինը ուղիղ դիրքով, ձախ ձեռքը դրած երկրորդի գլխին, որ խոնարհուած է: Եկեղեցու կենտրոնական գմբէթը նկարի միջնորդից մի փոքր ձախ՝ շրջանակից 1 սմ վեր է ելնում, իսկ նրա գագաթը պսակում է 1,7x0,9 չափսի ոճաւոր ոսկի խաչ: Նկարն ունի կանոնաւոր եւ վարժ երկաթագրով երկու մակագրութիւն. ա. շրջանակի վերին եզրագծից վեր, ոսկեգոյնի մօտեցող՝ բաց դարչնագոյն թանաքով (ըստ երեւոյթին՝ ամբողջ ձեռագրի գրչութիւնը եւ թանաքն այսպիսին է եղել)՝ «ՏԻՐԱՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ» (երկու բառի միջեւ շրջանակից դուրս ելնող կենտրոնական գմբէթն է), բ. շրջանակի մէջ՝ նրա եւ խորանի սիւնի միջեւ, ձեռնադրողի նկարից ձախ, նրա գլխից մի փոքր վեր սկսելով, դէպի ցած շարունակուելով եւ արմունկին չհասած աւարտուելով, կապոյտ հէնքի վրայ սպիտակ ներկով գրուած է. «ՏՐ Ս/ՏԵՓ/ԱՆ/ՈՍ / ԾԱ/ՌԱ / Ք"Ի»*[11] *(տե՛ս նկ. 2):*

*Մեր առաջին խնդիրը, բնականաբար, պատառիկի մօտաւոր թուագրումն էր, իսկ դրա համար նկարազարդումը եւ նկարն աւելի լաւ ուղենիշ են, քան՝ գրչութիւնը եւ գրառումը (առանձնապէս՝ մեր ունեցած սոսկ երկու բառի), ուստի մանրանկարչութեան բազմափորձ հետազօտողներ Իրինա Դրամբեանի եւ Էմմա Կորխմազեանի հետ մանրազնին նայելով եւ խորհրդակցելով, յանգեցինք ԺԲ-ԺԳ. դարերի սահմանագծին՝ առաջինի երկրորդ կէս կամ երկրորդի սկիզբ: Թէ՛ «Տիրացու եպիսկոպոս» բառերի գրչութիւնը եւ թէ՛ մանրանկարի ոճական յատկանիշները թելադրում էին նախընտրելի համարել ԺԲ. դարի երկրորդ կէսը, ուստի անմիջապէս համեմատեցինք Գրիգոր Նարեկացու Մատեանի Ներսէս Լամբրոնացու պատուէրով գրուած՝ պահպանուած հնագոյն օրինակի (ՄՄ ՀՀ 1568, 1173 թ.) մանրանկարների հետ եւ համոզուեցինք, որ արտայայտչաեղանակների ու ոճի մերձաւորութիւններ կան: Փորձելով մօտաւոր ենթադրել գրչութիւն-ծաղկման միջավայրը, աւելի հաւանական համարեցինք Կիլիկեան Հայաստանում ծաղկուած լինելը, քան՝ բուն Հայաստանում: Առաջին հայեացքից թուաց, թէ վերեւի մակագրութիւնը վերաբերում է ձեռնադրողին, իսկ շրջանակի մէջի երկրորդը՝ ձեռնադրուողին, բայց սրան հակասում էր այն հանգամանքը, որ վերջինս գրուած է ձեռնադրողի նկարին կպած, մինչ՝ ձեռնադրուողից աջ եղած տեղն աւելի մեծ՝ ընդարձակ է:*

*Այս եղակէտերն ունենալով, բնականաբար, պէտք է փնտրէինք միաժամանակ երկու անունը. երկուսն էլ յանգեցրին ԺԲ. դարի երկրորդ կէսին ապրած մի անձի, որով աներկբայ դարձաւ, որ ձեռնադրուողը մնացել է անանուն, իսկ մակագրութիւնները վերաբերում են մի՛միայն ձեռնադրող եպիսկոպոսին, որին Հ. Աճառեանն իր յայտնի բառարանում բնորոշել է այսպէս. «103. Ստեփաննոս Տիրացու վարդապետ, առաջնորդ Վարագայ կամ Խաչի վանքի, արքեպիսկոպոս Վանտոսպի, մեծահամբաւ սրբութեամբ եւ իմաստութեամբ. ծերութեան ժամանակ Գրիգոր Զ. Ապիրատ («1194-1203 թ.») կաթողիկոսը թախանձանօք հրաւիրեց նրան իր մօտ՝ Հռոմկլայ: Ներկայ եղաւ Լեւոն Բ.ի թագադրութեան հանդէսին «1199 թ. [Յունուարի 6ին]»*[12]*:*

*Այդուհետեւ, ի վերջոյ, յաջողուեց գտնել պատառիկիս մայր ձեռագրի թերի եւ ժամ-*

---

[11] *Մեր ձեռագրերում տակայ աւանդոյթին հետեւելով՝ զոյգ շեղերը գործածում ենք համառօտման՝ պատիւի նշանի փոխարէն:*

[12] *Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ., Երեւան, 1948, էջ 616 (այսուհետեւ՝ ԱնձԲռ. Դ.):*



Նկ. 1

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



Նկ. 2




Նկ. 3

Академия наук Армянской ССР
Фундаментальная библ-ка

*բողջական» երկու նկարագրութիւն. Օննիկ (Յովհաննէս) Բարաղամեանն իր «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի» անտիպ գործի մէջ այն նկարագրել է որպէս Կտուց անապատի Հ* 49*[13]*: Առաջին՝ թերի նկարագրութեան տարբերուող բնորոշումներն ու տուեալներն ուղղանկիւն՝ [ ] փակագծերի մէջ առած եւ երկրորդին հիւսելով, ներկայացնում ենք այն.*

*«49. Տետր կամ Տետրատ ձեռնադրութեան կիսասարկաւագի. 27, 19 եւ 2.*[14] *վրայի սեկը ցեցերէ ծակծկուած եւ պատռած, մագաղաթեայ եւ ոսկիով, լաջուարդով եւ այլ ընտիր-ընտիր [եւ ակնապարար] երանգօք եւ արուեստով, [արուեստին բովանդակ նրբութեամբն ու ճարտարութեամբ] պատկերազարդ եւ ծաղկած՝ [մարդոց, թռչնոց եւ այլ նկարներով], իւրաքանչիւր էջը 18 տող, եւ աղօթքներն ու սկիզբը եւ վերջը դրուած կրկին, յիշատակարանները գրուած 1 հար. մեսրոպեան ոսկի տառերով*[15]*, իսկ սաղմոսները վառ կարմրադեղով տողերուն միջեւ մեսրոպեան փոքր տառերով: [Ամբողջ] տետրին թերթերը 30 [29] հատ [գրուած է միայն մէկ երեսէն եւ նորէն մէկ հար. մեծ ոսկի եւ մեսրոպ. տառերով եւ ոմանց միջոցները կարմրադեղով եւ փոքր տառերով]. ափսո՛ս, սակայն, որ վերջին դարերու մէջ անխոհեմ գրիչ մը Խորհրդատետրի պարունակութիւնը [երկուստեք] գրած է*[16] *բոլոր տողերուն միջեւ, սեւադեղով եւ բոլորագրով: Առջին երեսը [1 հար. ոսկիով եւ մեսրոպ. տառերով] գրուած յիշատակարանն է. «Այս տետրս Տ. Ստեփանոսի եւ Տ. Աւրպէլին է, որք զկնի պատահիք, յիշեցէ՛ք բարի յիշատակաւ զիս՝ զնուաստ Աւրպէլ Իովանէ անարժան եպիսկոպոս Սիւնեաց, եւ զհաւրեղբայրն իմ զՏ. Ստեփանոս»:*

*Այս յիշատակարանէն վերջ նկարուած առաջին պատկերին մէջ կը տեսնուի 23 հար.*[17] *երկայն եպիսկոպոս մը՝ շքեղազարդ զգեստաւորեալ եկեղեցական զգեստուք, ոտքի վրայ կանգնած եւ չափիկ մը հագած կիսասարկաւագացու մը՝ անոր առջեւ ծնրաչոք եւ ձեռնամած, իսկ պատկերին շրջանակէն դուրս՝ եպիսկոպոսի գլխին վերեւը դրուած. «Տիրացու եպիսկոպոսն է». Վերջին ոտանաւոր յիշատակարանն է. «Այս տետրատս ցանկալի՝ / աս-*

---

*[13] ՄՄ ձեռ. Հ* 6333, 10բ (էջ 20) և 66ա (էջ 131). առաջին նկարագրութեան մէջ ձեռագրի անունը նախ գրել է «Խորհրդատետր», ապա՝ ջնջել և վերևը գրել ճիշտը՝ «Տետր ձեռնադրութեան կիսասարկաւագի»: Կան նաև փոխադարձ յղումներ. առաջինի ձախ լս-ում, վերից վար՝ «Սոյն 49 թիւը տե՛ս 131րդ երեսը» (10բ), երկրորդի սկզբում՝ «Փոխադրած 20րդ երեսէ, տեղւոյն անձկութեան առթիւ» (66ա), վերջինիս ձախ լս ում այլ ձեռքով, սև թանաքով, վերից վար գրուած է. «ընդօրինակուած է»:*

*[14] Ձեռագրերի չափսը նշանակում է «երկայն[ութիւն], լայն[ութիւն], թանձր[ութիւն]» կարգով և «հարիւրորդ[ի]»՝ սանտիմետր միաւորով. պահպանուած և Մաշտոցեան Մատենադարան եկած ձեռագրերի ներկայ չափերը, փոքր շեղումներով, համապատասխանում են Բարաղամեանի նշածներին, օրինակ՝ Հ* 5560ինը նշել է «25, 17 և 8» (6333, 1ա), իսկ ձեռագրացուցակում (Բ., Երևան, 1970, էջ 133) 24,5x16 է: Մեր խնդրոյ առարկայ ձեռագրի՝ Բարաղամեանի նշանակած 27x19 և պատառիկի ունեցած 19,5x15,7 չափերի տարբերութիւնը ցոյց է տալիս, որ վերջինս անխղճօրէն եզրահատուել է, յատկապէս՝ ստորին լուսանցի մասից:*

*[15] Պատառիկի տառերի բարձրութիւնը 0,5 սմ է:*

*[16] Այս տեղեկութեամբ պարզւում է այն հանելուկը, թէ ի՞նչու պէտք է Խորհրդատետրի մէջ նկարուէր ձեռնադրութեան տեսարան, որ առաւել յատուկ է Մաշտոցի բնոյթի ձեռագրերին. մինչ այդ նայեցինք Խորհրդատետրի մի քանի տասնեակ նկարազարդ ձեռագրեր և, ձեռնադրութեան պատկեր չգտնելով հանդերձ, արձանագրում ենք, որ ծիսական այս ժողովածուի պատկերագրութեան ուսումնասիրումը մեր գեղարուեստի պատմութեան հետազօտման կարևոր խնդիրներից մէկն է:*

*[17] Լուսապսակը չհաշուած՝ եպիսկոպոսի նկարի բարձրութիւնը պատառիկի մէջ 10,5 սմ է, լուսապսակով՝ 11 սմ:*

տուածային գանձովն լի / գրեալ ձեռամբ անարժանի, / որ Յովհաննէս անուն կոչի, / ի յանապատըս Բարսղի, / որ ի լերինս Տաւրոսի, / մերձ առ դրան սուրբ Սիովնի, / ընդ հովանեաւ Աստուածածնի, / վարդապետին Տիրացուի՝ / հզաւր եւ մեծ գիտնականի, / եպիսկոպոս Ստեփաննոսի՝ / հաղորդ փառացն Պետրոսի. / Տէր վայելել տացէ բարի՝ / երկար աւուրք ժամանակի, / եւ բարիոք կեալ կենդանի՝ / ողորմութեամբըն Քրիստոսի, / մինչեւ ի կէտ իւր պայմանի, / որ Աստուծոյ միայն յայտնի. / եւ յապագայսն դասեսցի, / ընդ որդիս լուսոյ տօնագատի, / ընդ որս եւ ինձ մասն եղիցի՝ / անդատապարտ կալ առաջի / աստուածային նորա բեմին»: Թէեւ անթուական՝ բայց Օրպէլեանց ծաղկելուն ժամանակն է Փրկչի 1300 կամ 1301 թուականն ըստ պատմութեան»[18].

Պատմողականի համեմատ հարցակարգային նկարագրութիւնն աւելի ցայտուն, արտայայտիչ եւ ընկալելի է, ուստի պատառիկիս մայր ձեռագրի արտաքին յատկանիշները պատկերենք ներկայումս ընդունուած կարգով եւ ձեւաւորումով (հետագայ շարադրանքի մէջ պարզաբանելու ենք այստեղ արուած որոշակիացումները).

Կտուց անապատի Հ^{ձր} 49 [231]

[ԿԱՆՈՆ] ՋԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԻ, (ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ՝ հետագայ յաւելում)

ԲԱՐՍՂԻ ԱՆԱՊԱՏ (ՏԱՒՐՈՍԻ ԼԵՌՆԵՐ) [շուրջ 1170 թ.]

ԳՐԻՉ եւ ԾԱՂԿՈ՞Ղ Յովհաննէս: ՍՏԱՑՈՂ՝ Ստեփանոս եպիսկոպոս, մականուն Տիրացու:

ԹԵՐԹ՝ 30 կամ 29. սկզբնապէս չգրուած բոլորի մէկ երեսը: ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 27x19x2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ [միասի՞ւն]: ԳԻՐ՝ երկաթագիր. մեծ [բոլորգիծ], ոսկիով (աղօթքները եւ յիշատակարանները) եւ միջին [թեք կամ ուղղագիծ], կարմրով (սաղմոսները): ՏՈՂ՝ 18: ԿԱԶՄ՝ կաշի (միջուկը եւ սատաղը՝ անյայտ):

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ. ՆԿԱՐ 2բ՝ ձեռնադրութիւն կիսասարկաւագի. մարգոց, թռչնոց եւ այլ նկարներ: Խորան՝ անյայտ: Կիսախորան՝ անյայտ: Լուսանցազարդ՝ անյայտ: Զարդագիր՝ անյայտ: Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, ոսկի, սեւ, սպիտակ: ԾԱՂԿՈՒՄԸ ոսկիով, լաջուարդով եւ այլ ընտիր-ընտիր [եւ ակնապարար] երանգօք եւ արուեստով՝ [արուեստին բովանդակ նրբութեամբն ու ճարտարութեամբ]:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ վերջում (թ. 29 կամ 30). ՀԵՏԱԳԱՑ՝ 1ա (1302 թ.):

ՎԻՃԱԿ կազմի կաշին ցեցակեր եւ պատռուած:

Փնտրտուքի սկզբում մեր ուղենիշը ԺԲ. դ. երկրորդ կէսը եւ նրա հիման վրայ ընտրուած Աճառեանի 103րդ Ստեփանոսն էր, ուստի, երեւի վրիպմամբ, յաջորդ դարի մէջ, առաւել եւս՝ նրա վերջում նոյն անունը չէինք փնտրել. միայն Բարաղամեանի նկարագրութեամբ իմանալով ձեռագրի գրչութեան «Բարսղի անապատ» անունը, նրանով յանգեցինք նկատելու, որ, նոյն Բարաղամեանից առնելով եւ նրա «1300 կամ 1301 թուականն ըստ պատմութեան» արտայայտութեան վրայ յենուելով, վաստակաշատ ձեռագրագէտ Արտաշէս Մաթեւոսեանն այս ձեռագրի թէ՛ գրչութեան եւ թէ՛ Յովհաննէս Օրբէլի հետագայ յի-

[18] ՄՄ ձեռ. Հ^{ձր} 6333, 66ա (էջ 131) եւ 10բ (էջ 20. վերջինիս մէջ գրչութեան յիշատակարանը չկայ):

*յիշատակարանները տպագրել է 1300 թ. ներքոյ[19]: Այս հրատարակութեան մէջ մեր խնդրին վերաբերող վրիպումներ կան, ուստի, թուացեալ շեղումով, պարտաւոր ենք նախ պարզել դրանք, ապա՝ դառնալու մեր հարցերին:*

*Օրբէլին յիշատակարանը ծանօթագրել է. «Հետագայ ստացողի յիշատակագրութիւնն է այս՝ գրուած շուրջ 1300ական թուականներին» (ԺԳ., 692, ծ. 2): Սակայն, ըստ ամենայնի, սա գրուել է Օրբէլի հօրեղբայր Ստեփանոս Օրբէլեան պատմագրի կենդանութեան ժամանակ: Վերջինս Սիւնեաց մետրոպոլիտ էր 1286 թ. մինչեւ մահ՝ 1303 թ.: Իր կենդանութեան օրօք նրա հօրեղբայր Լիպարիտ Օրբէլեանի որդի Յովհաննէս Օրբէլը օծուել է աթոռակից-յաջորդ եւ որպէս մետրոպոլիտ յիշատակւում է 1302-1323 թթ.[20], ուրեմն՝ Օրբէլի անթուական յիշատակարանի գրութեան ամենահաւանական տարին ո՛չ թէ 1300ը, այլ՝ 1302ն է. ապա՝ ենթադրելի է, որ Ստեփանոսը կամ Օրբէլը ձեռագիրը կամ «տետր»ը ստացել են ամենայն հաւանականութեամբ իրենցից մէկի՝ եպիսկոպոսի աստիճան ստանալու համար Կիլիկիա այցելած ժամանակ:*

*Սրա հետ միաժամանակ, նոյն հատորում տպագրել է աւանդաբար Մաշտոցի ինքնագրից օրինակուած համարուող՝ 1069 թ. ՄՄ Հձռ 10434 Աւետարանի հետագայ յաւելում 288-91 թերթերի վրայ գրուած (290ա-1բ՝ չգրուած)՝ կրկին հետագայ եւ անթուական երեք յիշատակագրութիւն (ԺԳ., 33-4, Հձռ 11), որոնցից առաջինը (288ա) մուգ սեւ թանաքով, վարժ եւ անկանոն (համարել է «կանոնաւոր»), այսինքն՝ գրագէտ, բայց ո՛չ վարպետ կամ արհեստ բանեցնող գրչի ձեռքի բոլորգրով է (անհմուտ աչքին կարող է թուալ ԺԴ-ԺԵ. դարերի) եւ որի մէջ ոմն Տիրացու ասում է, թէ այդ Աւետարանն իր «սեփականն» է, միւս երկուսը (ըստ էութեան՝ չափածոյ սկզբով եւ արձակ աւարտով մի յիշատակարան են), բաց դարչնագոյն թանաքով, վարժ եւ վարպետ եւ նոյն ձեռքի կանոնաւոր մանր երկաթագրով են, չափածոյ մասում (288բ-9ա) նո՛յն Տիրացուն դիմում է Աւետարանին՝ «Կամիս լինել գիս մաքրութեամբ քեզ սպասաւոր», ապա ինքնափնովման ընթացքում ասում է՝ «Այդ տառապեալս Տիրացու՝ յոյժ յանցաւոր, / Վերջին եւ տրուպ ամենեցունց՝ որ գիտնաւոր», արձակ մասում (289բ) կրկին դիմում է Աւետարանին՝ «Ընդ բազումս անցեր... հասեր եւ իմս անարժանութեան, եւ ես տամ զքեզ եկեղեցւոյ քում սրբոյ»: Սա վերջանում է նոյն ձեռքով, մի փոքր աւելի մուգ թանաքով գրուած երկու տողով. «Յիշեսջիք ի Քրիստոս զԿոզմաս»:*

*Բոլորգիր առաջին յիշատակարանը Մաթեւոսեանը համարել է գրուած ձեռագրի տէր Տիրացուի ձեռքով, իսկ միւս երկուսի (իրականում մէկի) համար ծանօթագրել է՝ «Կոզմա՛, հաւանաբար, յիշատակարանի գրիչն է, որ գրել է Տիրացուի պատուէրով» (ԺԳ. դ., 34, ծ.): Այս ենթադրութիւնները հաւանական եւ ընդունելի են, սակայն կայ նաեւ հիմնովին անճիշտ նոյնացում՝ «Տիրացուին նոյնացնում ենք Ստեփանոս Տիրացու գիտնականի հետ, որը Վասպուրականի Սուրբ Խաչ վանքի առաջնորդ էր եւ մահացել է 1202 թ.: Յիշա-*

---

[19] Տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դ., կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան, 1984, էջ 860, Հձռ 692 (ծ. 1՝ վերարտադրել է ձեռագրի նկարագրական որոշ տարրեր. հատորս ԺԳ., համառօտմամբ եւ էջերի ու յիշատակարանների համարներով այսուհետեւ յղելու ենք շարադրանքի մէջ):

[20] Տե՛ս Լեւոն Խաչիկեան, Սիւնեաց Օրբէլեանների Բուրթէլեան ճիւղը.- Բանբեր Մատենադարանի, հտ. 9, Երեւան, 1969, էջ 190, 198:

տակարանը որպէս վերջին հնարաւոր ժամկէտ, դնում ենք այդ թուականի տակ» (ԺԳ., 33, ծ.): Այս սխալ նոյնացման խախուտ հիմքերից առաջինն այն է, որ ձեռագիրը 1069ին գրուել է Վասպուրականում եւ ԺԳ. դ. սկզբին դեռեւս կարող էր լինել այնտեղ, իսկ երկրորդը վերոբերեալ քաղուածքում մեր ընդգծած «գիտնաւոր» բառն է: Նախ՝ ԺԳ. դարի ամբողջ ընթացքում Տիրացու անձնանունը բաւական յաճախադէպ էր (տե՛ս ԺԳ., անուանացանկ՝ էջ 979), ապա՝ հետագայ ստացող այս Տիրացուի երկիցս գրուած անուան կողքը չկայ «Տիրացու գիտնականի» բուն՝ «Ստեփանոս» անունը եւ նրա՝ եպիսկոպոս լինելու մասին որեւէ խօսք:

Ըստ այժմ այս յիշատակարանների թուագրման, աւելին՝ տեղորոշման, լաւագոյն ելակէտ ենք համարում գրչի սակաւադէպ Կոզմա անունը. այսինքն՝ գրեթէ համոզուած ենք, որ 1069 թ.՝ ՄՄ Հր 10434 Աւետարանը ԺԳ. դարի սկզբներին եղել է Խարբերդում կամ նրա շրջակայքում (ասենք՝ Խարբերդի դաշտի Բարջանճ[21] գիւղի մօտի նոյնանուն անապատում), ուր միատեղ կային Տիրացու անունով մէկը եւ Կոզմա անունով մի գրիչ[22]. Կոզման 1205 թ. Թորոս երաժիշտի համար Խարբերդում, «ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետին եւ Սուրբ Յակովբայ» գրել է Վենետիկի Մխիթարեանների Հր 938/88 Աւետարանը, որի գլխաւոր յիշատակարանում խնդրում է յիշել «Եւս առաւել զհոգեւոր եղբարք իմ զաստուածահաճոյ քահանայք զՅոհաննէս եւ զՏիրացու, որ առաջնորդ եւ աւգնական են գործոյս»( ԺԳ., 54, Հր 20)[23]:

Վերադառնանք մեր խնդիրներին. Ստեփանոս Տիրացուի համար գրուած՝ Կտուց անապատի Հր 49 [231] կորսուած ձեռագիրը եւ նրա պահպանուած մասունք՝ ՄՄ Հր 2098 պատառիկը Տաւրոսի Բարսղի կամ Բարսեղեանց անապատում գրուած՝ առայժմ յայտնի միակ[24] ձեռագիրն է, ուստի պարտաւոր ենք նախ կարելւոյն չափ ճշգրտել նրա թուագրումը, ապա հնարաւոր համառօտութեամբ վերարծարծել այդ անապատին եւ Ստեփանոս Տիրացուին վերաբերող մեզ յայտնի բոլոր տեղեկութիւնները:

ԹՈՒԱԳՐՈՒՄ. Հետագայ շարադրանքի մէջ տեսնելու ենք, որ Ստեփանոս Տիրացուն

---

[21] Կամ՝ «Փարչանջ կամ Բեռչէնճ, 180 տուն (470 հոգին լուսաւորչական, 160ը բողոքական եւ 50ը կաթոլիկ), եկեղեցին Ս. Փրկիչ, որուն աղքատ ու այրիացեալ երէցն էր Բառնաբաս քահանայ Գասպարեան - ծնած 18 Օգոստոսի 1875ին... Նահատակ... կաթոլիկ հայոց հովիւն էր Հ. Պօղոս Գազանճեան - ծնած 1879ին Արաբկիր... Նահատակ»՝ տե՛ս Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Խմբագրեց Արալ Գալայճեան, Նիւ Եորք, 1985, էջ 228: Գիւղը «1915ին ունէր 3500 բնակիչ, որից 2000ը հայ, մնացածը՝ թուրքեր... Գիւղում գործում էր մէկ երկսեռ դպրոց (բացուած 1845 թ.), ունէր երկու եկեղեցի» եւյն. տե՛ս Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Չորս հատորով, հտ. 1, Ա-Դ, Երեւան, 1986, էջ 634 (միւս հատորները՝ Երեւան, 1986, 1988, 1998. տիտղոսաթերթին 1991 թ. կրող 3րդը եւս իրականում տպագրուել է 1998 թ., այսուհետեւ՝ ՏԲ):

[22] Կոզմա գրչի մասին տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, Նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, Կազմեց՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Երեւան, 2002, էջ 50, ծնթ. Հր 17, ծ.:

[23] Նոյն Կոզման 1219 թ. Բարջանճի անապատում գրել է ՄՄ 7734 Աւետարանը (ԺԳ., 115-6, Հր 74):

[24] Հմմտ. Répertoire des monastères Arméniens, Par *Michel Thierry*, Brepols - Turnhout, 1993, p. 56, N° 297" «[Kahraman Maraş Yenicekale. Saygili] (Probablement le memque Šulr anapat n° 296)». Անկասկած՝ Շուղր անապատի հետ նոյնացումը ճիշտ չէ, աւելին՝ վերապատուելի է Ա. Մաթեւոսեանի՝ 1300ին այստեղ ձեռագիր գրուած լինելու վերաբերող սխալմունքը:

*1198 թ. առաջ «ոչ դարձեալ ընդդէմ կամ պատճառեալ զծերութիւն, այլ որպէս վայել էր իւրում զուարթ եւ զուարճածաղիկալեացն», Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հրաւէրով Վասպուրականից գնացել է Հռոմկլայ: Իր կենդանութեան ժամանակ նորընծայ Սարգիս «բարի եւ իմաստուն պատանեակ» եպիսկոպոսին ընտրել եւ նշանակել է «իւր փոխան եւ տեսուչ անապատի Սուրբ Խաչի սատացուածոց»:*

*Այսպիսի քայլ կարող էր անել մոտալուտ վախճանի զգացում ունեցող ծեր մարդը. ըստ այսմ կարող ենք անել շատ հաւանական ենթադրութիւն, թէ մահուան ժամանակ՝ 1202 թ., սովորական միջին 70 տարեկանից անց էր, ասենք՝ շուրջ 80ամեայ[25]: Մանրանկարում Ստեփանոս Տիրացուի մազերը դեռեւս լրիւ թուխ են, ճերմակ չկայ, ուստի յիշատակագրի՝ նրա մազերին տուած բնորոշումը, առանձնապէս՝ «զուարճածաղիկ» բառը (Հայերէնի հիմնական բառարաններում չգտանք) կարծում ենք պէտք է հասկանալ՝ շատ չնօսրացած եւ մասամբ ճերմակ՝ սեւաճերմակ: Տարբեր մարդկանց տեսողական տպաւորութեամբ առաջնորդուելով, յանգեցինք այն եզրակացութեան, որ դիմանկարում պատկերուած է 50ին մօտ կամ մի փոքր անց տարիքի մարդ. ուրեմն, կրկին շատ հաւանական ենթադրութեամբ, ձեռագիրը գրուել եւ ծաղկուել է կեանքի 80ամեակին վախճանուած Ստեփանոսի 50ամեայ տարիքում՝ 1170ի շուրջ (գուցէ եւ մի քանի տարի առաջ կամ յետոյ), որ նշանակում է, թէ Ստեփանոս Տիրացուի ծննդեան թուականը պէտք է դնել 1120 թուականի շուրջ, իսկ կեանքը՝ 1122-1202 թթ. միջեւ:*

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. *ըստ մեր եւ մեր խորհրդակիցների տպաւորութեան՝ պատկերուած է որոշակի դիմագծեր եւ դէմքի որոշակի արտայայտութիւն ունեցող իրական մարդ: Ամենայն հաւանականութեամբ՝ Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսը որպէս «բնորդ» պէտք է կանգնած լինի իր համար գրուող ձեռագրի մէջ իրեն պատկերողի դիմաց[26]: Էմմա Կորխմազեանը մեր ուշադրութիւնը հրաւիրեց այն փաստի վրայ, որ ձեռնագրութեան մեր նկարի եւ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Հ^ն 1796 կրկին անթուական, աւելին՝ գրչութեան վայրն անյայտ ձեռագրի նկարազարդման՝ դէմքերի, հանդերձանքի պատկերման ձեւի եւ ոճի ակնյայտ նմանութիւններ կան, որոնք առաւել ցայտուն են վերջինիս «Ընծայում-օրհնութիւն» («Զօն») պատկերի հետ համեմատելիս: Վերջինիս մէջ ձեռագրի ստացող Մաթէոս կրօնաւորը կանգնած է գրեթէ մեր նկարի ձեռնադրուողի դիրքով (միայն թէ՝ նկարի ձախ կողմում)՝ խոնարհուած, եւ Աւետարանը մատուցում է գահաւորակ-բազկաթոռին նստած՝ խաչանիշ լուսապսակով Քրիստոսին, որ Աջով օրհնում է նրան (Նկ. 3):*

---

[25] *Ստեփանոս Տիրացուին այս տարիքը տալով՝ ամենեւին չենք չափազանցում. Գրիգոր Ապիրատը 1194ի վերջերին՝ 72ամեայ, կաթողիկոս է օծուել եւ 1203ի Մարտին մահացել է 81ամեայ հասակում. տե՛ս Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը՝ յարակից ազգային պարագաներով պատմուած. Գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. Նախկին պատրիարք. Ա. հատոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, § 1039՝ էջ 1767, § 1071՝ էջ 1820 (այսուհետեւ՝ Ազգապատում, Ա.):*

[26] *Միջնադարեան հայկական դիմանկարչին արուեստի հետազօտման որոշակի քայլեր արուած են (հմմտ. Հայկական մանրանկարչութիւն. Դիմանկարներ, կազմեց, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց Աստղիկ Գէորգեան, Երեւան, 1982), սակայն նկարի եւ նկարուած անհատի ժամանակակցութեան, նկարողի վարպետութեան եւ նկարուած անհատի դէմքի ճշգրիտ-վաւերական պատկերման հարցերը դեռեւս խիստ կարօտ են մանրազնին քննութեան:*

Գարեգին Յովսէփեանն այս «ձեռագրի ծագումը մինչեւ ԺԲ. դարի կէսերը ընդունելի» է համարել, իսկ նկարազարդումը գնահատել է որպէս «կիլիկեան արուեստի վաղագոյն շրջանի գործ, բայց Արեւելեան Հայաստանին բնորոշիչ գծերով» եւ բիւզանդական արուեստի տարրերի ազդեցութեան սկսուող արտայայտութեամբ[27]: «Ձօնի խմբանկարի» Գ. Յովսէփեանի նկարագրութիւն-գնահատման մի հատուածը հաւասարաչափ վերաբերելի է նաեւ մեր պատառիկի նկարին. «Ստացող Մատթէոսը գլուխը թեքած մատուցանում է իր Աւետարանը Յիսուսին, իսկ Սա Աջով օրհնում է Նուիրատուին: Մատթէոսի կեցուածքը, գլխի թեքումը, դէմքի արտայայտութիւնը, բարեձեւ մօրուքը, Աւետարանի չնորհալի մատուցումը, հագուստը իր ծալքաւորումներով, բոլորը իրար լրացնող ներդաշնակութիւն եւ համաչափութիւն են նրա կերպարանաւորութեան (Figur), որ արուեստագէտի ունակութեան ապացոյցն է որպէս ինքնուրոյն ստեղծագործութիւն եւ ո՛չ սովորական աւանդական ընդօրինակութիւն (Schablonne)»[28]:

Ն. եպս. Պողարեանն այս ձեռագիրը հարցականով թուագրել է «ԺԲ. դար?»[29], իսկ Բ. Նարկիսի եւ իր գործակիցների արժէքաւոր աշխատութեան «Թէոդորոսի Աւետարանը եւ Հռոմկլայի ու Սկեւռայի դպրոցները»[30] գլուխն ամբողջովին նուիրուած է այս Աւետարանին. այստեղ, հիմնուելով Հռոմկլայում եւ Սկեւռայում 1166-1197 թթ. գրուած 10 ձեռագրի՝ Ս. Տէր-Ներսէսեանի կազմած ցանկի[31] վրայ, Թէոդորոսի նկարները եւ նրանց ձեւաւորման տարրերն աւելի մօտ են համարում Սկեւռայում 1173 թ. գրուած եւ ծաղկուած ՄՄ Հա 1568 Նարեկի «փոքր» նկարներին, քան՝ նոյն տեղում 1193 թ. գրուած եւ նկարուած Վենետիկի Մխիթարեանց Հա 1635/125 Աւետարանի[32] «մեծ» պատկերներին, ըստ որի եւ ձեռագիրը թուագրում են 1170ականներով կամ ԺԲ. դ. երկրորդ կէսով[33]:

---

27 Գարեգին Յովսէփեան, Թէոդորոս գրիչ եւ նկարիչ.- Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հտ. Բ., Երեւան, 1987, էջ 228-32, մասնաւորապէս՝ էջ 229-30:

28 Նոյն տեղում, էջ 232:

29 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ. Կազմեց Նորայր եպս. Պողարեան. Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1972, էջ 146-50. այստեղ կայ Մատթէոս աւետարանչի, Մարկոսի սկզբնաթերթի եւ Ձօնի պատկերների սեւ-սպիտակ վերարտադրութիւնը: Ձեռագրի 224բ էջի յիշատակագրութեան հիման վրայ Պողարեանը ստացող Մատթէոս կրօնաւորին համարել է նաեւ գրիչ, դրանով ուղղելով Գ. Յովսէփեանին, որ վրիպմամբ եւ ենթադրաբար գրիչ էր համարել ծաղկող Թէոդորոսին:

30 Armenian Art Treasures of Jerusalem, Edited by *Bezalel Narkiss*, In collaboration with *Michael E. Stone*, Historical survey by *Avedis K. Sanjian*, Managing editor: *Alexander Pell*, Massada Press, Jerusalem, *1979, p. 41-5*. էջ 43-5՝ նկ. 57-60. վերարտադրութիւն Ղուկասի սկզբնաթերթ (1142ա), Ընծայում (288բ), Յովհաննէս եւ Պրոխորոն (235բ), եւ «Իւղաբերքն» ու «Յարութիւն Տեառն Աստուծոյ» (88բ) մանրանկարների: Տե՛ս նաեւ Երուսաղէմի հայոց պատրիարքարանի գանձերը, Պատրաստեց Արբակ Մխիթարեան, Երուսաղէմ, 1969, էջ 38 եւ նկ. 42:

31 Armenian Manuscripts in The Freer Gallery of art (with 100 plates), By *Sirarpie Der Nersessian*, Washington, 1963, p. 10-17.

32 Նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Սուրբ Ղազար, ՌՅԿԳ – 1914, էջ 549-60. նկարազարդումը տե՛ս Sirarpie Der Nersessian, Manuscrits arméniens illustrés des XIIe, XIIIe et XIVe siècles de la Bibliothèque des Pères Mekhitharistes de Venise, Paris, E. de Boccard, 1937, pl. XVI-XXX.

33 Տե՛ս *B. Narkiss*, p. 43, 48. Այս նոյն ձեռագրերի նորագոյն քննութիւնը եւ նկարազարդումների՝ հիմնականում սեւ-սպիտակ եղանակով հրապարակումը տե՛ս Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, from

Ինքնին յայտնի է, որ միջնադարեան մեր գրչութեան օջախները միշտ, առանձնապէս՝ խաղաղ ժամանակաշրջաններում, սերտ կապեր են ունեցել անգամ ժամանակի համար բաւական հեռաւոր տարածութիւնների վրայ՝ բուն Հայաստանի եւ Կիլիկիայի վանքերի միջեւ եղել է աշխոյժ երթեւեկ, որը, բնականաբար, առաւել յաճախադէպ է եղել միմեանց աւելի մօտ գտնուող կիլիկեան կենտրոնների միջեւ (սրա ցայտուն դրսեւորումը տեսնելու ենք նաեւ մեր Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսի գործած վայրերի օրինակով): Այստեղ առաւել ուշագրաւն այն փաստն է, որ իրարից լիովին անկախ նկատուել է Երուսաղէմի Հ^ր 1796 Աւետարանի եւ մեր Հ^ր 2098 պատառիկի ծաղկման մերձաւորութիւնը 1173ի Սկեւռայի (Ներսէս Լամբրոնացու) Նարեկի նկարազարդման հետ: Սա նշանակում է, որ անթուական առաջին երկուսի 1170ականներով մօտաւոր թուագրումն իրաւացի է: Երուսաղէմի Աւետարանի գրչութեան վայրն անյայտ է, Նարեկինը եւ մեր պատառիկինը՝ յայտնի (Սկեւռա եւ Բարսղի անապատ). առաջինի եւ երրորդի մէջ եղած «Ընծայում» եւ «Ձեռնադրութիւն» նկարներն աւելի շատ ընդհանուր տարրեր ունեն, քան՝ Աւետարանի եւ Նարեկի նկարազարդումներն ընդհանրապէս: Այսուհանդերձ, չենք պնդում, թէ Աւետարանը կարող է գրուած լինել պատառիկի գրչութեան վայր Բարսղի անապատում. իր ստեղծման ժամանակաշրջանի եւ միջավայրի համեմատ՝ այդպիսի գրչութիւն եւ նկարազարդում կարող էր արուել Կիլիկեան որեւէ վանքում:

ԾԱՂԿՈՂԸ. գրչութեան անթուական յիշատակարանում ծաղկողի անունը չկայ, սակայն, ըստ Օ. Բարաղամեանի նկարագրութեան՝ ձեռագրի թէ՛ գրչութիւնը եւ թէ՛ ծաղկումն արուած են «արուեստին բովանդակ Նրբութեամբն ու ճարտարութեամբ». ծայրէծայր ճոխ գրուած եւ նոյն կերպ նկարազարդուած ձեռագրի մէջ ծաղկողի անուան յիշատակուած չլինելն առաւել քան հաւանական է դարձնում այն ենթադրութիւնը, թէ նա նոյն ինքը գրիչն է, մեր դէպքում՝ Յովհաննէսը: Ըստ այսմ եւ մեր պատառիկով հայկական գեղանկարչութեան պատմութեան մէջ, իր ապրած տեղով եւ ժամանակով հանդերձ՝ Սեւ լեռան Բարսղի անապատ, շուրջ 1170 թ., յայտնի է դառնում անունը եւս մի բարձրարուեստ ծաղկողի՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ, որի նկարածին նոյնպէս կարող է վերաբերուել Գ. Յովսէփեանի միւս գնահատականը. «Պատկերի ամբողջութիւնը համարում ենք համաչափ եւ գեղարուեստական՝ մանրանկարչական իմաստով, առանց հեռանկարի հասկացողութեան, որով այս թէոգորոսը պէտք է համարել կիլիկեան նախնական շրջանի լաւագոյն արուեստագէտներից մէկը»[34]:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ Բարսղի կամ Բարսեղեանց անապատի անուան ստուգաբանութեան հարցում մեծանուն Ալիշանը բաւական զգոյշ է եղել. «Բարսեղեանց մենաստանն կամ անապատ՝ թուի մի ի գլխաւոր վանորէից, յանուն մեծ հայրապետին թէ այլոյ՝ ոչ գիտեմ»[35]. սակայն, նոյն Բարսղի անապատը «Կիլիկիայում, Սեւ լեռներում, Ճկեր գաւա-

---

to Twelfth to the Fourteenth Century. *Sirarpie Der Nersessian*, jointly prepared for publication with *Silvia Agemian*, with an Introduction by *Annemarie Weyl Carr*, Dumbarton Oaks Research Library and Collection, Washington D. C., 1993, Volume I, p. 1-36 ("The Twelfth Century: Drazark, Hromkla and Skevra"), Volume II, Ill. 5-6, 14-5. 21-4, 28-33, 54-65.

[34] Գ. Յովսէփեան, նշ. աշխ. էջ 232:

[35] Սիսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն մեծագործ, Հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալի-

ռում» տողագրող Նորօրեայ մի հրատարակութիւն ունի աւելի վստահ մեկնաբանութիւն՝ «Անունը կապուած է Բարսեղ կաթողիկոսի անուան հետ» (ՏԲ, Ա., էջ 635): Թէեւ Կիլիկիա տեղափոխուած հայութեան ազգային-եկեղեցական կեանքի կանոնաւորման ուղղութեամբ Բարսեղ Ա. Անեցու (1105-1113, աթոռակից՝ 1081ից) ձեռնարկած քայլերը հանրայայտ են[36], սակայն աւելի հաւանական է, որ միաբանութիւնն առաջնորդուելիս լինէր Ս. Բարսեղ Կեսարացու վանական կանոնագրութեամբ, որով եւ ստացած լինէր իր «Բարսղի» կամ «Բասեղեանց» անունը:

Այս վանքին վերաբերող առաջին հաղորդման հեղինակը Մատթէոս Ուռհայեցին է. «Իսկ ի թուականութեան հայոց ՇԿԳ (1114)... եղեւ գի ի Սեաւ լեառն, անուանի յանապատն՝ որ կոչի Բարսեղեանց, էին ժողովեալ եկեղեցօրհնէքն սրբասնեալ կրօնաւորք եւ վարդապետք հայոց, եւ կային ի պաշտօնն Աստուծոյ. անկաւ եկեղեցին ի վերայ նոցա, եւ երեսուն կրօնաւոր եւ երկու վարդապետ կատարեցան ի ներքոյ նորա, որ կան մինչեւ ցայսօր»[37]:

Միայն այս տեղեկութիւնը նկատելով, Նորերս կարծել են, թէ «1114 թ. տեղի ունեցած երկրաշարժից վանքը հիմնովին կործանուել է եւ այլեւս չի վերականգնուել» (ՏԲ, Ա., էջ 635): Սակայն, թէ՛ Նորայայտ պատառիկի գոյութիւնը (ցոյց է տալիս, որ Բարսղի անապատում կեանքը շարունակուել է նաեւ նոյն ԺԲ. դարի երկրորդ կէսին) եւ թէ՛ նախապէս յայտնի տեղեկութիւնները վկայում են, որ վանքը վերաշինուել է եւ հետագայում գործել, այսինքն՝ Ուռհայեցու «կան մինչեւ ցայսօր» խօսքով պէտք էր հասկանալ մինչեւ իր ժամանակագրութիւնը գրելու հանրայայտ վերջին տարին՝ 1136 թ.:

Այսպէս. յայտնապէս Ուռհայեցուց առնելով, նրա տեղեկութիւնը երկրորդել է նաեւ ԺԷ. դարի սկզբի ժամանակագիր Յակոբ Սսեցին. «Ի ՇԿԲ (1113)... ի Սեաւ լեառն՝ անուանի յանապատն Բարսեղեանց էին ժողովեալ յեկեղեցին կրօնաւորք եւ վարդապետք հայոց ի պաշտօնն. եւ անկաւ յեկեղեցին, եւ Լ (30) կրօնաւոր եւ Բ (2) վարդապետ կատարեցան ի ներքեւն...»[38]:

շան՝ յուխտէն Մխիթարայ, Վենետիկ - Ս. Ղազար, 1885, էջ 407 (այսուհետեւ՝ Սիսուան):

[36] Տե՛ս Ազգապատում, Ա. § 904-15, էջ 1536-60. հմմտ. էջ 1561-76:

[37] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 330, 333. հմմտ. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, ի Վենետիկ - Ս. Ղազար, 1956, էջ 143: Վանքին վերաբերող տեղեկութիւնների մի մասը տե՛ս Սիսուան, էջ 407. նաեւ՝ Կիլիկիայի վանքերը, Գրեց Դկտր. Հ. Հ. Ոսկեան՝ Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1957, էջ 133-4: Հ. Տաճատ Եարտըմեան, Քեսունի Կարմիր վանքը, Վենետիկ - Ս. Ղազար, 1976. գիրքը թէեւ ունի «Սեւ լերան վանքերը» խորագրով գլուխ (էջ 25-9), բայց այստեղ Բարսղի վանքին վերաբերող նոր փաստեր չկան:

[38] Վենետիկի Մխիթարեանց ձեռ. Հ* 1318, 41ա: Այս աղբիւրն Ղ. Ալիշանին մատչելի է դարձել «Սիսուան»-ի տպագրութեան աւարտի օրերին: Նրա մասին գրել է. «Անանուն մնայ... հեղինակ, այլ միայն վկայէ զանձնէ լինել երէց Երեցխորան եկեղեցւոյ Սսոյ՝ ի կէս ԺԷ. դարու... Ժամանակագիր Կիլիկիոյ կոչեցի զսա ի Ցանկուածին» (Սիսուան, էջ ԺԱ.). Եւ «Ժամանակագիր Կիլիկիոյ» կամ «Ժամանակագիր մեր» բնորոշումներով նրա հաղորդումների վկայակոչումներ ու գործածութիւն ունի գրքի բուն շարադրանքի միայն վերջին էջերում (517, 520, 521), իսկ 19 մեծադիր էջ բռնող «Ցանկուած եւ ուղղագրութիւնք» հատուածի առնուազն 90 տոկոսն այս ժամանակագրի հաղորդումների վերարտադրութիւնն է: Այս գործի հեղինակի Յակոբ Սսեցի անունը մենք ենք պարզել (հիմնաւորելու ենք առանձին յօդուածով), միաժամանակ՝ նրա երկի բնագիրը պատրաստում ենք հրատարակութեան:

*Աւելին, նոյն Յակոբ Սսեցին ունի նաեւ առայժմ անյայտ աղբիւրից քաղած յաւելեալ երկրորդ հաղորդումը. «Եւ եղեւ ի ՉԺԸ (1269) ամին... շարժ ի Սեւ լեառն եւ ի դղեակն Սարվանդոյ քարն, եւ Դեղնքարն, եւ ի Համուսն եւ ի վանորայքն. եւ սպան զբազումս մեծամեծք եւ փոքունք, եւ փլոյց զբազում շինուածս: Եւ փլաւ Բարսեղենց յանապատին եկեղեցին ի ժամ ածմանն, որ նոր կու ածէին, եւ մնաց ի ներքեւն Բ. (2) վարդապետ, Բ. (2) եպիսկոպոսք եւ Ծ. (50) կրօնաւորք»*[39]:

*Այդուհետեւ յայտնի է, որ Եգիպտոսի մամլուկների արշաւանքներից հալածուելով, Կիլիկեան Տաւրոս կամ Սեւ լեռների Բարսղի վանքի միաբանութիւնը 1307 թ. տեղափոխուել է եւ, սկզբնապէս հաստատուելով Ճենովայում, Իտալիայում հիմնադրել է «յայսկոյս ծովու»* (citra mare) *կենցաղավարող «Հայ Բարսեղեանների» բազմաճիւղ եւ բազմամարդ կաթոլիկ միաբանութիւնը, որին միաւորուել են նաեւ Իտալիայի «Հայոց տները» եւ որը, 1356 թ. պապական պաշտօնական ճանաչում ստանալուց*[40] *եւ Ս. Օգոստինոսի վանական կանոնադրութիւնն ընդունելուց յետոյ, գոյատեւել է մինչեւ 1650 թ.*[41] *(հիմնականում ծագումով կիլիկեցի այս վանականները միշտ աշխոյժ եւ սերտ կապ են ունեցել իրենց հայրենիքի հետ):*

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻՐԱՑՈՒ. *Յայտնի է, որ Յովհաննու Հանգստի («Էր ընդ եղբարս» աղօթքի) Ներսէս Լամբրոնացու (1153-1198) մեկնութիւնը գրուել է «ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակովբցւոյ, ի Ներսիսէ աշակերտէ իւր եւ հոգեւոր որդեկէ»*[42]. *«Ներսէս ինքզինքը Ստեփանոս Յակոբցի վարդապետին «հոգեւոր որդին» կը կոչէ, որ Ներսէս Շնորհալւոյ «դպրան սարկաւագն էր. կը յիշուի 1173-1175 տարիներուն... Առանց տարակոյսի նոյն են այս երկու Ստեփանոսները, ի մանկութենէ սնած եւ աճած Հռոմկլայի մէջ» (Ակին. 21-2): Այս նոյնացումն առնուած է Գարեգին Կաթ. Յովսէփեանից, որ իրեն յայտնի նիւթի հիման վրայ իր կազմած ժողովածուի անուանացանկի մէջ գրել է. «Ստեփանոս վ. Յակոբեցի, ազնող գրչի, «դպրան սարկաւագ Ներսիսի հայրապետի, 1173 թ., 1179 թ., 1193 թ., Հռոմկլայում, նաեւ Սկեւռայո՞ւմ»*[43]:

---

[39] *Վենետիկի Մխիթարեանց ձեռ. Հ* 1318, 96ա. «եկեղեցին ... Նոր կու ածէին» խօսքից կարող է թուալ, որ գործ ունենք նախորդ հաղորդման ժամանակագրօրէն սխալ տեղ դրուած եւ աղաւաղ տարբերակի հետ, սակայն զոհուածների տարբեր քանակը՝ «Բ. (2) վարդապետ, Բ. (2) եպիսկոպոսք եւ Ծ. (50) կրօնաւորք», փարատում է այս կասկածը եւ ենթադրել տալիս, որ խօսքը գուցէ գոյութիւն ունեցող մայր եկեղեցու կողքին կառուցուած օժանդակ մի այլ եկեղեցու ածման մասին է:*

[40] *Տե՛ս* Pontificia Commisio ad redigendum codicem iuris canonici orientalis. Fontes. Series III, Volumen X.- Acta Innocentii PP. VI (1352-1362). E regestis Vaticanis, alisique fonitbus collegit *Alosius L. Tăutu*, Romae, 1951, *p.* 140-4:

[41] *Տե՛ս Marr-Antoine van den Oudenrijn*, Les Constitutions des Frères Armeniens de Saint Basile en Italia.- Orientalia Christiana Analecta 126, Roma, 1940, *էջ 7-10, նմնտ. Վ. Ինգլիզեան, Հայ Բարսեղեանց միաբանութիւնն յԻտալիա եւ անոնց սահմանադրութիւնը՝ ըստ Մ. Ա. վ. դ. Ուդենրիյնի.- «Հանդէս ամսօրեայ», 1948, էջ 426-34:*

[42] *Տե՛ս Հ. Ներսէս վ. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի. արքեպիսկոպոս Տարսոնի, կեանքն եւ գրական վաստակները, հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Ներսէս Լամբրոնացւոյ ծննդեան 800երորդ տարեդարձի առթիւ, Վիեննա, 1956, էջ 155 (այսուհետեւ շարադրանքի մէջ յղելու ենք «Ակին.» համառօտմամբ եւ էջահամարով):*

[43] *Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց. Հատոր Ա. (Ե. դարից մինչեւ*

Ակինեանը հիմնուել է իր իսկ՝ Լամբրոնացու մի հաղորդման վրայ եւ սրանց հետ նոյնացրել նաեւ Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսին (Ակին. 22, հմմտ. նաեւ 157-8). Լեւոն թագաւորին ուղղուած իր հռչակաւոր նամակում, ի հակակշիռ իր կարգաւորումները մերժող Ցորագետցի վարդապետների, Լամբրոնացին իր հայ եւ լատին կողմնակիցների երկար թուարկման մէջ յիշել է. «երեւելի արքն Ստեփանոս Տիրացուն՝ ուսուցիչն մեր...»[44]: Այս հաղորդումն ի մտի չունենալով հանդերձ, Ղ. Ալիշանն արել է շատ սրամիտ մի կռահում. «Ո՞վ է այս Ստեփանոս վարդապետն՝ որոյ աշակերտ եւ որդեակ կոչէ զինքն Ներսէս, չեմ գիտեր. Վանայ կողմանց անուանի եպիսկոպոսն, որ եկաւ Լեւոն թագաւորի օծութեան ժամանակ եւ Լամբրոնացւոյ ծանօթացաւ. մի՞թէ նա էր»[45]:

Սակայն, մինչ այդ, Մկրտիչ վ. Աւգերեանի կազմած՝ Լամբրոնացու վարքի մէջ կար աննկատ մնացած հետեւեալը. Շնորհալին «պահեաց զնա առ ժամանակ մի ի հայրապետանոցի... եւ ապա հրամանաւ նորա գնաց ի վանս Սեաւ լերին. եւ եկաց ընդ վարժապետութեամբ Ստեփաննոսի գիտնական վարդապետի՝ Տիրացու կոչեցելոյ»[46]: Այսպիսով, որպէս Լամբրոնացու ուսուցիչ յայտնի Ստեփանոսն ունի երեք բնորոշ ածական անուն. ա. Ցակոբցի, բ. Շնորհալու (կաթողիկոսարանի) «գլխան սարկաւագ», գ. «Տիրացու»: Ակինեանը, գուցէ տեղեակ չլինելով չի հերքել իրենից 8 տարի առաջ Աճառեանի հրապարակած տեսակէտը, ըստ որի «Ցակոբցի»ն (Հդր 104) եւ «գլխան սարկաւագ»ը (Հդր 82) կարող են նոյնը լինել, սակայն «Ստեփանոս Տիրացու»ն (Հդր 103) նրանցից տարբեր մարդ է (ԱնձԲռ. Դ. 614-7):

Սկզբից եւեթ ասելով, որ մեր ունեցած նորայայտ տեղեկութիւնները եւս հաստատում ու լրացնում են Ցովսէփեանի եւ Ակինեանի տեսակէտների իրաւացիութիւնը, նախ փորձենք բացատրել այս անուանումների տրամաբանական կապը: Ստեփանոսի «ՑԱԿՈՎԲԵՑԻ» կոչումն անպայման նշանակում է ծագում՝ կարծում ենք այն վանքի անունից, ուր նա սկսել է կրօնաւորի իր գործունէութիւնը: Այդ ժամանակների ու միջավայրի այդպիսի անունով եւ աշխոյժ գործունէութիւն ունեցող վանքը, մեր կարծիքով, Լեռնային Կիլիկիայում, Վահկայ բերդից հիւսիս-արեւելք գտնուող Հաճըն (Հաջըն) բնակավայրի «արեւմտեան կողմը, Համանուն լերան ստորոտը... հաստ ու ամուր պարիսպներով շրջա-

1250 թ.), Անթիլիաս, 1951, սիւն 1228 (այսուհետեւ շարադրանքի մէջ՝ «Յիշ-ք» համառօտմամբ):

[44] Թուղթ առ քրիստոսասէր իշխողն մեր ինքնակալութեամբ Լեւոն, ի Ռուսաստ Ներսիսէ /Լամբրոնացւոյ/. որ ի Տարսոն սրբոյ եկեղեցւոյ պաշտօնեայ.- Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ ժամանակի. Տեառն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք. ի Վենետիկ. ի Ս. Ղազար. 1865, էջ 329 (ամբողջ ժամանակը՝ էջ 207-48. այսուհետեւ՝ Թուղթ առ Լեւոն):

[45] Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց. Ցորինեալ եւ հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան... Վենետիկ. ի վանս Ս. Ղազարու, ՌՅԾԱ - 1901, հ. Բ., էջ 430՝ յօդ. 311, ծ. 2 (այսուհետեւ՝ Հյպտմ. Բ.). անշուշտ, միայն տեղեկութիւնների պակասի պատճառով՝ Ալիշանը չգիտէր, որ Լամբրոնացին Ստեփանոսին ծանօթ էր դեռեւս իր քահանայացման 1168 թուականից եւ դեռեւս Հռոմկլայից: Գ. Յովսէփեանը (Յիշ-ք, 577ծ.) ծանօթ էր Ալիշանի այս կասկածին, այդուհանդերձ, որեւէ վերաբերմունք չի արտայայտել:

[46] Մկրտիչ վ. Աւգերեան, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց..., հ. Ե., Վենետիկ, 1813, էջ 346-7. Լամբրոնացու յիշատակի օրը՝ «Օգոստ. 9 կամ Փետր. 19 եւ կամ Յուլիսի 17», նրա վարքի իր աղբիւրները՝ «Սամուէլ Անեցու ժամանակակից, Գրիգոր Սկեւռացի եւ այլք»: Աւգերեանից բերուած քաղուածքը գրեթէ բառացի տե՛ս նաեւ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Վենետիկ, 1786, էջ 90-1:

տուած» Ս. Յակոբ վանքն էր, որ հիմնուել է ԺԱ. դարում եւ գործել մինչեւ 1915 թ.[47]: գուցէ զուտ տրամաբանութեան վրայ հիմնուած ենթադրութիւն է, բայց նաեւ հնարա- ամենահաւանականն է: «Սարկաւագ» նշանակում է ընդհանրապէս «սպասաւոր եկե- ցւոյ, որ անընդմիջապէս սպաս տանի քահանայի կամ եպիսկոպոսի, մանաւանդ ի սուրբ տարագին» (ՆՀԲ, Բ., 700գ), ուստի Ստեփանոսի «ԴՐԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ» պաշտօնը, որն ենալով հանդերձ, նա «վարդապետ», «աստուածաբանական վարդապետ» կամ «ար- ական վարդապետ» էր, կարող է նշանակել՝ կաթողիկոսարանի ծիսա-պաշտամունքա- ն բոլոր խնդիրների պատասխանատու (երեւի սարկաւագութիւն էր անում նաեւ կաթո- կոսի մատուցած պատարագների ժամանակ):

Միաժամանակ, քանի որ այսօր իսկ որեւէ եկեղեցու քահանայի սպասաւորող սարկա- գին խօսակցական լեզուում գրեթէ միշտ կոչում են «տիրացու» («սարկաւագ» խիստ ղուագէպ), ապա՝ գրաւոր խօսքում «դրան սարկաւագ» կոչուած Ստեփանոս վարդապե- ն կաթողիկոսարանի առօրեայում ամենայն հաւանականութեամբ անուանել են «Տիրա- Ստեփանոս վարդապետ», եւ այս «Տիրացու» մականուն-պատուանունը գործածուել է եւ նրա եպիսկոպոսացումից յետոյ, որովհետեւ նա ոչ թէ սովորական, այլ՝ կենդանու- ան օրօք իսկ սրբագործուած Շնորհալի կաթողիկոսի «ՏԻՐԱՑՈՒՆ»[48] էր: Ըստ այսմ ալ է Յակոփբեցուն Աճառեանի տուած բնորոշումը՝ «տիրացու եւ ապա վարդապետ» ՆձԲռ, Դ. 617), որովհետեւ նա վարդապետ եւ Տիրացու է եղել միաժամանակ:

Այժմ կարգով ներկայացնենք եւ մեկնաբանենք յայտնի բոլոր հաղորդումները, որոնք եւ որոշ չափով պատկերում են ժամանակի այս նշանաւոր գործիչի կեանքի րծունէութեան դրուագները: Հետագայ անհարկի կրկնութիւններից խուսափելու հա- ր նախ թուարկենք Լամբրոնացու կեանքի սկզբնական շրջանի հիմնական թուականնե- . 16ամեայ՝ 1168ին Հռոմկլայում քահանայացել է, որոշ ժամանակ մնացել այնտեղ, ա- ՝ գնացել Սեւ լեռան վանքերը, այնտեղից 1172ին վերադարձել Լամբրոն, Շնորհալու հից (1173 թ. Օգոստոս) եւ Գրիգոր Տղայի օծումից (Սեպտեմբեր) յետոյ, «հաւանօրէն 74ի սկիզբները» գնացել է Հռոմկլայ, ուր «գիտուն վարդապետներու... քով... քննել ղեկացաւ Հին եւ Նոր կտակարանաց իմաստից», 1175ին յիշատակուել է «տիեզերական րդապետ» բնորոշումով, նոյն ժամանակ եպիսկոպոս է օծուել «իբրեւ արքեպիսկոպոս րսոնի թեմի» (Ակին. 11-22): Իրօք, 1175ին Լամբրոնացին գրել է, որ Կիւրեղ Աղեք- նդրացու Պարապմանց գիրքն ինքը կարդացել է՝ երբ «ի վարժումն իմաստից» էր (Յիշ- 459), այսինքն՝ այդ ժամանակ նրա ուսումնառութիւնն աւարտուած էր, իսկ 1176ին ղջն էր «վարժել եւ յորդունս հասել» (Յիշ-ք, 406):

Յովհաննու Հանգստի վերն ակնարկուած մեկնութեան սկսուածքը հետեւեալն է. «Գիր յոյ պատուականութեանդ միանգամ եւ երկիցս, հա՛յր սուրբ, եհաս առ իս՝ փութացու-

[47] Մանրամասները տե՛ս Կիլիկիայի վանքերը, Գրեց Դկտր. Հ. Հ. Ոսկեան՝ Մխիթ. ուխտէն, Վիեննա. 1957, 260-1: Համտ. ՏԲ, Գ. էջ 314:

[48] Յիշենք նաեւ, որ «տիրացու» հասարակ բառը, ինչպէս եւ «վանական»-ը, «իշխան»-ը եւ այլն, այդ եւ հետա- դարերում գործածւում էր որպէս յատուկ՝ անձնանուն, առանց եւս՝ վերջին դարերում ստացած ծաղրա-հեգ- ական իմաստը չունէր:

ցանող առ ի խնդիր քննութեան...» (Ակին. 155)[49], ապա՝ «Որ ամենայնիւ ես ճշմարտա... ես իմաստասէր, մինչ զի ոչ քոյովդ բաւականացեալ, այլ եւ զմեզ ձգեցեր հաւան... թեամբս ի յանդգութիւն, ո՛վ Հայր պատուական Ստեփաննոս, զորոյ ի գլուխ ած շնոր... Աստուծոյ՝ գխնդրելիս, ի ձեռն տառապեալս գործարանի, ի փառս իւր եւ ի վայելս քու... հաւատոց եւ ճշմարիտ առ աստուածարանս սիրոյ... փութացեալ միայն հնազանդութեամ... որդիականս հպատակութեամբ՝ պատճառ նիւթեալ իմաստնոյդ՝ առ եւ սորին իմաստ... թիւն բարձրանալ»:

Ալիշանը կարծում է, որ սա «հարկ է մի յառաջին երկանց վաղահաս մտացն լինել, զ... յոկ Ներսէս կոչէ զինքն եւ գորովանօք բարբառի առ դաստիարակն եւ բազում պատու... որ եւ թուի գոլ մի ի նշանաւոր վարդապետաց ժամանակին վանահարց» (Սիսուան. Տ... Ըստ այսմ, թէեւ Գ. Յովսէփեանը բնագրային-յիշատակարանման այս հատուածը դրել... Յովհաննու Յայտնութեան թարգմանութեան 1179 թ. յիշատակարանից յետոյ (Յիշ-ք... 481-2), բայց Հանգստի Լամբրոնացու մեկնութեան գրուելու ժամանակը պէտք է մօտ լին... նրա ուսումնառութեան վերջերին՝ 1172ին:

Գրիգոր եպիսկոպոս (ապագայ կաթողիկոս) Ապիրատն իր հօրեղբայր Ներսէս Շնորհ... լուց նուէր է ստացել Սեբաստիայում 1066 թ. գրուած մի Աւետարան, որ «Ես՝ տէր Գրի... րիս, ծառա ծառայից Քրիստոսի, եղբաւրորդի տեառն Ներսիսի կաթողիկոսի հայոց եւ որդ... Զաւրավարի, եստ[ւ] վերըստին նոր[50]/ոգել արտաքուստ կուսէ զաստուածային Աւետարա... գեղեցիկ մետաքսէիւք եւ ակամ[բ]ք պատուականաւք. ընդելուզեալ ի մարգարտոյ մեծ... գնոյ, ի ձեռն աստուածաբանական վարդապետի Ստեփաննոսի՝ դրան սարկաւ... տեառն իմում, որ եւ վասն անմոլար ճանաչելոյ կոչի սա Յակոբցի[51], ի յիշատակ ինձ ... ծնողաց իմոց, նախ եւ առաջին հոգեւոր տեառն իմոյ Ներսէսի կաթուղիկոսի, որ եւ զսո... իսկ զԱւետարանս շնորհեաց ինձ ի զբաւսանս եւ ի խրախճանութիւնս հոգեւոր, այս... զուարճանալ եւ մի՛ պատրանաւք անցաւոր կենցաղոյս» (Յիշ-ք, 575-6)[52]:

Թէեւ յիշատակարանն անթուական է, սակայն ակնյայտ է, որ Ապիրատն Աւետարա... ստացել է Շնորհալու կաթողիկոսութեան տարիներին, 1166-73 թթ. ընթացքում «երբ Ն... կաթողիկոս էր, աւելի հաւանական վերջին տարիներին» (Յիշ-ք 576), կազմը Ստեփան...

---

[49] Հմմտ. Նոր Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Ը. Պատմագիրք Հայոց - Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի - Աղօթագիրք. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 930, 998, 10... Նոյն կազմողի՝ հտ. Զ. (Պատմագիրք Հայոց - Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի - Աղօթագիրք, Վենետիկ, 1996) պատկերուած շարադրանքի մէջ եւ փակագծեալ յղելու ենք «Վ... Զ» ձեւով. յիշատակելու ենք նաեւ հտ. Է. (Տօնապատճառ - Ժողովածոյ, Մատենագիրք Հայոց. Վենետիկ, 199...

[50] Մինչեւ այստեղ ուղղագիծ երկաթագիր, շարունակութիւնը՝ բոլորգիր:

[51] Այսպէս կաթողիկոսն ըստ երեւոյթին այլաբանել է. «Յակոբցի» է, որովհետեւ, Յակոբ անունով առ... քեալների նման, Քրիստոսի հաւատի եւ ուսմունքի մէջ անմոլար-անշեղ է:

[52] ՄՄ ձեռ. Հ* 311, 217բ. ձեռագրիս բոլոր յիշատակարանները, մանրամասն ծանօթութիւններով, տե՛ս Յիշ-ք, 247-50, 411-2, 575-80, 581-6. Դրանց քննութիւնը տե՛ս Գարեգին Յովսէփեան, Նախնեաց յիշատակներ. Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, հտ. Ա., Երեւան, 1983, էջ 64-81. Հմմտ. Հ. Ն. Ակինեան, Սկեւռայի Աւետարանը 1197 թուականէն Լվովի հայ արքեպիսկոպոսարանի գրադարանին մէ... Վիեննա, 1930, էջ 22:

*...որեցու ձեռքով զարդարել է տուել դրանից յետոյ եւ 1194 թ. առաջ՝ երբ այն նուիրել ...մբրոնի եւ Պապեռոնի տէր Բակուրան իշխանին (Ցիշ-ք, 581-6). Ցովսէփեանը յիշա-...արանը գրել է 1193 թ. Ներքոյ, բայց գրեթէ վստահ ենք, որ նորոգում-վերակազմումը ...եղել է Շնորհալու կաթողիկոսութեան տարիներին. ըստ շարադրանքի՝ Ստեփանոսը ...ան սարկաւագ» է, ոչ թէ «էր», ինչպէս կայ յաջորդ յիշատակութեան մէջ:*

*...րիգոր գրիչը 1173 թ.՝ Շնորհալու օրօք սկսելով եւ Նրա մահից (Օգոստոս) յետոյ ա-...տելով, նոյն Շնորհալու սպասաւոր Կոստանդին քահանայի համար Սկեւռայում գրել ... Աւետարան, ուր խնդրել է յիշել. «զայնոսիկ, որք աւժանդակ եղեն գրչիս ի գրութիւն ...ս, մանաւանդ զարդիւնական վարդապետն զՍտեփաննոս, որ դրան սարկաւագն էր ...սիսի հայրապետին» (Ցիշ-ք, 446)[53]: Նկատենք՝ այս ժամանակ Լամբրոնացին եւս ...ռայում էր, ուր նո՞յն Գրիգոր Մլիճեցի՞ն Նրա համար գրել եւ ծաղկել է ՄՄ Հ^{4r} 1568 ...րայայտ Նարեկը:*

*Գ. Ցովսէփեանը կարծում է, որ այս Ստեփանոսը «ամենայն հաւանականութեամբ... ... է Ներսէս Շնորհալու կողմից՝ իր կեանքի վերջին տարիներին՝ միութեան խնդրի առ-...դէպի Արեւելք ուղարկուած Ստեփանոս վարդապետի հետ» (Ցիշ-ք, 577)[54]: Այս են-...րութեանն աւելացնենք նաեւ մերը. շատ հաւանական է, որ այս նոյն Ստեփանոսի ...ուէրով գրուած լինի Շնորհալու հետեւեալ գործը. «Մեկնութիւն Դաւթի Փիլիսոփա-...ր ի կատարումն Նորին տառի, որ վասն փորձանաց իմաստութեան, ասացեալ տեառն ...սիսի Հայոց կաթողիկոսի, ի խնդրոյ ումեմն Ստեփաննոսի սիրողի իմաստութեան»[55]: ...երկայացուած բոլոր հաղորդումներից իմանում ենք, որ Ստեփանոս Տիրացուն ...մկլայում գործել է Շնորհալու կաթողիկոսութեան տարիներին, որի վերջին՝ 1173 ...ականին եղել է նաեւ Սկեւռայում. այս նոյն տարում նա յիշատակւում է որպէս «վար-...պետ», բայց չի բացառւում, որ դրանով չեշտւում է Նրա «դիտնական-վարդապետ» լի-..., այսինքն՝ մինչ այդ կարող էր դեռեւս Շնորհալու ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուած ... որից յետոյ միայն հնարաւոր էին մեր դիմանկարի վրայ առկայ մակագրութիւննե-... Մեր պատառիկի մայր ձեռագրի անթուական յիշատակարանն այս ամէնին աւելաց-...է, որ նոյն տարիներին Նա եղել է Սեւ լեռների Բարսղի անապատում, ուր Նրա ա-...նորդ եղած լինելը կարելի է համարել հաւանական ենթադրութիւն եւ աւելացնել յա-... հաւանական վարկածը. կաթողիկոսարանի «դրան սարկաւագ» է եղել Շնորհալու ...ողիկոսութեան ո՛չ ամբողջ ընթացքում, հանրայայտ գիտնականի եւ իմաստասէրի իր ...րաւով 1168ի շուրջ երեւի արդէն Բարսղի անապատի վանահայր էր, ուստի եւ Շնոր-...ն Լամբրոնացուն Հռոմկլայից այնտեղ է ուղարկել՝ հէնց Ստեփանոս Տիրացուից ու-... առնելու համար:*

[53] Հմմտ. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Ե-ԺԲ. դդ., Աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսեանի, ...ան, 1988, էջ 213, Հ^{*} 231 (այսուհետեւ՝ Ե-ԺԲ. դդ.). ձեռագիրը եղել է Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղե-... յիշատակարանը գրատեղ է՝ Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ. Գրեց Գարեգին վ. Սրուանձտեանց, ...ան Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 442-4:

[54] Այս դեսպանագնացութեան մասին տե՛ս Ազգապատում, Ա, § 985՝ էջ 1679, § 996՝ էջ 1697, § 997՝ էջ 1698:

[55] Վենետիկի Մխիթարեանց ձեռ. Հ^{*} 728/1299 (ԺԸ. դ.), 75բ-84բ. տե՛ս Վենետիկ, Է., էջ 507-8:

* * *

Այդուհետեւ ուղիղ քառորդ դար Ստեփանոս Տիրացուի մասին որեւէ աղբիւրում յիշատակութիւն չկայ. Նրա մասին վերստին, այս անգամ բաւական մանրամասն պատմում է 1198 թ. գրուած մի ձեռագրի՝ ժամանակ անց գրուած ընդարձակ յիշատակարանը. Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հրաւէրով Վասպուրականից Հռոմկլայ գնացած «Տիրացու Ստեփանոս անունով ծերունի քահանայ»ի պատուէրով իր հետ նոյն Հռոմկլայ գնացած «Յակոբ անունով ճարտար ընդօրինակողը» գրել է Կաթողիկեայ Թղթերի Ներսէս Շնորհալու մեկնութեան մի օրինակ, որ «կը գտնուի Մխիթարեանց մատենադարանն ի Վենետիկ»[56]:

Նախ նկատենք, որ ըստ նորագոյն մի հրատարակութեան[57] Ներսէս Շնորհալին Կաթողիկեայ Թղթերի մեկնութիւն չի հեղինակել, սակայն Մխիթարեանց Վենետիկի մատենադարանում կայ Նրա այդ երկի վեց ամբողջական եւ մէկ մասնական, ընդհանուր հաշուով եօթ օրինակ - ա. Հձր 1462/1063, 1198 թ., բ. Հձր 656/1065, 1291-1302 թթ. գ. Հձր 951/1069, 1335 թ., դ. Հձր 1381/1087, ԺԶ. դ., ե. Հձր 1202/1343, 1312 թ., զ. Հձր 401/1348, 1720 թ., է. Հձր 1098/1214, ԺԴ. դ. (մասն)[58]. ապա՝ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի մէջ թուցիկ փնտրտուքով պարզել ենք եւս երկուսը[59]:

Տիրացու Ստեփանոս եպիսկոպոսի համար Յակոբի գրածը վերի թուարկման առաջին պահպանուած հնագոյն ձեռագիրն է՝ Հձր 1462/1063, ուստի Նրա նորատիպ նկարագրութիւնից (Վնտկ Զ., 607-14) քաղում ենք մեր խնդրի համար կարեւոր տեղեկութիւնները, ըստ հարկի բերելով նաեւ յիշատակարանների նախորդ հրատարակութիւնների[60] ծանօթութիւնները, իսկ քաղումներից յետոյ աշխատելու ենք պարզաբանել Նրանց առթած խնդիրները եւ հարցերը: Ձեռագրի արտաքին յատկանիշներն առաջնային կարեւորութիւն ունեն: Մխիթարեան միաբանութիւնն այն «1791էն առաջ ընդունած» է «Տիարպէքիրէն». ունի 25x17,5 չափսի դեղնաւուն, հաստ եւ ամուր թղթի 276 թերթ, 30 պրակ՝ 10ական թերթով (վերջինը՝ 7)[61], գրադաշտը 19x12,5 չափսի, երկսիւն, էջում 23 տող, գիրը՝ «բոլորգիր ընտիր եւ մեծ, նման երկաթագրի. շատ անգամ գիրը կը փոխուի, որովհետեւ այլեւայլ

---

[56] [Հ. Գարեգին վ. Զարբհանալեան], Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ. դար), Բարձրագոյն դպրոցաց համար... Վենետիկ, 1932, էջ 634:

[57] Ս. Գրքի հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, Պատրաստեցին՝ Եզնիկ եպս. Պետրոսեան, Արմէն Տէր-Ստեփանեան, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, [Երեւան], 2002:

[58] Տե՛ս Վնտկ, Զ. 607-14, 619-20, 639-41, 725-6. Վնտկ, Է. 628-30, 661-2, 91 (ձեռագրերի կրկնակի համարներից առաջինները ցուցահամարներն են, երկրորդները՝ ցուցակինը). գործի խորագիրը եւ սկզբնատողը (ըստ Հձր 656/1065ի)՝ «Հաւաքումն մեկնութեան եօթանեցունց թղթոցն կաթուղիկէից. Նախադրութիւն թղթոյն Յակովբայ - Արդարն Յակոբ էր ըստ մարմնոյ եղբայր Տեառն մերոյ...», անշփոթելի են նոյն թղթերի՝ Սարգիս Շնորհալու մեկնութեան հետ. համեմ. Ս. Գրքի հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, էջ 103:

[59] Տե՛ս ՄՄ ձեռ. Հձր 1407 (1596 թ.), 1ա-236ա, Հձր 1373 (ԺԷ դ.), 1ե-236ա:

[60] «Ստեփանոս Տիրացու եպիսկոպոս Վանայ Ս. Խաչին» խորագրով յիշատակարանն առաջին անգամ հրատարակել է Ղ. վ. Ալիշանը՝ Հյպտմ, Բ., 441-3՝ յօդ. 311. այստեղից այն արտատպել են՝ Յիշ-ք. սիւն 609-14, Հձր 277 եւ Ե-ԺԲ դդ., էջ 293-5, Հձր 294 (վրիպմամբ՝ Մեկնութեան հեղինակ է կոչում Սարգիս Շնորհալուն):

[61] Պրակահաշիւը թերի կամ սխալ է. ըստ արձանագրուածի՝ ձեռագիրը պէտք է ունենար 29x10+7=297 թերթ. ուրեմն՝ կամ նրանից պակասում է 297 - 276՝ 21 թերթ, կամ պրակների թերթաքանակն անկանոն է:

*գրիչներ կ՚օգնեն գլխաւոր Թակոբ գրչին»:*

*Ունի հին նորոգում, կորսուած առաջին թերթի փոխարէն գրուել է նորը, ձեռագիրը չենք տեսել եւ չգիտենք՝ կազմն սկզբնակա՞նն է, թէ՞ հետագայի: Սկզբնատառերը եւ սկզբնատողերը սեւ (ո՛չ կարմիր) թանաքով են (հնութեան նշանակ). Շնորհալու մեկնութիւնից բացի ունի նաեւ Ս. Սարգսի Պատմութիւնը, որից առաջ՝ 254ա ունի «խաչ մը, 16x13,6 մեծութեամբ, հիւսած կանաչ եւ մանիշակագոյն ոլորուն երիզով, գրուած նոյն ոճով հիւսուած վեց աստիճանով պատուանդանի վրայ, խաչին վերեւ կայ կիսախորանի ոճով զարդ մը: Ստորեւ գրուած է «ԶՍտեփանոս վարանեալս խորհ/// յիշողն յիշեալ///»: Նախնական եւ եզական ոճով գծագրութիւն մըն է» (Վնտկ Զ., 607):*

*Գրչութեան ընթացքում Թակոբ գրիչը գրել է չորս յիշատակագրութիւն. Թակոբ Տեառնեղբօր թղթի մեկնութեան վերջում (45ա) Քրիստոսին խնդրում է՝ «զարդարեա՛ ի շուք շնորհի անմարմնոցն՝ տեսաւորեալ զսուրբ հայրս մեր զՏէր Ստեփաննոս» (Վնտկ Զ., 613), Պետրոսի երկրորդ թղթի վերջում (123ա) խնդրում է յիշել «զմեծ գիտնական եւ զվսեմափայլ առաջնորդ» Գրիգոր Ապիրատ կաթողիկոսին, «յորոյ աւրինակէ*[62] *գրեցաւ գիրքս այս». իսկ այս «հոգեշահ առաքելական» մատեանի ցանկացողն է «Տէր Ստեփանոս արդիւնաւոր գիտնական, որ եւ Տիրացու յորջորջի, եւ ետ գրել ըստ հոգւոյ որդեկի իւրոյ Թակովբա, ի վայելումն անձին եւ ի յիշատակ հոգւոյն...» (Վնտկ Զ., 612):*

*272ա էջից սկսուող գլխաւոր յիշատակարանի սկզբում Թակոբը նախ ըստ կարգի Սուրբ Երրորդութեանը փառաբանում է իրեն «մինչեւ ի վերջին գիծս» հասնելու արժանացնելու համար՝ «թէպէտ եւ այլ ձեռամբ գրեալ յայլոց, որ երեւիդ ի սմա, այլ եւ զայն պատճառն ցուցից ձերում կատարեալ իմաստից ընթերցողացդ». եւ փոքր անց բացատրում է՝ «Եւ ի շարագրելն իմում անդ՝ զային առ իս այլ ոմանք եւ հոգաբարձու եղեալ առ իս՝ աւգնել կամեցեալ, գրէին եւ նոքա, որպէս եւ երեւիդ» (Վնտկ Զ., 609-10): Մի յիշատակագրութեան մէջ էլ խնդրում է յիշել «Մխիթարայ սիրելի եւ հոգեւոր եղբաւր մերոյ... որ առիթ եղեւ մելանիս, զի այժմ է ըստ կամաց իմո[ց]» (28ա՝ Վնտկ Զ., 614. իրեն օգնական էր տուել, եւ պատրաստել է թանաքը):*

*Այս հաղորդումները պարզում են խմբովին կամ տարբեր մարդկանց համագործակցութեամբ ձեռագիր պատրաստելու ո՛չ եզակի, բայց հին եւ շատ ուշագրաւ փաստ-եղանակներ. եւ քանի որ խնդիրը վերաբերում է Հռոմկլայի՝ կաթողիկոսարանի գրչութեան արհեստանոցին, ապա պէտք է միայն ափսոսալ, որ նկարագրութեան մէջ մանրամասնուած չէ՝ քանի՛ այլ ձեռքի գիր կայ ձեռագրի մէջ, ամբողջական պրակնե՞ր են գրուած այլոց ձեռքով, թէ՞ միայն էջեր*[63]*:*

*Իր պատուիրատուին բնորոշում է՝ «զպարծանս բնաւին մանկանց նոր Սիովնի եւ զծա-*

*[62] Անհաւանական չէ, որ սա եթէ գործի հեղինակ Ներսէս Շնորհալու ինքնագիր չէր, ապա գոնէ գրուել էր նրա հսկողութիւն-սրբագրութեամբ, որ նշանակում է՝ վենետիկեան այս «Շնորհալի Ա» ձեռագիրը եթէ պակասաւոր չէ, ապա բնագրի ապագայ հրատարակութիւնը կարող է հիմնուել միայն սրա վրայ:*

*[63] Առաջին դէպքում ենթադրելի էր լինելու, որ գաղափար օրինակը կազմուած չէր, եւ տարբեր գրիչներ օրինակում էին առանձին պրակներ (գրչութեան մեծ կենտրոններում կիրառուող եղանակ, որով միանգամից կարող էին գրել անհրաժեշտ քանակի մի քանի օրինակ), երկրորդ դէպքում պէտք է մտածել, որ օգնողները գրել են հիմնական գրչի հանգիստ-դադարների ընթացքում:*

ղիկ եկեղեցւոյ, եւ զպսակ ամենայն գիտնական եւ վարժ վարդապետաց՝ զերեքերան-
նեանն զՏէր Ստեփանոս, մականուն Տիրացու», որը «մեծաւ թախանձանաւք եւ գովասա-
նական նամակաւ» Գրիգոր կաթողիկոսի կողմից «կոչեցեալ լինէր ի Կլայն, զոր Հոռոմ կո-
չեն», իսկ նա «Հնազանդեալ Հոգեւոր Հրամանացն, ոչ դարձեալ ընդդէմ կամ պատճառեալ
զծերութիւն կամ զինչ եւ իցէ, այլ որպէս վայել էր ի-րո-մ ջուարթ եւ զուարճածաղիկ ա-
լեուցն, խլու[64] եւ Հպատակ եղեւ վեհին եւ սիրալիր կոչողին, յուղի անկեալ պատրաստե-
ցաւ առաջիկա ճանապարհին, ընդ իւր տարեալ եւ զիս, եւ բազում աւթեւանաւք զանց ա-
րարեալ, Հասաք ի բաղձալին, եւ ի տեսանելն զիրեարս՝ մոռացաք զաշխատութիւն»
(Վնտկ Զ., 610), Ստեփանոս Տիրացուն «ի լինելն» այնտեղ «ետես զգիրքս զայս եւ փա-
փաքեաց, որպէս ընդդէմ ծաղկանցն՝ գործողն քաղցր եւ ախորժ ճաշակացն, սապէս եւ
Հայրս իմ ըստ Հոգւոյ Հրամայեաց շարա[յ]արել ի քարտիզի զաւխիլ մաքրեցելոյն ի կրա-
կան ախտից՝ որ ի մեզ. եւ զԿաթողիկէիցն թուղթ, զոր բացայայտեալ էր իմաստուն եւ
Հանճարեղս (բառ մը ջնջուած)[65] եւ զՊատմութիւն սրբոյ վկային Քրիստոսի Սարգսի զաւ-
րավարի»:

Ընդունուած եւ բնական է, որ գրիչը պատուիրատուին, այս դէպքում նաեւ աշա-
կերտն ուսուցչին («Հայրս իմ ըստ Հոգւոյ») եւ փոքրաւորն իր մեծաւոր-եպիսկոպոսին
(«իմում տեառնս»), պէտք է որակէր գովաբանական ածականներով, սակայն Յակոբի գոր-
ծածած որակումները սովորականից վեր են եւ չափազանց Հիացական ու մեծարող. Նկա-
տի ունենալով քաղմանս՝ Ստեփանոսի անուանը նախորդող մասը, նաեւ վկայակոչելով Գ.
Զարբհանալեանին՝ «գովութեամբ կը յիշէ զսա նաեւ Ներսէս Լամբրոնացին, բայց յանուա-
նէ գրաւոր գործ մը չի յիշուիր Ստեփանոսի»[66], ամենահաւանականը համարում ենք այն,
որ Ստեփանոսը եղել է բնատուր տաղանդով օժտուած եւ արգիւնաշատ ուսուցիչ-մանկա-
վարժ:

Ապա՝ «Եւ զկնի աւուրց այլ ճանապարհ առաջի եղաւ իմում տեառնս եւ կաթողիկոսին
Հայոց. զի կոչեցեալ եղեն[67] ի Լեւովնէ, որ յայժմ զվաղընջուցն ի մերմէ ազգէս եւ զընկե-
ցեալն յերեսաց տեսողէն զթագաւորականն, զոր ունէին Հայք, սա միայն ստացաւ զաւ-
գոստոսական եւ զծիրանափայլ պատմուճանն եւ ընկալաւ աւծումն, որպէս զմեծն Տրդատ,
կամակցութեամբ արիական ազգին յունաց[68], բերեալ նմա նշան զխաչանիշ թագն»: Ա-

---

[64] Հյպտմ Բ. 441. ձ. 5՝ «Այսպէս գրուած էր՝ վանցի արտասանութեամբ, փոխանակ ձլու գրելոյ:

[65] Հյպտմ Բ. 441. ձ. 6՝ «Պակասի անունն, որ է Ս. Ներսէս Շնորհալի, որոյ ինքն է եւ յիշեալ Ս. Սարգսի պատմութեան հեղինակն»:

[66] Հ. Գ. վ. Զարբհանալեան, Նշ. աշխ., էջ 702:

[67] Հյպտմ. Բ. 442. ձ. 1՝ «Ի Հռոմկլայէ կոչուեցան յարքունիս Լեւոնի Ա.». Հմմտ.՝ Սիսուան, էջ 471. թագաւորութեան հանդէսին՝ «չիք երկբայել, զի զոյին եւ բազում այլ եպիսկոպոսք՝ ի մարզից Հայոց Մեծաց՝ հրաւիրեալք. թէ եւ ոչ էր մարթ ամենայն եպիսկոպոսաց համահաւաքել, ըստ Կիրակոսի. որպիսիք են, յիշեալն ի սմանէ Անանիա եպիսկոպոս Սեբաստիոյ, եւ յայլմէ յիշատակագրէ՝ Ստեփանոս՝ Տիրացու մականուանեալն՝ արքեպիսկոպոս Վանստայայ... Ցայտ է թէ ընդ սոսին՝ առնոյր տանէր ընդ իւր կաթողիկոսն՝ եւ զեպիսկոպոսունս հայրապետարանցի տանն իւրոյ, եւ զառաջ երիցունսն եւ զպաշտօնեայս՝ զուգակցել ընդ համօրէն ուխտի եկեղեցեացն Սիսուանայ, շքազանագոյն իմն եւ մեծագոյն քան զյոգունս յաշխարհախումբ ժողովոցն Հայոց՝ կազմելով յայսմ հանդիսական աւուր, յետ բազում եւ երկար աւուրց եւ ամաց դադարման այսգունակ հանդիսափայլութեանց»:

[68] Հյպտմ. Բ. 442. ձ. 2՝ «Սխալմամբ գրուած է, փոխանակ Ֆռանգաց»:

*պագայ Թագաւորը կաթողիկոսին «պատուասիրաբար» կանչել էր, որպէսզի «աւծցէ զնա րբարար եւ մաքրագործակ մեռոնաւն եւ պսակեսցէ զգլուխն խաչանշան գրոշմաւ»:*

*Այնուհետև շարունակում է «Եւ Հոգեւոր տէրն ընդ իւր տարեալ զիմ տէրն՝ յաղագս ենհաս գիտութեանն եւ կատարեալ իմաստութեանն եւ անարատ մաքրութեանն եւ Հեզա-ղաւոր եւ բարի անուանն, որ ի տղայական տիոցն մինչեւ ի կատարեալ ծերութիւն առ քուրս իմաստութեան դեգերեալ... որպէս արդիւնական վարդապետս եւ տէրս իմ՛ որպէս արեգակն փայլեալ ի մէջ իւրոցն նմանեացն, զի զոր աւրինակ յաստեղս զարեգակն, որ-պէս եւ ի բնաւ իմաստունս երեւեալ, զի այս զգալի արեգակնս զտեսանելի աշխարհս լու-սաւորէ, իսկ սա՝ զհոգի եւ զմարմին առհասարակ ճառագայթաձեւ յաւրինէ: Այս արե-գակն զբոյս եւ զտունկ առոգացուցանէ, իսկ սա՝ զմտաւոր եւ զիշխանականն առ երկ-նիւքն բարձրացուցանէ: Այս արեգակն զժախահոտ[69] եւ զխոնաւուտ վայրս սարսատեալ ցամաքեցուցանէ, իսկ սա՝ զնեխութիւն եւ զաղտեղութիւն Հոգւոց եւ մարմնոց Հրացայթ եւ լուսատեսակ գործէ... սա՝ զմոլորեալս յուղիղ եւ բարի ճանապարհէն անվեհեր եւ ան-մոլար առ երկնա[յ]ին եւ խաղաղ նաւահանգիստն Քրիստոս Հասուցանէ, զոր մաղթեմք... պարամնաբար մնալ մինչեւ ի խոր եւ խորին ծերութիւն, եւ յետ աստեացս յաթոռս առա-քելոցն եւ ի տաղաւարս մարգարէիցն...» (Վնտկ Չ., 611):*

*Ապա խնդրում է. «Եւ զիս՝ զտառապեալ Յակովբ՝ զսակաւ աշխատողս, եւ զամենաբա-րի զհարազատն իմ զԹովաննէս, զընտիրն ի բեմբականս եւ զանյաղթ յերաժշտականս եւ զանձանձրոյթն ի գրչութեանն Հոնջ (իմա՛ խոնջ՝ Գ. Տ-Վ.) եւ զգովելին յամենայն բարե-ձեւութիւն, եւ զԳիորգ եւ զծնողսն իմ բարի մասին արժանի արարէ՛ք յիշմամբ... ընդ նմին եւ զամենընջանիկ կրաւնաւոր եւ զբարի Հոգի զհայր Յակոբ, որ Հայր է վանից եւ զհաւատարիմ եղբարս՝ զԴաւիթ եւ զՍարգիս Հանդերձ [այլովք] յիշեսջիք ի Քրիստոս զկազմող գր[ոցս]»[70]:*

*«Եւ գրեցաւ ի ՈԽԷ (1198) լուսերանգ եւ Հրաշապատում ճառս առաքելագիծ մատենիս՝ բազմազան բարութեամբ եւ իմաստութեամբ լցեալ, զոր Տէրն մեր եւ Աստուած վայելել տացէ Տէր Ստեփանոսի, մականուն՝ Տիրացու, բազում ամաւք, խաղաղական կենաւք եւ առողջ մնալ Հոգւով եւ մարմնով, եւ իւր ժառանգին՝ Տէր Սարգսին նորընծայ եպիսկոպո-սի՝ բարի եւ իմաստուն պատանեկի, զոր ընտրեաց եւ կացոյց[71] իւր փոխան եւ տեսուչ ա-նապատի Սուրբ Խաչի ստացուածոց եւ ամենայն գոյից բա[զում] եւ պէսպէս պնդու-թեամբ, կտակաւ եւ գրով, կամակցութեամբ եւ յաւժարութեամբ եպիսկոպոսաց եւ վարդա-պետաց եւ Համաւրէն քահանայից եւ ///անց, այլ եւ դասաւորաց եւ իշխանաց Շամիրա-մաշէն[72] /// քաղաքի եւ այլ գեաւղից եւ ///այ...» (Վնտկ Չ., 612):*

---

*69 Հմմտ. Բ. 442. ծ. 3՝ «Այս տեղ այլ խ փոխանակ ժահահոտ գրելու»:*

*70 Վնտկ Չ., 611՝ կարդացել է. «զամէնընջանիկ կր/աւնաւ/որ եւ զբարի հոգի զհայր Յակ/ովբն Այրիվա-նից եւ զհաւատարիմ եղբա/յրն/ զԴաւիթ եւ զՍարգիս հանդերձ [...] յիշեսջիք ի Քրիստոս զկազմող Գր/իգոր/»: Իրական կազմողը երևի Սարգիսն է. այլև՝ ակնհայտ է, որ ձեռագիրը կազմուել է Ս. Խաչում, ո՛չ Հռոմկլայում:*

*71 Հմմտ. Բ. 442՝ կարդացել է «կառոյց» եւ ծ. 5՝ «Հասանօրէն կացոյց պիտի ըլլար»:*

*72 Հմմտ. Բ. 442, ծ. 5՝ «Որ է Վան քաղաքն»:*

Ձեռագրի վերջին՝ 276բ էջին ունի հետեւեալը. «Եւ ընդ աւանդել հոգւոյն տէր եղեւ[73], ա՛յ, վա՛յ հազար բերանով գլխտ մնացեալս, որ զրկեցաք ի քաղցրահոս յաղբիւրէն եւ յո-չորտածաւալ ճառագայթիցն, զի ի մեծի երկչարաթօղս խաւարեցաւ [արեգակնս] մեռուղ-փեան /// Տէր Ստեփաննոս մականուն Տիրացու/// Ա. թու» (Վնտկ Զ., 614)[74]:

Փորձենք հնարաւոր չափով պարզաբանել շատ արժէքաւոր այս յիշատակարանի առաջացրած հարցերը.

ա. Շարադրանքի սկիզբը գրուած է անցեալ անկատար (անցեալ ներկայ) ժամանակով. Հռոմկլայ հրաւիրուելը՝ «կոչեցեալ լինէր», այլոց՝ իրեն օգնելը՝ «գային առ իս... գրչին», ապա՝ անցեալ կատարեալով. «այլ ճանապարհ առաջի եդաւ», որովհետեւ Թագադրման հանդէսին մասնակցելու համար «կոչեցեալ եղեն» Տարսոն: Սաացողի գովաբանման ընդարձակ մասն աւարտւում է խնդրանքով՝ յիշելու իր միաբանակիցներին, յատկապէս՝ «զհայր Ծակոբ, որ հայր է վանից», որ, անշուշտ, յաջորդող մասում յիշուող «Սուրբ Խաչի» անապատն է: Ապա նշում է ձեռագրի գրչութեան թուականը՝ ՈԽէ (1198), Տիրացուի կողմից Սարգիս Նորընծայ պատանի եպիսկոպոսին «իւր փոխան եւ տեսուչ» նշանակելու եւ այդ՝ Շամիրամաշէնի (Վանի) ամբողջ ժողովրդի ու հոգեւորական եւ աշխարհական իշխանաւորների կողմից հաստատել տալու փաստի արձանագրմամբ, վերջացնում է նոյն Սարգսին ուղղուած բարեմաղթանքներով:

Ըստ այս ամէնի պարզ է միայն այն, որ ձեռագիրը 1198 թ. գրուել է Հռոմկլայում՝ «ի չարադրելն իմում անդ», սակայն անյայտ է մնում, թէ ե՛րբ է Տիրացու եպիսկոպոսը գնացել Հռոմկլայ (նոյն 1198ի՞ն, թէ՞ աւելի վաղ), ե՛րբ է վերադարձել այնտեղից, ապա՝ ե՛րբ է գրուել յիշատակարանը: Միաժամանակ՝ անյայտ է վերջինիս գրուելու տեղը՝ Վասպուրականի Ս. Խաչ վանքը (ո՛չ Հռոմկլան՝ ինչպէս կարծել է՝ Ե-ժԲ., 293): Տիրացուի մահուան արձանագրումն արուած է գլխաւոր յիշատակարանից տարբեր յիշատակագրութեամբ, որի վերջը, ցաւօք, եղծուած է, ուստի խնդրական է մնում նաեւ նրա մահուան տարին: Թէեւ առ այս գրուել է՝ «վախճանած 1200ին» (Ակին. 22) եւ յղուած՝ Ցիչ-ք. 612-4, սակայն այս էջերում չկայ ոչ միայն որեւէ թուական, այլեւ՝ Տիրացուի մահուանը վերաբերող որեւէ ծանօթագրութիւն, իսկ անուանացանկի նրան վերաբերող մասում (Ցիչ-ք. 1129), կրկին՝ առանց որեւէ ծանօթութեան կայ խաչանիշով «1202 թ.»:

Վերջինս հիմնուած է յիշատակարանի աւարտին՝ «Տիրացու /// Ա. թու» վերաբերող Ալիշանի հետեւեալ դիտարկման վրայ՝ «Անշուշտ մահուան թուականն է, որոյ միայն այդ Ա. վերջի թիւն որոշ կ'երեւի, եւ գուշակուի որ առջի թիւերն էին ՈԾ. կամ ՈԿ., որ է 1202 կամ 1212 թուական Քրիստոսի, հաւանօրէն առաջինն» (Հյպտմ. Բ. 443, ծ. 1): Ալիշանն

---

[73] Հյպտմ. Բ. 442, ծ. 9՝ «Անշուշտ շարունակուած էր Ստեփաննոսի վարքն, որ գրոց ննութեամբ կորսուեր է, եւ միայն մահուան յիշատակն է մնացեր»:

[74] Վնտկ Զ., 614՝ կարդացել է. «Եւ ըն(..) սղ եղ նոգ(....) եղեւ, ա՞յ (Աստուծո՞յ) զայն Ո.. բերանով գլխտ մնացյեալքս, որ զրկեցաք ի քաղցրալոյս յաղբիւրէն եւ (.. )տած ա(...) ճառագայթիցն, զի ի մեծի երկչարաթօղն խաւարեցաւ (...) եան (...) Տէր Ստեփաննոս մականուն Տիրացու/// ա թու»: Ըստ՝ 271բ էջի ձեռագրի յիշատակագրութեան (գրիչ՝ Յոհաննէս)՝ ՌՂԵ - 1246 թ. «Սոսթանեսա» անունով մէկը «զգիրքս զայս» գնել է ի յիշատակ իր, ծնողների եւ «զաւակացն... Յորդանէին եւ Փոանկշահին եւ որ յինեղոցն են» եւ իր ամուսին «Մարիամու» եւ նրա ու իր կենդանի եւ ննջեցեալ ծառազատների (Վնտկ Զ., 614):

*ըստ ամենայնի տրամաբանական հաշիւ է արել՝ 1198ին ծեր էր, ուրեմն մահը կարող էր պատահել գուցէ 1202ին (ո՛չ 1212ին): Մէկը թէ միւսը՝ քանի դեռ նոր տեղեկութիւններ չունենք, պէտք է Ստեփանոս Տիրացուի մահուան թուական ընդունենք այս 1202ը, ապա՝ ենթադրենք, որ յիշատակարանը գրուել է 1199ից՝ Հռոմկլայից վերադառնալուց յետոյ եւ 1202ից առաջ, գուցէ նախընտրաբար 1200ին:*

ՍՈՒՐԲ ԽԱՉ *անապատը անպայման Շամիրամաշէն-Վանին մօտ էր, այլապէս Տիրացուն կարիքը չէր ունենայ Սարգիս նորընծայ եպիսկոպոսին իր փոխարէն Նրա «տեսուչ» նշանակելը հաստատելու Վանի ժողովրդի «կամակցութեամբ եւ յաւժարութեամբ»: Այս անուններից մակարերելով, Զարբհանալեանը Տիրացուին կոչել է «Վարագայ կամ անոր մօտ Խաչի վանաց առաջնորդ» (Պատմ.Դպր., 702), Ալիշանը՝ «արքեպիսկոպոս Վանտոսպայ» (Սիսուան, 471) կամ «եպիսկոպոս Վանայ Ս. Խաչին» (Հայապատ., Բ., 441), Աճառեանը՝ «Վարագայ վանահայր» (ԱնձԲռ. Դ., 617), Ակինեանը՝ «Վասպուրականի Ս. Խաչ վանքի առաջնորդ» (Ակին. 22), Ոսկեանը յիշատակարանիս «անապատիս Ս. Խաչի» դարձուածը մեկնաբանել է՝ «բայց կարծեմ այս տեղ Ս. Խաչ ըսելով աւելի Վարագի Ս. Նշան վանքը հասկնալու է»[75]:*

*Այս անորոշութեան, աւելի ճիշտ՝ շփոթի պատճառն այն է, որ «Սուրբ Խաչ» կամ «Սուրբ Նշան» անունով վանքեր եւ եկեղեցիներ թէ՛ ընդհանրապէս Հայաստանում եւ թէ՛ Վասպուրականում շատ են եղել: Վասպուրականում Ս. Խաչ (Ս. Նշան) անունն ունէին նաեւ Աղթամարի եւ Վարագայ վանքերի մայր եկեղեցիները, բայց եթէ խօսքը նրանցից մէկի մասին լինէր, հազիւ թէ չգրուէր նաեւ նրանց առաւել յատկանշական՝ Աղթամար կամ Վարագ անունը (Նշանաւոր Ապարանից Ս. Խաչը Մոկսում էր՝ Վանին մօտ չէր): Ուրեմն՝ Տիրացուն «դէտ եւ տեսուչ» էր այն թեմի, որի առաջնորդանիստն էր՝*

*«*Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔԸ. *«Վանի դաշտի հարաւ-արեւելեան կողմը, քաղաքէն գրեթէ մէկ ժամ հեռու, Կուռուպաշ կամ Խուրուպաշ[76] հայաբնակ գիւղի մերձ, բլուրի մը գագաթին... կը բաղկանայ եկեղեցիէ մը, մատուռէ մը, գաւիթէ մը եւ քանի մը սենեակներէ: Եկեղեցին 9 մետր երկար, 5/2 մետր լայն եւ գրեթէ 12 մետր բարձր է: Անտաշ քարերով շինուած է եւ առանց սիւնի... Անոր հնաշէն դրութիւնը ենթադրել կու տայ թէ՝ շատ հին հաստատութիւն ըլլալու է... Աւանդութեան համաձայն... հիմնուած է Ս. Թադէոս առաքեալէն՝ Ս. Աստուածածին անունով, սակայն յետոյ Ս. Խաչ կոչուած է՝ Հոփսիմեան կուսաններու ունեցած Ս. Խաչի մասունքին այս տեղ դադարումէն... Մեր մատենադարանի Ցայսմաւուրքներէն մէկուն մէջ նշանակուած է՝ [Հոփսիմեանները] «Եկին ի գաւառն Տոսպայ, ի դաշտն Վանայ, ի յոտն Վարագայ... ի վայելուչ վայրի, որ եւ նոյն տեղին կոչեցաւ Սուրբ Խաչ, եւ այժմ ասի Խուրուպաշ» (Տաշեան, Մայր Ցուցակ, էջ 63)... Ս. Խաչի թեմական գիւղն է Կու-*

---

[75] Վասպուրական-Վանի վանքերը. Ա. մաս... Գրեց Դկտ. Հ. Համազասպ Ոսկեան... Վիեննա, 1940, էջ 25:

[76] «Վանի նահանգի Վանի գաւառում, Վան-Տոսպ գաւառակում: Գտնւում է Վանի Այգեստան թաղամասից 5-6 կմ հյուսիս-արեւելք. Վանի դաշտը հարավից եզերող բլրի (Սուրբ Խաչի) ստորոտին, համանուն գետակի ձախ ափին: Գիւղից արլ. անցնում է Վարագայ վանք տանող ճանապարհը»՝ ՏԲ, Գ. էջ 279. հմմտ. ՏԲ, Ա. 650՝ «Ս Խաչ»:

*ռուպաչ[77]: Ունեցած է բաւական կալուած եւ սիրուած է իբրեւ ուխտատեղի... Ենթակայ եղած է Վանի առաջնորդարանին»[78]:*

*Մի այլ նկարագրութիւն՝ «Վանայ այգեստանի հարաւը 2½ ժամ հեռու կը գտնուի վանքս. լայնածաւալ եւ բարձր բլրոյ մը կողին վրայ: Կառուցուած է կոփածոյ քարերով, խիստ հին ժամանակ: Ունի աքանչելի տեսարան, մանաւանդ հիւսիսային կողմն, որ ամբողջ Վան քաղաքը կը տեսնէ... Վանքիս հնաչէն վիճակն կրնայ այցելուաց յիշեցնել առաքելական եւ թերեւս կռապաշտական դարերն իսկ... Վանքէն 5-10 վայրկեան հեռու քարայր մը կայ, զոր կ՚անուանեն* Կուսանաց այր*»՝ Հռիփսիմեան կոյսերի պատուին. Ս. Խաչ անունն ստացել է «Հռիփսիմէի կուրծքէն կախուած կենաց փայտի մասն» այստեղ մնացած լինելու պատճառով. «Վանքը վանեցւոց համար տարին քանի մը անգամ ուխտատեղի է»[79]: Վանքի չէն ժամանակի վերջին ականատեսի վկայութիւնը. «Կը գտնուի Վանայ արեւելա-հարաւ բլրի վրայ... 1915 թուականի Վանայ ինքնապաշտպանութեան կռիւներու ընթացքին Ս. Խաչի վանքն ալ թալանուեցաւ, այրուեցան շինութիւնները, եւ կորստեան մատնուեցան ամբողջ ձեռագրերը»[80]:*

* * *

*Ստեփանոս Տիրացուի գործունէութեան կիլիկեան շրջանին վերաբերող՝ վերը բերուած վկայութիւնները համադրելով 1198ի ձեռագրի յիշատակարանի տեղեկութիւններին, նախ տեսնում ենք, որ Գրիգոր Ապիրատ կաթողիկոսը, երեւի հիմնականում Տարսոնում Լեւոն իշխանի թագադրութեանը ներկայ լինելու համար, «մեծաւ թախանձանաւք եւ գովասանական նամակաւ» Վասպուրականից Հռոմկլայ էր հրաւիրել ոչ թէ իրեն ի լրոյ յայտնի եւ անծանօթ մէկին, այլ՝ իր հօրեղբայր Ներսէս Շնորհալու օրերից վաղածանօթ եւ, ըստ ամենայնի մտերիմ մարդու՝ Տիրացու մականուամբ Ստեփանոս Ցակովբացի եպիսկոպոսին[81]: Այնուամենայնիվ, 1170ականներին կաթողիկոսարանում եւ Կիլիկեան Հայաստանի եկեղե-*

---

*[77] Ենթադրելի է, որ, շատ այլ գիւղերի նման, Կոռուպաշը սկզբնապէս առաջացած լինի վանքի սեփական հողերի վրայ՝ որպէս նրա սպասաւոր-մշակների բնակավայր:*

*[78] Վասպուրական-Վանի վանքերը, Ա. մաս, էջ 231-5:*

*[79] Հ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Գիրք Ա. (Թ-Կ), Վենետիկ - Ս. Ղազար, 1907, էջ 146:*

*[80] Յովհաննէս վ. Հիւսեան, նշ. աշխ. (տե՛ս ծ. 7), 15ա:*

*[81] Այստեղ ի մի բերուած տեղեկութիւնների ուժով փարատւում են Աճառեանի կասկածները, թէ իր Հ* 103 (Տիրացու) եւ Հ* 104 (Ցակովբացի) Ստեփաննոսները «չեն կարող նոյն լինել». այդուհանդերձ, տարբերակման անհիմն լինելը ցոյց տալու համար բերում ենք նրա փաստարկները. «որովհետեւ եթէ Հ* 103 Ստեփաննոս Տիրացուն հրաւիրուել է Ապիրատի կողմից, այդ պիտի լինէր ամենաուշը 1194 թուին. հետեւաբար չի կարող նա լինել ուսուցիչ Լամբրոնացու, քանի որ Լամբրոնացին արդէն վարդապետ էր 1168 թուին: Նմանապէս Լամբրոնացին «Էր ընդ եղբարս» եւ միւս մեկնութիւնները գրել է 1177, 1178 եւ 1179 թուերին (Տաշեան, Ցուց. 639ա), ուստի չէր կարող 1194 թուին եկող Ստեփաննոսը խնդրած լինել: Վերջապէս, Լամբրոնացին մեռաւ 1198 թուին, որ 1194 թուից միայն 4 տարի հեռու է: Վերեւում (Հ* 82) յիշատակեցինք նաեւ մի ուրիշ Ստեփանոս վարդապետ, նոյնպէս կոչուած Ցակոբցի, Շնորհալու դրան երէց, որ գործել է 1172-3 թուերին: Սա էլ անշուշտ տարբեր է Վարագայ վանահայր Հ* 103 Ստեփաննոսից, բայց կարող է լինել Լամբրոնացու ուսուցիչ Հ* 104 Ստեփաննոսը» (ԱՇՑԲռ. Դ. 617):*

*ցական միջավայրում մեծ հեղինակութիւն եւ գիտնական-ուսուցչի համբաւ ունեցող Ստեփանոս Ցակովբացու Վասպուրական տեղափոխուելու ժամանակն ու հանգամանքներն անյայտ են մնում: Որոշակի է միայն, որ Լամբրոնացու «Առ Լեւոն» թղթի գրուելու ժամանակ՝ 1195ին[82] նա երեւի վաղուց այնտեղ էր: Նամակում նրա կողմնակիցների թուարկման սկիզբն այս է. «Նոյն ինքն մեր աշխարհս եւ սուրբ լեառնս, եւ որ ի սմա հովիւք սուրբք, եւ բոլոր գաւառն Վասպուրականի, եւ որ անդ հռչակաւոր ուխտն Վարագ, եւ երեւելի արքն Ստեփանոս Տիրացուն[83] ուսուցիչն մեր, եւ Գէորգ ճգնաւորն, եւ Ստեփանոս՝ մեր ուսումնակից, եւ Քրիստոսատուր եւ Տիմոթէոս ճգնաւորք, որք ականատես լեալ են մեզ եւ որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ, եւ երանեն թէ կարող էին ձայնակցել»[84]:*

*Այսինքն՝ Կիլիկեան («մեր աշխարհս»), Սեւ կամ Կիլիկեան Տաւրոսի վանքերը («սուրբ լեառնս»), ամբողջ Վասպուրականը եւ այնտեղ՝ Վարագայ ուխտը եւ իր ուսուցիչը, այլեւ՝ իր ուսումնակից Ստեփանոսը[85] եւ իրեն ճանաչող երեք ճգնաւորներ, որոնք նոյնպէս Վասպուրականում են: Պակաս ուշագրաւ չէ նաեւ թուարկման շարունակութիւնը, որ կարեւոր է ընդհանրապէս Կիլիկիայի եւ բուն Հայաստանի միջեւ ժամանակի եկեղեցական հաղորդակցութեան եւ յարաբերութիւնների աշխուժութիւնը եւ սերտութիւնը լաւ պատկերացնելու համար. «Բոլոր գաւառն Տարօնոյ, եւ որ ի նմա իմաստուն եպիսկոպոսն Եսայի, եւ վարժագետ Թէոդորոս, որ զմերս բարեհռչակեն բարեկարգութիւն եւ երանեն զհաղորդեալսն: Գաւառն Եկեղեաց եւ լեառն սրբոյն Գրիգորի, եւ որ ի նմա հարքն եւ եպիսկոպոսքն, որք գրովն իւրեանց բարեհամբաւեն զմեր ճշմարտութիւնս, եւ աւաղեն վասն աղքատութեամբ եւ անօրինաց բռնութեամբ ի սմանէ վերջանալոյ: Իշխանքն Խաչենոյ եւ որ անդ վանորայք, որք զաշակերան մեր զԹովսէփ եւ զկարգաց մեր վարժապետ՝ որպէս զհրեշտակ պատուեն, եւ կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն»[86]:*

*Սակայն Ստեփանոս Ցակոբացու Վասպուրական տեղափոխուելու փաստն առաւել ուշագրաւ է մի այլ տեսանկիւնից: Ցայտնի է, որ Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսի (1113-1166) ընտրութիւնից անմիջապէս յետոյ, Դաւիթ Ա. Թոռնիկեանի (1113-1165՞) ձեռքով, հաստատուել է Աղթամարի հակաթոռ կաթողիկոսութիւնը[87], որի մասին կայ հետեւեալ իրաւացի գնահատականը. «Գագկայ իշխանութեան սահմաններէն անդին չանցաւ իր բռնարարած իրաւունքն, մանաւանդ աւելի ամփոփ էր եւ եւս աւելի ամփոփուեցաւ յե-*

---

*[82] Ազգապատում, Ա. § 1042, էջ 1777՝ նամակի գրության ժամանակը համարում է «1195ի սկիզբները». հմմտ. Սիսուան, 552 (նաև 461-2), Ակին. 214-5: Նամակի քննադատությունը՝ Ազգապատում, Ա., § 1041-8 էջ 1770-83:*

*[83] Վարագի եւ իր ուսուցչի անունները զատ-զատ նշելը եւս մի անուղղակի փաստ է առ այն, որ Տիրացու եպիսկոպոսը Վարագի Սուրբ Նշանում չէր, այլ՝ Կուռուպաշի Ս. Խաչում:*

*[84] Թուղթ առ Լեւոն, էջ 229:*

*[85] Ըստ ամենայնի՝ այս Ստեփանոսը եւս մեր Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսին աշակերտել է Սեւ լեռներում Բարսեղի անապատում:*

*[86] Թուղթ առ Լեւոն, էջ 229-30. Հետեւում է իր լատին կողմնակից-ջատագովների եւ նրանց՝ առ այդ ցոյցերի թուարկումը:*

*[87] Տե՛ս Ազգապատում, Ա. § 928-9՝ էջ 1579-84:*

*տոյս»[88]: Աւելին՝ Նրա մահից յետոյ «գրեթէ դար մը յիշուած են Աղթամարայ կաթողիկոս-ներուն անուանքն: Ընդ. Օրացոյցի մէջ Դաւիթէն ետքը առաջին կաթողիկոս կը նշանա-կուի Ստեփանոս Նկարենայ, որ 1272ին վախճանած է, որով 1165-1272 դատարկ ձգուած է: Այս դատարկը Հաւաքարանը կը լեցնէ բազմաթիւ անուններով, որոնք Հոս եւ ոչ իսկ յի-շատակել կ'ուզենք»[89]:*

*Ներսէս Շնորհալիի կամ Հռոմկլայի կաթողիկոսարանի դրան սարկաւագը դարձել է ա-ռաջնորդ Վասպուրականի Ս. Խաչի, որի թեմի մէջ ըստ ամենայնի մտնում էր նաեւ Նրա կենտրոն Վան քաղաքը (այլապէս՝ Սարգիս եպիսկոպոսին իրեն յաջորդ հաստատելու հա-մար վանեցիների համաձայնութիւնն ստանալու պէտք չէր ունենայ): Սա արդեօք չի՞ նշանակում, որ Աղթամարի կաթողիկոսութեան իրաւասութեան եւ իշխանութեան սահ-մաններն այդ ժամանակ շատ նեղ կամ անձուկ էին, որով լիովին իրաւացի է Օրմանեանի խօսքը, թէ Դաւթի արածը «շատ մասնաւոր գործ մըն էր»[90], ուստի եւ իրենից յետոյ, ըստ ամենայնի, հակաթոռ կաթողիկոսութիւը տեւական ընդհատում է ունեցել:*

ԱՄՓՈՓԵՆՔ. *կարծես կարողացանք նորայայտ վաւերական դիմանկարի կողքը դնել Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսին վերաբերող մատենագրական ցրիւ տեղեկութիւնները եւ նրանցով գծել իր ժամանակի այս նշանաւոր գիտնական-մանկավարժի կենսագործու-նէութեան թէկուզ եւ աղօտ ուրուագիծը, որի փոքր մասով ենթադրական-հաւանական, մեծ մասամբ՝ ճշգրիտ գրուագները հետեւեալներն են. ծնուել է հաւանաբար Լեռնային Կիլիկիայում, չուրջ 1120 թ., 80ամեայ մահացած լինելու ենթադրութեան հիման վրայ՝ ծննդեան պայմանական թուական ենք ընդունում 1122ը: «Ի տղայական տիոցն» մտել է երեւի Հաճընի մօտի Ս. Յակոբ վանք, այստեղ էլ ստացել է «արդիւնական» կամ «աս-տուածաբանական վարդապետ»ի հանգաւ, ապա անցել է Հռոմկլայ, եղել կաթողիկոսարա-նի «դռան սարկաւագ», Ներսէս Շնորհալու ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուել: Երեւի 1168ից առաջ, նոյն Շնորհալուց Գրիգոր Ապիրատի նուէր ստացած ՄՄ Հ[ն] 311 1066 թ. Աւետարանը «վերստին նորոգել» է «արտաքուստ կուռք... գեղեցիկ մետաքսէիւք եւ ա-կամբք պատուականաւք, ընդելուզեալ ի մարգարտայ մեծագնոյ»:*

*1169-1172 թթ. եղել է Սեւ լեռների Բարսեղեանց անապատի առաջնորդ, ուր նոյն տա-րիներին նրան աշակերտել է Ներսէս Լամբրոնացին (յայտնի է նաեւ նրա մի այլ աշակեր-տի անունը՝ Ստեփանոս): Այստեղ նրա պատուէրով Լամբրոնացին երեւի թէ 1172 թ. գրել է Յովհաննու Հանգստի մեկնութիւնը: Նոյն տեղում եւ նոյն տարիներին (դուցէ կրկին պայմանականօրէն ընդունենք 1170ը) Յովհաննէս գրչի եւ ծաղկողի՞ ձեռքով նրա համար գրուել եւ ճոխ նկարազարդուել է մեր գրքային գեղանկարչութեան մէջ առայժմ առկայ ձեռնադրութեան հնագոյն պատկերն ունեցող ՄՄ Հ[ն] 2098 պատարիկի մայր ձեռագիրը, որ հետագայում անցել է Ստեփանոս Օրբէլեան պատմագրին եւ նրա հօրեղբօրորդի Յով-*

---

[88] *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն, Գրեց Հ. Ներսէս վ. Ա-կինեան, Վիեննա, 1920, էջ 10:*

[89] *Նոյն տեղում, էջ 37. «Բիւզանդիոն» թերթի հրապարակմամբ Ակինեանին յայտնի «Հաւաքարան»ը տե՛ս - Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարայ), ծանօթութիւններով յոյս ընծայեց... Մեսրոպ վ. Մաքսու-դեանց, Ս. Էջմիածին, 1916, էջ 36-40:*

[90] *Ազգապատում, Ա., էջ 1579:*

*հաննէս Օրբէլին, աւելի ուշ՝ Կտուց անապատին, ուր եւ 1915 թ. այն ըստ ամենայնի յօշոտուել է: 1173 թ. Սկեւռայում Գրիգոր Մլիճեցի՞ գրչին «աւժանդակ»ել է՞ Շնորհալիի սպասաւոր Կոստանդին քահանայի համար գրելու Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցուն պատկանած Աւետարանը. 1195 թ. առաջ Վասպուրականում առաջնորդ էր Կուռուպաշի Ս. Խաչ վանքի եւ թեմի, որի մէջ ըստ ամենայնի մտնում էր նաեւ Վան քաղաքը:*

*1198 թ. Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հրաւէրով գնացել է Հռոմկլայ, այնտեղ իր սպասաւոր Յակոբին գրել է տուել Ներսէս Շնորհալու Կաթողիկեայ թղթերի մեկնութեան Վենետիկի Մխիթարեանց Հր 1462/1063 ձեռագիրը, ապա, կրկին՝ հրաւէրով, գնացել է Տարսոն եւ 1199 թ. Յունուարի 6ին ներկայ եղել Լեւոն Ա.ի (Բ.) թագադրմանը, վերադարձել Վասպուրական, երեւի իր հետ Հռոմկլայ տարած եւ ձեռնադրել տուած Սարգիս Նորընծայ եպիսկոպոսին կարգել «իւր փոխան եւ տեսուչ անապատի Սուրբ Խաչի» թեմի (վանքի առաջնորդն ուրիշ մէկն էր՝ «զՀայր Յակոբ, որ հայր է վանից»), իսկ ինքն ապրելով «մինչեւ ի կատարեալ ծերութիւն, առ դուրս իմաստութեան գեղերեալ»՝ մահացել է երեւի 1202 թուականին:*

*Այժմ համառօտ թուարկենք յօդուածիս մէջ արուած միւս ճշգրտումները եւ նորութիւնները.*

*ա. Պատառիկիս մայր ձեռագրի գրչութեան յիշատակարանը թուագրելի է շուրջ 1170 թուականով (ո՛չ 1300ով):*

*բ. Նոյն ձեռագրի մէջ առկայ՝ Յովհաննէս Օրբէլի յիշատակարանը թուագրելի է 1302ով (ո՛չ 1300ով):*

*գ. 1069 թ. ՄՄ Հր 10434 Աւետարանի 288ա-9բ թերթերի վրայ գրուած հետագայ անթուական յիշատակագրութիւնները ԺԳ. դ. սկզբներում գրուել են Խարբերդում (ո՛չ Վասպուրականում):*

*դ. Պարզուած է շուրջ 1170 թ. Կիլիկիայի Սեւ լեռների Բարսեղի անապատում ստեղծուած՝ առայժմ յայտնի միակ բարձրարուեստ ձեռագիրը, որ գրել եւ ծաղկե՞լ է ՅՈՎՀԱՆՆԷՍ անունով մէկը՝ նորայայտ անուն միջնադարեան հայ մանրանկարիչների ցանկի մէջ:*

*ե. Բարսեղեանց անապատը Կիլիկիայում գործել է 1113-1307 թթ. ընթացքում, ապա՝ Իտալիայում, ընդհուպ մինչեւ 1650 թ.:*

*զ. Հայ մեկնողական մատենագրութեան հարուստ անուանացանկին գումարւում է Ներսէս Շնորհալի կաթողիկոսի հեղինակած (վրիպմամբ մոռացութեան մատնուած) Կաթողիկեայ թղթերի Մեկնութիւնը՝ հեղինակային օրինակի արժէք ունեցող 1198 թ. վենետիկեան Հր 1462/1063 ձեռագրով եւ հետագայ ժամանակների ութ ընդօրինակութեամբ:*

***ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ***

Նկ. 1. Վանի եկեղեցիներից մէկում 1915 թ. վերջերին. առջեւում հայ կամաւոր զինուորներ, խորքում, ձախից Յովհաննէս վ. Հիւսեանը, աջից՝ Սմբատ Տէր-Աւետիսեանը. զննում են գրքերի բարբարոսաբար բզկտուած կոյտերը

Նկ. 2. Ձեռնադրութիւն. Ստեփանոս եպիսկոպոս, մականուն Տիրացու եւ անանուն կիսասարկաւագ. ՄՄ Պատառիկ Հր 2098, 1բ

Նկ. 3. Ընծայում-օրհնութիւն՝ ստացող Մատթէոս կրօնաւոր եւ Յիսուս Քրիստոս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռ. Հմր 1796, 288բ

*ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

# ՄԻ ԴՐՎԱԳ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

14-րդ դարի 60-70-ական թվականները Կիլիկիայի հայկական թագավորության գոյամարտի տարիներն են: Այդ մեկուկես տասնամյակի ընթացքում երկրի կեսից ավելին գտնվում էր Եգիպտոսի մամլուքյան սուլթանության տիրապետության ներքո, և հայոց թագավորությունը ամփոփվել էր Լեռնային Կիլիկիայի տարածքի մի մասում: Այս ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանը չուներ այլևս մոնղոլների պես հզոր դաշնակից: Մերձավոր Արևելքի խաչակրաց պետությունները, որոնք նախորդ տասնամյակների ընթացքում քիչ թե շատ բարեկամական հարաբերություններ էին պահպանում հայոց թագավորության հետ, վաղուց արդեն իջել էին պատմության թատերաբեմից: Մերձակա քրիստոնյա պետություններից մնացել էր միայն Կիպրոսի թագավորությունը, որը, սակայն, այնքան հզոր չէր, որ կարողանար իրական ռազմական օգնություն ցույց տալ Կիլիկիային: Փոխարենը, Եգիպտոսի մամլուքներից բացի, հայոց թագավորության գոյությանը սպառնում էին նաև մամլուքների դաշնակիցները՝ թուրքմեն-կարամանները, որոնք հայոց թագավորության անմիջական հարևաններն էին դարձել:

14-րդ դարի կեսերից սկսած՝ ի վնաս Կիլիկյան Հայաստանի կտրուկ կերպով բարդացավ Արևմտյան Եվրոպայի քաղաքական իրավիճակը: Ավելի քան հարյուրամյա պատերազմը (1337-1453 թթ.) արևմտաեվրոպական գերհզոր տերությունների՝ Անգլիայի ու Ֆրանսիայի միջև[1] երկրորդական պլան մղեց խաչակրաց նոր արշավանքի ծրագրերը: Մինչդեռ իտալական քաղաք-պետությունները, մոռանալով քրիստոնեական համերաշխության մասին, շարունակում էին բազմակողմանի առևտրական հարաբերություններ պահպանել Եգիպտոսի սուլթանության հետ: 1345 թ. վենետիկցիների և մամլուքների միջև կնքված պայմանագրով, Վենետիկը կանոնավոր երթևեկություն հաստատեց Եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգստի հետ[2]:

Միջազգային ասպարեզում կատարված տեղաշարժերը վատթարացրեցին Արևելքի քրիստոնյաների վիճակը և հիմք դարձան, որպեսզի Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը և թուրքմեն-կարամանները սևեռուն ուշադրություն հատկացնեն Կիլիկիայի հայկական թագավորության և Կիպրոսի դեմ պայքարին: Այդ պայքարի դրվագներից մեկը, հարաբերությունները Կիլիկյան Հայաստանի և նրա հակառակորդների միջև 1367-1370 թթ., այսինքն՝ հայոց թագավորության անկման նախօրյակին, պատմագիտական գրականու-

---

[1] Ա. Գալստյան, Կիլիկյան հայոց թագավորության կործանման հարցի շուրջը, «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, 9, էջ 60, Հայ ժողովրդի պատմություն, հ. III (ՀՀ ԳԱԱ հրատարակչություն), Երևան, 1976, էջ 777:

[2] A. Atiya, The Crusade in the Later Middle Ages, London, 1938, p. 114-116; Հ. Տեր-Ղեւոնդեան, Ոսկերչութիւնը Կիլիկեան Հայաստանի մէջ ԺԳ-ԺԴ դարերում, «Բազմավէպ», 1991, 1-2, էջ 210:

թյան մեջ բավարար կերպով չի հետազոտվել: Մասնավորապես հստակ կերպով չի պարզաբանված, թե այդ չորս տարիների ընթացքում քանի՞ արշավանք է տեղի ունեցել հայոց թագավորության դեմ, ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում է զոհվել հայոց սպարապետ Լիպարիտը:

Այսպես, հետազոտողների ճնշող մեծամասնությունը կարծիք է հայտնել, որ դեպի Կիլիկիայի հայկական թագավորություն տեղի է ունեցել մեկ արշավանք և այն թվագրվել է տարբեր տարիներով: Օրինակ, Կ. Մութաֆյանը նշում է, որ Հալեպի Իշիկ Թիմուր և Տարսոնի Մանչուկ ամիրաները իրենց զորքերով Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները են ներխուժել 1367 թ.[3]: Գրականության մեջ միևնույն արշավանքը թվագրվում է նաև 1368 թ.[4] ու 1369 թ.[5]:

Հայ հեղինակներից բացի, 1369 թ. օգտին է արտահայտվում նաև խաչակրաց արշավանքերի ճանաչված պատմաբան Ա. Աթիյան[6]: Հետաքրքրությունից զուրկ չէ նաև Ն. Տեր-Միքայելյանի կարծիքը, ըստ որի՝ թշնամու բանակը Կիլիկյան Հայաստան է ներխուժել 1370 թ.[7]: Միաժամանակ որոշ պատմաբաններ, հավանաբար գիտակցելով խնդրի բարդությունը, գերադասել են ձեռնպահ մնալ ճշգրիտ տարեթիվ նշելուց՝ բավարարվելով մահմեդական զորքերի արշավանքի ներկայացմամբ և Սիսի պաշարման փաստի արձանագրմամբ[8]: Ուստի անհրաժեշտություն է զգացվում, պահպանված սակավաթիվ աղբյուրների հիման վրա, վերստին անդրադառնալ Կիլիկիայի հայկական թագավորության անկմանը նախորդած ռազմաքաղաքական կարևոր դրվագներից մեկի պատմությանը:

Խնդրո առարկա դեպքերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ԺԴ դարի հիշատակարաններից մեկը. «Ի թվաբերութեանս Հայոց ՊԺԶ (1367)-ն, ի յամսեանն մայիսի Զ(6) աւրն, ի յաստմանէ սատանայի արար զաւրաժողովք ամիրայն Տարսոյ Մինչաք անուն, ժողովեաց ի Շամբուն հիծելէն քանի որ կարաց, և զուրակիր Թուրքմանն զամէնն, և այլ բազում խարամնցիք, և եկն ի վերայ աթոռանիստ բերդին Սսոյ...»[9]: Այսպիսով, հիշատակարանի հեղինակը արձանագրել է, որ 1367 թ. մայիսի 6-ին Տարսոնի ամիրա Մանչուկը միացյալ արշավանք է ձեռնարկել, իր բանակի կազմում ընդգրկելով Դամասկոսի հեծյալ զորքերի մի մասին, թուրքմենական ինչ-որ ցեղերի («զուրակիր» բնութագրումը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի) և թուրք-կարամանցիներին:

Մեկ այլ տեղեկության ենք հանդիպում ժամանակաշրջանի հայտնի դեմքերից մեկի՝ Վասիլ Մարաջախտի ժամանակագրության մեջ. « Ի թվին ՊԺԸ (1369)-ն մայիս ամսոյ Ի

[3] Կ. Մութաֆյան. Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 466-467:

[4] Հայ ժողովրդի պատմություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975, էջ 541:

[5] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 781, Ղ. Ալիշան. Յուշիկք հայրենեաց հայոց. հ. Բ, Վենետիկ,1869, էջ 509-512:

[6] **A. Atiya**, նշվ.աշխ., էջ 374:

[7] **Ն. Տեր-Միքայելյան**, Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում, Բեյրութ, 1980, էջ 69, 180:

[8] **Г. Микаелян**. История Киликийского армянского государства, Ереван, 1952, р. 473, Կ. Բասմաջյան, Լեւոն Ե Լուսինեան՝ վերջին թագաւոր Հայոց . Փարիզ, 1908, էջ 25-35, Մ. Օրմանյան, Ազգապատում, Էջմիածին, 2001, հ. Բ, սյուն 2250-2252:

[9] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 477:

(20)-ն երեկ Տարսոյ ձայնիւն Զուհրբէ ոռոին ի վրայ Սըսու ի շաբաթ օր...»[10]: Այսպիսով, թվագրության առումով աղբյուրների տեղեկությունները միմյանցից որոշակիորեն տարբերվում են: Եվ այստեղից էլ հարց է ծագում, որ միգուցե դեպի Կիլիկիայի հայկական թագավորություն տեղի է ունեցել ոչ թե մեկ, այլ երկու արշավանք: Հարցի պարզաբանման համար էական նշանակություն ունի Լիպարիտ սպարապետի կյանքի և գործունեության մասին անհայտ հեղինակի երկը, որը հրատարակել է Ն. Ակինյանը[11]:

Այստեղ նախ նշվում է. «Զոր գային Տաճկաց ազգն ի Մսրայ բազում զօրօք ի վերայ Տարսոնի եւ Կիլիկիայ գաւառին. եւ ինքն քաջ Լիպարիտն միայն ելանէր ի դէմ եւ կոտորէր զամենեսին... Եւ կոտորէր զնոսա եւ փախուցանէր...»[12]: Ակնհայտ է, որ այս տողերը վերաբերում են մամլուքյան ինչ-որ հարձակման, որը թշնամու համար աղետալի վախճան է ունեցել: Այնուհետև հեղինակը հաղորդում է. «Բայց յետոյ Մանճաք անուն ոմն ի Մսրայ հեծելազօր հսկայածն եւ քաջ եկաւ խնդրել ի Սուլթանէն, զի եկեալ սպանցէ զքաջ Լիպարիտին: Եւ եկեալ ԾՌ հեծելով և բանակ էարկ ի դէմ Սըսու...»[13]:

Հեղինակը, խոսելով երկու արշավանքների մասին, հստակորեն չի նշում, թե ո՞ր թվականին է տեղի ունեցել առաջին հարձակումը: Որոշ հստակություն կարող է մտցնել Հովհաննես Թլկուրանցին, որը գրի է առել հայոց սպարապետի մասին ժողովրդական վիպերգը: Ինչպես նշում է Է. Պիվազյանը, այն հիմնված է բանավոր զրույցների վրա և մոտ է իրականությանը[14]:

Հովհաննես Թլկուրանցու տաղերում երկու արշավանք է նշվում դեպի Կիլիկյան Հայաստան` առաջինը` 1368 թ., և երկրորդը` 1370 թ.[15]: Թեև տարեթվերի մասին հաղորդումները չեն համապատասխանում այլ աղբյուրների վկայություններին, կարևորն այն է, որ հեղինակը նույնպես խոսում է երկու տարբեր արշավանքների մասին: Ըստ Հովհաննես Թլկուրանցու, առաջին արշավանքի ժամանակ Լիպարիտը ջախջախել է թշնամիներին և սպանել Մանչուկ ամիրայի որդուն, իսկ երկրորդ արշավանքի ժամանակ ինքն է սպանվել[16]:

Բացի Հովհաննես Թլկուրանցու տաղերից, երկու տարբեր արշավանքների վարկածի հավանականության օգտին է խոսում նաև վերոհիշյալ աղբյուրների համադրումը և վերլուծությունը: Այսպես, 1367 թ. հիշատակարանի հեղինակը թշնամու զորքերի հարձակումը նշելիս չի խոսում Լիպարիտի մահվան մասին[17]: Եթե իրականում հայոց սպարապետը սպանված լիներ, ապա դժվար թե հեղինակն անտեսեր նման կարևոր փաստը: Եթե կիլիկյան հիշատակարանի տեղեկությունը վերաբերում է 1367 թ. դեպքերին, ապա Վասիլ Մա-

---

[10] Ա. Մաթևոսյան, Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները. «Պատմաբանասիրական հանդես,1963, 4, էջ 197:

[11] Ն. Ակինյան. «Պատմութիւն քաջին Լիպարտի». «Հանդէս Ամսօրեայ», 1933, էջ 129-135:

[12] Նույն տեղում, էջ131:

[13] Նույն տեղում:

[14] Է. Պիվազյան, Հովհաննես Թլկուրանցի, Երևան, 1960, էջ 63:

[15] Նույն տեղում, էջ 58:

[16] Նույն տեղում, էջ 59:

[17] Լ. Խաչիկյան, Նշվ. աշխ., էջ 477:

րաջախտի ժամանակագրության մեջ նշվում է թշնամու հարձակման և սպարապետի ողբերգական մահվան մասին արդեն 1369 թ. ներքո[18]: Այսպիսով, հիմնվելով դեպքերին ժամանակակից հեղինակների տեղեկությունների վրա, կարելի է եզրակացնել, որ Կիլիկիայի հայկական թագավորության անկման նախօրյակին դեպի մայրաքաղաք Սիս տեղի է ունեցել երկու արշավանք՝ առաջինը1367 և երկրորդը՝ 1369 թթ.:

Նույն եզրակացությանը կարելի է հանգել թշնամու բանակի թվաքանակի մասին վկայությունները քննելիս: Առաջին արշավանքի ժամանակ թշնամու զորքերի քանակի մասին հիշատակարանի հեղինակը վկայում է. «Բազում հիծման հիծելով և այլ շատ հիտիվաքաւ, որ էին իբրև ԺԲՌ (12000) մարդ...»[19]: Ինչ վերաբերում է երկրորդ արշավանքին, ապա Մանչուկ ամիրայի հավաքած զորքի քանակի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում թե՛ «Պատմութիւն քաջին Լիպարտի» երկը և թե՛ Հովհաննես Թլկուրանցու տաղերը: Հեղինակներից երկուսն էլ խոսում են 50 հազարի մասին[20]: Ուստի տարօրինակ է, որ Ղ. Ալիշանը, որը հիմնվել է հենց Հովհաննես Թլկուրանցու տաղերի վրա, հակառակորդ զորաբանակի թվաքանակը հասցրել է 60 հազարի[21]: Թերևս այստեղ գործ ունենք 5 և 6 թվանշանների պարզ շփոթի հետ: Հետևաբար, արժանահավատության առումով քննության կարիք է զգում աղբյուրների վկայած 50 հազարը:

Անկասկած է, որ նշված թվաքանակը չի կարող համապատասխանել ճշմարտությանը: Հովհաննես Թլկուրանցին և «Պատմութիւն Քաջին Լիպարտի» երկի անհայտ հեղինակը հավանաբար չափազանցություն են թույլ տվել, որպեսզի շեշտեն հայոց սպարապետի սխրանքը: Թշնամու զորաբանակի թվաքանակի մասին հայ հեղինակների հաղորդած տեղեկությունները չեն կարող համապատասխանել իրականությանը նաև այն պարզ պատճառով, որ Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ընթացքում նրա վրա կատարած մի շարք արշավանքների ժամանակ թշնամու բանակը այդքան զինվոր երբևիցե չի ունեցել: Օրինակ՝ կարելի է հիշել 1279 թ. մամլուքյան զորքերի հարձակումը Հռոմկլա հայրապետանիստ բերդաքաղաքի վրա, երբ թշնամու զորքերի թիվը կազմում էր մոտ 13 հազար զինվոր[22]: Այնուհետև, Թիմուրտաշի և թուրք Ամիր Օմարի 1321 թ. դեպի Կիլիկյան Հայաստան կատարած արշավանքի ժամանակ նրանց զորքերի թիվը 30 հազարից չէր անցնում[23], իսկ 1322 թ. Այասը ավերեց մամլուքյան մոտ 40 հազարանոց բանակը[24]:

Եվ այդ վերը նշված արշավանքները տեղի են ունեցել այն ժամանակ, երբ հայոց թագավորությունը բավականին մարտունակ բանակ ուներ և կարող էր դիմակայել ավելի մեծաքանակ թշնամու ուժերին: Իսկ այժմ, երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը

---

[18] Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 197:

[19] Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 477:

[20] Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 131, Հ. Պիվազյան, նշվ. աշխ., էջ 59:

[21] Ղ. Ալիշան, Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 480:

[22] Bar Hebraeus, The Chronography, London, 1932, p. 461:

[23] Մանր ժամանակագրություններ, հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 188, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, թարգմանեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 247:

[24] Նույն տեղում, էջ 188-189, էջ 247:

կորցրել էր իր տարածքների մեծ մասն ու ամփոփվում էր Սիս քաղաքով ու նրա հարակից գավառներով. նման մեծաքանակ զորքերի անհրաժեշտություն չկար: Բացի այդ, եթե նույնիսկ ինչ-որ մի էմիր ցանկանար էլ, չէր կարող նման մեծ բանակ կազմել: Ամենայն հավանականությամբ, թշնամու բանակի երկրորդ հարձակման ժամանակ նրանց զորքերի թիվը պետք է լիներ մոտավորապես այնքան, ինչքան որ եղել էր առաջին արշավանքի ժամանակ, այսինքն՝ 12 հազ. կամ մի փոքր ավելի:

Վերադառնանք ժամանակագրության խնդրին: Ե՛վ Հովհաննես Թլկուրանցին, և՛ 1367 թ. հիշատակարանն ու Վասիլ Մարաջախտը թշնամիների երկու արշավանքները թվագրում են երկու-երեք տարվա տարբերությամբ: Ներկայացված երկու տարբերակներից նախընտրելի և հավանական է թվում առաջինը, քանի որ 1367 թ. հիշատակարանը շարադրված է իրադարձությունների անմիջական տպավորությամբ, իսկ Վասիլ Մարաջախտի վկայության արժեքը բարձր պետք է համարել՝ նկատի ունենալով հեղինակի դիրքը և տեղեկություններ հավաքելու ու ստուգելու հնարավորությունները:

Չափազանց կարևոր է նաև հայոց սպարապետ Լիպարիտի հերոսական մահվան պատճառների քննությունը: Այս կապակցությամբ Վասիլ Մարաջախտի ժամանակագրության հաղորդած տեղեկությունն առավել քան համառոտ է. «Ու կերակի ի վաղուենէ եկին հեծմնով ու հետևկով, դրին կռիվ ու խանկրկեցին զքրիստոնէքն, ու սպանին Ճ (100) մարդ, ու սպանին զպարոն Լիպարիտ, պարոն Թորոս աւագ Մարաջախտուն որդին, ու այրեցին զքաղաքն ու զդարպասն...»[25]: Այսպիսով, ժամանակագրության մեջ հստակ և մանրամասնորեն չի ասվում, թե ինչ հանգամանքներում զոհվեց հայոց սպարապետը: Տվյալ դեպքերի մասին ավելի մանրամասն հաղորդումներ է պարունակում «Պատմութիւն քաջին Լիպարտի» ստեղծագործությունը:

Հեղինակը նշում է, որ երբ թշնամու բանակի մարտիկները հարձակվեցին մայրաքաղաք Սսի վրա, Կոստանդին թագավորը (1365-1373 թթ.), թշնամու առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով, ուղարկեց Լիպարիտ զորավարին: Լիպարիտի հեռանալուց առաջ արքան խոստանում է սպարապետին, որ ինքն ամուր կպահի Սսի կամուրջը, որպեսզի թշնամու բանակի մարտիկները չկարողանան հարվածել սպարապետին թիկունքից: Լիպարիտը հարձակվում է թշնամու վրա և ջախջախում մի մասին, որոնց մեջ էր նաև Մանչուկ ամիրան: Այնուհետև արքան, վերցնելով հեծելազորը, հետ է քաշվում միջնաբերդ և ավերում կամուրջը: Հետ վերադառնալիս սպարապետը չի կարողանում ներս մտնել միջնաբերդ, և այդ ժամանակ էլ նրա վրա թիկունքից հարձակվում են թշնամիները ու սպանում[26]:

Այսպիսով, եթե հավատանք այս հաղորդմանը, ապա պետք է կարծել, որ Լիպարիտ սպարապետն իրականում զոհ է գնացել հայոց արքայի կողմից կազմակերպված դավադրությանը: Այս մասին նշում է նաև Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունը. «Կու ասեն, թէ Կոստնդին թագաւոր պարոն Հեթմու որդին եղեր զհիծեղն ու տուր տուեց զպարոն Լիպարտին ու զքաղաքն տանկին...»[27]: Փաստորեն ժամանակագրի տեղեկությունը հաս-

---

[25] Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 197:

[26] Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 133:

[27] Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., 197:

տատում է նախորդ հեղինակի առաջ քաշած վարկածը: Հովհաննես Թլկուրանցին ևս նշում է, որ Լիպարիտ սպարապետը զոհվել է հայոց արքայի չարության պատճառով[28]:

Հետևաբար, եթե անվերապահորեն հավատանք աղբյուրների տեղեկություններին, պետք է ընդունենք, որ Լիպարիտ սպարապետը զոհվել է նյութված դավադրության հետևանքով: Այդ դեպքում, սակայն, հարց է առաջանում, թե ինչո՞ւ է հայոց արքան նման քայլի դիմել: Կոստանդին թագավորի մեղքը դժվար է ապացուցված համարել, քանի որ սկզբնաղբյուրները որևէ վկայություն չունեն Կոստանդին արքայի և Լիպարիտ սպարապետի հակասությունների կամ թշնամության մասին:

Հետևաբար, մնում է ենթադրել, որ հայոց թագավորը բավարար ռազմական ուժեր չունենալու պատճառով է հետ քաշվել միջնաբերդ: Ինչ վերաբերում է աղբյուրների պարունակած մեղադրանքներին, ապա այդ կարելի է առանձնահատուկ հոգեբանական իրադրության հետևանք համարել: Լիպարիտը շատ սիրելի անձնավորություն է եղել ժողովրդի և իշխանների շրջանում, որովհետև անձնվիրաբար ծառայել է հայրենիքին քսան երկարուձիգ տարիների ընթացքում:

Լիպարիտ սպարապետի ողբերգական մահը հուսալքման ալիք է առաջ բերել և մղել ժողովրդին՝ ամբաստանելու արքային չգործած մեղքի համար: Սակայն Կոստանդին արքային կարելի է մեղադրել միայն սիրված զորավարին փրկելու անկարողության և ոչ թե՝ նպատակադիր դավադրական գործողությունների համար: Չմոռանանք, որ Կոստանդինը թագավորում էր այնպիսի մի բարդ ժամանակաշրջանում, երբ Կիլիկիայի հայոց թագավորությունն արդեն իր անկումն էր ապրում, հետևաբար և չէր կարող հոգ տանել նույնիսկ իր նվիրված պաշտպանների անվտանգության մասին:

Լիպարիտ սպարապետի մահը մեծ կորուստ էր Կիլիկիայի հայկական թագավորության համար և իր բացասական ազդեցությունը թողեց իրադարձությունների հետագա ընթացքի վրա: Հայոց սպարապետի աճյունը թաղվեց Սսի պարսպի ներսում, եկեղեցու մոտ, իսկ նրա գերեզմանը մահմեդականները կոչում էին «Աղճա պապա»[29]:

Ի վերջո, պետք է փաստել, որ եթե դեպի Կիլիկիայի հայկական թագավորություն տեղի է ունեցել երկու արշավանք՝ 1367 և 1369 թթ., ապա՝ հայոց սպարապետ Լիպարիտը զոհվել է երկրորդ արշավանքի ժամանակ՝ 1369 թ.:

14-րդ դարի 60-ական թվականների երկրորդ կեսի ծանր իրավիճակը շարունակվեց մինչև 1375 թ., երբ թշնամու բանակը գրավեց Սիսը[30], և վերացվեց հայոց թագավորությունը:

---

[28] Է. Պիվազյան, նշվ. աշխ., էջ 60:

[29] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 431:

[30] Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 477, Ղ. Ալիշան, Հայապատում, հ. Բ, էջ 542, Հովհաննես Դարդել, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 144-150, Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 197: Տե՛ս նաև Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 62, Վ. Մաթևոսեան, Լեւոն Ե Լուսինեանի «Ամենայն Հայոց» տիտղոսի հարցին շուրջ, «Բազմավէպ», 1990, 1-2, էջ 236, Ն. Տեր-Միքայելյան, նշվ. աշխ., էջ 70, 180, Ն. Աղազարմ, Նօթեր Եգիպտոսի գաղութին վրայ, Կահիրէ, 1911, էջ 18, A. Atiya, նշվ. աշխ., էջ 470:

*Ռ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԳՐԱԲԱՐԸ ՄԻՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴՈՂ ԴԱՐԵՐՈՒՄ

Միջնադարյան հայ քերականները և իմաստասերները առանձնացնելով լեզուների յոթանասուներկու տեսակ՝ հայերենը դրանց մեջ բնութագրել են որպես «համեղական և գեղեցիկ»: Մեր հայրերի գնահատականը հաստատվում է գրաբարով մեզ ավանդված գրականության լեզվի վսեմությամբ և անկրկնելի շուքով:

Դասական հայերենն անցել է ուրույն մի ճանապարհ, որի արդյունքում այսօր փաստագրված է նրա երեք մեծ շրջանների՝ գրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի գոյությունը (որոնցից յուրաքանչյուրը համաժամանակյա կտրվածքով՝ իր խոսակցական և բարբառային տարբերակներով):

Կասկածից վեր է, որ աշխարհաբարի ծիլերը արդեն իսկ գոյություն են ունեցել գրաբարում: Սակայն հայերենի այսօրվա վիճակը հասկանալու և նաև ապագան կռահելու առումով խորհրդածելու առիթ են տալիս մի շարք հարցեր. որտե՞ղ էր այն սահմանագիծը, ուր մենք հոգեբանորեն հրաժեշտ տվեցինք գրաբարին. արդյոք այն եղե՞լ է համընդհանուր խոսակցական լեզու. ի՞նչն էր պատճառը հրաժարվելու նման շքեղ մի լեզվից. ե՞րբ է սկսել «ճեղքվածքներ» տալ գրաբարը և վերջապես արդյոք նմանատիպ երևույթներ կա՞ն այսօրվա մեր իրականության մեջ և եթե կան, ապա ուր է գնում հայերենը:

Այս հարցերի պատասխանները ստանալու առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Արսեն Այտընյանի «Քննական քերականութիւն արդի աշխարհաբար լեզուի» աշխատությունը, որտեղ մի կողմից Մխիթարյան հեղինակի գնահատականները գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի ճամփաբաժանների վերաբերյալ ավելի քան արդիական են, մյուս կողմից՝ փաստորեն, նա այն վերջին հեղինակներից էր, որ ստեղծագործեց արդեն «ծնցեալ ծերութեան» մեջ գտնվող գրաբարի կողքին, որի նկատմամբ ունենալով ջերմագույն վերաբերմունք, Այտընյանը, նույնիսկ կարելի է ասել, սրտի ցավով ընդունեց աշխարհաբարի հաստատումը և գնահատելով այն որպես փառահեղ ծնողի հարազատ ժառանգ՝ անկախ նրա տգեղ և անվայելուչ ձևերից, գրեց վերջինիս քերականությունը:

Գրեց, որովհետև համոզված էր, որ եթե բարձիթողի արվեր լեզուն կանոնակարգելու խնդիրը, ապա դա կվնասեր թե՛ արդեն պահպանության կարիք ունեցող գրաբարին (չնայած հայ մատենագրության կոթողային հուշարձաններ գրաբարով ստեղծվել և ստեղծվում էին Մխիթարյան հայրերի, այդ թվում նաև Այտընյանի կողմից) և թե՛ աշխարհաբարին, այն առումով, որ որքան ճիշտ մշակվեր արդեն հաղթարշավի դուրս եկած աշխարհաբարը, այնքան ավելի կուռ կլիներ նրա կապը գրաբարյան ձևերի հետ և ավելի հուսալի՝ լեզվի ապագան:

Եվ, այնուամենայնիվ, համընդհանո՞ւր լեզու էր արդյոք գրաբարը՝ իր ողջ հարստությամբ:

Իմաստասերներն ասում են՝ ծննդյան օրվա մեջ կա մահվան օրը: Հինգերորդ դարի ոսկեղենիկ գրաբարի բոլոր հուշարձաններում արդեն իսկ քերականի անվրեպ աչքը նկատել է «ճեղքվածքներ տվող» անկանոնությունները. «Հոս նախընթաց խակ մանկութեանն ու ապագա ծնգեալ ծերութեանը միջավայր հասուն հասակն է»[1],- գրում է Այտընյանը, ապա շարունակում. *«Եթէ ժամանակները նպաստաւոր են, կրնայ այն երջանիկ ճասակը երկար ժամանակ ի ծաղկի մնալ»*[2]:

*Եթէ ժամանակները նպաստաւոր են,*- ահա այն կարևոր գործոններից մեկը, որ չափազանց անբարենպաստ պայմաններ ստեղծեց գրաբարի՝ իբրև պետական լեզվի գոյության համար: Սա մի կողմից: Մյուս կողմից, հիշենք, որ ինչպես ժամանակին Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ արքան էին տարածում քրիստոնեությունը, այդպես էլ մեկ հարյուրամյակ հետո Մաշտոցն ուսուցանում և տարածում էր նորաստեղծ գրերին կոթնած գրաբարը՝ գրավոր տարբերակում անշուշտ սրբագործված: Կատարվում էր հսկայական աշխատանք երկրի տարբեր մասերում դպրոցներ հիմնելով, օրինակելով ու գաղափարելով, թարգմանելով և ստեղծագործելով: «Առատ գաղափարաց տէր ժողովուրդ մը՝ առատ ու ճոխ լեզուի ալ տէր է, գեղեցիկ մտաց տէր ըլլողը՝ գեղեցիկ լեզուի»[3],- գրում է Այտընյանը:

Այսինքն դաշտը բավականին առատ էր և գունեղ, որի հունձը մատենագիրներին հնարավորություն տվեց ստեղծելու հիասքանչ գործեր:

Իսկ ի՞նչ էր թողնվել դաշտից դուրս. այս հարցը անպատասխան է արդեն մի քանի հարյուրամյակ: Լեզվաբանները խմբվել են հակադիր երկու պատասխանների շուրջը. նրանք, ովքեր համոզված են, որ մինչ հինգերորդ դարը հայերը գրավոր հուշարձաններ չեն ստեղծել, բերում են հիմնականում մի փաստարկ. անհնար էր, որ գրականություն ունենալու պարագային մեզ ինչ-որ մի բան հասած չլիներ. Այտընյանը նույն կարծիքին է. «Եթէ յառաջները Մեսրոպայ դպրոցէն դուրս գրողներ եղած ըլլային, եթէ նոյն մատենագրական լեզուն յաջորդ ժամանակներու ալ օրինակ թողուած չըլլար, անշուշտ քանի մը կտոր գաւառական գրութիւններ կ'ունենայինք այսօր ձեռքներիս. և նոյն գաւառականը գոնէ Յունաց եւողացի բարբառոյն բախտակից եղած կ'ըլլար, որուն հիմակուան գոյութիւնը Լեսբացի և Բիովտացի սակաւաւոր բանաստեղծներուն պարտապան է յունական դպրութիւնը»[4]:

Մեզ համար, սակայն, հարցը մնում է առկախ: Չնայած, ինչպես ասում են՝ եղածը եղած էր ու փաստ էր, որ պալատական վսեմ կեցվածքով հպարտ ընթացող գրաբարի կողքին ապրում էր ժողովրդական բառ ու բանից օգտվող խոսակցական տարբերակը:

Եթե անգամ մի կողմ թողնենք այն բոլոր անկանոնությունները, որոնք գտնվել են հինգերորդ դարի դասականների գործերում, այնուամենայնիվ, դժվար է հավատալ, որ չորրորդ կամ հինգերորդ դարում հայ շինականը խոսել է այդ չափազանց բարդ համակարգ ունեցող լեզվով:

---

[1] Արսեն Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987 թ., էջ 36:

[2] Նույնը:

[3] Նույնը, էջ 33:

[4] Նույնը, էջ 45:

Այնքան, որքան անկասկած է բազմաշերտ հասարակության գոյությունը 4-5-րդ դարերում, առավել ևս ստույգ է, որ նրանք պետք է որ իրենց դաշտին հարմարեցված տարբերակով խոսեին. «Բնական է մտածել՝ որ երբ մէկ կողմանէ դպրաց դասու մը տկար եղեգներուն յեցած ազնուագոյն լեզուն իւր գոյութիւնը հաստատ բռնել կը ջանար, միւս կողմանէ ժողովրդեան բազմութիւնն իւր ցածագոյն բարբառը՝ նորանոր փոփոխութիւններովն ու աղաւաղութիւններովը մէկտեղ կը շարունակէր»[5],- սա է հայագետի միանգամայն ճիշտ եզրակացությունը:

Եթե չլինէր հակադրությունն ի սկզբանե, ապա դժվար ապագայի ոչ շատ մեծ ժամանակահատվածում, այդքան զգալիորեն մեծանար տարբերությունների աղեղը լեզվի գրավոր և խոսակցական տարբերակների միջև: Գրավոր լեզուն իր սպասարկման ոլորտներով և պահպանողական գործառույթներով, աստիճանաբար տեղի տվեց ավելի ու ավելի կենտրոնախույս վարքագիծ դրսևորող խոսակցական տարբերակին: Այս վերջինիս համար, որ հետո պիտի հորջորջվեր «աշխարհաբար», Այտընյանը գործածում է «առձեռնպատրաստ», «օրըստօրական», «առտնին լեզու» («որու մէջ ծնած ու սնած էր ժողովուրդը»[6]) տերմինները:

Բոլորին է հայտնի, թե ինչպիսի պատմական բախտ վիճակվեց գրաբարին. 9-10-րդ դարերում այն արդեն ամփոփվել էր վանքերի պատերից ներս: Եվ փաստորեն, անպայմանորեն լեզվի անդաստանում արմատավորված հակադրությունները, որոնք առկա էին լեզվի գրավոր և խոսակցական տարբերակների, խոսակցական դաշտում էլ՝ բարբառների և հասարակության տարբեր շերտերի միջև, մենք տեսնում ենք նաև այստեղ, նույնիսկ նույն դպրոցի գրեթե միաժամանակ ստեղծագործած հեղինակների լեզուների միջև: Ասվածն առավել ցայտուն է երևում, երբ իրար հետ ենք համեմատում Տաթևի համալսարանի չորս րաբունապետերի՝ Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Մատթեոս Ջուղայեցու և Առաքել Սյունեցու գործերի լեզուն: Նրանց օրոք վերականգնվեցին Տաթևի համալսարանի ավանդները, ծաղկուն մի քանի տասնամյակների ընթացքում նրանք կրթեցին բազմաթիվ հոգևորականներ, որոնց երկերը շարադրվեցին բացառապես գրաբարով:

Հովհան Որոտնեցին հայտնի է իր փիլիսոփայական աշխատություններով («Յովհաննու Որոտնեցւոյ Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», «Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի աշխատասիրեալ ի Գրիգորէ աշակերտէ», «Համառօտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծիցն ի յերկասիրութեան մեծ հռետորին հայոց Յովհաննու Որոտնեցւոյ», «Համառօտ լուծմունք Պերիարմենիաս գրոցն Արիստոտէլի հաւաքեալ ի Գրիգորէ աշակերտէ»): Ունի նաև ճառեր և քարոզներ: Աշխատությունները հիմնականում գրի է առել Տաթևացին, որն ուսուցչի մահից հետո նաև խմբագրել է դրանք: Եվ քանի որ աներկբա է նրա ակնածանքը ուսուցչի հանդեպ, ապա պետք է ենթադրել, որ Տաթևացին հնարավորինս հարազատ է մնացել իր ուսուցչի հեղինակային խոսքին:

Պայմանավորված նյութի ընտրությամբ՝ աստվածաբանական դրույթներ և դրանց փիլիսոփայական վերլուծություններ, Որոտնեցու լեզուն կանոնիկ է, ցամաք, զերծ՝ խոսակցական լեզվի ներկապնակի գունեղությունից: Բերենք «Վերլուծութիւն Ստորոգութեանց

---

[5] Նույնը, էջ 48:

[6] Նույնը, էջ 37-48:

Արիստոտէլի» աշխատության առաջին իսկ հատվածը. «Ստորոգութիւնք վասն այն կոչին, զի տասներին ամենայն սեռականագոյն սեռք են և ի վերայ տեսակաց ստորոգին: Եւ զի բազումք գոն շարադրութիւնք փիլիսոփայից, վասն է՞ր սա ամենեցուն նախադաս եղև: Ասեն վասն երկու պատճառի. մին՝ զի սա քան զայլսն պարզ է և յայտնի, յաղագս որոյ այլոցն իբրև մուտ և ներածութիւն եղաւ. երկրորդ՝ զի տասն սեռականագոյն սեռքն զբոլոր գոյքս պարունակէ: Եւ որ զսա ուսանի, զբոլորիցն ունի գիտութիւն, վասն այն սկիզբն է ամենայն գրեղոցն ի նմանէ»[7]:

Անգամ այն փաստը, որ նյութը դյուրըմբռնելի դարձնելու նպատակով Տաթևացին շարադրանքը հաճախ մատուցել է հարց ու պատասխանի ձևով, միևնույն է, նույնիսկ այդ հատվածներում Որոտնեցու ոճը մնում է խրթին.

«Բնաբան. Եւ նոցա տեսակացն, որք ոչ են սեռք:

*Լուծումն.* Մինչև ցայս վայր ըստ խոր բաժանմանն քննեաց, իսկ աստ ըստ լայնութեանն ուսուցանէ, զի զտեսակագոյն տեսակսն ի միմեանս համեմատէ և զանհատս ընդ այլոյ անհատիցն: Բայց խնդրելի է, թէ վասն է՞ր նախ անհատիցն առնէ քննութիւն, որպէս յառաջն արար, և ապա տեսակացն: Գիտելի է, զի անհատին քննութիւնն յայտնի էր, իբր թէ յառաջ ասացեալ այն, որ ասաց իսկագոյն և նախկին և մանաւանդ գոյացութիւն է անհատն, իսկ աստ նախ զտեսակացն ուսուցանէ, որ անյայտ էր մեզ»[8]:

Հաջորդ հատվածը բերվում է «Համառօտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծիցն ի յերկասիրութեան» աշխատությունից, որտեղ դարձյալ պատասխանը հասկանալի դարձնելու նպատակով Տաթևացու կողմից մտցրած հարցադրումը միևնույնն է, Որոտնեցու ոճի բարդությունը չի հարթել.

Նպատակը բոլորովին նոր ոճ է թելադրել Գրիգոր Տաթևացուն: Մի կողմից լինելով նախնյաց լեզվի, այսինքն՝ գրաբարի, ջերմ պաշտպան, մերժողական վերաբերմունք ունենալով խոսակցական լեզվի կոշտ ու կոպիտ նորամուծությունների նկատմամբ[9], մյուս կողմից՝ Տաթևացին հրաշալիորեն օգտվել է ժողովրդական բառ ու բանից, և նրա հսկայածավալ գրական ժառանգությունը խոսում է հօգուտ այն փաստի, որ գրաբարը կարող էր աստիճանաբար դառնալ մատչելի՝ չօտարվելու պարագայում, այսինքն՝ եթե մենք ունենայինք պետականություն, այն էլ լեզվի նկատմամբ հոգածություն հանդես բերող, ապա արդի հայերենի փոխարեն հավանաբար այսօր կունենայինք գրաբարին շատ ավելի մոտ կանգնած մի լեզու՝ դարեր շարունակ հարստացած ժողովրդական բառ ու բանից, բարբառներից և լեզվի մյուս շերտերից:

Տաթևացին գրում է. «Իսկ լուծումն հարցմանցս ... *ոչ գեղջուկ իմն* աշխարհական խօսից հարմարեալ: Այլ զպիտանիս եկեղեցւոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ մի-

---

[7] Յովհաննու Որոտնեցւոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտէլի, Երևան, 1956 թ., էջ 2:

[8] Նույնը, էջ 44:

[9] Առաջին հայացքից անսովոր է թվում Տաթևացու բացասական վերաբերմունքը նրա օրերում արդեն համագործածական քերտում գտնվող ներկա ժամանակաձևի կազմության «կու» եղանակիչի հանդեպ, մինչդեռ նրա հիմնավորումները համոզիչ են և փաստարկված (Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729 թ., էջ 588, տես՝ նաև Ս. Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր, Երևան, 2002 թ., էջ 58):

այն տարեալ: Ուղղակի ճշգրտութեան և անըստգիւտ իմացման»[10]: Եվ իսկապես. իր գրական ժառանգության մեջ Տաթևացին զուգորդում է գրաբարի հրաշալի իմացությունը խոսքը հեշտալուր, ընկալելի դարձնող բազմաթիվ ոճական հնարանքների հետ, որն ի վերջո նրան դարձրել է Որոտնեցուց էականորեն տարբերվող մի հեղինակ՝ անգամ վերջինիս աշխատությունների շարադրողը և խմբագրողը լինելու պարագայում:

Ճակատագրի բերումով դամբանականներ գրեցին և՛ Գրիգոր Տաթևացին, և՛ Մատթեոս Ջուղայեցին, և՛ Առաքել Սյունեցին. այսինքն՝ նույն ժամանակաշրջանի, նույն դպրոցի, միևնույն սկզբունքների շուրջը համախմբված լինելու և հանուն հավատի ստեղծագործելու և կողք-կողքի ապրելու հանգամանքին ավելանում է նաև թեմայի ընդհանրությունը:

1402 թվականին, դեռ Տաթևացու կենդանության օրոք, Տաթևի համալսարանի րաբունապետությունը ստանձնեց և ուսուցչին, այսինքն՝ Տաթևացուն փոխարինեց Մատթեոս Ջուղայեցին: Նա ըստ ամենայնի հետևեց Տաթևացուն: Կարելի է շատ ընդհանրություններ գտնել նաև նրա և Տաթևացու քարոզների միջև: Ընդհանրություններ կան նաև Տաթևացուն նվիրված նրա դամբանականի և Որոտնեցուն նվիրված Տաթևացու ներբողյանի միջև, սակայն ամենաթռուցիկ համեմատության դեպքում անգամ աչքի է զարնում, որ Ջուղայեցու ոճը ավելի պարզ է:

Առաքել Սյունեցին, որն ընդամենը չորրորդն էր հերթականությամբ և երկար տարիներ աշակերտել էր Տաթևացուն և Ջուղայեցուն, Տաթևացուն նվիրված դամբանականում դեռ պահպանում է նախորդների որդեգրած ոճը. «Եւ թէ լեզուաւ իմաստնոց օրհնաբանիս՝ չէ ինչ զարմանք, այլ այս է սքանչելի, զի զլիմար իմաստնացուցանես, զի զխաւարեալս լուսաւորես, զի զամաչեալս յառաջ կոչես, զի զխորթացեալս որդիացուցանես, զի զանպիտանս ախորժես»[11]: Սակայն հետագայում գրված նրա գործերը և հատկապես «Ադամգիրքը», ինչպես և «Վասն երկոտասան կենդանակերպիցն» քերթվածը գրված են չափազանց պարզ գրաբարով.

«Աշխարհս ունի զձև մարդոյ
Երկոտասան անդամք մարմնոյ.
Կենդանակերպք ըստ այս խորհրդոյ
Է բաժանեալ ի վերայ մարմնոյ.
Խոյն է գլուխ, որ է պարսիկ
Ցուլն՝ պարանոց՝ բաբելացիք...
Խեցգետին՝ Հայք՝ լանջքն առ մարդիկ,
Առիւծն է կողք՝ ասէացիք»[12]:

Այսպիսով, գրաբարի նահանջը պայմանավորված էր ոչ այնքան խրթին ու ոչ մատչելի դարձած լինելու պատճառով, որքան ժամանակի վիճակն ու պետականություն չունենալը

[10] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729 թ., էջ 772:
[11] Նույնը, էջ 717:
[12] Մատենադարան, ձեռագիր հ.1151, էջ 219բ:

կատարում էին իրենց ավերածությունը. սկսվել էին *«ավերմունքի դարերը»* (բնութագրումը Մանուկ Աբեղյանինն է):

Մեր աչքի առաջ ունենալով գրաբարի անցած ուղու պատմությունը, այսօր արդեն իսկ կարիք կա մտահոգվելու այն փաստով, թե ուր է գնում հայերենը: Լեզվամտածողության խիստ պարզունակ ձևերի տենդագին փնտրտուքը այն սպառնալիքն է, որը որոշ ժամանակ հետո կարող է դուրս գալ հաղթարշավի, եթե այսօր չդրվի լեզվամտածողության բարոյականության խնդիրը. գրաբարը, միջին հայերենը, բարբառները այն անսպառ գանձարանն են, որոնց անընդհատ պետք է դիմել՝ ապահովելու հայերենի ապագան:

Գաղտնիք չէ, որ լեզուն մտքի գործիք է, սակայն ոչ պասիվ գործիք. նա հզոր ներգործուն միջոց է՝ ի թիվս այլ գործոնների: Հայերենի նախորդ տարբերակները, որքան էլ որ անցյալ, կարող են մի սպասարկման շտեմարան դառնալ արդի և ապագա հայերենի համար, առավել ևս, որ այսօր ունենք պետականություն, որը կարող է հոգ տանել մեր ազգային արժեքների համար:

*ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱԼՈՅԱՆ*

# 1800 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1800 թվականի կաթողիկոսական ընտրությունները համընկան տարածաշրջանում ռուս-թուրքական և ռուս-պարսկական ազդեցության տարածման և դիրքերի ամրապնդման համար մղվող պայքարի հետ: Այս տերություններից յուրաքանչյուրն աշխատում էր միջամտել կաթողիկոսական ընտրություններին՝ ձգտելով այդ պաշտոնում իր շահերից բխող թեկնածուի հաստատմանը: Պետության բացակայության պայմաններում Հայոց Եկեղեցու բացառիկ դերը հայ ժողովրդի թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր կյանքի կարգավորման գործում նրան դարձրել էին պայքարի թատերաբեմ, որտեղ կրած հաղթանակով էր սանս պայմանավորված լինելու այդ տերությունների ազդեցության տարածումը հայ ժողովրդի և հայկական տարածքների վրա: Ահա նման պայմաններում իրականացվեցին 1800 թ. կաթողիկոսական ընտրությունները:

1799 թ. դեկտեմբերի 27-ին[1] Վաղարշապատում, երկարատև հիվանդությունից և տառապանքներից հյուծված, 77 տարեկանում վախճանվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցին (1780-1799 թթ.): Վեհափառի երկարատև հիվանդությունը պատճառ էր հանդիսացել, որպեսզի նոր կաթողիկոսի ընտրության հարցը քննարկվեր դեռևս նրա կենդանության օրոք: Կաթողիկոսական Աթոռին հավակնող թեկնածուների թվում էր նաև ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղության Երկայնաբազուկը: Նա, որ 1773 թվականից վարում էր այդ թեմը, աչքի էր ընկել իր օգտաշատ գործունեությամբ և երբեք չէր թաքցրել իր մտադրությունը բազմելու Էջմիածնի գահին: Դեռևս Ղուկաս կաթողիկոսի օրոք նա իրեն անվանում էր «Էջմիածնի կաթողիկոսական տեղակալ», իսկ Ղուկասն էլ միշտ կրկնելիս էր եղել՝ «...*ինձ ինչ մնաց այս կեանքից, որ քեզ ինչ մնայ, Յովսէփ վարդապետ*...»[2]:

Արղությանի ծավալած գործունեության արդյունքում էր, որ Հայաստանի և հայ ժողովրդի հարաբերությունները Ռուսական կայսրության հետ նոր ու ավելի ամուր հենքի վրա դրվեցին: Նրա շնորհիվ Ռուսաստանի հայերը ստացան բազում արտոնություններ և հնարավորություն ձեռք բերեցին ապրելու այնպիսի պայմաններում, որպիսիք չունեին այնտեղ բնակվող ազգային այլ փոքրամասնությունները: Նա կառուցեց Նոր Նախիջևան և Գրիգորիոպոլ քաղաքները, հիմնեց եկեղեցիներ, դպրոցներ, տպարաններ: Պետք է նշել, որ Արղությանի գործունեությունը չէր սահմանափակվում միայն Ռուսաստանով, նրա հաստատած կապերը արտերկրի հայկական շրջանների հետ մեծապես նպաստեցին այդ գաղութներում ազգային-հոգևոր ինքնության պահպանմանը:

---

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 45:

[2] Հուսիկ. վրդ. Մովսիսյան, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո պատմություն, Վաղարշապատ, 1884, էջ 324:

Հաշվի առնելով այս վաստակն ու ճանաչումը, թվում էր, թե Հ. Արղությանը պետք է լիներ կաթողիկոսության միակ նախընտրելի թեկնածուն: Նա արդեն սկսել էր նախապատրաստվել կաթողիկոսական ընտրություններին և այդ նախապատրաստական աշխատանքները կենտրոնացրել էր Թիֆլիսում, որտեղ բնակվում էին նրա ազդեցիկ ազգականները, և բացի այդ, ինքը մեծ հռչակ էր վայելում վրաց արքունիքում և Գեորգի XII թագավորի մտերիմ բարեկամն էր, որն էլ իր աջակցությունն էր հայտնել նրան :

Մայր Աթոռի միաբանները, հստակ իմանալու համար Արղությանի մտադրությունները, մի նամակ են պատրաստում, որը Դավիթ արքեպիսկոպոսը 1799 թ. նոյեմբերի 27-ին ուղարկում է նրան[3]: Այս նամակն արտաքուստ այն տպավորությունն է թողնում, թե իբր Էջմիածնի միաբաններն ամբողջությամբ նրա թեկնածության կողմնակիցն էին, և մնում էր, որ ինքը՝ Արղությանը տար իր համաձայնությունը:

Իրականությունը, սակայն, այլ էր: Ղուկաս Կարնեցու հենց թաղման օրը, դեկտեմբերի 29-ին, նոր կաթողիկոս ընտրելու համար Մայր Աթոռի միաբանների գումարած ժողովում[4] պարզ դարձավ, որ Հ. Արղությանի անունը նախընտրելի թեկնածուների ցուցակում բացակայում էր: Այդ շրջանում կաթողիկոսին ընտրում էին Էջմիածնի միաբանները, Երևանի մելիքներն ու ազդեցիկ աղաները, իսկ վերջին խոսքը պատկանում էր Կ. Պոլսի հոգևորականությանը և հաստատվում թուրքական կառավարության կողմից:

Չնայած որ Արղությանը եղածների մեջ ամենաարժանավորն էր, բայց միաբանները վախեցան ընտրել նրան, քանի որ նա *«Ռուսին մարդն էր»*[5] և նրա ընտրությունը դժգոհություն կառաջացներ պարսից և օսմանյան իշխանություններում, որոնց անմիջական ազդեցության և իշխանության տակ էր գտնվում Հայաստանը, իսկ այդ պետությունները թշնամական հարաբերությունների մեջ էին Ռուսաստանի հետ: Հ. Արղությանը, սակայն, կարծում էր, որ իր կաթողիկոսանալով կարող էր Ռուսաստանի միջամտությամբ մահմեդական լծից ազատել Հայաստանը, որը համարելով վտանգավոր մտադրություն, Էջմիածնի միաբանները որոշեցին քննարկել այլ թեկնածուների հնարավորությունները ևս: Սկսված քննարկումների արդյունքում առաջարկվեցին երեք թեկնածուներ՝ Կ. Պոլսի Պատրիարք Դանիել արքեպիսկոպոսը, Ռուսաստանում Էջմիածնի նվիրակ Եփրեմ արքեպիսկոպոսը և Կեսարիայի առաջնորդ Ստեփանոս Սեբաստացին:

Այս թեկնածուների շուրջ բավական բուռն քննարկումներ եղան: Ոմանք կարծում էին, թե Դանիելը արժանի թեկնածու էր, բայց քանի որ նոր էր ստանձնել Կ. Պոլսի պատրիարքությունը, ուստի հնարավոր էր, որ տեղի միաբաններն ու ժողովուրդը չհամաձայնվեին, որպեսզի նա գար Էջմիածին: Եփրեմի համար ասում էին, որ շատ դժվար կլիներ նրան *«Առյուծի»*[6] ձեռքից առնել, և բացի այդ՝ Ռուսաստանից էր, իսկ կաթողիկոսին հաստատողները մահմեդական իշխանություններն էին:

[3] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, Թիֆլիս, 1902, էջ 1:

[4] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 2218:

[5] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 2:

[6] Մ. Մսերյանց, Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի, Մոսկվա, 1876, էջ 15:

Ստեփանոս Սեբաստացու հարցն էլ նույնիսկ լուրջ չքննարկվեց, քանի որ նա Էջմիածնի միաբան չէր և չէր կարող դառնալ կաթողիկոս, ուստի առաջարկվեց աթոռակալ Դավիթ արքեպիսկոպոս Ղորղանյանի թեկնածությունը, որին էլ կտրականապես դեմ էր Հովհաննես Գեղարդակիրը: Նրանց միջև ծագած վիճաբանության պատճառով, առանց թեկնածու ընտրելու, ժողովը ցրվեց: Հաջորդ օրը, դեկտեմբերի 30-ին, Մայր Տաճարում դարձյալ միաբանները ժողով գումարեցին և որոշեցին, որ թեկնածուներ պետք է լինեն Դանիել և Եփրեմ արքեպիսկոպոսները: Սակայն Եփրեմի անունը ավելացրին միայն նրա համար, որ եթե Կ. Պոլսի մեծամեծները դեմ լինեին Դանիելի թեկնածությանը, ընտրեին Եփրեմին:

Միաբանության անունից պատրաստվեց պաշտոնական մի գրություն՝ մահսեր, որի վրա վերոհիշյալ երկու թեկնածուների անունները ոսկեզօծ ծաղիկներով և գեղեցիկ նկարներով էր գրված, և բացի միաբաններից այդ գրության տակ ստորագրել էին նաև Երևան քաղաքի մելիքները ու յուզբաշիները: Երևանի Մահմեդ խանից ևս երկու նամակ վերցրին՝ մեկն ուղղված Դանիել արքեպիսկոպոսին, մյուսը՝ Օսմանյան տերությանը[7]:

Հավաքելով այս բոլոր գրությունները, Էջմիածնի միաբանները դրանք վերջնական տեսքի բերեցին 1800 թ. հունվարի 2-ին և որոշեցին Ծննդյան տոներից հետո մի հարմար թեկնածու գտնել և այդ գրությունները ուղարկել Կ. Պոլիս:

Դավիթ արքեպիսկոպոս Ղորղանյանը, որ չէր հայտնվել թեկնածուների ցուցակում և գժտված էր միաբաններից շատերի հետ, որոշեց ջանք չխնայել, որպեսզի այդ թղթերը տանողը լինի ինքը՝ հույս ունենալով, որ Դանիելի կաթողիկոսանալու դեպքում, կկարողանա ստանձնել Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնը: Իր եղբոր՝ Բարսեղի միջոցով, որն ազդեցիկ մելիք Աբրահամ Աղամալյանի փեսան էր, կարողացավ Էջմիածնի միաբանների վրա ճնշում գործադրելով հասնել իր ցանկությանը և 1800 թ. հունվարի 16-ին, որպես մահսերատար, վերցնելով այդ գրությունները դուրս եկավ Էջմիածնից՝ Կ. Պոլիս գնալու համար[8]:

Մահսերական թղթում, որ թվագրված է 1800 թ. հունվարի 16-ով, մասնավորապես կարդում ենք, որ Էջմիածնի միաբանները Օսմանյան իշխանությանը տեղեկացնում էին կաթողիկոս Ղուկաս Կարնեցու մահվան, ժողովի որոշման և Դանիելի ընտրության մասին[9]: Այնուհետև գրված էր, որ եթե թույլ չտրվի Դանիելին գալ Էջմիածին, նոր միայն հաստատել Եփրեմ արքեպիսկոպոսի թեկնածությունը: Էջմիածնի միաբանները մեկ նամակ էլ գրել էին Դանիել արքեպիսկոպոսին՝ նրան տեղյակ պահելով ժողովի որոշման մասին և խնդրելով, որ նա անպայման տա իր համաձայնությունը և շտապի Մայր Աթոռ:

Դավիթ արքեպիսկոպոսը Կարսի վրայով պետք է անցներ Կարին, ապա նոր միայն շարժվեր դեպի Կ. Պոլիս: Սակայն նա դեռ Կարին չէր հասել, երբ Ղուկաս Կաթողիկոսի մահվան լուրը հասավ Թիֆլիս և մեծ շփոթություն առաջացրեց: Տեղի հայ և վրաց իշխաններն ու մեծամեծներն անմիջապես Հովհաննես Գեղարդակրին տարան Գեորգի XII թագավորի մոտ, որն էլ նրան կտրուկ հայտնեց, որ Ղուկասից հետո կաթողիկոս պետք է դառնա Հովսեփ Արղությանը, և միայն այդ դեպքում հնարավոր կլինի երկու ժողովուրդ-

---

[7] «Կռունկ Հայոց աշխարհի», Տփղիս, 1863, էջ 744:

[8] Մ. Օրմանյան. Ազգապատում, հ. II, էջ 2219:

[9] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, էջ 5:

ների միջև հետագա համագործակցությունը և Սուրբ Գեղարդի Էջմիածին վերադարձնելը[10]:

1800 թ. հունվարի 27-ին Հովսեփ Միրիջքարբաշի իշխանազունը և Առաքել քահանան, որպես վրաց բանագնացներ, Էջմիածին բերեցին Գեորգի XII թագավորի, նրա որդի՝ արքայորդի Դավթի, Վրաստանում ռուսական իշխան Պ. Կավալսկու, Հովհաննես Գեղարդակրի, Թիֆլիսի հայ հասարակության և այլոց նամակները՝ հասցեագրված միաբաններին, որոնցում պահանջում էին, որպեսզի Հ. Արղությանն անպայման ընտրվեր Հայոց կաթողիկոս[11]: Այս պահանջն Էջմիածնի միաբաններին հարկադրեց նոր ժողով գումարել և նորից քննարկել կաթողիկոսության թեկնածուների հարցը:

Այդ ժողովն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել հունվարի 27-ին կամ 28-ին, քանի որ վրաց բանագնացներն Էջմիածին են հասել 27-ին, իսկ միաբաններն էլ ամսի 28-ին Դավիթ Ղորղանյանին գրած նամակում արդեն խոսում են ժողովի որոշման մասին: Ինչևէ, այդ ժողովում կազմվում է մի նոր մահսեր, որտեղ առաջինը դարձյալ գրվում է Կ. Պոլսի Պատրիարք Դանիելի, ապա Եփրեմ արքեպիսկոպոսի փոխարեն՝ ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի անունը: Սակայն այդ մահսերի թե՛ շարադրանքից և թե՛ ձևից պարզ է դառնում, որ միաբանները ոչ իրենց ցանկությամբ են այնտեղ նշել Հ. Արղությանի անունը, և նորից խնդրում են ընտրել Դանիելին և միայն եթե դա հնարավոր չլինի, ընտրեն Հ. Արղությանին:

Այս մահսերը, ինչպես նաև դրան ուղեկցող մի նամակ՝ հասցեգրված Դավիթ արքեպիսկոպոսին, միաբանները ուղարկեցին Կարսում գտնվող Գնորգ աղային, որպեսզի նա դրանք հանձնի Դավթին: Այդ նամակում միաբանները Դավթին տեղյակ էին պահում եղելությունը և նոր մահսեր գրելու պատճառը, բայց չեղյալ չէին համարում հունվարի 16-ի մահսերը և խնդրում էին, որ Դավիթն այդ երկու մահսերներն էլ հանձնի Կ. Պոլսի ներկայացուցիչներին:

1800 թ. հունվարի 29-ին Էջմիածնի միաբանները նամակներ են պատրաստում նաև արքայորդի Դավիթ միրզայի և ռուսական իշխան Պյոտր Կավալսկու համար, որտեղ տեղեկացնում էին նոր մահսերի և դրանում Հ. Արղությանի անվան գրելուն, ինչպես նաև բացատրում, թե ինչու առաջին թղթում չի եղել նրա անունը, և խնդրում էին ետ վերադարձնել Ս. Գեղարդը[12]:

Հ. Արղությանին 1800 թ. հունվարի 29-ին գրած նամակում միաբանները հաղորդում էին երջանկահիշատակ հայրապետի վախճանման մասին, ապա ասում, թե ինչպես բոլորը ցանկանում էին, որ նա դառնար կաթողիկոս, սակայն հաշվի առնելով նրա ռուսամետ դիրքորոշումը, և որ Հայաստանը գտնվում էր մահմեդականների լծի տակ, ինչպես նաև, որ միգուցե *«...ձեզ յոժարելի չիցէ ի կայսերական ապահով երկրէ գալ ի կալուած տէրութեան այլազգեաց...»*, որոշեցին նրա անունը չգրել առաջին մահսերում: Բայց այն բանից հետո, երբ վրաց արքան և այլ մեծամեծներ պահանջեցին, կազմվեց նոր պաշտո-

[10] «Կռունկ Հայոց աշխարհի», 1863 թ., էջ 745: Այն Ղուկաս Կաթողիկոսն էր ուղարկել Թիֆլիս՝ համաճարակին վերջ տալու համար, իսկ Հովհաննես արքեպիսկոպոսն էլ դրա պահապանն էր:

[11] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, էջ 2221:

[12] «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, էջ 295, 299:

նագիր, որտեղ և գրվեց նրա անունը Դանիելի կողքին, որպես համահավասար ցանկալի և ընդունելի թեկնածու[13]:

Ինչպես երևում է նամակից, միաբանները ավելի շատ իրենց առջև խնդիր էին դրել նրան հետ պահելու կաթողիկոսության մտքից, քան հրավիրելու Էջմիածին: Նմանատիպ նամակ էլ միաբանները ուղարկեցին Եփրեմ արքեպիսկոպոսին, բայց դա նրան նույնիսկ չվշտացրեց, քանի որ նա չէր ցանկանում դառնալ կաթողիկոս և դեռևս 1797 թ. էր վստահեցրել Հ. Արղությանին, որ նա պետք է լիներ հաջորդ կաթողիկոսը: Իսկ Հ. Արղությանը դեռ չստացած միաբանների նամակը և տեղյակ չլինելով մահզերների գոյությանը և միայն լսած լինելով հայրապետի վախճանման մասին, հաստատակամ կաթողիկոս դառնալու իր ձգտմանը՝ սկսեց գործել:

Նախ նա կաթողիկոսի մահվան լուրը հաղորդեց Պավել I կայսրին և բնականաբար ստացավ նրա համաձայնությունը իր կաթողիկոս ընտրվելու հարցում: Նշենք, որ 1783 թ. «Գեորգևյան դաշնագրով» Վրաստանն արդեն ամբողջությամբ ռուսական ազդեցության տակ էր, և այժմ Ռուսաստանը ձգտում էր հաստատվել նաև Հայաստանում, իսկ Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու զգուշավոր քաղաքականությունը չէր գոհացնում նրան:

Հայոց Եկեղեցու պատմության ողջ ընթացքում Ռուսաստանն առաջին անգամ սկսեց միջամտել Հայոց կաթողիկոսի ընտրություններին և նույնիսկ ուղղորդել դրանք: Հ. Արղությանին ավելի ոգևորելու համար Պավել կայսրը 1800 թ. մարտի 22-ին նրան շնորհեց իշխանի տիտղոս՝ Արղության-Երկայնաբազուկ տոհմանունով, և դասեց ռուսաց ազնվականության շարքը[14]: Պավել կայսրի որոշման համար հիմք էր հանդիսացել Հ. Արղությանի կողմից իրեն ներկայացված տոհմագրությունը: Հայ հոգևորականի ազնվական լինելը հաստիկ հրովարտակով 1783 թ. օգոստոսի 28-ին հաստատել էր վրաց Հերակլ թագավորը[15]: Բացի այդ, Ռուսաստանում իր գործունեության համար Հ. Արղությանը հանդիսանում էր ռուս ազնվականության «ընկերակից և անդամ» դեռևս 1792 թվականից[16]:

Պավել կայսրի համաձայնությունը ստանալուց հետո, Հ. Արղությանը 1800 թ. փետրվարի 1-ին նամակներ է ուղարկում Կ. Պոլսի մեծամեծներին և Կ. Պոլսի Պատրիարք Դանիել արքեպիսկոպոսին՝ տեղեկացնելով, որ ինքը պետք է դառնա կաթողիկոս, և որ այդ հարցում վայելում է ռուսաց և վրաց իշխանությունների աջակցությունը, և փաստորեն փորձում էր ստանալ նաև Կ. Պոլսի համաձայնությունը[17]: Այս նամակներն ուղարկելուց հետո նա ստացավ Էջմիածնի միաբանների հունվարի 29-ին իրեն գրած նամակը: Բնական էր նրա ապրած զայրույթն ու ցասումը, երբ իրեն միակ թեկնածու կարծելով, իմացավ, որ իր անունը միայն որոշակի ճնշումից հետո էր գրվել երկրորդ մահզերում, իսկ առաջինում նույնիսկ չէր էլ եղել:

Գտնվելով Ս. Պետերբուրգում և տեղյակ չլինելով, արդյոք մահզերատար Դավիթը հասել էր Կ. Պոլիս թե ոչ, արդյոք արդեն ընտրել էին նոր կաթողիկոս, թե ոչ, նա փետրվարի

---

[13] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, էջ 11-16:

[14] Հ. Տեր-Աբրահամյան, Հովսեփ Չորրորդ Երկայնաբազուկ Արղությանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 20:

[15] «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, հավելված, III:

[16] Տե՛ս նույնը, էջ 148:

[17] Տե՛ս նույնը, գիրք Ե, էջ 19, 16:

23-ին Մայր Աթոռի տեղապահ Մինաս արքեպիսկոպոսին և մարտի 8-ին Եփրեմ և Հովհաննես արքեպիսկոպոսներին գրած նամակներում իր խորը հիասթափությունն ու դժգոհությունն էր հայտնում նրանց, նաև պատրաստվում է դիմել կայսրին, որպեսզի նա Կ. Պոլսում ռուսաց դեսպան Վ. Թամարովի միջոցով ճնշում գործադրի պատրիարքի և իշխանների վրա:

Չբավարարվելով, սակայն, նրանց գրած նամակներով՝ Հ. Արղությանը մարտի 23-ին մի նամակ էլ գրում է հենց Դանիել արքեպիսկոպոսին և նրան տեղյակ պահում, որ ինքն է կաթողիկոսական գահի իրավական ժառանգորդը, և հորդորում նրան ընտրված լինելու դեպքում չմտնել Էջմիածին և չօծվել, քանի որ արդեն ռուսական իշխանությունները մի պատգամավոր են ուղարկել Թամարովի մոտ, իսկ ինքն էլ շուտով Կարապետ վարդապետին որպես պատվիրակ պետք է ուղարկի իր մոտ:

Մինչ Հ. Արղությանը զբաղված էր նամակագրությամբ, Կ. Պոլսում արդեն տարածվել էր Ղուկաս Կարնեցու մահվան բոթը, և այնտեղ տեղյակ էին, որ կաթողիկոս ընտրելու իրավունքը լիովին թողնված էր իրենց: Սակայն, ինչ-որ ներքին համաձայնությամբ պայմանավորվել էին, որ մինչև պաշտոնական պատգամավոր չգար Կ. Պոլիս, իրենք չէին հայտարարելու հայրապետի մահվան մասին և նույնիսկ չէին քննարկելու կաթողիկոսական ընտրության հարցը: Հենց այս ընթացքում էլ, 1800 թ. մարտի 18-ին, որը Մեծի Պահոց Դատավորի կիրակին էր, մահմեդատար Դավիթ եպիսկոպոսը հասավ Կ. Պոլիս: Այս պահից սկսած, նոր միայն Եկեղեցում Ղուկաս Կարնեցին սկսեց հիշատակվել որպես հանգուցյալ հայրապետ: Սկսեց քննարկվել նաև նոր կաթողիկոս ընտրելու համար գումարվելիք ժողովի կազմակերպման հարցը: Որոշ ձգձգումներից հետո այն վերջապես Դանիել Պատրիարքի գլխավորությամբ տեղի ունեցավ 1800 թ. մարտի 28-ին[18]:

Մահմեդները կարդալուց հետո Դանիելը տվեց իր համաձայնությունը ստանձնելու կաթողիկոսությունը: Նրա թեկնածությունը պաշտպանողների մեջ էին նաև Դավիթ և Գալուստ արքեպիսկոպոսները: Դավիթը, սակայն, տեղյակ չէր, որ մահմեդների հետ մեկտեղ Կ. Պոլիս էր բերել միաբանների գրած մի նամակ, որտեղ նրանք հստակ ներկայացնում էին, թե նա ինչպես էր մելիք Աբրահամի միջոցով ստացել այդ պարտականությունը, և խնդրում էին, որ ոչ մի լուրջ առաջադրանք չտան նրան[19]:

Չնայած որ Դանիելը տալիս էր իր համաձայնությունը, բայց նրա կաթողիկոսացմանը դեմ էին Կ. Պոլսի ամիրաները ու մեծամեծները, որոնք չէին ցանկանում, որ նա թողնի պատրիարքությունը, և բերելով բազում պատճառներ, վերջապես կարողացան համոզել նրան հրաժարվելու այդ մտքից: Փաստորեն մնում էր միայն Հովսեփ Արղությանը, բայց նրա թեկնածությանը կտրուկ դեմ էին պոլսեցիք, բացի այդ, մահմեդից էլ երևում էր, որ Էջմիածնի միաբանները ևս ոգևորված չէին նրա ընտրության հարցում: Այդ ժամանակ Դանիելն առաջարկեց քննարկել առաջին մահմեդում գրված Եփրեմ արքեպիսկոպոսի հարցը: Սակայն այստեղ էլ, ինչպես Էջմիածնում, նրան համարեցին Հովսեփի մարդը և մերժեցին նաև նրա թեկնածությունը:

---

[18] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, էջ 2223:

[19] «Կռունկ Հայոց աշխարհի», 1863, էջ 746:

Այդ ժամանակ Պոլիս հասավ Մայր Աթոռից ուղարկված մեկ այլ նամակ, որտեղ Ս. Էջմիածնի միաբանները գրում էին, որ եթե նշված թեկնածուներից ոչ մեկը չընտրվեր, Էջմիածնի համար շատ ընդունելի կլիներ Կեսարիայի առաջնորդ Ստեփանոս Սեբաստացին[20]: Սակայն Կ. Պոլսում գտնվող Կեսարիայի իշխանները ու Ստեփանոս Սեբաստացու ազգականները, որոնք ևս մասնակցում էին այդ ժողովին, տեղյակ լինելով Հ. Արղությանի ունեցած դիրքին և չցանկանալով սրել հարաբերությունները նրա հետ, բազմաթիվ պատճառներ բերեցին Ստեփանոսին չընտրելու համար և խնդրեցին նույնիսկ չքննարկել նրա թեկնածությունը: Այս ժամանակ Կ. Պոլսի նվիրակ Գալուստ արքեպիսկոպոսը մտածեց, որ ինքը կարող էր դառնալ կաթողիկոս, բայց տեղյակ չէր, որ Էջմիածնի միաբանները մի նամակ էլ նրա մասին էին ուղարկել, որտեղ նրան, ինչպես նաև Հովակիմ և Գրիգոր արքեպիսկոպոսներին շատ ծեր համարելով, խնդրել էին չքննարկել նրանց թեկնածությունները:

Չկարողանալով որևէ թեկնածու ընտրել, որոշեցին ցրել ժողովը մինչև նոր թեկնածուի առաջադրումը: Այս տարաձայնությունները ժողովրդի մեջ հուզումներ ու կասկածներ առաջացրին, և քանի որ Զատկի Ավագ շաբաթն էր, մարդիկ ավելի հաճախ էին հանդիպում և քննարկում կաթողիկոսական հարցը: Խույս տալու համար անցանկալի դեպքերից, օսմանյան կառավարությունը պատրիարքից պահանջեց, որպեսզի չորս օրվա ընթացքում վերջնականապես լուծեն այդ հարցը[21]:

1800 թ. ապրիլի 11-ին, վերջնական որոշում կայացնելու ակնկալիքով, դարձյալ ժողով գումարվեց: Փաստորեն կաթողիկոսության թեկնածուի ոչ միայն հաստատման, այլև առաջադրման ողջ իրավունքը մնաց օսմանյան իշխանությանը, որի ներկայացուցիչները էլ առաջարկեցին Արմաշի առաջնորդ Բարդուղիմեոս արքեպիսկոպոս Կապուտիկյանին, որը վերջին շրջանում գտնվում էր Նիկոմիդեայում: Դանիել Պատրիարքն էլ համաձայնվեց, որ նա դառնա կաթողիկոս, և առաջադրանք ստացավ՝ մի նամակ ուղարկել Բարդուղիմեոս Կապուտիկյանին, որպեսզի նա շտապ հասնի Կ. Պոլիս:

Հաջորդ օրը, ապրիլի 12-ին, Կ. Պոլսի Սուրբ Աստվածածին եկեղեցում ազգային ժողով գումարվեց Դանիել Պատրիարքի գլխավորությամբ: Ավելի քան երկու հարյուր մասնակիցների թվում էին Դավիթ, Գալուստ, Հակոբ, Թադեոս, Պետրոս և Հովհաննես արքեպիսկոպոսները, բազմաթիվ աշխարհականներ և իշխանավորներ: Նորից կարդացին Էջմիածնից ուղարկված մահսերները, և Սիմոն Փափազյան ամիրան բացատրեց այն բոլոր պատճառները, թե ինչու նրանցում նշված և ոչ մի թեկնածու չէր կարող ստանձնել կաթողիկոսությունը: Կրկին առաջադրվեց Բարդուղիմեոս արքեպիսկոպոս Կապուտիկյանի թեկնածությունը, և գրեթե բոլորն էլ տվեցին իրենց համաձայնությունը: Ուստի պայմանավորվածության համաձայն ապրիլի 13-ին Բարձրագույն Դռանը հաղորդեցին նոր կաթողիկոսի անունը:

Մայր Աթոռի միաբանները մինչև ապրիլի վերջը տեղյակ չեղան այս որոշմանը և շարունակում էին նամակներ գրել Կ. Պոլսի իշխաններին և Դանիել Պատրիարքին:

---

[20] Տե՛ս նույնը, էջ 751:

[21] Մ. Մսերյանց, Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 19:

Իսկ Կ. Պոլսում իրադարձությունները այլ ընթացք էին ստանում: Բարդուղիմեոսի ընտրությամբ փաստորեն հօդս ցնդեցին Դավիթ արքեպիսկոպոսի եթե ոչ կաթողիկոս, ապա գոնե Կ. Պոլսի պատրիարք դառնալու նկրտումները: Չհաշտվելով իրողության հետ և խառնաշփոթ իրավիճակ ստեղծելու նպատակով նա ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը գնում է Գալուստ արքեպիսկոպոսի սենյակ և կարողանում է շարժել ծերունու փառասիրությունը և համոզել նրան, որ ինքն է ամենաարժանավոր թեկնածուն[22]:

Ոգևորված նման խոսքերից և վերաբերմունքից, Գալուստ արքեպիսկոպոսը հաջորդ առավոտ, ապրիլի 13-ին, մտնում է Կ. Պոլսի Սուրբ Աստվածածին եկեղեցի և մի խառնաշփոթ իրավիճակ ստեղծում այնտեղ: Սկսում է փառաբանել իրեն և վատաբանել մյուսներին և մասնավորապես Բարդուղիմեոսին[23]: Վրա հասած հոգևորականները, որ փորձում էին հանդարտեցնել նրան, ավելի գրգռեցին, և Գալուստը «...*հրամանաւն Յիսուսի Քրիստոսի և Հոգւով Սրբով նզովեալ, կապեալ և բանադրեալ...*» հռչակելով Բարդուղիմեոսին, Դանիել Պատրիարքին, մելիքներ Սիմոն Փափազյանին, Մուրադ Սուրենյանին, Գասպար Ազնավուրյանին և այլոց՝ դուրս եկավ եկեղեցուց:

Այս լուրը շուտով հասնում է Դանիել Պատրիարքին, և չնայած ոչ ոք լուրջ չէր ընդունում այդ բանադրանքը, բայց ամեն դեպքում պահանջեցին նրանից, որ անհապաղ աքսորեն Գալուստին, քանի դեռ նրա արարքը հուզումների ու խռովության առիթ չէր դարձել: Սակայն Դանիել Պատրիարքը, հաշվի առնելով Գալուստ արքեպիսկոպոսի տարիքը, ուզեց ավելի մեղմ վերաբերվել նրան և պարզապես հետ ուղարկել Նիկոմիդեա՝ շարունակելու նվիրակի իր պարտականությունները: Բայց Գալուստը, գիտակցելով իր արածի ծանրությունը, դիմեց փախուստի և գնաց Օրթա գյուղ, ոմն Մինաս աղայի մոտ, որի միջնորդությամբ էլ ռուսաց դեսպանի գործավար Գևորգ Ղրիմեցի Աղաեկյանը նրան ուղարկեց Հակոբ խալիֆայի տուն, որտեղ էլ նա թաքնվեց: Իսկ Դավիթ արքեպիսկոպոսն այնքան ծածուկ էր գործել, որ ոչ ոք նույնիսկ չկասկածեց, որ նա էր կազմակերպել այդ ողջ իրարանցումը:

Ապրիլի 14-ին Բարդուղիմեոս արքեպիսկոպոս Կապուտիկյանը հասավ Կ. Պոլիս՝ անտեղյակ լինելով, թե ինչու էին իրեն հրավիրել: Պատրիարքի խորհրդով նրան տարան Սուրբ Խաչ եկեղեցի, մինչև որ խռովությունները կհանդարտվեին: Այստեղ նոր միայն նա իմանում է, որ իրեն ընտրել են կաթողիկոս, և առկա խառը իրավիճակը կապված էր հենց այդ ընտրության հետ: Լինելով խոհեմ անձնավորություն և չցանկանալով մասնակից լինել նման խարդավանքներին, նա անմիջապես հրաժարվեց կաթողիկոսությունից՝ պատճառաբանելով, որ անզոր է կրելու նման պատասխանատու պաշտոնը: Փաստորեն անկատար մնաց տերության պահանջը, և նրանք, իմանալով նրա հրաժարականի մասին, նոր հրաման տվեցին՝ ամենասեղմ ժամկետում լուծելու կաթողիկոսի հարցը:

Դավիթ արքեպիսկոպոս Ղորղանյանի համար նման իրավիճակը գործունեության նոր հնարավորություններ էր բացում: Նա նորից շրջանառության մեջ դրեց Էջմիածնի միաբանների հունվարի 16-ի մահսերը և ամիրաներից խնդրեց, որպեսզի Դանիելին թույլ տան ստանձնելու կաթողիկոսությունը: Նրա նման նախաձեռնողի գործելակերպը դուր էր

[22] Տես նույնը, էջ 20:

[23] Ա. Պերպերյան, Պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 12:

գալիս թե՛ ամիրաներին և թե՛ Դանիելին, որոնք սկսեցին մտածել, որ Մայր Աթոռի միաբանների կարծիքը նրա մասին սխալ էր, և նա արժանի էր ավելի մեծ ուշադրության:

Կ. Պոլսի մեծամեծներն էլ տեսնելով, որ ասպարեզում կաթողիկոսի հարմար թեկնածու չկա, և նման վիճակի ձգձգումն էլ անօգուտ է, լսեցին Դավթի խորհրդին և Դանիելին առաջարկեցին ստանձնելու կաթողիկոսությունը: Նա էլ մեծ սիրով համաձայնվեց և Սուրբ Աստվածածին եկեղեցում հենց նույն մահսերի վրա գրեց, որ եթե բոլորի կամքն այդ էր, ապա ինքը հոժարությամբ ընդունում է այն: Այս դեպքը, որ տեղի է ունեցել ապրիլի 20-ին, Դավիթ արքեպիսկոպոսը Էջմիածնի միաբաններին ապրիլի 25-ին գրած նամակում ներկայացնում է որպես կատարված ընտրություն[24], որը սակայն ճիշտ չէ, քանի որ դա միայն համաձայնության ստացում էր:

Ձեռք բերելով Դանիելի համաձայնությունն ու ստորագրությունը, Կ. Պոլսի ամիրաները ու մելիքները ապրիլի 26-ին հավաքվեցին Վեզիր Խանայում Չոպան ամիրայի բնակարանում, որպեսզի նախապատրաստեն կաթողիկոսական ընտրությունները ու քննարկեն Կ. Պոլսի պատրիարքի հարցը:

Կաթողիկոսի հարցում եթե բոլորն էլ համաձայն էին, որ Դանիելը ստանձնի այն, ապա պատրիարքի Աթոռի համար որոշ քննարկումներից հետո առաջ քաշվեցին երեք թեկնածուներ՝ Դավիթ արքեպիսկոպոս Ղորղանյանը, Ստեփանոս Կեսարացին և Բուրսայի առաջնորդ Պողոս արքեպիսկոպոսը: Երեքին էլ համարելով արժանավոր թեկնածուներ, ամիրաները չկարողացան ընդհանուր հայտարարի գալ նրանցից մեկի հարցում և որոշեցին դիմել Դանիել Պատրիարքին՝ նրա կարծիքը ևս իմանալու համար: Պատրիարքարանում տեղի ունեցած քննարկման ժամանակ որոշեցին, որ գալիք ժողովում, նոր կաթողիկոսին ընտրելու հետ մեկտեղ, Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնը տրվեր Դավիթ Ղորղանյանին:

1800 թ. ապրիլի 28-ին Սուրբ Աստվածածին եկեղեցում դարձյալ ժողով գումարվեց, որին ներկա էին ավելի քան 400 մասնակիցներ[25]: Եվ քանի որ ամեն ինչ արդեն նախօրոք որոշված էր, ուստի ձևական բնույթ կրող այդ ժողովը կատարեց արարողակարգային բոլոր դրույթները և կաթողիկոս հռչակեց Դանիել արքեպիսկոպոսին, որն էլ իր պատրիարքական մատանին և գավազանը շնորհեց Դավթին՝ նրան հռչակելով Կ. Պոլսի հայոց պատրիարք: Հաջորդ օրը, որը կիրակի էր, եկեղեցում մատուցվող Պատարագի ժամանակ, նորընտիր կաթողիկոսը ժողովրդին կոչ արեց սիրով ու հնազանդությամբ վերաբերվել Դավիթ արքեպիսկոպոսին, որն այսուհետ նրանց պատրիարքն էր:

Դավիթ Ղորղանյանի երազանքն իրականացված էր, դժգոհ չէր նաև Դանիելը, և նա սկսեց նախապատրաստվել Էջմիածին գնալուն: Բայց մինչև Կ. Պոլսից մեկնելը նա պետք է ստանար թուրքական կառավարության ֆերմանը՝ հաստատագրող որոշումը:

Այս ընթացքում Արղությանը Ս. Պետերբուրգում մի շարք հանդիպումներ ունեցավ ռուսական արքունիքի անդամների, ինչպես նաև Պավել կայսրի հետ: Վերջինս այնքան շահագրգռված էր, որ նա դառնա կաթողիկոս, որ դիմեց Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Վասիլի Թամարովին, որպեսզի սա ամեն գնով հաջողացներ նրա կաթողիկոս դառ-

[24] Մ. Մ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 10, վավ. 7:

[25] Մ. Մսերյանց, Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 22:

նալը[26]: Դեռ կայսրի պատվիրակը չէր հասել Կ. Պոլիս, երբ Հ. Արղությանն իմացավ այդ կարգադրության մասին և հարցը լուծված համարելով սկսեց Էջմիածնի և իր համար գնումներ կատարել և պատրաստվել Մայր Աթոռ գնալուն: Գրիգոր վարդապետն էլ ապրիլի 18-ին նրան գրած նամակում խորհուրդ էր տալիս չսպասել Կ. Պոլսի ընտրությանը և շտապ մեկնել Էջմիածին և ստանձնել կաթողիկոսությունը, քանզի ռուսաց կայսրն ու վրաց արքան նրա կողմնակիցներն են, իսկ մնացածն էլ ստիպված կլինեն հպատակվել նրան[27]:

Մինչ կայսրի բանագնացը տեղ կհասներ, Վ. Թամարովը, լավ իմանալով Հայոց կաթողիկոսի հարցում իր երկրի դիրքորոշումը, դիմեց Բարձրագույն Դռանը, որպեսզի նրանք չշտապեն Դանիելին հաստատել կաթողիկոսական գահին, մինչև Ս. Պետերբուրգից պաշտոնական տեղեկատվություն չստացվեր: Թուրքական իշխանությունն էլ, հաշվի առնելով այդ, սկսեց հետաձգել ապրիլի 28-ի ժողովի որոշման հաստատումը՝ նախ պատճառաբանելով, թե կնիքները են քիչ, իսկ երբ հավաքվեց հինգ հարյուրից ավել կնիք, պահանջեցին, որ Էջմիածնի մահսրները թարգմանվեն թուրքերեն և կցվեն ժողովի որոշմանը:

Այս ձգձգումները լավ հնարավորություն տվեցին Վ. Թամարովին, որպեսզի նա, օգտագործելով հայերի մեջ եղած երկպառակությունը, խառնաշփոթ իրավիճակ ստեղծի և ձախողի Դանիելի ընտրությունը: Այդ նպատակի համար օգտագործելով իր գործավար Գևորգ Աղաեկյանին, որը նույնպես դեմ էր Դանիելի ընտրությանը և առավել ևս Դավթի պատրիարքությանը: Գ. Աղաեկյանին համախոհ էր նաև արքունի ժամագործ Բարդուղիմեոս Ցուսուֆյանը, որը պատրիարքի պաշտոնում ցանկանում էր տեսնել Հովհաննես արքեպիսկոպոս Չամաշրճյանին, որը Զաքարիայի լավագույն աշակերտներից էր և որոշ ժամանակ եղել էր նրա փոխանորդը, և դեմ չէր ստանձնելու պատրիարքությունը:

Գ. Աղաեկյանը իմանալով, որ Հովհաննես Չամաշրճյանը չի կարող մեծ աղմուկ բարձրացնել, ձեռնամուխ եղավ Գալուստ արքեպիսկոպոսին ազատել և նրան հորդորեց, որ նա պետք է լինի պատրիարք, իսկ Հ. Արղությանը՝ կաթողիկոս: Գալուստ արքեպիսկոպոսը մայիսի 4-ին գալիս է Կ. Պոլիս, որտեղ Դանիելն ու Դավիթը նրան հրավիրում են առաջիկա կիրակի օրը՝ Երևման Խաչի տոնի առթիվ Սուրբ Խաչ եկեղեցում Պատարագ մատուցելու: Սակայն նա նրանց պատասխանում է, թե նրանք այլևս իրավունք չունեն իրեն ասելու, թե ինչ անի:

Խույս տալու համար նոր խռովությունից՝ Դանիելն ու Դավիթը ոչինչ չեն պատասխանում: Իսկ Գալուստ արքեպիսկոպոսը մայիսի 5-ին, որը շաբաթ էր, գնում է Սուրբ Աստվածածին եկեղեցի և բազմում պատրիարքի աթոռին: Քիչ անց, երբ Դավիթը գալիս է, իսկ Գալուստը նրան չի զիջում աթոռը, իսկական իրարանցում է սկսվում: Դավթի հետևորդներից մեկը՝ Հակոբ Գանձակեցի վարդապետը, հարվածում է Գալուստի դեմքին և նրան վայր գցում աթոռից[28]: Այդ ժամ Գալուստը մտնում է ժողովրդի մեջ և վատաբանելով Դավթին՝ հեռանում: Այս լուրը շուտով տարածվեց ժողովրդի մեջ և մեծ իրարանցում

[26] Н. Дубровин, История войны и владычество русских на Кавказе, С. Петербург, 1886, т. IV, стр. 220.

[27] Մ. Մ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 10, վ. 38:

[28] Ա. Պերպերյան, Պատմություն Հայոց, էջ 15:

առաջացրեց: Արդյունքն այն եղավ, որ Գալուստի կողմնակիցները, Մանուկ Քանթարյան մուշտակագործի գլխավորությամբ, կիրակի օրը՝ Երևման խաչի տոնին, նրան բերեցին եկեղեցի և դադարեցնելով Պատարագը, Դավթին հանեցին աթոռից և Գալուստին նստեցրին նրա տեղը[29]:

Գալուստ արքեպիսկոպոսն էլ սկսեց խոսել ժողովրդի հետ և փորձեց շարունակել Պատարագը՝ իբրև պատրիարք, քանի որ նրա կողմնակիցները ստիպեցին, որպեսզի նրա անունը հիշատակվի որպես Կ. Պոլսի հայոց պատրիարք: Սակայն Դավիթ արքեպիսկոպոսը նույնպես ուներ կողմնակիցներ, որոնք, բնական է, չէին կարող թույլ տալ, որ իրենց ընտրելիին այդպես զահընկեց անեն: Սկսված իրարանցումը վերածվեց կռվի[30]: Ավելի խոհեմ գտնվելով և անընդունելի համարելով Աստծո տանը դեպքերի նման զարգացումը, Դավիթը հեռացավ եկեղեցուց և գնաց պատրիարքարան՝ հուսալով վերջ դնել ստեղծված այդ իրավիճակին: Իսկ Գալուստի կողմնակիցները սա համարելով հաղթանակ՝ «...*Աստուած շնորհաւոր արասցէ*...» գոռալով, ստիպեցին շարունակել Պատարագը:

Պատարագից հետո Գալուստն իր կողմնակիցների ուղեկցությամբ գնաց իր սենյակ, շատերն էլ մնացին փողոցներում և շարունակեցին տոնել իրենց «հաղթանակը»: Շուտով այս լուրը հասավ Բարձրագույն Դռանը և ենիչերիների ջոկատ ուղարկվեց ձերբակալելու մեղավորներին: Ավելի քան յոթանասուն ձերբակալվածների շարքում էր նաև Գալուստը, որին նախ տարան ենիչերիների հրամանատարի, ապա՝ եպարքոսի մոտ: Սա, տեսնելով, որ հավաքվածները ուզում են, որ Գալուստը լինի պատրիարք, իսկ նա էլ համաձայն է ստանձնելու այդ պաշտոնը, խորհուրդ տվեց նամակով դիմել Բարձրագույն Դռանը: Այդ օրը, սակայն, Գալուստին պահեցին բանտում և հաջորդ օրն ազատ արձակեցին՝ ուղարկելով Աղասի ամիրայի տանը մնալու:

Մայիսի 10-ին Գալուստ արքեպիսկոպոսի կողմնակիցները աղմուկ-աղաղակով գնացին դեպի Արքունի պալատ և հանձնեցին նոր պատրիարքի ընտրության աղերսագիրը՝ բազում ստորագրություններով ու կնիքներով: Եպարքոսի հրամանով, սակայն, ցրվեց այդ ամբոխը, իսկ ղեկավարներից չորսը ձերբակալվեցին: Լսելով այս մասին՝ Գալուստը դիմեց փախուստի և դարձյալ հանգրվանեց արքունի ճարտարապետ Հակոբ խալիֆայի տանը:

Փաստորեն, Վ. Թամարովի կազմակերպած խառնաշփոթը հաջողված էր, սակայն դեռ լուծված չէր Հ. Արղությանին կաթողիկոս ընտրելու հարցը, ուստի նա ուժեղացրեց ճնշումը թուրքական իշխանությունների վրա՝ ակնկալելով ավելի կոնկրետ գործողություններ: Այդ ժամանակ Ռեյս Էֆենդին, որը Թուրքիայի արտգործնախարարն էր, ստանալով սուլթան Սելիմի համաձայնությունը, նամակ գրեց Վ. Թամարովին և վստահեցրեց, որ. «...*Հովսեփ արքեպիսկոպոսը այստեղի հայ հասարակության կողմից կընտրվի Էջմիածնի կաթողիկոս, և այս մասին հենց այժմ կարող եք տեղեկացնել Նորին Մեծությանը*...»[31]:

---

[29] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, էջ 2229:

[30] Մ. Մսերյանց, Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 25:

[31] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, стр. 221:

Այս ծրագիրն իրագործելու համար՝ մայիսի 13-ին Պալթաշ Էմինն ուղարկվում է Հակոբ խալիֆայի տուն, որպեսզի Գալուստին բերի եպարքոսարան՝ պատճառաբանելով, թե պատրիարք պիտի նշանակվի: Գալուստ արքեպիսկոպոսն էլ վերցնում է գավազանը, հագնում տոնական զգեստները և գնում է եպարքոսարան՝ իր ցանությունն իրագործված համարելով: Տեղ հասնելուն պես, նա ձերբակալվում է և աքսորվում Լեմնոս կամ Իլիմիա կղզի[32]: Իսկ եպարքոսարանի աղոթասաց Մեհմետ Էֆենդին ուղարկվում է պատրիարքարան՝ Դանիելի մոտ, և տեղեկացնում նրան, որ թագավորական հրամանի համաձայն նա պետք է աքսորվի Տենեդոս կամ Պոխնա կղզի[33]: Դանիելին մնում էր միայն ենթարկվել այդ որոշմանը:

Վ. Թամարովը, գոհ լինելով դեպքերի նման ընթացքից, մայիսի 16-ին նամակ ուղարկեց Սերգեյ Լաշկարովին, որով տեղեկացնում էր, որ Հ. Արղությանը կընտրվի կաթողիկոս, իսկ նրա հակառակորդ Դանիելն աքսորված է[34]: Նա ափսոսանք էր հայտնում Գալուստի աքսորման վերաբերյալ, սակայն նշում էր, որ եթե Հ. Արղությանը համաձայնվի, նա կարող է ազատ արձակվել:

Փաստորեն ապրիլի 28-ի որոշումն այլևս դադարում էր ուժ ունենալուց, և թուրքական իշխանությունները պահանջեցին, որ մի քանի օրվա ընթացքում անցկացվեն նոր ընտրություններ թե՛ պատրիարքի և թե՛ կաթողիկոսի տեղերի համար: Միևնույն ժամանակ պահանջում նշված էր, որ պատրիարքի Աթոռի համար չպետք է քննարկվեն Դանիելի, Դավթի կամ Գալուստի թեկնածությունները[35]:

Այսպիսով, 1800 թ. մայիսի 19-ին Վեզիր Խանում գումարվեց հերթական ժողովը, որտեղ որոշվեց պատրիարքի պաշտոնը հանձնել բաբերդցի Հովհաննես արքեպիսկոպոս Չամաշրճյանին[36]: Ընտրությունն անցավ բավական հանգիստ մթնոլորտում, քանի որ նրան ընդդիմադիր այլ թեկնածու չկար, և այս փաստը բացառապես պայմանավորված էր ռուսական դեսպանի դիրքորոշումով: Հ. Չամաշրճյանն ինքն էլ քաջ գիտակցում էր, որ Հ. Արղությանը միջնորդված ձևով նրան դարձրեց պատրիարք, որպեսզի նա էլ հաջողեցնի իր կաթողիկոսությունը: Այդ հարցը լուծելով՝ նա կարող էր վերջ դնել այն բոլոր խռովություններին և երկպառակություններին, որ առկա էին պոլսահայոց մեջ անընդհատ կատարվող ընտրությունների պատճառով:

Լավ իմանալով սակայն, որ Կ. Պոլսի հայությունը դեմ է Հ. Արղությանի հայրապետությանը, չէր ուզում ինքը առաջարկել նրա թեկնածությունը՝ վախենալով, որ դրանով կգցի իր հեղինակությունը, և վստահ լինելով, որ նրանք Հ. Արղությանին չեն ընտրի: Այդ պատճառով նա որոշեց մի քիչ սպասել, մինչև կառավարությունից կպահանջեին ընտրել նրան, քանի որ շարունակվում էին ռուսական ճնշումները: Այդպես էլ եղավ: Մայիսի 31-ին գումարվեց ևս մեկ ժողով կաթողիկոս ընտրելու համար, և Հովհաննես Չամաշրճյանը, արդեն ստացած լինելով թուրքական կառավարության համաձայնությունը, սեղանին դրեց Էջ-

[32] «Կռունկ Հայոց աշխարհի», 1863, էջ 820:

[33] Տե՛ս նույնը, էջ 820:

[34] «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, էջ 334:

[35] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, էջ 2230:

[36] Ա. Ջամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, հ. Բ, Նոր Նախիջևան, 1909, էջ 114:

միաձնի միաբանների երկրորդ մասերը, որտեղ գրված էին Հ. Արղությանի և Դանիել Պատրիարքի անունները: Քանի որ Դանիելն աքսորված էր, ուստի բոլորն էլ համաձայնվեցին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին հաստատել կաթողիկոսական գահին:

Մնում էր միայն ստանալ թուրքական կառավարության ֆերմանը, բայց դրա ստացումն ուշանում էր: Կարծիք կա, որ ուշացումը պարզապես կախված էր դրա դիմաց վճարվելիք գումարի չափից, որը, ըստ թուրքական իշխանության, շատ քիչ էր այն գումարից, որ արդեն վճարել էին իրենց Դանիելի համար, եթե նա ընտրվեր[37]:

Այդ ընթացքում մահանում է Երուսաղեմի Պատրիարք Պետրոս Եվդոկացին և նոր պատրիարք է ընտրվում վանեցի Թեոդորոս արքեպիսկոպոսը: Օգտագործելով այս առիթը՝ Հովհաննես Չամաշրճյանը որոշում է Սուրբ Աստվածածին եկեղեցում Թեոդորոս արքեպիսկոպոսին որպես Երուսաղեմի պատրիարք հիշատակելու հետ մեկտեղ, Պատարագի ընթացքում հիշատակել նաև Հ. Արղությանին՝ որպես Հայոց կաթողիկոս: Չնայած որ նա դեռ օծված չէր, բայց դրանով վերջնականապես կլուծեր կաթողիկոսի հարցը և կհանդարտեցներ Դանիելի կողմնակիցներին, որոնք դեռևս փորձում էին նրան կաթողիկոս դարձնել: Բացի այդ, դա առիթ կլիներ, որ թուրքական կառավարությունն արագացներ ֆերմանի տալը:

Հուլիսի 14-ին՝ Փրկչի Պայծառակերպության տոնի Պատարագի ժամանակ, նա Հ. Արղությանին հիշատակեց որպես «...*զՀայրապետն մեր, զՏէր Յովսէփ*...» : Եվ իրոք, այս հիշատակումից հետո ֆերմանը ստացվում է: Ճիշտ օրը հայտնի չէ, սակայն այն պետք է որ հրապարակված լինի հուլիսի 15-ից օգոստոսի 1-ն ընկած հատվածում, քանի որ արդեն օգոստոսի 2-ին այդ ֆերմանով Դավիթ արքեպիսկոպոսը դուրս է գալիս Կ. Պոլսից՝ այն Հ. Արղությանին հասցնելու նպատակով[38]: Հ. Չամաշրճյանի առջև ծառացած էր նաև Դանիել և Գալուստ արքեպիսկոպոսների ազատման հարցը: Ժողովուրդը չէր հասկանում, թե ինչու այսքան երկար ժամանակ նրանք շարունակում են աքսորված մնալ, իսկ պատրիարքը որևէ քայլ չի ձեռնարկում նրանց ազատելու համար:

Անշուշտ նա ուներ իր հաշվարկները և չէր ցանկանում ազատել նրանց, մինչև վերջնականապես չլուծվեր կաթողիկոսի ընտրության հարցը՝ դրանով իսկ խուսափելով հնարավոր այլ գժտություններից: Ֆերմանը ստանալուց հետո բնական է, որ Հ. Չամաշրճյանն արդեն հանգիստ էր և պետք է աշխատեր ազատել վերոհիշյալ արքեպիսկոպոսներին: Եվ քանի որ մեծ գումարներ էին անհրաժեշտ թուրքական կառավարությունից նրանց ազատման հրամանագրերը ստանալու համար, նա դիմեց Կ. Պոլսի մեծամեծներին՝ այդ հարցը լուծելու ակնկալությամբ: Սրանք էլ, Մարատ Սուրենյան ամիրայի գլխավորությամբ, դիմեցին կառավարությանը և ստացան սեպտեմբերի 17-ին Դանիելի և սեպտեմբերի 22-ին Գալուստի ազատման հրամանագրերը[39]: Նրանց ազատելով, բայց Կ. Պոլսից հեռու պահելու նպատակով, Հ. Չամաշրճյանը մի կոնդակ հրապարակեց, որով Դանիելին նշանակեց Եվդոկիայի առաջնորդ, իսկ Գալուստին ուղարկեց Նիկոմիդեա՝ շարունակելու նվիրակի իր պարտականությունը:

---

[37] Н. Дубровин, История войны и владычество русских на Кавказе, т. IV, стр. 222.

[38] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, էջ 2233:

[39] «Դիվան հայոց պատմության», գիրք Ա-Բ, էջ 78:

Մինչ իրադարձությունները նման ընթացք էին ստանում Կ. Պոլսում, 1800 թ. հուլիսին Ս. Պետերբուրգում ստացվեց Հ. Արղությանի ընտրության լուրը, և նույն ամսում ռուսական արքունիքը նրան ճանաչեց Ամենայն Հայոց Կաթողիկոս[40]: Պավել կայսրն իր հերթին մի հրովարտակ ստորագրեց հուլիսի 28-ին, որում նրան հիշատակում է որպես Հայոց կաթողիկոս, պատմում հայ-ռուսական բարիդրացիական հարաբերությունների մասին և վստահեցնում, որ այդ բարեկամությունը հարատև պետք է շարունակվի[41]: Սակայն սա դեռ կայսերական հաստատության պաշտոնական վերջնական հրովարտակը չէր, այն պետք է հրապարակվեր թուրքական կառավարության ֆերմանը ստանալուց հետո միայն:

Ռուսական իշխանությունները Հ. Արղությանին խորհուրդ տվեցին անմիջապես մեկնել Էջմիածին՝ չսպասելով ֆերմանի հասնելուն, որը ստանալուն պես, անմիջապես կուղարկվեր իրեն: 1800 թ. օգոստոսի 4-ին Հ. Արղությանը վերջին անգամ ներկայացավ կայսրին, հրաժեշտի ողջույն տվեց և ապա ճանապարհ ընկավ դեպի Աստրախան[42]: Նրան ուղեկցում էին երկու վարդապետներ, երկու քահանա և Հովհաննես Լազարյանը[43]:

Ճանապարհին Հ. Արղությանը նախ եղավ Մոսկվայում, ուր նրան պաշտոնական ընդունելության արժանացրին, բազում ճաշկերույթներ կազմակերպեցին նրա պատվին, թանկարժեք նվերներ մատուցեցին: Այստեղ նա նաև պողպատի վրա փորագրել տվեց իր պատկերը՝ կաթողիկոսական հանդերձանքով և օրհնություն տալիս[44]: Մոսկվայից Աստրախան գնալու ճանապարհին նա եղավ նաև Նոր Նախիջևանում, որտեղից գրած նամակներում սկսեց ստորագրել «Հովսեփ կաթողիկոս»[45]: Արդեն սեպտեմբերի 12-ին նա հասավ Աստրախան, ուր նրան դիմավորելու էր եկել Եփրեմ արքեպիսկոպոսը, որը Էջմիածնի միաբաններին սեպտեմբերի 17-ին գրած նամակում մանրամասն հաղորդում էր, թե ովքեր են դիմավորել նորընտիր կաթողիկոսին, և թե ինչ ճոխ ընդունելության է նա արժանացել Աստրախանում: Այստեղ նրան են հանձնում թուրքական կառավարության ֆերմանի պատճենը, որն ուղարկվել էր Ս. Պետերբուրգից:

Դավիթ արքեպիսկոպոսին գրած նամակում Հ. Արղությանն արդեն տալիս է իր կաթողիկոսական առաջին հրահանգները՝ կապված Հ. Զամաշրճյանի պատրիարքության վերահաստատման, Մինասի տեղապահության և այլ հարցերի հետ: Իսկ սեպտեմբերի 27-ին ռուսաց կայսրին գրած նամակում նա խնդրում է իրեն ապահովել իր դիրքին համապատասխան զինվորական ուղեկցող շքախմբով, կառքով, իրեն շնորհել «Սուրբ Աննա»-ի առաջին կարգի շքանշան՝ զարդարված ադամանդներով և այլն[46]: Նույն օրը նա նամակ է գրում նաև Ս. Լաշկարովին և խնդրում, որ նա հետևի, որպեսզի կայսրին ուղղված խընդ-

---

[40] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս. Ա, էջ 6:

[41] Մ. Մսերյանց, Պատմություն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 166:

[42] Լեո, Հովսեփ Կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902, էջ 222:

[43] «Պատմա-բանասիրական» հանդես, Երևան, 1974, հ. 2, էջ 266:

[44] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, Նախաբան, էջ է:

[45] «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, էջ 334:

[46] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, стр. 222.

րանքները ամբողջովին կատարվեն և իրեն հասցվեն Աստրախանում, որ առանց դրանց իրեն անհարմար կլինի Էջմիածին գնալ[47]:

Մինչ ռուսական կողմից պատասխան կստացվեր և վերջապես իրեն կհանձնեին կայսեր հրովարտակը, Հ. Արղությանն Աստրախանից մի քանի նամակներ էլ ուղարկեց Թիֆլիսի վանքի եկեղեցու ավագ քահանա Տեր Հովհաննես Սարգսյանին, որպեսզի նա նախապատրաստի իր և իր շքախմբի այցելությունը Վրաստան:

Էջմիածնի միաբանները էլ համոզվելով, որ Հ. Արղությանը վերջնականապես հաստատվել է որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, հոկտեմբերի 11-ին և 31-ին նամակներ հղեցին նրան՝ շնորհավորելով և խնդրելով, որ շուտափույթ գա Էջմիածին[48]:

Վերջապես նա ստանում է կայսեր հրովարտակը՝ ստորագրված հոկտեմբերի 30-ին, որում կայսրը նրան հաստատում է որպես կաթողիկոս, ցմահ տարեկան երկու հազար ռուբլի թոշակ նշանակում, հազար ռուբլի տալիս կառք գնելու համար և այլն[49]: Կայսրը հրահանգ էր տվել նաև Աստրախանի և Կովկասի զինվորական նահանգապետ Կնորինգին, որպեսզի նա մի սպայի գլխավորությամբ հեծելազորային գունդ տրամադրի Հ. Արղությանին Թիֆլիս հասնելու համար: Վրաց Գեորգի թագավորին էլ կայսրը դիմել էր Վրաստանում նրան պատշաճ ընդունելություն ցույց տալու և ապահով Հայաստան հասցնելու խնդրանքով:

Նոյեմբերի 14-ին Հ. Արղությանը շնորհակալական նամակ է ուղարկում Պավել կայսրին, որում, բացի նվերների համար շնորհակալությունից, հավաստիացնում էր իր հնազանդությունն ու հավատարմությունն էր հայտնում նրան[50]: Իսկ դեկտեմբերի 27-ին Լաշկարովին գրած նամակում նա ափսոսանք է հայտնում, որ կայսրն իրեն այդպես էլ չշնորհեց «Սուրբ Աննա»-ի ադամանդակուռ շքանշանը[51]: Ինչևիցե, կայսեր հրովարտակը ստանալուց հետո Հ. Արղությանն Աստրախանից դեկտեմբերի 12-ին ուղևորվեց Ղզլար, ուր հասավ դեկտեմբերի 17-ին: Այստեղ նա սպասեց այնքան, որ Կնորինգը կապահովեր մինչև Թիֆլիս տանող ճանապարհի անվտանգությունը:

Մոզդոկում Կնորինգը, բացի գնդապետ Սավելիևի գլխավորությամբ հարյուր կազակից, նրա շքախմբին կցեց նաև կովկասյան լեռնականների մի գունդ, որոնք պետք է անվտանգ հասցնեին նրան Թիֆլիս: 1801 թ. փետրվարի 6-ին Հայոց Հայրապետի շքախումբը հասավ Դուշեթ, որտեղ նրան դիմավորելու էին եկել վրաց իշխանները, իշխան Սողոմոն Արղությանը (նրա եղբորորդին) և Մինաս վարդապետը, որոնք էլ նրան փետրվարի 10-ին հասցրին Թիֆլիս[52]: Չնայած նրան, որ Թիֆլիսը սգի մեջ էր՝ մահացել էր Գեորգի թագավորը, բայց այնպիսի ընդունելություն էր կազմակերպված, որ որևէ տեղ Հ. Արղությանը չէր տեսել: Թիֆլիսին կից Կուկիա գյուղում նրան դիմավորելու էին եկել Գեորգի թագավորի որդիներից Հովհանը՝ վրաց իշխաններով շրջապատված, ռուսական

[47] Տե՛ս նույնը, էջ 222-223:

[48] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, էջ 51-58:

[49] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, էջ 6:

[50] «Դիվան հայոց պատմության», գիրք Ե, էջ 58:

[51] Н. Дубровин, История войны и владычество русских на Кавказе, т. IV, стр. 223.

[52] Լեո, Հովսեփ Կաթողիկոս Արղության, էջ 223:

բանակի գեներալներ Լազարևն ու Գուլյակովը, ռուս սպաներ և բազմաթիվ քաղաքացիներ[53]:

Քաղաքի սահմանին, ուր սպասում էին հայ հոգևորականները, ռուսական թնդանոթները 24 անգամ որոտացին՝ ողջունելով Հայոց կաթողիկոսի մուտքը Թիֆլիս: Մեծաթիվ շքախմբով նա նախ մտավ հայոց Վանքի եկեղեցի, որտեղ Պավել կայսրի համար աղոթք կարդաց, ապա գնաց Թիֆլիսի Մայր եկեղեցի՝ Սիոն, ուր դրված էր Գեորգի թագավորի դին, հոգեհանգստի արարողություն կատարեց, ապա վրացերենով դիմեց խմբված ժողովրդին և գնաց իր եղբորորդու՝ իշխան Սողոմոն Արղությանի տուն[54]:

Վրաստանի ներքաղաքական վիճակն այս ընթացքում բավական սրված էր Պավել կայսրի 1800 թ. դեկտեմբերի 22-ին ստորագրած հրովարտակի պատճառով, որով Վրաստանը կորցնում էր իր անկախությունը և դառնում ռուսական նահանգ[55]: Հ. Արղությանը սկսեց հանդիպել վրաց իշխանների հետ և համոզել նրանց, որ Ռուսաստանին միացումը միայն դրական նշանակություն կունենա Վրաստանի համար և այլն: Ի վերջո կարողացավ փոքր-ինչ հանդարտեցնել շիկացած տրամադրությունները:

Օգտվելով այս հանդարտությունից, ռուսական զորքերի հրամանատարը՝ գեներալ Լազարևը, փետրվարի 16-ին Թիֆլիսի Մայր եկեղեցում Վրաց կաթողիկոսի, իշխանների և ժողովրդի ներկայությամբ կարդաց կայսեր հրովարտակը և ստացավ ներկա գտնվողների համաձայնությունը: Սակայն հիմնական արարողակարգը տեղի ունեցավ հաջորդ օրը, փետրվարի 17-ին: Թիֆլիսի Մայր եկեղեցուց հոգևորականների թափորը, վառված մոմերով, կայսեր նկարով և հրովարտակով, բազմաքանակ ժողովրդի, վրաց իշխանների ուղեկցությամբ, շարժվեց դեպի հայոց Վանքի եկեղեցի, ուր նրանց դիմավորեց Հ. Արղությանը: Հայոց Հայրապետի կողքին էին վրաց թագաժառանգ Դավիթը, ռուսական բանակի գեներալները ու սպաները, վրաց իշխանները և, անշուշտ, հայ հոգևորականները[56]: Հ. Արղությանը կարդաց հրովարտակը, ապա կայսեր նկարի առջև ծնկաչոք աղոթք կարդաց և Վրաստանը հայտարարեց Ռուսաստանի անբաժանելի տարածք:

Ողջ օրը Թիֆլիսում տոնախմբություն էր տեղի ունենում, իսկ հայոց եկեղեցու բակում Հայոց կաթողիկոսը մեծ ճաշկերույթ կազմակերպեց վրաց իշխանների և ռուսաց գեներալների համար:

Փետրվարի 20-ին, Գեորգի թագավորի հուղարկավորությունը կատարելուց հետո, Հ. Արղությանը որոշել էր մարտի 1-ին գնալ Էջմիածին, որտեղից արդեն իրեն ուղեկցելու համար Թիֆլիս էին եկել Սիմեոն աթոռակալ, Թադեոս ատենադպիր, Անդրեաս գրագիր և Բարսեղ Աշտարակեցի եպիսկոպոսները[57]: Ռուս-վրացական վարչությունն էլ որոշել էր, որ Հ. Արղությանին մինչև Էջմիածին ուղեկցելու է «Սյուն Վրաստանի» տիտղոսակիր, առաջնակարգ իշխան Հովհան Օրբելյանը, այլ իշխանների և հեծելազորի հետ միասին, որպեսզի Երևանի խանն ու պարսկական իշխանությունը տեսնեն, թե որքան ջերմ է բարե-

53 Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, էջ 12:

54 Լեո, Հովսեփ Կաթողիկոս Արղության, էջ 224:

55 Տե՛ս նույնը, էջ 184:

56 Տե՛ս նույնը, էջ 188

57 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, էջ 2238:

կամությունը հայ, վրաց և ռուս ժողովուրդների միջև, և թե որքան ընդունելի է նոր կաթողիկոսը բոլորի համար:

Սակայն Էջմիածին ուղևորվելուց մի քանի օր առաջ Հ. Արղությանը ցանկություն հայտնեց լողանալու Թիֆլիսի նշանավոր հանքային ջրերում: Իմանալով այս մասին՝ վրաց Դերեջան թագուհին հրավիրեց նրան օգտվելու «արքայական» բաղնիքից: Փետրվարի 27-ին, դրանցում լողանալուց հետո, թագուհու հետ թեյ խմեց և գնաց իշխան Սողոմոնի տուն, ուր գիշերը տկարություն և դող զգաց և այլևս չկարողացավ անկողնուց վեր կենալ: Ենթադրվում էր, թե նրան թունավորել են այդ թեյի ժամանակ:

Վրաց բժիշկները պնդում էին, որ նրա հանկարծահաս հիվանդության պատճառը բաղնիքում երկար մնալն էր, բայց չպետք է մոռանալ, որ վրաց թագուհին Ռուսաստանին միանալու ընդդիմադիրներից էր, և այդ բժիշկներն էլ նրա ենթականերն էին և բնական է, որ պետք է ասեին այն, ինչ հրամայել էր ասել վրաց թագուհին: Այսօր արդեն, հաշվի առնելով մի շարք վկայություններ, հստակորեն կարելի է պնդել, որ Արղությանն իրոք թունավորվել է այդ թեյի ժամանակ՝ դառնալով թագուհու վրեժխնդրության զոհը:

1801 թ. մարտի 9-ին Կաթողիկոս ընտրված Հովսեփ արքեպս. Արղությանը դեռևս Էջմիածնում օծում չստացած, 57 տարեկան հասակում կնքեց իր մահկանացուն[58]:

Մահանալուց առաջ նա իր մոտ էր կանչել Սիմեոն եպիսկոպոսին և խնդրել, որ իր մահից հետո իր մարմինը տանեն Էջմիածին և թաղեն Սուրբ Գայանե եկեղեցու բակում՝ Սիմեոն Կաթողիկոսի գերեզմանի կողքին[59]:

Նրա մահվանից անմիջապես հետո դարձյալ սկսվեց կաթողիկոսության համար պայքարը, որը պատմության մեջ հայտնի է «Դավիթ-Դանիելյան» հակամարտություն անունով:

[58] Ա. Երիցյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա, էջ 16:
[59] «Կոռունկ Հայոց աշխարհի», էջ 920:

*ՀԵՆՐԻԿ ՄՈՔՈՅԱՆ*
***Փիլիսոփայական գիտությունների թեկնածու***

# ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԵՍ-Ի ԻՆՔՆԱՄԲՈՂՋԱՑՈՒՄԸ

Կյանքի ներքին բովանդակության խելամիտ ըմբռնումը և արժեիմաստավորումը, ինչի մասին առաջինը խոսեց Սոկրատեսը, ըստ էության բացահայտվում է ոչ թե ուղղակիորեն զուտ մարդ և բնություն գիտելիքի միջոցով միայն, այլև այն միաժամանակ իրենից ներկայացնում է անձնային Ես-ի իմացության և հոգևոր ու բարոյական արժեքների և նրանց ամբողջացման կուռ՝ միաձույլ համադրություն: Ճանաչողության ու երևույթները գնահատելու և կանխատեսելու դարավոր փորձից ելնելով կարող ենք ասել, որ երբ փիլիսոփայությունն առանձին իր համար, մնացած գիտաճյուղերը ևս իրենց հերթին իրարից մեկուսի, առանձին-առանձին ձգտում են դեպի «զուտ» գիտելիքը, արդյունքում պարզվում է, որ նրանք ոչ միայն չեզոք են և հակված չեն դեպի հոգևոր արժեքները, այլև իրենց էությամբ և ողջ ուղղվածությամբ նույնպես սահմանափակ են և միակողմանի այն բարքերի նման, որոնք՝ թե՛ իրականության, թե՛ մշակույթի, թե՛ Ես-ի հոգեաշխարհի, թե՛ արվեստի ու գրականության գաղտնարանները թափանցելու և ճանաչելու որևէ պահանջ ու կարիք չունենալով հանդերձ, միաժամանակ խուսափում և մի կողմ են քաշվում թե՛ փիլիսոփայությունից, թե՛ հոգեբանությունից:

Քանի որ մարդը Երկիր մոլորակի միակ բանական էակն է, ուստի նա անհրաժեշտորեն պետք է ձգտի գիտելիքի, բարոյական (խելամիտ) վարքի, իսկ նրա Ես-ի աշխարհում ձևավորվող և զարգացող բարոյական դրդապատճառն ըստ էության հենվում է նրա մեջ գոյություն ունեցող բանական գործոնի վրա և իր բնույթով այն ռացիոնալ է, նպատակահարմար, և հիմնականում կախված է բարոյական վարքի արժեքի իմացումից: Նման հայեցակարգն իր առաջին ձևակերպումն ստացավ հին հունական փիլիսոփայության մեջ Դեմոկրիտի և Սոկրատեսի կողմից:

Արժեքների հիմնահարցն առավել լայն իմաստով՝ անխուսափելիորեն ծագեց այն դարաշրջանում, երբ Հունաստանում սկսվել էր մշակութային ավանդույթների արժեզրկումն ու հասարակության գաղափարական հիմքերի խարխլումը: Աթենական դեմոկրատիայի ճգնաժամը Սոկրատեսին ստիպեց առաջադրել և հիմնավորել «Ինչ է բարօրությունը» հիմնաթեզը: Նա ասում էր, որ առաքինությունը գիտելիք է կամ իմաստություն, որ բարին իմացողը անպայման վարվում է բարու համաձայն՝ առաքինաբար, իսկ ով չարն է գործում, պատճառն այն է, որ նա կա՛մ չգիտի, թե ինչ է բարին, կա՛մ վատություն է անում հանուն բարու վերջնական հաղթանակի:

Երբ Սոկրատեսին ասացին, որ ինչ-որ մեկը նրա մասին վատ է արտահայտվում, «Դա նրանից է, որ նրան չեն սովորեցրել խոսել լավը»[1],- պատասխանում է նա:

Իրեն յուրահատուկ բարոյականության մեջ Սոկրատեսը, մինչև վերջ հավատարիմ մնալով հետևողական և խիստ ռացիոնալիզմին, ամենուր պնդում էր, որ առաքինությունը նույնական է գիտելիքին[2]: Արիստոտելն էլ գտնում էր, բոլոր առաքինությունները առաջանում են հոգու բանական մասում: Նա բոլոր «առաքինությունները բաժանեց երկու խմբի՝ պայմանավորված այն հանգամանքով, թե նրանց ձևավորման գործում ինչ դեր է խաղում տրամաբանական մտածողությունը, գիտելիքը և ուսուցանումը»[3]:

Առաջին՝ *Դիանոէթիկական առաքինություններին* (բանականության առաքինություններին) է վերաբերում իմացությունը, խելամտությունը, խոհեմությունը: Երկրորդ խումբը բարոյագիտական կամ բնավորության առաքինություններն են (առատաձեռնություն, չափավորություն, արդարություն և այլն), որոնք, ըստ Արիստոտելի, ծագում և զարգանում են հիմնականում արտաքնական հիմքով: Այդ առաքինությունների համար պահանջվում է իմանալ թե՝ ինչպես և ինչու համար է պետք իրեն այդպես պահել (դաստիարակության խրատական եղանակ), Արիստոտելի կարծիքով, դա չի կարող առաջնային լինել: «Իսկ գիտելիքը,- գրում է նա,- քիչ նշանակություն ունի կամ առաքինության նկատմամբ բոլորովին էլ չունի...»:

Անընդմեջ սոցիալականացվող անձնային Ես-ի գենետիկական ուղղվածությունը կայանում է նրանում, որ նա ինքնամբողջացման և սոցիալական կյանքի միջհոգեկան և միջբարոյական ցունագեղ փոխհարաբերություններում փնտրում է հաճելին, գեղեցիկը, առողջարարը, օգտակարը՝ միշտ խուսափելով տհաճից, տգեղից, անառողջից և անօգտակարից: Հետևաբար, նման ելակետով ուսուցման և դաստիարակչական արժեքների յուրացման և իր Եսաշխարհի հոգևոր տրամաբանությանը ապավինելով միայն անհատը կարող է իր մեջ զարգացնել այնպիսի առաքինություններ՝ բացառիկ հումանիստական արժեքներ, ինչպես՝ իմաստություն, խորաթափանցություն, կանխազգացում, խոհեմություն, ողջամտություն, շրջահայեցություն և այլն:

Մեղք գործելու մարդկային ձգտումը ժամանակին խարազանվել է միջնադարի հայ մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու կողմից, որն իր վանական աշխարհըմբռնման տեսանկյունից, մարդու՝ որպես սոցիալական միակ հիմնարժեքի մասին խոսելով այն հաստատ համոզմունքն է հայտնում, որ մարդու «*Երկրածին*» մարմինն ինքնին մեղսական կամ, ինչպես ինքն է ասում, «մեղսամակարդ» է («մարմին՝ մեղսամակարդ, և յաւժարութիւն՝ երկրասէր»...- Բան Ծե, ե) և մարդն իր «մեղսածին» մարմնով հազար ու մի թելերով կապված է *այս* «մեղսական» աշխարհի հետ, ուրեմն, ինչպես թելադրում է տրամաբանությունը, *հենց դա է նրա բնական վիճակը*:

Նարեկացին ջանում է հաստատել այն միտքը, որ կենդանի միս ու արյուն ունեցող մարդ արարածի «աշխարհածին մեղքերն» ու «արատները» խորապես մարդկային են, բնական, հասկանալի ու անտրոհելի մարդկային բնությունից: Եվ եթե մարդ արարածնե-

[1] Диоген Лаэртский. О жизни, учениях и изречениях знаменитых философов. М., 1979, с. 115: 111: 112:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

րից որևէ մեկը ջանում է Աստծո առաջ ապացուցել իր «Ես»-ի անզուգականությունը (Նարեկացու բնորոշմամբ՝ «անաղարտությունը», «կուսական անարատությունն» ու «մեղսազերծությունը»), ապա դա Նարեկացին համարում է երեսպաշտություն՝ «անօրէնութիւն», և Աստծուն աղերսում է մեծահոգաբար ներել նման անպատեհ խոսքերի համար («Թողցէ նմա Տէր Աստուած զայսոսիկ»):

1. Ինքնամբողջացվող անձի հոգեբարոյական վարքը չի կարող այլ բան լինել, քան նրա կողմից ձեռնարկվող փոքր թե մեծ ծավալի գործողություններն ու արարքները, որոնք անհրաժեշտորեն ներդաշնակվում են Նրանց՝ ընդհանուրի շահերի հետ:

2. Բարոյական *վարքի արժեքի* մեջ ձևակերպվում և սոցիալական հնչեղություն են ստանում համընդհանուր Ես-ի՝ սոցիալական ամբողջի վարքի նորմերն ու բարքերը, որոնք ինքնին չեն կարող դրսևորվել իբրև առաքինություններ և վարքի լիարժեք խթաններ, քանի որ մարդկային բոլոր գործողություններն անմիջականորեն ուղեկցվում են ինքնասիրության և եսասիրության հոգեբանական գործոններով: Ինչ վերաբերում է անձի հետաքրքրություններին, ապա դա այլ Ես-երի, Դու-երի և Մենք-երի նկատմամբ դրսևորվող ներդաշնակակերտ զգայունակությունն է, ուր իր երփներանգ ճառագումն են ստանում կյանքը, բնությունը, տիեզերքը և այլն:

Դեռ Անանիա Շիրակացին, ելնելով իր ժամանակի (7-րդ դ.) գիտության զարգացման աստիճանից, այն համարում էր որպես կյանքի, կենդանության և ամեն ինչի լինելիության աղբյուր, այն է՝ արփին-արեգակը ջերմությամբ ու լույսով, որ տարածվում են Երկրի վրա, այլև օդն ու ջուրը, *որպես մեծագույն արժեքներ*, որոնց մասին Գրիգոր Նարեկացին խոսում է իր բանաստեղծական դյութիչ լեզվով: Սուրբ Նարեկա վանական բանաստեղծը բնությունն զգում է իր *Եսաշխարհի 6 զգայական ստեղնաշարով մեկ*, որպես մշտապես շարժվող, ապրող և հուզվող մի կենդանի ներդաշնակություն, որն օժտված է իր վսեմ խորհրդավորությամբ:

«Վարդավառի տաղը» ընթերցելուց մենք կարծես կենդանի ականատես ենք դառնում համաճառագիչ և համացոլացող՝ կենսակունքի և ամեն մի կենդանության, առաքինության և արժեքի սկզբնապատճառի՝ արփիին-արեգակին իր հմայիչ ու դյութող գեղավարսերով: Անկասկած, Նա (արփին) է, որ գունագեղություն է պարգևում բոլորին և ամեն ինչին: Նա է, որ ստեղծում է ամպը, որից ցողն է շաղում և մարգարտազարդում թուփ և կանաչ: Ըստ Նարեկացու, բանաստեղծը ևս անում է այն, ինչ որ բնությունը: Այսինքն՝ նա իր Ես-ի ինքնամբողջացումն արտահայտում է՝ դիմելով *բնության Նա-ին*, երգելով այդ բնությունը՝ այդ հիմնային Նա-ի աստվածատուր բյուրեղյա առաքինությունները՝ նվագում է աստվածային քնարի վրա:

Բանաստեղծի մարմնական Եսաշխարհի կողմից բնության Նաաշխարհի գեղեցկությունների իմաստավորելը, արժեքնահատելը ստացել է աստվածային փառաբանության խորհուրդ, որովհետև բնությունն *ինքն իր կշեռքով կշռում, գնահատում* և փառաբանում է Աստծուն. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ» (Սաղմ. ԺԸ 22): «Այս անհրաժեշտ է բանաստեղծության համար, քանի որ առանց բնության,- լինի արտաքին բնությունը, թե մար-

դու հոգեկան ներքինը, ներքին բնությունը.- չկա ոչ մի զորեղ քնարերգություն»[4], գրում է Մանուկ Աբեղյանը: Արտաքին բնությունից թերևս նա վերցնում է գեղեցիկ ձևի համար նմանությունների որոշակի պատկերներ:

Իսկ մարդու ներաշխարհը Նարեկացու կողմից դառնում է զուտ բանաստեղծության նյութ, և մյուս կողմից՝ Նարեկա վանականը համոզված է սեփական Եսաշխարհի աստվածային ներշնչման մեջ, և ինքը միշտ զգում է, որ իր շուրթերից ելնող խոսքի շնորհքը աստվածատուր է: Հետևաբար իր մեջ խոսում է աստվածային ձայնը.

Եղիցի հոգի խառնեալ ի սա
Շունչ զորութեան Մեծիդ միացի՛
Ի Քո՛ ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս:

Իսկ ինչով է պայմանավորված և ինչպիսի խթանող պատճառներ են ընկած բարոյական արժեքների՝ առաքինությունների (ազնվության, աստվածասիրության, առատաձեռնության, արդարամտության, ճշմարտախոսության) հիմքում: Մինչև Գրիգոր Նարեկացին (Միջնադար) և դրանից հետո, որպես մեկընդմիշտ ընդունված կարգ, բարոյական ուսմունքները որպես հիմնական սկզբունք և ելակետ առաջ են քաշել ուրիշներին սիրելու, նրանց հավատալու և նրանց նվիրյալ լինելու գաղափարը: Սակայն շատ դեպքերում նման հոգեբարոյական մոտեցումն իրեն բոլորովին չի արդարացրել, որովհետև հարափոփոխ միջանձնային հարաբերությունների դինամիզմն անհրաժեշտորեն պահանջում է իմանալ, թե տվյալ որոշակի իրավիճակում քո *Ես-ը ինչ պետք է անի, որի պահանջը և կարծիքը զգում են մարդիկ՝ «Նրանք», և ինչ է հարկավոր այս կամ այն առանձին անհատի՝ Դու-ին կամ Նրան:*

Այսպես, օրինակ՝ իր երեխաներին միանգամայն նվիրված և մայրական անկեղծ նվիրումի սիրով տարված մայրը երբեմն կարող է բարոյական լուրջ վնաս հասցնել նրանց՝ ասելով, որ ահա այսպես պետք է խոսել և գործել, որովհետև ձեզ համար դա լավ է…: Կարելի է ասել, որ դա միջմարդկային փոխառնչությունների և կյանքի գոյապահպանման արժեքանորմատիվային բնույթ ստացած սովորական երևույթ է: Հենց այդպես կարող է սիրուց բուժական խորհուրդներ տալ՝ չհասկանալով տվյալ գործի բնույթը, կամ ասենք սովյալին գերսնելով՝ նրան հասցնել մահվան դուռը: Առավել ևս, մարդկանց մեծ զանգվածների կենսական կարևորություն ունեցող հիմնահարցեր լուծելիս պահանջվում են լուրջ գիտելիքներ, որոնց անտեսելը խիստ վտանգավոր է:

Շատ հաճախ մեծ և փոքր ծավալի խնդիրների համապատասխան լուծման նկատմամբ միանգամայն դիպուկ է հնչում Ի. Ա. Կռիլովի «Հաճկատար հիմարը թշնամուց վտանգավոր է» հայտնի առակի վերջաբանը: Առաքինության ոսկե կանոնի համաձայն, չի կարելի բավարար համարել միայն սիրով և նվիրվածությամբ ծառայելը, իսկ միանգամայն բախտորոշ և վճռական պահերին այն շատ հեռու է բավարար լինելուց: Ինչու-ի պատասխանը միանշանակ է. այն, որ՝ 4-րդ հազարամյակում ապրող, արարող, ստեղծագործող և բուռն

[4] Աբեղյան Մ., Երկեր. հ. 3, Ե., 1968, էջ 584:

ինքնամբողջացման գործընթացում հայտնված անձնային Ես-ից պահանջվում է արագ կողմնորոշում, զգոնություն և ուշադրություն համայն մարդու՝ Դու-ի նկատմամբ, որովհետև՝ բարոյականի, առաքինիի, ճշմարիտի և ազնիվի ակունքը. ծնողը, կրողը և իմաստավորողը մարդն է, որից սկսվում է և որով որոշակի իրավիճակում հարաբերականորեն ավարտվում է հիշյալ հատկանիշների ու հատկությունների և առանձնահատկությունների ակնհայտ դրսևորումը:

Կյանքն ինձ համար բնորոշվում է մարդկանց նկատմամբ տածած սիրով և ճշմարտության ազատ որոնումով՝ ասում է Վ. Վերնադսկին[5]: Ըստ Լև Տոլստոյի, «Ամենալավ մարդը նա է, ով առավելապես ապրում է իր մտքերով և ուրիշի զգացմունքներով, և մարդու ամենավատ տեսակը՝ որն ապրում է ուրիշի մտքերով և իր զգացմունքներով[6]: Ահա թե ինչպես է բնորոշում Հովհ. Թումանյանը Հայոց Հայրիկին. «Անցյալ դարի կեսերում Հայոց աշխարհքի վրա մի արծիվ էր պտտվում: Պտտվեց, պտտվեց ու Վարագա սրբազան բարձունքը, Վարագա հոյակապ վանքը ընտրեց իրեն բույն: Նա, էն կորովի արծիվը, ապագա Հայոց Հայրիկը, արծվենի հայացքով նկատել ու չափել էր համատարած խավարը, որ տիրած էր իր հայրենի երկրին և գալիս էր ջահ վառելու Վասպուրականի բարձրությունների վրա, չորս կողմը լուսավորելու և անելու ամեն բան, ինչ որ «ազգային միության, հայրենյաց շինության, եկեղեցյաց բարեզարդության և հայ մանկտվույն լուսավորության կվերաբերին»[7]:

Ինքնամբողջացվող անձնային Ես-ի հոգևոր-բարոյական վերաբերմունքի արտահայտումը Դու-երի նկատմամբ որպես չգրված կանոն «հարկադրաբար» պահանջում է խելամիտ, կշռադատված, խոհունակ, լրջախոհ և անկողմնակալ ձգտում՝ հասկանալ և առանց կանխակարծումների ըմբռնել և արժեզնահատել, վեր հանել և ի ցույց բոլորի վկայել նրանց համամարդկային արժանիքների մասին: Այդօրինակ մոտեցման առավել անհրաժեշտ պայմաններից են նաև՝ նրա կողմից անաչառ ճշմարտության *լուսաշող ջահին հասնելու ձգտումը*՝ գիտելիքին տիրապետելը: Ինչպես Սոկրատեսն է ասում «Կա միայն մեկ բարիք՝ գիտելիքը, և միայն մեկ չարիք՝ տգիտությունը»: Հարստությունը և ազնվազարմությունը ոչ մի արժանիք չեն պարգևում՝ հակառակը, բերում են միայն տգեղը[8]:

Անհատն իր հոգևոր աշխարհի պրիզմայով՝ ոսպնյակով է անցկացնում՝ բյուր անգամ քննարկում, վերլուծում, քննադատում ուրիշների արարքներն արդեն տեղի ունեցածի վերաբերյալ, միաժամանակ համեմատելով և բաղդատելով սեփական գործողությունների և արարքների հետ, ապա գալիս է որոշակի եզրահանգման. համապատասխան արարքները կարող են որակավորվել արդարացի և բարոյական չափանիշներով միայն այն դեպքում, երբ բավարար են պահանջվող օբյեկտիվ՝ առարկայական հիմքերը: Հարկավոր է հաշվի նստել փաստերի և նրանց տրամաբանության հետ և որպես հետազոտող՝ պետք է նայել սեփական Ես-ին, որը դատարան է ներկայացել երդվյալ ատենակալի առաքելությամբ: Այսպես, ուրեմն, ճշմարտության որոնումը հավասարազոր է երբեմնի կորսված

[5] Մեջբերում ըստ Баландин Р., Вернадский: жизнь, мысль, бессмертие. М., 1979, էջ 7:

[6] Маркуша А., Откровенно говоря//Наука и жизнь, 1979, N 3, էջ 66:

[7] Հովհ. Թումանյան, Երկ. ժողովածու, հտ. VI, Ե., 1959, էջ 182-183:

[8] Диоген Лаэртский. О жизни, учениях и изречениях знаменитых философов. М., 1979, с. 113.

անցին ցանծ ու ցավի կորստին, իսկ նրա հայտնաբերումը և ճշգրտումը միջանձնային իմացության սահմաններում դիտվում է միայն վեհության, առաքինության, նվիրվածության, խիզախության և քաջության դիրքերից:

Բոլոր ժամանակներում էլ հայրենասերը և հերոսը գրեթե նույն իմաստն են արտահայտել, այսինքն՝ կոնկրետ անձի կողմից կատարված դրական արարք, որն այսօրվա ըմբռնմամբ նշանակում է, որ դա այն մարդն է, որը ժամանակի թելադրանքով իր ծառայություններն է մատուցում մարդկությանը:

Երբեք չի կարելի փնտրել վեհություն և առաքինություն այնտեղ, որտեղ մարդ և մարդ հոգեբանական հաղորդակցումը զերծ է փոխվստահության, անկեղծության, ճշմարտության և բարության հիմքերից, քանի որ ճշմարտության (յուրայինին սիրելու և անկախ նրա տարիքից, սոցիալական դիրքից և մարդկության թատերաբեմում նրա կողմից տարվող դերից) որոնումն իրականացվում է ոչ թե անօդ տարածության մեջ, այլ որոշակի սոցիալական արժեքների սահմաններում: Ուստի ճշմարտությանը ձգտող անձնային Ես-ը անհրաժեշտորեն պետք է գտնի և հաշվի նստի նրա հետ: Նման քայլը, ըստ էության, մտնում է բարոյականության մեջ, իսկ առանց նման մոտեցման բարոյականությունը պարզապես դառնում է անուժ, կորցնում է իր իմաստը, որովհետև երբ անձն ի վիճակի չի անել կոնկրետ պարագայում, ինչ որ նա պետք է անի և պարտավոր է անելու, այստեղից սկիզբ է առնում ինքնաընդդիմադիր, ինքնահակասող և ինքնաբացասող ներանձնային այն վերապրումը, որը երբեմն ավարտվում է ողբերգությամբ, որովհետև գործողության արդյունքում տվյալ անհատը միանգամայն փոխվում է: *Հին հեղինակների մոտ ողբերգությունը և վեհությունը անխզելի հակադրություններ են:* Ըստ այդմ և բարոյականությունը կարելի է կարճ սահմանել իբրև՝ *մարդկայնության, պատասխանատվության և ճշմարտության նվիրվածության ընդհանուր գաղափարների դիալեկտիկական միասնության բաղադրատարրեր:*

Ինչ խոսք, մենք այստեղ չենք կարող քննարկել և վերլուծել այդ երեք տարրերը: Ավելորդ է ասել, որ ճշմարտությունը, որպես առաքինության զույգ, ինքնին հոյակապ վերացարկում է, և *անընդհատ հավաքվող, ինքնաճանաչվող* և ինքնամբողջացվող Ես-ի համար չի կարող լինել առավել հոգևոր և բարոյական բավականություն պատճառող որևէ երևույթ, քան ինքը ճշմարտությունն է: Հիշենք Պլատոնի աշակերտի՝ հին աշխարհի մեծանուն փիլիսոփա Արիստոտելի խոսքերը, թե Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ինձ համար ավելի թանկ է…:

Եթե կա վսեմություն, մեծազարմություն, մեծահոգություն, առաքինության ըմբռնումները և նրանց կրողները, հետևաբար պետք է լինի նաև դրանց *հակոտնյան՝ ստորություն, փոքրոգություն, ստախոսություն հասկացությունները և իրականում նրանց կրող անձանց համապատասխան արարքները:* Երկու հակոտնյա կողմերի փոխբացասումը միաժամանակ նշանակում է փոխպայմանավորվածություն, կապ, զարգացում և նորի, *գեղեցիկի կամ երբեմն նաև տգեղի ծնունդ:*

Բերենք բնորոշ մի օրինակ. վերցնենք տասը պատվիրաններից «Մի՛ ստիր»: Ինչպես ամեն մի բարոյական պատվիրան, այն ևս չի հանդուրժում և չգիտի որևէ բացառություն: Բայց իրական կյանքում մենք հաճախ ենք նահանջում նրանցից, և այդ ընկրկումների մեծ

մասը դարձել է մեզ համար սովորական և ինչ-որ տեղ համապատասխանում է հասարակության մեջ տիրապետող բարքերին: Եվ չնայած բացասական բնույթի բազում սովորույթներ իրենց ոչ ճիշտ արդարացումն են գտել առօրեական, զուտ կենցաղային և գործնական առումով, այնուամենայնիվ բարոյական տեսանկյունից դրանք չեն արդարացվում: Ուստի ժամանակն է, որպեսզի շուրջ 1700 տարի առաջ մկրտված մեր սուրբ հոգու վսեմ ազգային զանգերի ղողանջը հնչեցնենք՝ հավատուրացների՝ շրջիկ՝ այլադավան-քարոզիչների, ծնողուրացների, մարդասպանների, թմրամոլների, ծույլերի ու պորտաբույծների անբարոյական կեցվածքի՝ մեր սուրբ ազգային հոգևոր և բարոյական արժեքները խեղաթյուրելու, պղծելու և նենգափոխելու հայադավան արարքների դեմ:

Նպատակը չի արդարացնում միջոցները. գործունեության հանցածին ձևերն ու եղանակները միագամայն անհամատեղելի են վեհության և հերոսացումի հետ, որովհետև բոլորովին տարբեր է նաև նրանց իդեալների ու ձգտումների դիապազոնը, և *այս պարագայում դիալեկտիկան անողոք է և անդրդվելի, և վեհանձն ու ազնվաբարո նախաձեռնումները դյուրությամբ են վերածվում իրենց հակադրությանը*:

Ֆաուստը դիվային միջոցներով պայմանագիր կնքեց սատանայի հետ, բայց արդյունքում հայտնվեց *ո՛չ թե գեհենում, այլ երկնքում*. նրան փրկեց մտադրության վսեմությունը: Սակայն մարդկային իրատեսությունը՝ պատմությունը միանշանակ ձևով բացառում է գործելաոճի այդօրինակ եղանակը, որովհետև միջեսային հոգեհաղորդակցման պայմաններում, զուտ սուբյեկտիվ ցանկությամբ՝ շրջանցելով օբյեկտիվ իրավիճակը, անսպասելիորեն առաջ է քաշվում այնպիսի նպատակ, որի իրականացման համար պահանջվում են ոչ ճիշտ միջոցներ, այն երբեք չի կարող համարվել արդարացի նպատակ: Օրինակ՝ իր սեփական տիրույթում Շապուհ արքայի ոչնչով չարդարացված նենգ ու դավադիր ոճրագործ արարքը Հայոց Արշակ թագավորի նկատմամբ:

Վերջում կարող ենք նշել, որ գոյություն ունեցող հոգևոր-բարոյական հատկանիշների, հատկությունների և առանձնահատկությունների արժեքնահատումը գոյություն ունի միջանձնային՝ Ես և Դու-ի, Ես և Նրանք-ի միջսուբյեկտային դիալոգիկ-տրամախոսության սահմաններում, և արժեքների աստիճանակարգության այնպիսի սկզբունքով, որտեղ ինքնամբողջացվող մարդկային անձն իրավամբ համարվում է բարոյապես և մարմնապես ազատ, անկաշկանդ գործող և խորհող բացարիկ ստեղծագործ և արարող *էակ*, որն ի սկզբանե ներշնչված է *ազատ կամքի բացարիկ արժեքով*:

# Ս. ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 17-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ շուքով նշվեց Ս. Ղևոնդյանց քահանաների տոնը: Այս առիթով հայոց հոգևոր կենտրոնում էին հավաքվել Հայաստանյան թեմերի շուրջ 100 քահանաներ՝ վերստին նորոգելու իրենց ուխտն Աստծո հետ և հայտնելու իրենց հավատարմությունն ու սերը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Արցախի թեմի հոգևոր սպասավոր, Գանձասարի վանահայր Տ. Հովհաննես քհն. Հովհաննիսյանը (տե՛ս էջ 38):

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ քահանայական հավաք, որի քննարկման նյութն էր Եկեղեցու ծառայությունը երիտասարդության շրջանում: Վեհափառ Հայրապետի անունից ներկաներին ողջունեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը՝ ներկայացնելով օրվա խորհուրդն ու ժողովի կանոնակարգը: Հայաստանի և Արցախի թեմերի ներկայացուցիչների խոսքերից հետո հոգևորականներն արտահայտեցին իրենց մտորումներն ու մտահոգությունները արծարծված խնդիրների վերաբերյալ:

Հավաքի ավարտին Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց հոգևոր դասին և հորդորեց հովվել մեր ժողովրդին Քրիստոսի Ավետարանի լույս պատգամներով՝ առավել ջանասիրությամբ և նվիրումով կրելով Քրիստոսի քաղցր լուծը: «Մենք ծայրաստիճան ուրախ ենք, որ Տերն ընձեռում է մեզ այսպիսի պահեր՝ համախմբվելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, մեր ուխտը վերանորոգելու, մեր առաքելության ուղին առավել հստակ դարձնելու, աղոթքով գոտեպնդվելու, աղոթքով զորանալու և այս դժվարին ժամանակներում մեր առաքելությունն իրականացնելու համար»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ի նշանավորումն Ս. Ղևոնդյանց տոնի և ի գնահատություն իրենց ծառայության՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով Հայաստանի և Արցախի թեմերից 3 քահանաներ արժանացան ավագ քահանայության և 6-ը՝ ծաղկյա փիլոն կրելու պատվի, իսկ 17-ը լանջախաչ կրելու իրավունք ստացան:

Քահանայական հավաքից հետո Մայր Աթոռի միաբանները, ներկա թեմակալ առաջնորդները և թեմերից եկած քահանաները Մայր Տաճարում մասնակցեցին երեկոյան ժամերգության:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 19-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան 2 սարկավագներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արմեն սրկ. Դանեղյանը վերակոչվեց Տ. Կյուրիճ քահանա, իսկ Վարդան սրկ. Մովսիսյանը՝ Տ. Շահան քահանա:

«Ահա այսօր՝ Սրբոց Վարդանանց նվիրական տոնի օրը, երբ մենք ողջ Եկեղեցով նշում ենք Ավարայրի ճակատամարտում հոգևոր և բարոյական հաղթանակ տարած Ս. Վարդան Մամիկոնյանի և նրա հետ նահատակված 1036 զինվորների անմար հիշատակը, այսօր մեզ համար այն դառնում է ավելի նվիրական և ավելի սուրբ, որովհետև այսօր կարծես թե ավելի քրիստոնյա ենք դառնում, քանզի Վարդանանց ոգին և շունչն են ներշնչում մեզ»,- նշեց ձեռնադրող Սրբազան Հայրը (տես էջ 41): Վազգեն Սրբազանը, շնորհավորելով նորօծ ձեռնադրյալ քահանաներին, մաղթեց, որ իրենց ողջ կյանքում որպես ուղեկից ունենան Ս. Վարդանանց անպարտելի ոգին և նրանց աներեր հավատքն առ Աստված:

Ձեռնադրությունից հետո Ավագ Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Վարդանանց տոնին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում նշվում է նաև Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը: Այս առիթով Ս. Պատարագի ընթացքում կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագից հետո Մայր Աթոռում Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաների մասնակցությամբ տեղի ունեցավ նաև հանդիսություն՝ նվիրված Ս. Վարդանանց հերոսամարտին:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, Սրբազան Հայրը կատարեց նաև վեղարի տվչություն: Մխիթարյան հայրերից Տ. Տաճատ ծայրագույն վարդապետ Ցարթըմյանը, իր հավատարմության ուխտը կատարելով Բջման Ս. Սեղանի առջև, Սրբազան Հոր ձեռքից, որպես կուսակրոն քահանա, ստացավ վեղար և համալրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Այսուհետև Տ. Կյուրիճ քհն. Դանեղյանը և Տ. Շահան քհն. Մովսիսյանն իրենց ծառայությունը կբերեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, իսկ Տ. Տաճատ ծ. վրդ. Ցարթմյանը՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմում Տ. Հովնան արքեպս. Դերդերյանի առաջնորդության ներքո:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



## Տ. ԿՏՐԻՃ ՔԱՀԱՆԱ ԴԵՎԵՃՅԱՆ
(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1969 թ. հոկտեմբերի 22-ին Ֆիլադելֆիայում (ԱՄՆ):

Մանկավարժական կրթությունը ստացել է Ֆիլադելֆիայի Հայ Քույրերի Վարժարանում մինչև 7-րդ դասարան, ապա տեղափոխվել է Ֆրեզնո (Կալիֆոռնիա) և ուսումը շարունակել տեղի հանրակրթական դպրոցում:

1989-1994 թթ. սովորել է Կալիֆոռնիայի Պետական Համալսարանի ճարտարագիտական բաժնում, որտեղ 1994 թ. հանձնել է ավարտական քննությունները:

1987-1994 թթ. աշխատել է որպես ճարտարապետի օգնական, ապա՝ 1994-2001 թթ. որպես պետության կողմից վկայագրված ճարտարապետ:

1991 թ. հուլիսին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի, ձեռնադրվել է կիսասարկավագ:

1998 թ. դեկտեմբերին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս Հովսեփյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. նոյեմբերին Վեհափառ Հայրապետի հրավերով եկել է Մայր Աթոռ, ուր ցայսօր պաշտոնավարում է որպես Մայր Աթոռի Տեղեկատվական Համակարգի օտարալեզու լրատվամիջոցների հետ կապի պատասխանատու:

2004 թ. փետրվարի 15-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, ձեռնադրվել է քահանա:



ՆՈՐԸՆԾԱՆԵՐԸ՝ ՁԵՌՆԱԴՐՈՂ ՍՐԲԱԶԱՆԻ ՀԵՏ



«ՀՐԱԺԱՐՈՒՄՆ»

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



## Տ. ՇԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Վարդան)

Ծնվել է 1979 թ. Էջմիածին քաղաքում:

1986-1995 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցում:

1995-2001 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հունիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ «Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի դեգերումները 1915-1930 թթ.» թեմայով՝ ստանալով «լավ» գնահատական:

2001 թ. հուլիսից ծառայության է անցել նախ Վեհարանում՝ որպես գործավար քարտուղար, ապա Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ իբրև վերակացու: Այժմ աշխատում է Մայր Աթոռի ֆինանսական համակարգում:

2004 թ. փետրվարի 15-ին՝ Սրբոց Վարդանանց նահատակության տոնին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, ձեռնադրվել է քահանա:



## Տ. ՏԱՃԱՏ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱՐՏՄՅԱՆ

Ծնվել է 1944 թ. Բեյրութում (Լիբանան):

1959 թ. փոխադրվել է Վենետիկ, ուր և ստացել է սկզբնական կրթությունը:

1965-1972 թթ. սովորել է Հռոմի Հիսուսյան միաբանության Գրիգորյան միջազգային համալսարանի փիլիսոփայության և աստվածաբանության ֆակուլտետում:

1971 թ. դեկտեմբերի 25-ին կուսակրոն քահանա է ձեռնադրվել Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության մայրավանքում:

1993 թ. ստացել է Ծայրագույն վարդապետական աստիճան:

Ուսումնական փարբեր պաշտոններ է վարել Բեյրութի, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան ժառանգավորաց և Մուրադ-Ռաֆայելյան գիշերօթիկ վարժարաններում:

1993-2000 թթ. եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» պաշտոնաթերթի խմբագիրը:

Հեղինակ է մի քանի փասնյակ պատմա-բանասիրական, իմաստասիրական և գրական հոդվածների, ինչպես նաև հետևյալ գրքերի.

Քեսունի Կարմիր Վանքը, Վենետիկ, 1976.

Դռնակ Թ-իւ Մէկ (բանաստեղծութիւններ), Լոս Անճելըս, 1983.

Կրթական Հոգեր, Լոս Անճելըս, 1984.

Երէկ եւ Այսօր, Լոս Անճելըս, 1985.

Աստուած եւ Ժամանակակից գրականութիւն, Լոս Անճելըս, 1986.

Ճամբան (բանաստեղծութիւններ, Լոս Անճելըս, 1986.

Մխիթարեաններու նպաստը հայ մշակոյթին եւ հայագիտութեան, Լոս Անճելըս, 1987.

The Contribution of the Mekhitarians to Armenian Culture, Լոս Անճելըս, 1987.

Կարինի Հնձուց կամ Կարմիր Վանքը, Լոս Անճելըս, 1988.

Նիւթեր Հայ Վանականութեան պատմութեան, Վենետիկ, 1989.

Սահմանագիծ (բանաստեղծութիւններ), Վենետիկ, 1990.

Սուրբ Ղազար Կղզին՝ Մայրավանք Մխիթարեաններու, Վենետիկ, 1990.

The Island of San Lazzaro, Mekhitarian Headquarters, Venice, 1990.

Որդան Կարմիր կամ Հայկական Կարմիր Ներկ, Վենետիկ, 1991.

Վենետիկի Մխիթարեանները Լոս Անճելըսի մէջ, Լոս Անճելըս, 1992.

Վենետիկի Մխիթարեաններու «Հայկական Կաճառը», Վենետիկ, 1993.

Մխիթարեան Գաղափարական եւ Մխիթարեան Ինքնութիւն, Վենետիկ, 1994.

Հողը (բանաստեղծութիւններ), Լոս Անճելըս, 1994.

Հայաստանի Վանքերուն եւ Եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ, 1995.

Մայրը (բանաստեղծութիւններ), Լոս Անճելըս, 1997.

Հայկական Սրբազան Պատարագ (արեւմտահայ աշխարհաբարի թարգմ.), Վենետիկ, 2000.

Ընդգրկել Անընդգրկելին կամ վերադարձ դէպի Աստուած, Վենետիկ, 2000.

Ի՞նչ է քրիստոնէութիւնը, Լոս Անճելըս, 2001.

Վարդապետը Հայ Եկեղեցական մտածողութեան մէջ, Վենետիկ, 2001.

Եպիսկոպոսը Հայ Եկեղեցական մտածողութեան մէջ, Վենետիկ, 2003.

Աստուած, փնտռտուք, հանդիպում, յարաբերութիւն, Լոս Անճելըս, 2002:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Մարտի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, թեմի եկեղեցականների և Ռուսաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Արմեն Սմբատյանի ուղեկցությամբ այցելեց Մոսկվայի Ս. Հարություն հայկական եկեղեցի:

Վեհափառ Հայրապետը փառք և գոհություն վերառաքեց Երկնավոր Տիրոջը՝ հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության, երկու երկրների խաղաղ և ապահով առաջընթացի, երկու Եկեղեցիների պայծառության համար:

Աղոթքից հետո Նորին Սրբությունն իր գնահատանքի խոսքն ուղղեց թեմակալ առաջնորդին, թեմի սպասավորներին և ներկա բազում հայորդիներին այն նախանձախնդրության համար, որ դրսևորում են հայապահպանության, հայոց հավատքի և ազգային կյանքի զորացման սրբազան առաքելության իրականացման գործում:

«Ձեր քայլերը ուղղեք դեպի այս եկեղեցին, որ դարեր շարունակ իր կամարների ներքո համախմբել է մեր ժողովրդի զավակներին, նրանց կրթել և սնել ազգային և հոգևոր արժեքներով: Այստեղ նրանք զորացել են, այստեղ նրանք ճանաչել են իրենց ինքնությունը, ճանաչել Աստծուն և Աստծո հետ իրենց ուխտը կնքել».- հորդորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով Ռուսաստանի օրհնյալ հողում բնակվող հայորդիներին անխողդողդ մնալ եկեղեցասիրության և հայրենանվիրումի մեջ: Վեհափառ Հայրապետը պատգամեց նրանց՝ շարունակել իրենց ընթացքն Աստծո պատվիրանների մեջ, որպեսզի իրենց կյանքը շարունակի լինել հավատքի, մեր ազգային կյանքի հաղթական ընթացք:

Նույն օրը Նորին Սրբությունն այցելեց նաև Մոսկվայում կառուցվող Ս. Խաչ եկեղեցի, ծանոթացավ շինարարական աշխատանքների ընթացքին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 7-ին, երիտասարդների օրհնության օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Արարատյան Հայրապետական և Արագածոտնի թեմերի երիտասարդաց միությունների ու Երևանի հայորդյաց տների շուրջ 350 սաների հետ: Վեհափառ Հայրապետը ողջունեց երիտասարդներին՝ ուրախություն հայտնելով, որ օրեցօր նոր անդամներ են ներգրավվում Հայ Եկեղեցու երիտասարդաց շարժման մեջ:

«Մեր Եկեղեցին զորավոր կլինի այնքանով, որքանով մեր երիտասարդությունը զգա Եկեղեցու ներկայությունն իր հոգում ներս, երբ զգա, որ Եկեղեցու առաքելությունը նույնացած է իրենց կյանքի առաքելության հետ»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև երիտասարդներին հուզող խնդիրներին ու այն մարտահրավերներին, որոնց առջև կանգնած են նրանք:

«Այսօր վտանգի առջև է մեր երիտասարդությունը. այդ վտանգն անհավատությունն է, անտարբերությունը հավատքի նկատմամբ, այդ վտանգը զվարճանքի և հաճույքի, Քրիստոսի պատվիրանների վրա ցխարսխված կյանքի հրապույրներն են, դրսից ներթափանցող նոր արժեքային ընկալումներն են, որոնք որ գալիս են մեր Եկեղեցու զավակներին հեռացնելու իրենց հայրերի սուրբ հավատքից ու հայրենական արժեքների ընկալումից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը պատասխանեց նաև երիտասարդների բազում հարցերին և մաղթեց, որպեսզի Ս. Սարգիսն ունկնդիր լինի իրենց խնդրանքներին և բարեխոսի Բարձրյալն Աստծո առաջ:

Հանդիպմանը ներկա էին Արագածոտնի թեմում Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը, Հայորդյաց տների հոգևոր տեսուչ Տ. Խսադ քհն. Ղազարյանը և Տ. Տաճատ քհն. Դավիդյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*«...Վարդան քաջ նախապետ, որ վանեցեր զբշնամին, վարդագոյն արեամբդ քո պսակեցեր զեկեղեցի»:*
(Շարակնոց)

Սույն թվականի փետրվարի 19-ին նախկին ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հուշ-երեկո՝ նվիրված «Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Ձևավորված գեղեցիկ ավանդույթով, հերթական անգամ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչությունը և ուսանողությունն իրենց բանախոսություններով ու գեղարվեստական համարներով հավուր պատշաճի ոգեկոչեցին նվիրական հերոսների հիշատակը: Հանդիսությանը ներկա էին Սրբազան Հայրեր, Մայրավանքի միաբանության կրտսեր անդամներ, դասախոսներ և հյուրեր:

Առավել մեծ էր օրվա խորհուրդը, քանզի այդ օրը նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնն էր, որին ևս անդրադարձան օրվա բանախոսները:

Անշուշտ, հարկ չկար որևէ նոր բան ասելու մեր նախապապերի սխրանքի մասին: Այդ սխրանքը ինչպես երեկ, նույնպես և այսօր նույնն է, այն անմահ է: Պարզապես հարկ է, որ յուրաքանչյուր սերունդ արժանին մատուցի անմահ նախապապերին: Ուրախությամբ պետք է նշենք, որ պատմական սխրանքի հանդեպ բոլոր սերունդների գնահատականը և վերաբերմունքը նույնն է, քանզի երբևէ չեն խամրում հերոսականության գույները: Ավարայրը մեր ոսկեվառ պատմության այն եզակի էջերից է, որտեղ փայլուն դրսևորվեց Թորգոմա ազգի միասնական ազատատենչ ոգին, որը զուգորդվելով հայի մտքի և ուժի հետ՝ պսակվեց հաջողությամբ:

Եվ ահա այսօր այդ հաջողության դափնին առանձնակի հպարտությամբ կրում ենք մենք՝ ճեմարանականներս, որպեսզի այն փոխանցենք հաջորդ սերնդին: Այսօր մեր հերթն է պատվով և հարգանքով պանծացնելու նվիրական հերոսների հիշատակը՝ վեր պարզելով ազատության դափնին, որպեսզի համայն աշխարհին պարզ լինի, որ ազատասեր հայը երբեք չի դադարի մաքառել իր հավատքի ու ազատության համար:

Ահա այս մտորումներով խանդավառված և ոգեշնչված՝ սկսվեց հուշ-երեկոն:

Բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը՝ ասելով. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շատ իմաստուն կերպով Տոնացույցի մեջ կարգավորել է Սրբոց Ղևոնդյանց քահանայից և Սրբոց Վարդանանց զորավարաց տոները, որոնք լրացնում են միմյանց: Անհնարին է պատկերացնել Վարդանանց սխրանքը՝ առանց Սահակ-Մեսրոպյան հանճարով հայացած Եկեղեցու և առանց Ղևոնդյանց դիմադրության ու գործակցության: Պատմական այս հանգամանքներն էլ նախապատրաստեցին գաղափարական ու զինական այն դիմադրությունը, որ տեղի ունեցավ մեկուկես հազարամյակ առաջ ժամանակի ամենահզոր պե-

պությունններից կրակապաշտ Պարսկաստանի հետ: Ընդդիմանալով՝ հայ ժողովուրդը կարողացավ պաշտպանել մեր ազգային մնայուն, հավիտենական արժեքները, բայց մանավանդ՝ հայկական չեշտված քրիստոնեական ոգին և դիմագիծը»:

Տեր Հայրն ավելացրեց, որ հայ ժողովուրդը և մեր Ս. Եկեղեցին անվերապահորեն ճանաչում են պատմական այդ դրվագները որպես մեր ժողովրդի անցյալի հերոսական պատմության, փառքի և քրիստոնեության հաղթության ոսկյա էջեր և «նորահրաշ պսակավորներին» արժանապես կարգել են ազգային-եկեղեցական սրբոց դասը:

Տնտուչ Տեր Հայրը շնորհավորեց նաև Նորին Սրբության անվանակոչության տոնը՝ հանուն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի մաղթելով, որ «...Անսասան և բարգավաճ թող մնա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Թող փիեզերքի Արարիչը քաջառողջություն և բարօրություն պարգևի առաքելաշավիղ մեր Հայրապետին»:

Այնուհետև դահլիճում թևածեցին «Ի զէն» ստեղծագործության հնչյունները՝ կատարմամբ Ռ. Շարբաթյանի ղեկավարած երգչախմբի:

«Ավարայրի դասերը» պատմական-ներածական ճառով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Գնել Գրիգորյանը՝ համառոտ ակնարկով ներկայացնելով այս ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրավիճակը և Վարդանանց կատարած անգնահատելի դերը: Ապա Գ լսարանի սան Արտակ Ղևոնդյանն արտասանեց Պ. Սևակի «Իմ ժողովրդին» բանաստեղծությունը, որին հաջորդեց երգչախմբի՝ Վարդանանց նվիրված «Նորահրաշ» շարականի և «Երգ մնոնոդ հայրենասիրի» ստեղծագործության քաղցրալուր կատարումները: Հ. Շիրազի «Երգ Հայաստանի» բանաստեղծությունն արտասանեց Դ լսարանի սան Արսեն Հարությունյանը: Առանձնակի խուզումով էին համակված ճեմարանցիները, որի մասին են վկայում նրանց՝ իրար առանց դադարի հաջորդող ջերմարվեստական համարները:

Մ. Եկմալյանի «Պլպուլն Ավարայրի» խոգեթով փաղին հաջորդեց Գ լսարանի սան Նարեկ Եղիազարյանի ասմունքով հնչած՝ Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը: Երգչախումբն այնուհետև կատարեց Մ. Եկմալյանի «Լռեց» և Հարրի Պատրիկյանի «Վարդան» ստեղծագործությունները Զ լսարանի սան Էդգար սրկ. Հակոբյանի կատարմամբ: Դ լսարանի սաներ Էդուարդ Խուչատրյանը և Հայկ Ամիրյանն արտասանեցին Վ. Տերյանի «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» և Պ. Սևակի «Իմ Հայաստան» բանաստեղծությունները: Այնուհետ ուսանողության անունից իր խոսքը ներկաներին ուղղեց Ե լսարանի սան Հայկ ուրարակիր Բաբսեղյանը.

«Այսօր՝ այս ազգային եկեղեցական տոնին, ինձ համար մեծ պատիվ է ավագ և կրտսեր եղբայրներիս անունից մեր սրտի խոհերը և ջերմ ու անկեղծ շնորհավորանքները փոխանցել ազգիս շնորհազարդ Հայրապետին՝ Նորին Սրբության անվանակոչության տոնի առիթով: Նախևառաջ ցանկանում ենք նշել, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փեսչության և ուսանողության համար բարձր պապիվ է այս հուշ-երեկույթի կազմակերպումը: Պատահական չէ, Վեհափառ Տեր, որ Ձեր նախորդ երանաշնորհ Հայրապետների և Ձեր բարձր փնօրինությամբ այն միայն մեզ՝ ճեմարանականներիս է վերապահված, քանզի ո՞վ, եթե ոչ մենք, ի դեմս Ձերդ Սրբության, պարտավոր ենք լինել անխոնջ ջահակիրները և հետևորդները Վարդանանց նվիրական գաղափարի և ոգու:

Սիրելի՛ ներկաներ, հերթական անգամ մեզ այս հոյակերտ կամարների ներքո ի մի է բերել Վարդանանց սրբազնագույն խորհուրդը: Հավաքվել ենք մեկ անգամ ևս մեր երակներում զգալու Ավարայրը և մտովի մասնակից լինելու մեր նախնյաց հավատի ճակատամարտին:

Կասկածից վեր է, որ անմահ նախապատկերը յուրաքանչյուրիս համար սոսկ հիշողություն չեն, իսկ Ավարայրի ճակատամարտն էլ՝ Թարգմանչաց սերնդի խիզախության և անկոտրում ոգու հերթական դրսևորումը: Վարդանանք կենդանի, մշտապես ապրող լեգենդ են, որ պատմության քառուղիներով և ճակատագրի ոլորապտույտներով շարունակ առաջնորդում են հավատավոր հայորդիներին: Այս նույն լեգենդն էր, որ ոգեշնչման աղբյուր եղավ մեր օրերի արցախյան հերոսամարտի զինվորներին: Բոլորիս քաջ հայտնի է, թե ինչպիսի հզոր ազգեր և զերտերություններ են եկել ու անցել պատմության թոհուբոհի միջով, որոնք պարբերաբար արշավանքներ են կազմակերպել դեպի Հայաստան, բայց ի հեճուկս այդ ամենի՝ այսօր մենք ոտք ենք դրել երրորդ հազարամյակ՝ իբրև ազատ, անկախ Հայաստան: Այդ անկախության գինը մեր նախապակների թափած անգին արյունն է: Ինչպես երեկ, նույնպես և այսօր թող միշտ վառ ու պայծառ մնա Ս. Վարդանանց հերոսների հիշատակը մեր հոգիներում:

Աղոթք առ Բարձրյալն Աստված, որպեսզի Տերն անսասան պահի համայն հայության հոգևոր օրրանը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և քաջառողջություն ու արևշատ օրեր պարգևի ազգիս Հայրապետին: Մաղթում ենք արգասաբեր հովվական գործունեություն՝ ի փառս Հայաստանյայց Եկեղեցու և նրա հավատավոր ժողովրդի»:

Հանդիսության գեղարվեստական մասն ավարտվեց Ռ. Պատկանյանի «Հիմի՞ էլ լռենք» բանաստեղծության Կոմիտասյան երգային մշակմամբ:

Հավարտ երեկոյի օրհնության խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը: Սրբազան Հայրը, անդրադառնալով Վարդանանց խորհրդին, նշեց, որ Ավարայրը եղել և մնում է մեր պատմության ամենաօրինակելի դասերից մեկը բոլոր սերունդների համար: Իր խոսքում Սրբազանը շեշտեց, որ եթե մեր նախնիներն այն ժամանակ մաքառում էին հավատքի ու ազատության համար, ապա այսօր մենք կարտավոր ենք պայքարել մեր լեզվի անաղարտության և ազգային դիմագծի համար, որոնք, ցավոք, հաճախ աղարտվում են օտարոտի արժեքներով:

Հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

Ինչպես երեկ, նույնպես և այսօր մեզանից յուրաքանչյուրի սրտում թող միշտ վառ ու պայծառ մնա անմահ հիշատակն արդարոց: Բյուր օրհնություն քաջերի անմեռ հիշատակին:

*ՀԱՑԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՀՈԳԵՎՈՐ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

Փետրվարի 2-6-ը Աթենքում կայացավ աշխարհի շուրջ 40 երկրների զինված ուժերում հոգևոր սպասավորների առաջնորդների միջազգային 15-րդ կոնֆերանսը: Ամենամյա այս կոնֆերանսի աշխատանքներին արդեն երկրորդ տարին իր մասնակցությունն է բերում նաև Հայոց բանակի հոգևոր ծառայության խորհրդական Տ. Արշեն աբղ. Սանոսյանը:

Կոնֆերանսի օրերին զանազան հանդիպումների ընթացքում Հայր Սուրբը նախնական համաձայնություններ է ձեռք բերել Ռուսաստանի, Լիտվայի և այլ երկրների հոգևոր առաջնորդների հետ հետագա համագործակցության վերաբերյալ: Այսօր Հայոց բանակում որպես հոգևոր սպասավոր ծառայում է շուրջ 26 հոգևորական և, ինչպես հավաստում է Հայր Արշենը, այս ծառայությունը բավականաչափ առաջընթաց է արձանագրել մի շարք նախկին ԽՍՀՄ երկրների համեմատ:

Առաջիկայում, մայիսի 9-15-ը, Հայոց բանակի հոգևոր սպասավորները կմասնակցեն նաև Գերմանիայում կայանալիք հոգևոր ծառայողների սեմինարին:

Աթենքում գտնվելու օրերին Հայր Արշենը մասնակցել է նաև Հունաստանում ՀՀ դեսպանատան նախաձեռնությամբ կազմակերպված Հայոց բանակի 12-րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը՝ ներկաներին փոխանցելով Հայոց Հայրապետի օրհնությունը:

## ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԿԱՆԱՆՑ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համակարգում գործող քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայությունը Մարտի 8-ին՝ Կանանց միջազգային տոնի կապակցությամբ, հանդիսություն էր կազմակերպել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: Կին կալանավորների համար կազմակերպվել էր համերգ, որի ընթացքում հանդես եկավ «Էջմիածին» մշակութային բարեգործական հիմնադրամի «Տարոն» մանկական գուսանական երգչախումբը: Հանդիսության ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից նվերներ բաժանվեցին ազատազրկված կանանց:

Ամենայն Հայոց Հայրապետի փնօրհնությամբ քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայությունը, իբրև առանձին կառույց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գործում է ավելի քան երեք ամիս: Հոգևոր ծառայության գրասենյակի պատասխանատու Հովհաննես սրկ. Ռուշանյանն ամենամյա այցերով լինում է Հայաստանի մնկ տասնյակից ավելի քրեակատարողական հիմնարկներում:

Այցերի ընթացքում կալանավորները ծանոթանում են Հայ Եկեղեցու կանոններին և ծեսերին, բարեպաշտական սովորություններին, տոներին ու դրանց խորհուրդներին: Կալանավայրերի գրադարաններին է բաշխվում հոգևոր գրականություն:

*Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս*

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՌԻՉՄԸՆՏԻ ՄԷՋ

Ռիչմընտի (Վիրճինիա) Ս. Յակոբ եկեղեցւոյ ծուխը պատմական ու խանդավառ օրեր ապրեցաւ փարտյս Փետրուար 21 եւ 22 օրերուն:

Առաջին անգամն ըլլալով յիշեալ ծուխի հաւատացեալները իրենց եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուեցան քահանայական ձեռնադրութեան:

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան քահանայ ձեռնադրեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Բրշ. Տիգրան սրկ. Կարապետեանը, որ եղաւ առաջնորդ Սրբազան Հօր 15-րդ ձեռնասունը:

Ձեռնադրութենէն առաջ՝ Ս. Յակոբ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամները իրենց ուրախութիւնը արտայայտեցին ըսելով որ այս ձեռնադրութիւնը իրենց համար մեծ նշանակութիւն ունի, քանի որ Տիգրան սարկաւագ, որպէս հոգեւոր մատակարար, արտօնութիւնը չունէր Ս. Պատարագ մատուցանելու եւ խորհուրդներ կատարելու. եւ այժմ ծուխը պիտի վայելէ այդ արարողութիւնները իրենց հովիւին միջոցաւ: Իսկ Տիգրան սարկաւագ ըսաւ. «Իմ ձեռնադրութիւնս իրականացած երազ մըն է. եւ շատ ուրախ եմ որ առիթը պիտի ունենամ ծառայելու իմ Տիրոջս եւ ժողովուրդիս»:

Քահանայական կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ Փետրուար 21-ի երեկոյեան եւ Ձեռնադրութիւնը՝ Կիրակի Փետրուար 22, առաւօտեան՝ յընթացս Ս. Պատարագի: Ձեռնադրութեան խարտաւիլակներն էին Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան եւ Ուոթըրթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Առաքել քհնյ. Ալճալեան, իսկ ձեռնադրութեան կնքամայրը՝ նիւեորքաբնակ Տիկ. Մէրի Պահապուրեան:

Ձեռնադրիչ Սրբազան Հայրը նորընծայ քահանան վերակոչեց ՏԷՐ ՅՈՎՍԷՓ:

Ձեռնադրութենէն անմիջապէս ետք Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր յորդորականին մէջ ըսաւ. «Այսօր մենք բոլորս վկաները եղանք խորհուրդի մը. այսօր, անհատ մը կերպարանափոխուեցաւ պարբեր մէկու մը. այս փոփոխութիւնը ինքնին անտեսանելի է, սակայն անոր ազդեցութիւնը խնդրոյ առարկայ անձին հոգիին մէջ շատ խոր է: Այսօր, Ս. Հոգին ներգործեց Տիգրան սարկաւագի մէջ եւ ան նոր մարդ մը դարձաւ. հովիւը Յիսուս Քրիստոսի հօտին: «Տիրոջ Հոգին իմ վրաս է, զիս ատոր համար իսկ օծեց. զիս ղրկեց աղքատներուն աւետարանելու, սրտաբեկ հոգիները բժշկելու, գերիներուն ազատում քարոզելու եւ կոյրերուն՝ տեսողութիւն» (Ղուկ. Դ. 18): Ասոնք են Յիսուս Քրիստոսի առաքելութիւնը նկարագրող բառերը:

... Քանի մը օր առաջ Հայց. Եկեղեցին նշեց Սրբոց Ղեւոնդեանց տօնը: Այս սուրբ հոգեւորականները, առաջնորդութեամբ Ղեւոնդ Երէցի Ս. Վարդան Զօրավարին կողքին պայքարեցան Աւարայրի ճակատամարտի ընթացքին: Այս խումբին մաս կը կազմէին սարկաւագներ, քահանաներ, վարդապետներ, եպիսկոպոսներ եւ նոյնիսկ Կաթողիկոսը՝ Յովսէփ: Ես վստահ եմ որ նորընծայ Տէր Յովսէփ իր նուիրեալ ծառայութեամբ պիտի շարունակէ իր



ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

նախորդներու առաքելութիւնը: ... Կ՚աղօթենք որ Տէրը ներշնչէ, պահէ ու պահպանէ զինք՝ երբ ան նոր առաքելութեան մը կը ձեռնարկէ: Կ՚աղօթեմ որ Տէրը օրհնէ երէցկին ճննիֆըրը, որ զօրավիգ պիտի կանգնի Տէր Հօր, ինչպէս նաեւ բոլոր անոնք՝ որոնք անհամբերութեամբ կը սպասէին այս պահուն: Ձեր հաւատքին եւ քաջալերութեան շնորհիւ է որ Տէրը ձեզի՝ Ռիչմընտի ծուխին պարգեւեց հոգեւոր հովիւ մը»:

Ձեռնադրութեան արարողութենէն ետք փեղի ունեցաւ ճաշկերոյթ՝ նախագահութեամբ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի:

Ճաշկերոյթի հանդիսավարն էր Ս. Յակոբ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամ Ռաալ Նորիս: Բացման աղօթքը արտասանեց Թեմական Պատուիրակ եւ Միջ–Եկեղեցական Յարաբերութեանց վարիչ Գեր2. Տ. Վիգէն եպս. Այգազեան: Ծուխին անունով բաժակ առաջարկեց հանդիսութեանց Կարգադիր Յանձնախումբի ատենապետ Ճան Պարոնեան: Եկեղեցւոյ երգեհոնահարուհի Քաթրին Նորիս դաշնամուրի վրայ երեք կտորներ նուագեց: Ելոյթ ունեցաւ ձեռնադրութեան կնքամայր Տիկ. Մէրի Պահապուրեան, որ ըսաւ թէ ինք հետեւած էր նորընծայի աշխատանքներուն Ս. Ներսէս Ընծայարանի աշակերտութեան օրերէն եւ իր ուրախութիւնն ու հպարտութիւնը յայտնեց որ ան այսօր արժանացած էր քահանայական ձեռնադրութեան: Խօսք առին նաեւ խարտաւիլակներ Արժ2. Տ. Մարտիրոս քհնյ. Չեւեան եւ Արժ2. Տ. Առաքել քհնյ. Ալճալեան:

Խօսքը փրուեցաւ նորընծայ Տէր Յովսէփի քահանային, որ նախ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, ապա շնորհակալութիւն առաջնորդ Գեր2. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի, իր ծխականներուն եւ ներկայ հոգեւորականներուն, եւ խոստացաւ իր կարելին ընել իր վրայ դրուած յոյսերը արդարացնելու համար:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ շնորհաւորեց նորընծայ Տէր Յովսէփը եւ երէցկինը, ինչպէս նաեւ Ս. Յակոբ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդն ու բոլոր ծխականները, եւ ապա արտասանեց փակման աղօթքը:

Աւելի քան 160 հոգի ներկայ գտնուեցան եկեղեցական արարողութեան եւ ճաշկերոյթին. թիւ մը որ այս համեստ ծուխին համար բացառիկ երեւոյթ մը կը ներկայացնէ: Ներկայ էին նաեւ նորընծայի ծնողները Հայաստանէն:

Տ. ՅՈՎՍԷՓ ՔՀՆՅ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ծնած է Հայաստան 1972 թուականին: Նախ սորված է Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը, ապա 1991 թուականին մեկնած է Երուսաղէմ եւ մինչեւ 1996 թուականը հետեւած է Դպրեվանքի դասընթացքներուն: 1992 թուականին սարկաւագ ձեռնադրուած է Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեանի ձեռամբ: 1997 թուականին եկած է Միացեալ Նահանգներ եւ իր ուսումը շարունակած է Ս. Ներսէս Ընծայարանի եւ Ս. Վլատիմիր Դպրեվանքին մէջ: 2000 թուականին է որ առաջնորդ Գեր2. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան զինք հոգեւոր մատակարար նշանակած է Ռիչմընտի Ս. Յակոբ եկեղեցւոյ:

Նորընծայ Տէր Յովսէփ իր քառասունքի շրջանը պիտի անցընէ Ս. Ներսէս Ընծայարանին մէջ, եւ անդրանիկ Ս. Պատարագը պիտի մատուցանէ Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ Ծաղկազարդի Կիրակին՝ Ապրիլ 4-ին:

# Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՅՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԵՏ

Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Պարթողէմիոս Տիեզերական Պատրիարքը մէկ շաբթուան այցելութեամբ Թուրքիայէն ժամանած է Նիւ Եորք: Այս պաշտօնական այցելութեան առիթով՝ Նիւ Եորքի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդարանը նախաճաշ-հանդիպում մը կազմակերպած էր՝ հրաւիրելով Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր առաջնորդներ՝ թիւով 50:

Այս հանդիպումը տեղի ունեցաւ Երկուշաբթի, Մարտ 25-ի առաւօտուն:

Տիեզերական Պատրիարքը իր խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը միջեկեղեցական շարժումին եւ ըսաւ. «Մեր նպատակն է վերահաստատել Քրիստոնեայ Եկեղեցւոյ միութիւնը»: Ան գնահատանքով արտայայտուեցաւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Խորհուրդին, որուն ատենապետն է Արեւելեան թեմի առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, եւ Ուղղափառ Եկեղեցիներու Խորհուրդին, որուն ատենապետն է Տիկիթրիոս եպիսկոպոս, կատարած միացեալ ջանքերուն եւ յառաջ տարուող երկխօսութեանց:

Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքին մէջ ըսաւ. «Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու յարաբերութիւնները բարձր մակարդակի վրայ են ազգային եւ միջազգային ցետնի վրայ: Տեղական շարժումը ցոյց կու տայ որ նոյն հաւատքը ունեցող քրիստոնեաները մէկ զմէկու հետ կրնան հաղորդակցութեան մէջ ըլլալ: Այն բաները, որոնք մեզ կը միացնեն, մեծ են. իսկ մեզ իրարմէ բաժնող հարցերը թող ջնջին: Մենք աշխատանք կը տանինք լուծելու մեզ իրարմէ բաժնող հարցերը եւ հաստատելու մնայուն հաղորդակցութիւն»:

Նախաճաշի աւարտին՝ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան առանձին հանդիպում մը ունենալով Տիեզերական Պատրիարքին հետ՝ անոր փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի ջերմ ողջոյնները: Տիեզերական Պատրիարքը խնդրեց առաջնորդ Սրբազանէն որպէս զի իր եղբայրական ողջոյնները փոխանցէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ըսաւ նաեւ որ Հայաստան իր այցելութեան շրջանին, իբրեւ հիւր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, սիրալիր եւ ջերմ ընդունելութեան արժանացած է Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ, եւ կը սպասէ որ Նորին Սրբութիւնը Կ. Պոլիս այցելէ՝ որպէս զի իր կարգին փոխադարձէ նոյնպիսի ընդունելութիւն մը:

Առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան հետաքրքրուեցաւ Կ. Պոլսոյ Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆեանի առողջական վիճակով: Վերջերս ան ինքնաշարժի արկածի ենթարկուած էր: Տիեզերական Պատրիարքը ըսաւ որ Մեսրոպ Պատրիարքի առողջական վիճակը լաւ է եւ շեշտեց որ երկու Աթոռներու միջեւ սերտ կապ եւ յարաբերութիւն գոյութիւն ունի:

# ՀԻՄՆԱՐԿԷՔ ՇԱՐԼՕԹԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կիրակի, Մարտ 28, 2004, աւելի քան 300 հաւատացեալներու ներկայութեան Գեր. Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան պաշտօնական արարողութեամբ հիմնարկէքը կատարեց Շարլօթի (Նորթ Գարոլայնա) առաջին հայկական եկեղեցիին:

Ինն տարի առաջ՝ հազիւ քանի մը հայ ընտանիքներ բնակութիւն հաստատած էին Շարլօթի մէջ: Այժմ այնտեղ հաստատուած են աւելի քան 200 ընտանիքներ, որոնցմէ միայն 100 ընտանիքը ներկայ կը գտնուի ամիսը անգամ մը մատուցուող Ս. Պատարագին եւ կազմակերպուած ծխական ձեռնարկներուն: «Միշըն» ծուխը ունի Ծխական Խորհուրդ մը, որուն ժրաջան եւ գործունեայ ատենապետուհին է Տիկին Քիփիլեան-Նէօ:

Ծուխի անդամներու, եւ գլխաւորաբար Ջաւէն եւ Յակոբ Թուլուքեան եղբայրներու, նուիրատուութեամբ չորս տարի առաջ կարելի եղած է եկեղեցւոյ հողը գնել: Սակայն նիւթական դժուարութեան պատճառաւ եկեղեցւոյ կառուցումը յետաձգուած է, մինչեւ այն ատեն՝ երբ Ֆիլատելֆիաբնակ բարերար Տիար Սարգիս Ակոբեան, ի յիշատակ իր մօր՝ Արաքսի 1,700,000 տոլարի նուիրատուութիւն մը կը կատարէ նոր եկեղեցին կառուցանելու համար:

Հիմնարկէքի արարողութեան ներկայ էին նաեւ բարերար Տիար Սարգիս Ակոբեան եւ փիկինը՝ Պատի, զաւակը՝ Կրեկըրի, թոռնիկը՝ Շիա, եւ հարսը՝ Հելեն:

Տիկին Քիփիլեան-Նէօ ըսաւ. «Մեր ծուխին համար այս պատմական օրը ուրախութեան, երջանկութեան, յուզումի եւ երազի մը իրականացման օրն է: Չորս տարի շարունակ աղօթեցինք Աստուծոյ՝ որպէսզի մեզի միջոցները ներկայացնէ եկեղեցի մը կառուցանելու: Երբեք չյուսահատեցանք: Եւ Աստուած պատասխանեց մեր աղօթքներուն: Չեմ գիտեր, որ Տիար Ակոբեան ինչո՞ւ Շարլօթի ծուխը ընտրեց: Ես այնքան աղօթեցի, որ թերեւս երկնքի մէջ մայրս այս մասին խօսեցաւ Տիար Ակոբեանի մօր հետ»:

Ծուխի այցելու հովիւ Հոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆընտըքեան այս բարի լուրը հաղորդած էր փարւոյս Փետրուար 20-ին՝ երբ Ս. Պատարագ մատուցանելու համար Շարլօթ կը գտնուէր: Հայր Սուրբը այս կապակցութեամբ ըսաւ. «Մենք կը տեսնենք Աստուծոյ խորհուրդին հրաշագործ ներգործութիւնը Շարլօթի ծուխին մէջ: Աստուած մեզի ղրկեց հրեշտակ մը, որ նոյնիսկ Շարլօթի մէջ չ'ապրիր: Աստուած անոր քայլերը առաջնորդեց դէպի այս ծուխը»:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ. «Ես հպարտ եմ ձեր բոլորին իրագործումներով: Ձեր ջանքերը արդիւնաւորուեցան շնորհիւ Տիար Սարգիս Ակոբեանի առատաձեռն նուիրատուութեան: Ակոբեան ընտանիքը ծանօթ է իր բազմաթիւ բարերարութիւններով այստեղ Ամերիկայի եւ Մայր Հայրենիքի մէջ: Ակոբեանները սքանչելի ընտանիք մըն են, Հայ ընտանիք մը, եւ ես շատ ուրախ եմ, որ անոնք իրենց բարերարութեամբ կ'անդամակցին նաեւ Նորթ Գարոլայնայի այս ընտանիքին»:

Նորակառոյց եկեղեցին, որ պիտի կոչուի Ս. Սարգիս, պիտի օծուի 2005 թուականի Յունուարին՝ Ս. Սարգիսի տօնին:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՆԻԿՈԼԱԵ ԻՈՐԴԱԿԵԻՆ

Փետրվարի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Ռումինիայի Հանրապետության նորանշանակ դեսպան Նիկոլաե Իորդակեին:

Ողջունելով դեսպանին՝ Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց, որ երկու երկրների և Եկեղեցիների միջև առկա են բարեկամական կապեր՝ վստահություն հայտնելով, որ նորանշանակ դեսպանը ևս կնպաստի այդ կապերի զորացմանը:

«Ես ներկայացնում եմ Ռումինիայի Հանրապետությունը, սակայն հնարավոր չէ պետությունից անջատ տեսնել Եկեղեցին, քանզի ինչպես Հայ, այնպես էլ Ռումին Եկեղեցին դարեր շարունակ եղել են նաև առաջնորդը իրենց ժողովրդի».- ասաց պրն Իորդակեն՝ Նորին Սրբությանը փոխանցելով Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Հովվապետ Թեոկտիստ Պատրիարքի ջերմ ողջույնները:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու Եկեղեցիների և ժողովուրդների միջև առկա եղբայրական հարաբերությունների մասին, որի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ իր գահակալության առաջին տարում Ռումինիա կատարած Հովվապետական այցին, որի ժամանակ հանդիպում է ունեցել նաև Թեոկտիստ Պատրիարքի հետ:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՎԻԿՏՈՐ ՌՈՍՍԻՆ

Փետրվարի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ դեսպան Վիկտոր Ռոսսին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն ու պրն Ռոսսն անդրադարձան հայ-լեհական պատմական կապերին: Պրն դեսպանը մասնավորապես նշեց այն մեծ ներդրումը, որ 14-րդ դարից ի վեր ունեցել է լեհահայ համայնքն իր երկրի մշակույթի զարգացման գործում: Վեհափառ Հայրապետն իր հերթին ուրախություն հայտնեց Հայաստանում Լեհաստանի դեսպանատան հաստատման առնչությամբ և վստահություն հայտնեց, որ երկու երկրների միջև ամրապնդվող դիվանագիտական հարաբերությունները նպաստելու են երկու երկրների և ժողովուրդների բարեկամության զորացմանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև վերջին տարիներին բազմաթիվ հայերի Լեհաստան ներգաղթի, ինչպես նաև նրանց հոգևոր կյանքի կազմակերպմանն առնչվող խնդիրների մասին: Այս առիթով Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ Վարշավայի համալսարանում աստվածաբանություն է ուսանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Դանիել աբեղա Թումանյանը:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն արգասաբեր աշխատանք մաղթեց նորանշանակ դեսպանին՝ ի շահ երկու երկրների և ժողովուրդների բարօրության:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՐՅԱԽԻՆԻՆ

Փետրվարի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ Երևանի գրասենյակի նորանշանակ ղեկավար դոկտ. Վլադիմիր Պրյախինին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով պրն Պրյախինի անդրանիկ այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, բարձր գնահատեց ԵԱՀԿ դերը Հայաստանում ժողովրդավարության զարգացման ու առաջընթացի գործում:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն ու պրն Պրյախինն անդրադարձան Հայաստանում խղճի ազատության և կրոնական կազմակերպություններին վերաբերող հարցերի: Նորին Սրբությունը որոշ մտահոգություն հայտնեց Հայաստան ներթափանցած տարբեր կրոնական կազմակերպությունների կողմից օրենքի ոտնահարման առնչությամբ, երբ նյութական զանազան միջոցներով փորձ է արվում հեռացնել ժողովրդին Մայր Եկեղեցուց և ճշմարիտ հավատքից:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաև հոգևոր դաստիարակությանն առնչվող խնդիրներին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունն արգասաբեր գործունեություն մաղթեց պրն Դրյախինին՝ վստահությամբ, որ այն ծառայելու է հասարակական կյանքի խաղաղ առաջընթացին:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՍՏՈՎԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Փետրվարի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի նահանգապետ Վլադիմիր Չուբի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց հայ-ռուսական եղբայրական ջերմ հարաբերությունների համար և գոհունակությամբ նշեց ռուսաստանաբնակ հայերի նկատմամբ իշխանությունների հոգատար վերաբերմունքը: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր մասնավոր երախտագիտությունը հայտնեց նահանգապետին՝ Ռոստովի հայոց Ս. Խաչ եկեղեցին հայ համայնքին վերադարձնելու առնչությամբ՝ այն համոզմամբ, որ հոգևոր կյանքի զորացումով ռոստովահայերն առավել արդյունավետ կկարողանան իրենց ծառայությունը բերել երկրին: Մատնանշելով Եկեղեցի-պետություն բարի հարաբերությունները՝ Վեհափառ Հայրապետը ողջունեց ռուս հոգևորականի՝ Ռոստովի և Նովոչերկասկի արքեպիսկոպոս Պանտելեիմոնի ներկայությունը պատվիրակության կազմում:

Պրն Չուբը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար: Նահանգապետը կարևորեց ռուսահայ համայնքի ներդրումը նահանգի զարգացման գործին՝ նշելով, որ այս տարի տոնախմբվելու է հայերի՝ Ռոստովում հաստատման 225-ամյակը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերին հայտնեց նաև իր ցավակցությունը՝ վերջերս Մոսկվայի մետրոյում կատարված ահաբեկչության համար:

Հանդիպմանը ներկա էր Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Փետրվարի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության տեղեկատվության նախարար Ալի Յունեսիին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու հարևան երկրների պատմական ու մշակութային կապերի, երկու ժողովուրդների բարեկամության մասին:

Վեհափառ Հայրապետն իր ուրախությունն արտահայտեց հայ-իրանական բարեկամական հարաբերությունների ընդլայնման առիթով և իր երախտագիտությունը հայտնեց Իրանի իշխանություններին այն հոգատար վերաբերմունքի համար, որ տածում են հայ համայնքի հանդեպ: Մասնավորապես նշվեց, որ իրանահայերը լինելով երկրի լիիրավ քաղաքացիներ՝ ազատորեն կարողանում են պահպանել նաև իրենց ազգային-կրոնական ավանդույթները:

Վեհափառ Հայրապետն ու իրանցի հյուրը ժողովուրդների բարեկամության ամրապնդման կարևոր ազդակ նկատեցին կրոնների միջև երկխոսությունը: Այս առիթով Ալի Յունեսին նշեց, որ Վեհափառ Հայրապետն իր ներկայությամբ կարևոր ներդրում կարող է ունենալ արդեն մի քանի տարի առաջ Իրանում սկիզբ առած նմանատիպ երկխոսությանը:

Հանդիպման ավարտին Ալի Յունեսին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ նշելով, որ մեծապես տպավորված է հնամենի Ս. Էջմիածնով: Հյուրերը եղան նաև Մայր Աթոռի թանգարանում:

Պատվիրակությանը Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղեկցում էին երկու երկրների դեսպաններն ու Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Կառլոս Պետրոսյանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՇԱԽՄԱՏԻ ԱՇԽԱՐՀԻ 10-ՐԴ ՉԵՄՊԻՈՆ ԲՈՐԻՍ ՍՊԱՍՍԿՈՒՆ

Մարտի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց շախմատի աշխարհի 10-րդ չեմպիոն Բորիս Սպասսկուն:

Ողջունելով պատվավոր հյուրի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու բարեմաղթանքները ուղղեց նրան: Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստան և Արցախ նրա այցելության, ինչպես նաև շախմատի ներկայիս խնդիրների մասին:

Հանդիպմանը ներկա էին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը, ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահ Վանիկ Զաքարյանը, Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր Սմբատ Լպուտյանը և ուրիշներ:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մարտի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Նիկոլոզ Նիկոլոզիշվիլուն:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց դեսպանի աշխատանքը Հայաստանում, նրա բերած ավանդը հայ-վրացական բարեկամության ամրապնդման գործին, ինչպես նաև դեսպանի ջերմ վերաբերմունքը հանդեպ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Ն. Նիկոլոզիշվիլին վստահեցրեց, որ այսուհետ ևս կշարունակի իր նպաստը բերել երկու ժողովուրդների եղբայրական կապերի զորացմանը:

Հրաժեշտից առաջ Նորին Սրբությունն իր բարեմաղթանքը հայտնեց դեսպանին՝ մաղթելով նորանոր հաջողություններ հետագա առաքելության մեջ:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մարտի 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանում Հունգարիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ֆերենց Կոնտրային:

Վեհափառ Հայրապետը, ի դեմս դեսպանի, իր գոհունակությունը և գնահատանքը հայտնեց Հունգարիայի իշխանություններին այն հոգատար վերաբերմունքի համար, որ դրսևորում են հանդեպ Հունգարիայի հայ համայնքը, որը հնարավորություն է ընձեռում անխափան կերպով կազմակերպել ազգային-եկեղեցական կյանքը:

Նորանշանակ դեսպանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, իր հերթին անդրադարձավ այն կարևոր դերակատարությանը, որ հայ համայնքն ունի Հունգարիայի քաղաքական և մշակութային կյանքում: Նա նշեց, որ «Հունգարիայում բնակվող հայերը կարող են կամուրջ դառնալ մեր երկու երկրների միջև»:

Հանդիպման ժամանակ անդրադարձ եղավ փետրվարի 19-ին Բուդապեշտում Հայաստանի զինված ուժերի սպա Գուրգեն Մարգարյանի սպանությանը: Ցավ հայտնելով Բուդապեշտում կատարվածի առնչությամբ՝ պրն դեսպանը հավաստիացրեց, որ ոճրագործն ըստ օրենքի իր պատիժը կկրի Հունգարիայում:

Հանդիպման ավարտին պրն Կոնտրան նշեց, որ ըստ ամենայնի կնպաստի երկու ժողովուրդների և պետությունների հարաբերությունների սերտացմանը և բարեկամության ամրապնդմանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ, ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀ ՍՈՂՈՄՈՆ ՊԱՍՍԻԻՆ

Մարտի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Բուլղարիայի ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Սողոմոն Պասսիին:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայ Եկեղեցու առաջ ծառացած խնդիրների, Արցախի հիմնախնդրի բանակցային գործընթացի արդի վիճակի և տարածաշրջանում կայունության ու խաղաղության պահպանման անհրաժեշտության մասին:

Այս առիթով Նորին Սրբությունը ԵԱՀԿ գործող նախագահին փեղեկացրեց՝ Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի հրավերով փարածաշրջանի հոգևոր առաջնորդների հանդիպումների մասին: Ամենայն Հայոց Հայրապետը նաև իր մտահոգությունը հայտնեց Ադրբեջանում վերջերս հաճախակի հնչող ռազմատենչ արտահայտությունների առնչությամբ:

Պրն Սողոմոն Պասսին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին ջերմ ընդունելության համար: Ընդգծելով, որ Եկեղեցին մեծ դեր ունի հակամարտությունների լուծման խնդրում՝ պրն Պասսին նշեց նաև Ամենայն Հայոց Հայրապետի ավանդն այս գործում: «Մեր մտածումն է, որ խնդրի միակ լուծումը բանակցություններն են: Եվ ինչպես ճիշտ նկատեց Ձերդ Սրբությունը, Եկեղեցին կենսական դեր ունի հակամարտությունների լուծման հարցում: Մենք կարիքն ունենք երկխոսության ոչ միայն այսօր, այլև ապագայում».- նշեց ԵԱՀԿ գործող նախագահը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ նաև 2002 թ. իր այցելությանը Բուլղարիա, որ հանդիպումներ էր ունեցել Բուլղար Ուղղափառ Եկեղեցու ցահակալ Մաքսիմ Պատրիարքի, պետական բարձրաստիճան այրերի, ինչպես նաև հայ համայնքի հետ:

Հանդիպմանը մասնակցում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ՀՀ-ում Բուլղարիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Ստեֆան Դիմիտրովը, Բուլղարիայի հայ համայնքի ներկայացուցիչներ:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՎՆԵՇՏՈՐԳԲԱՆԿԻ» ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԵՅ ԿՈՍՏԻՆԻՆ

Մարտի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության «Վնեշտորգբանկի» վարչության նախագահ Անդրեյ Կոստինին, որը ժամանել է Հայաստան «Հայխնայբանկի» բաժնետոմսերի հսկիչ փաթեթի ձեռքբերման պայմանագրի ստորագրման առիթով: Պրն Կոստինին ուղեկցում էին ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովը, «Հայխնայբանկի» խորհրդի նախագահ Միխայիլ Բաղդասարովը, պատվիրակության այլ անդամներ:

Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայ-ռուսական փնտեսական կապերի զարգացման առնչությամբ՝ նշելով, որ այն առավել պիտի սերտացնի երկու պետությունների հարաբերությունները և ամրապնդի հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը:

Զրույցի ընթացքում պրն Կոստինը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար: Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ «Վնեշտորգբանկի» վարչության նախագահը նաև հավաստիացրեց, որ այս գործարքը կնպաստի Հայաստանում կարևոր սոցիալական խնդիրների լուծմանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՆԳԻՍՏ
# Տ. ՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԿԱԹՅԱՆԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խորը ցավով տեղեկացնում է, որ 2004 թ. փետրվարի 11-ի երեկոյան Ալմելո քաղաքի հիվանդանոցում վախճանվել է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Սրբոց Հակոբյանց վանքի միաբան, Հոլանդիայի հայ համայնքի հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Մանուել վարդապետ Երկաթյանը:

Հանգուցյալ Հայր Սուրբը ծնվել է 1954 թ. Կ. Պոլսում: Հոգևոր կրթությունը ստացել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: 1968-1973 թթ. ուսումնառության տարիներից հետո վերադարձել է Կ. Պոլիս:

1976 թ.. ձեռամբ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1977 թ. անդամագրվել է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Սրբոց Հակոբյանց միաբանությանը:

1980 թ. արձակուրդներին վերադառնալով Ստամբուլ՝ ձերբակալվել է և քաղաքական մեղադրանքով դատապարտվել 5 տարի ազատազրկման:

1991 թ. ի վեր իբրև հոգևոր հովիվ ծառայում էր Հոլանդիայի հայ համայնքում:

Կիրակի, փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Պատարագից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն հոգելույս Հայր Սուրբի հոգու հանգստության համար:

Հայր Սուրբի մարմինը հողին հանձնվեց Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու բակում:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՎ ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ



Հայ ձեռագրագիտությունը կորցրեց իր նահապետին: 2004 թ. փետրվարի 3-ին 82 տարեկանում վախճանվեց Երևանի Մաշտոցյան Մատենադարանի հաստատահեղույս սյուներից Արտաշես Մաթևոսյանը:

Կյանքը որքան ծանր եղավ նրա համար, նա այնքան տոկուն և կենսախինդ գտնվեց կյանքի հարվածների դեմ:

Ծնվել է 1922 թ. մարտի 22-ին Շիրակի այժմյան Տուֆաշեն գյուղում, Տարոնի Հարք գավառից (Մշո Բուլանըխ) գաղթած նահապետական ընտանիքում: Երկու ամսականում զրկվել է հորից, 12 տարեկանից մնացել է հորեղբոր խնամքի ներքո: Հայրենական Մեծ Պատերազմի առաջին օրերին գերության մեջ է հայտնվել Լատվիայի սահմանագծում գտնվող այն զորամասի կազմում, ուր ծառայում էր: Գերության չորս երկար տարիներից, ապա և որպես ազատ աքսոր Դոնբասի ածխահանքերում աշխատելուց հետո ում է գտել ընդունվել և ավարտել Երևանի Մանկավարժական ինստիտուտը: 1956 թ. «ձնհալից» հետո նրա դեգերումներն ավարտվել են 1959 թ. Երևանի Մատենադարան ընդունվելով, որը դարձավ նրա հետագա ողջ կյանքի խաղաղավետ նավահանգիստը:

Մատենադարանի ձեռագրերի քննության և տարբեր կենտրոնների հայկական ձեռագրացուցակների հիման վրա նա կազմեց հայերեն ձեռագրերի 50000 քարտ ընդգրկող համահավաք քարտարանը և հայ գրչության կենտրոնների քարտեզը:

Արտաշես Մաթևոսյանի անվան հետ են կապվում նաև Ե-ԺԳ դարերի հիշատակարանների ի մի հավաքումը և հրատարակությունը:

Ձեռագրերի գրությամբ ոչ թե ավարտվում, այլ սկսվում է նրանց կենսագրությունը և դարերի հոլովույթում շարունակվում տոսուցչից աշակերտներին անցնելով, գերեվարվելով ու փրկագնվելով, վնասվելով ու նորոգվելով, և այս ամենը մի-մի հետք ու հիշատակագրություն են թողնում ձեռագրերի էջերում և ծալքերում:

Ձեռագրերի թերթվող էջերով նրանց կենսագրության էջերը վերականգնեց մեր միջնադարյան գրիչների նման պարզ ու միջնադարյան մեր գրիչների կյանքն ուսումնասիրող որքան պարզ, այնքան և խորը այս մտավորականը:

Ա. Մաթևոսյանի հետազոտությունների հիմքում ընկած էր մեթոդաբանական այն ելակետը, որ բնագիրը ստուգաբանվում է այն պարունակող ձեռագրով, և պատմաբանասիրական շատ հարցերի պատասխանները կարելի է գտնել ձեռագրի և կազմի հարաբերակցության, իրար կարված պրակների թերթերի, ձեռագրերի գրչության քննության և համանման

ձեռագրագիտական եղանակներով: Նման մոտեցմամբ նա պարզեց Էջմիածնի հռչակավոր Ավետարանի, Մշո Ճառընտիրի և մի շարք այլ ձեռագրերի պարունակած նյութերին և մանրանկարներին վերաբերող մատենագիտական և արվեստագիտական բնույթի ամենատարբեր հարցեր: Այսպիսով, ըստ Մաթևոսյանի, ինչպես որ գրական երկն է ստուգաբանվում պատմա-բանասիրական որոշակի միջավայրում, այնպես էլ բնագիրը՝ այն պարունակող ձեռագրերի միջոցով:

Ձեռագրերն իրենց պատմական զարգացման ընթացքում դիտարկելը հետազոտողին առաջադրեց հայոց գրերի և տարբեր գրատեսակների՝ երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր և շղագիր, ուսումնասիրության, ծագման և փոխառնչակցությունների քննությունը, ինչպես նաև Մաշտոցյան Այբուբենի ստեղծմանն առնչվող հարցերը, որոնց են նվիրված նրա տակավին անտիպ երկու կարևոր աշխատությունները:

Արտաշես Մաթևոսյանն ազգային-եկեղեցական մտահոգություններով ապրող, արտաքուստ հանդարտ, սակայն քաղաքացիական մեծ նկարագրի տեր մտավորական էր: 1960-ական թվականներից նրա գիտամանկավարժական գործունեությունը սերտորեն առնչվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Արտաշես Մաթևոսյանի անվան հետ է կապվում Վազգեն Վեհափառի՝ Մատենադարանին նվիրած և այժմ Վեհափառի Ավետարան անվամբ հայտնի մատյանի, ինչպես նաև հայերեն հնագույն թղթյա ձեռագրի լուսատիպ նմանահանության հրատարակությունը համապատասխան ուսումնասիրությամբ և բնագրագիտական քննությամբ: Մեծ է Մաթևոսյանի դերը նաև Էջմիածնի Ավետարանի լուսատիպ նմանահանության հրատարակության և ուսումնասիրման գործում:

«Էջմիածին» ամսագրում են լույս տեսել նրա լավագույն ուսումնասիրություններից շատերը: Ավելի քան երկու տասնամյակ նա դասավանդել է նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Ճեմարանի սաների համար «երկաթագիր գրերը մեր» թերթվող մագաղաթի էջեր և վիմական արձանագրություններ էին դառնում Ս. Էջմիածնի ձեռագրատանը, ապա նաև Մայր Աթոռի միաբանական գերեզմանատան քարերին, վանքերի որմերին: Հայոց գրատեսակների այս առանձնահատկությունները նա մեկ առ մեկ ներկայացնում և բացատրում էր իր անսպառ եռանդով:

Ի գնահատություն իր բազմամյա գիտամշակութային և մանկավարժական գործունեության, 1997 թ. երջանկահիշատակ Գարեգին Առաջինի կողմից պարգևատրվել է «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով:

Մեր մեծերից ժառանգածը և տասնամյակների յարված աշխատանքի իր փորձառությունը Արտաշես Մաթևոսյանը շռայլորեն փոխանցեց իր հետ աշխատողներին: Եվ այսօր կորստյան խորին ցավի հետ այն մխիթարությունն ունենք, որ մենք հրաժեշտ ենք տալիս հայ ձեռագրագիտության Նահապետին, բայց ոչ երբեք Վերջին Մոհիկանին . . .

*Արտաշես Մաթևոսյանի*
*կրտսերագույն աշակերտներից՝*

*ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Փետրվարի 1-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զի հաց յԱստուծոյ է, որ իջանէն յերկնից եւ կեանս տայ աշխարհի» (Հովհ. Զ 33) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Փետրվարի 8-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «...զի որ հաւատայ՝ ընդունի զկենանսն յաւիտենականս» (Հովհ. Զ 47) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 32):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 14-ին, շաբաթ. - ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալըստեանն Քրիստոսի ի տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Երուսաղեմի հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց վանքի միաբան Տ. Պարետ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 35):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց նորապսակների օրհնության կարգ:

***Փետրվարի 15-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Սուրբ Պատարագից հետո, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբան Տ. Մանվել վարդապետ Երկաթյանի հոգու հանգստության համար:

***Փետրվարի 17-ին, երեքշաբթի. - Սրբոց Ղեւոնդեանց քահանայիցն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Այս հավատից մեզ ո՛չ ոք չի կարող խախտել՝ ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ

ջուրը և ոչ էլ որևէ այլ դառը խարված» (Եղիշե. Վարդանի և հայոց պատերազմի մասին) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 19-ին, հինգշաբթի. - Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երկուսն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Հընթացս Սրբազան Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն, հավարտ որի Սրբազան Հայրը «Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն» (Մատթ. Ե 11) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 41):

«Հայր մեր»-ից առաջ կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Նորին Վեհափառություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության տոնի առիթով:

***Փետրվարի 22-ին, կիրակի. - Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ «Ցորում ցնծայր զուարթութեամբ, անփոխարական խնդութեամբ...» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը (տե՛ս էջ 44):

***Փետրվարի 29-ին, կիրակի. - Բ. կիր. Քառասնորդական պահոց (Արտաքսման):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը «Ջրասնութեան պտղոյն ճաշակ, որով մնաք արդարութեան պահելով քո քառասնօրեայ՝ փոխեցէր ի քաղցրագոյն օրինաց քոց ճաշակումն» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 47):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Հունգարիայում ննջորեն սպանված հայ սպայի՝ Գուրգեն Մարգարյանի հոգու խաղաղության համար:

***Մարտի 7-ին, կիրակի. - Գ. կիր. Քառասնորդաց պահոց (Անառակին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 51):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մարտի 14-ին, կիրակի. - Դ. կիր. Քառասնորդական պահոց (Տնտեսին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Պարետ վարդապետ Սարգսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 54):

***Մարտի 21-ին, կիրակի. - Ե. կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 57):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին դասախոս Սիմոն Հովիվյանի հոգու հանգստության համար:

***Մարտի 27-ին, շաբաթ. - ԼԴ. օր Մեծի պահոց: Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ առնլոյ չարչարանացն եւ ի մտին ի Վիրապն:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հրաշափառ Աստուած, եւ միշտ բարեխնամող, ի Պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր...» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի մեր հավատո հայր Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքով կատարվեց ձեթի օրհնություն:

***Մարտի 28-ին, կիրակի.- Զ. կիր. Քառասնորդական պահոց (Գալստեան):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 59):

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(Февраль – март 2004 г.)


1. Посещение Президента Республики Грузия Михаила Саакашвили в Первопрестольный Святой Эчмиадзин, 13 марта 2004 г. (стр. 3–4).
2. ГАЯНЭ АЛЕКСАНЯН – Второй межцерковный миротворческий форум стран СНГ в Москве, 2-4 марта 2004 г. (стр. 5-14).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


3. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Высокопреосвященному архиепископу Шаану Свачяну по случаю его награждения орденом "Св. Григорий Просветитель", 25 февраля 2004 г., № 221 (с. 15-16).
4. Патриаршие награды (пожалование за февраль-март месяцы 2004 г. Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, орденов "Св. Саак-Св. Месроп", "Св. Нерсес Шнорали", благословений, права ношения нагрудного креста, цветастой фелони, чести старшинства духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) – (с. 17-18).
5. Поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, женщин с праздником – международным женским днем, 8 марта 2004 г. (стр. 19).
6. Патриаршее распоряжение (Высокопреосвященный архиепископ Давид Саакян отныне продолжит свое служение в Первопрестольном Святом Эчмиадзине. Преподобный иеромонах Арен Шагинян назначен духовным пастырем армянской общины Рима, а Преподобный иеромонах Абгар Овакимян назначен викарием Армянской епархии Грузии. Помещены также биографии вышеназванных духовнослужителей) - (стр. 20-23).


## ПО ПОВОДУ АНТИКАНОНИЧЕСКОГО РЕШЕНИЯ АНТИЛИАСА О СОЗДАНИИ ОТДЕЛЬНОЙ ЕПАРХИИ В КАНАДЕ КАТОЛИКОСАТА КИЛИКИЙСКОГО ДОМНА


7. От имени трех епархий Армянской Церкви Северной Америки (стр. 24).
8. Новый шаг разделения внутри Армянской епархии Канады (стр. 25-26).

9. Панихида в Первопрестольном Святом Эчмиадзине, 1 февраля 2004 г. (в память о новопочивших Высокопреосвященном архиепископе Завене Чинчиняне, Преосвященном епископе Кюреге Габикяне, Высокопреосвященном архиепископе Сааке

Айвазяне и Высокопреосвященном архиепископе Месропе Аштяне) – (стр. 27).
10. Панихида в Первопрестольном Святом Эчмиадзине в память о зверски убитом в Будапеште лейтенанте армянской армии Гургене Маркаряне и жертвах сумгаитской трагедии, 29 февраля 2004 г. (стр. 28-29).

## ПРОПОВЕДИ

11. Проповедь Преподобного иеромонаха Нарека Авакяна на Литургии в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 1 февраля 2004 г. (стр. 30-31).
12. Проповедь Преподобного иеромонаха Вардана Навасардяна на Литургии в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 8 февраля 2004 г. (стр. 32-34).
13. Проповедь Преподобного архимандрита Парета Саркисяна на Литургии в Сретение Господа нашего Иисуса Христа в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 14 февраля 2004 г. (стр. 35-37).
14. Проповедь Преподобного иерея Ованеса Ованисяна на Литургии в праздник св. Гевондянов в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 17 февраля 2004 г. (стр. 38-40).
15. Проповедь Преосвященного епископа Вазгена Мирзаханяна на Литургии в праздник св. Вардапидов в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 19 февраля 2004 г. (стр. 41-43).
16. Проповедь Высокопреосвященного архиепископа Нерсеса Позапаляна на Литургии в праздник Масленицы в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 22 февраля 2004 г. (стр. 44-46).
17. Проповедь Высокопреосвященного архиепископа Татева Саркисяна на Литургии в Воскресенье Изгнания в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 29 февраля 2004 г. (стр. 47-50).
18. Проповедь Преосвященного епископа Езника Петросяна на Литургии в Воскресенье Блудного сына в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 7 марта 2004 г. (стр. 51-53).
19. Проповедь Преподобного архимандрита Парета Саркисяна на Литургии в Воскресенье Управителя в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 14 марта 2004 г. (стр.54-56).
20. Проповедь Высокопреосвященного архиепископа Давида Саакяна на Литургии в Воскресенье Судьи в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 21 марта 2004 г. (стр. 57-58).
21. Проповедь архимандрита Аршака Хачатряна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 28 марта 2004 г. (с. 59-62).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ


22. **АКОП КЕОСЕЯН** – Армянский перевод похвального слова Нектария Константинопольского, посвященного первомученику св. Стефану (введение к издаваемому подлиннику) – (стр. 63-64).
23. **ПАТРИАРХ НЕКТАРИЙ** – Похвальные речи (стр. 65-76).
24. **АЗАТ БОЗОЯН** – Яркое проявление армянской канонической мысли в среде Григора Нарекаци (посвящено публикуемому ниже посланию Акопа Цпатеци) – (стр. 77-88).
25. **АКОП ЦПАТЕЦИ** – Слово против Хосрова Андзеваци (сравнительный текст Азата Бозояна) – (стр. 89-100).
26. **ГЕВОРК ТЕР-ВАРДАНЯН** – Епископ Степанос Аковбаци, по прозвищу Тирацу (XII в.) – (историографическое и кодикологическое исследование ) – (стр. 101-127).
27. **АРАМ ОВАНИСЯН** – Эпизод из истории кануна падения Киликийского Армянского царства (исследование) – (стр. 128-133).
28. **С. М. ГРИГОРЯН** – Грабар в средние и последующие века (исследование) – (стр. 134-139).
29. **АРАМАИС БАЛОЯН** – Выборы католикоса в 1800 г. (исследование) – (стр. 140-156).
30. **ЭНРИК МОКОЯН** – Духовные и нравственные ценности и установление самоцелостности личностного "я" (философское наблюдение) – (стр. 157-163).


## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И ЕПАРХИЯХ


31. Праздник св. Гевондянов в Первопрестольном святом Эчмиадзине, 17 февраля 2004 г. (стр. 164).
32. Праздник св. Вардановцев и рукоположение во иерея в Первопрестольном Святом Эчмиадзине, 19 февраля 2004 г. (помещены также биографии Преподобного иерея Ктрича Девечяна, Преподобного иерея Шаапа Мовсисяна и Преподобного протоархимандрита Тачата Яртмяна) – (стр. 165-169).
33. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, посетил в Москве церкви Сурб Арутюн и Сурб Хач, 3 марта 2004 г. (стр. 170).
34. В праздник воеводы св. Саркиса Святейший Патриарх Гарегин II встретился с молодежью, 7 февраля 2004 г. (стр. 171).
35. **АЙК БАРСЕГЯН** – Вечер, посвященный Вардану Мамиконяну и его сподвижникам, 19 февраля 2004 г. (с. 172-174).
36. Руководитель духовной службы Армянской армии принял участие в международной конференции духовных пастырей, 2-6 февраля 2004 г. (стр. 175).
37. Духовная служба Первопрестольного Святого Эчмиадзина, ведущая работу в исправительно-трудовых колониях, поздравила находящихся в заключении женщин с праздником, 8 марта 2004 г. (стр. 175).

В ВОСТОЧНОЙ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ АМЕРИКИ

38. Рукоположение во иерея в Ричмонде, 21-22 февраля 2004 г. (стр. 176-177).
39. Встреча Высокопреосвященного архиепископа Хажака Парсамяна с Греческим Вселенским Патриархом, 25 февраля 2004 г. (стр. 178).
40. Закладка камня новой армянской церкви общины Шарлота, 28 марта 2004 г. (стр. 179).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

41. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял посла Республики Румыния в Армении Николае Иордаке, 4 февраля 2004 г. (стр. 180).
42. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял посла Республики Польша в Армении Виктора Росса, 4 февраля 2004 г. (стр. 181).
43. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял Владимира Пряхина, 5 февраля 2004 г. (стр. 181-182.).
44. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял делегацию Ростовской области во главе с ее губернатором Владимиром Чубом, 11 февраля 2004 г. (стр. 182).
45. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял делегацию министерства по делам информации Ирана во главе с министром Али Юнесси, 26 февраля 2004 г. (стр. 182-183).
46. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял 10[го] чемпиона мира по шахматам Бориса Спасского, 7 марта 2004 г. (стр. 183).
47. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял посла Республики Грузия в Армении Николоза Николозашвили, 9 марта 2004 г. (стр. 183-184).
48. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял посла Венгрии в Армении Ференца Контра, 10 марта 2004 г. (стр. 184).
49. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял министра иностранных дел Болгарии, действующего Председателя ОБСЕ Соломона Пасси, 17 марта 2004 г. (стр. 184-185).
50. Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, принял председателя "Внешторгбанка" Андрея Костина, 25 марта 2004 г. (стр. 185).

51. Кончина Преподобного архимандрита Мануэла Еркатяна, 11 февраля 2004 г. (стр. 186).
52. ВАРДАН ДЕВРИКЯН – Ушел из жизни патриарх армянской кодикологии (В память скончавшегося 3 февраля 2004 г. Арташеса Матевосяна). (стр. 187-188).
53. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение февраля-марта 2004 г. (стр. 189-191).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN (February - March 2004)

1. Mikael Sahakashvili, President of the Republic of Georgia visited the Mother See of Holy Etchmiadzin, 12 March, 2004 (p. 3-4)
2. **GAYANE ALEXANIAN** – The Second Inter-Church Peace Conference of CIS Representatives, 2-4 March, 2004 (p. 5-14)

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

3. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Archbishop Shahan Svajian on the occasion of his decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", February 25, 2004 № 221 (p. 15-16).
4. Pontifical Awards (Orders of "Saint Sahak – Saint Mesrop". "Saint Nerses Shnorhali", Letters of Blessing and pectoral crosses granted in February – March 2004 by the Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to devoted clergymen and laymen of the Armenian Church) – (p. 17-18).
5. The message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians on the occasion of International Women's Day, March 8, 2004 (p. 19).
6. Pontifical Order (Archbishop David Sahakian will continue his spiritual service in the Mother See of Holy Etchmiadzin, Rev. Fr. Aren Shahinian appointed pastor the Armenian Diocese of Rome. Rev. Fr. Abgar Hovakimian appointed Vicar General of the Armenian Diocese of Georgia. - (p. 20-23).

**On the Occasion of the Anti-Canonical Decision of the Great House of Cilicia to Open a Separate Diocese in Canada**

7. Announcement from the three Armenian dioceses of North America (p. 24).
8. A new division within the Armenian Diocese of Canada (p. 25-26).

9. Repose of Souls service in the Mother Cathedral of Holy Etchmiadzin in memory of His Eminence Archbishop Zaven Chinchinian, His Grace Bishop Gyuregh Kapigian, His Eminence Archbishop Sahag Aivazian, and His Eminence Archbishop Mesrob Ashjian, who recently entered their eternal rest, February 1, 2004 (p. 27)
10. Repose of Souls service in the Mother Cathedral of Holy Etchmiadzin in memory of the victims of Sumgait and Lieutenant Gurgen Margarian who was violently killed by an Azerbaijani officer. February 29, 2004 (p. 28-29)

## SERMONS


11. Sermon delivered by Rev. Fr. Narek Avagian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy, February 1, 2004 (p. 30-31).
12. Sermon delivered by Rev. Fr. Vardan Navasardian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy, February 8, 2004 (p. 32-34).
13. Sermon delivered by Very Rev. Fr. Baret Sarkissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the feast of Presentation of the Lord to the Temple, February 14, 2004 (p. 35-37).
14. Sermon delivered by Rev. Fr. Hovhannes Hovhannissian in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the Feast of St. Ghevond the Priest and his Companions, February 17, 2004 (p. 38-40).
15. Sermon delivered by His Grace Vazgen Mirzakhanian in the Cathedral of Holy Etchmiadzin on the Feast of St. Vardan the Warrior and his Companions, February 19, 2004 (p. 41-43).
16. Sermon delivered by His Eminence Archbishop Nerses Pozapalian in the Cathedral of Holy Etchmiadzin on the feast of Great Paregentan, February 22, 2004 (p. 44-46).
17. Sermon delivered by His Eminence Archbishop Datev Sarkissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Sunday of the Expulsion, February 29, 2004 (p. 47-50).
18. Sermon delivered by His Eminence Archbishop Yeznik Petrossian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Sunday of the Prodigal Son, March 7, 2004 (p. 51-53).
19. Sermon delivered by Very Rev. Fr. Baret Sarkissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Sunday of the Steward, March 14, 2004 (p. 54-56).
20. Sermon delivered by His Eminence Archbishop David Sahakian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy on the Sunday of the Judge, March 21, 2004 (p. 57-58).
21. Sermon delivered by Very Rev. Fr. Arshak Khachatrian in the Cathedral of Holy Etchmiadzin, March 28, 2004 (p. 59-62).


## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES


22. **HACOB KEOSEYAN** – The Armenian Translation of the chant devoted to Stephen the Protodeacon and First Martyr by Nectarius of Constantinople. (The Introduction to the original work which is being published) (p. 63-64).
23. **PATRIARCH NECTARIUS** – Words of Chant (ode) (p. 65-76)

24. **AZAT BOZOYAN** – A Bright Manifestation of Armenian Religious Thought in the time period of Gregory of Narek (research work) devoted to the letter by Hacob Tsepatetsi which is published below, (p. 77-88).
25. **HACOB TSEPATETSI** – Words against the ideology of Khosrov Andzevatsi (the comparative original – by Azat Bozoyan). (89-100)
26. **GEVORG TER-VARDANIAN** – Bishop Stephen Hacovbatsi, – Tiratsu, XII century, (the historiographic and manuscript study of a miniature) (p. 101-127).
27. **ARAM HOVHANNISSIAN** – An excerpt from the story on the eve of the fall of the Armenian Kingdom of Cilicia (research work), (p. 128-133)
28. **S. M. GRIGORIAN** – "Grabar" (Classical Armenian language) in the Middle Ages and afterwards (p. 134-139)
29. **ARAMAYIS BALOYAN** - The Pontifical elections of 1800 (research work), (p. 140-156).
30. **HENRIK MOCOYAN** – Spiritual and Moral Values and self-integration of personal ego, (philosophical review) – (p. 157-163)

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

31. The Feast of St. Ghevond the Priest and his Companions in the Mother See of Holy Etchmiadzin, February 17, 2004 (p. 164)
32. The Feast of St. Vardan the Warrior and his Companions, and ordinations to the Holy Order of Priesthood in the Mother See of Holy Etchmiadzin, February 19, 2004 (The biographies of Rev. Fr. Ktrij Devejian, Rev. Fr. Shahan Movsissian and Very Rev. Fr. Dajad Yardemian) – (p. 165-169).
33. His Holiness Karekin II, Catholicos of All Armenians visited the Church of the Holy Resurrection and the Church of Holy Cross in Moscow, Russian Federation, March 3, 2004, (p. 170).
34. The Pontiff of All Armenians met with the youth on the Feast of Sarkis the Warrior, February 7, 2004 (p. 171).
35. **Stole Bearer HAYK BARSEGHIAN** - Memorial evening devoted to the memory of St. Vardan the Warrior and his Companions, February 19, 2004 (p. 172 - 174).
36. The Chaplain of the Armenian Armed Forces participated in the International Chaplaincy Conference, February 2-6, 2004 (p. 175).
37. On March 8 the Prison Ministry of the Mother See congratulated the imprisoned women on the occasion of the International Women's Day (p. 175).

## IN THE EASTERN DIOCESE OF THE USA

38. Ordination to the rank of Holy Priesthood in Richmond, February 21-22, 2004 (p. 176-177).

39. The meeting of His Eminence Archbishop Khajag Barsamian with the Ecumenical Patriarch of Greece, March 25, 2004 (p. 178).
40. The blessing of the foundation of the new church of the Charlotte (North Carolina) Armenian Community, March 28, 2004 (p. 179).

## AUDIENCE AT THE MOTHER SEE

41. Audience granted by His Holiness Karekin II to Nicholae Iordake, the Ambassador of the Republic of Romania to Armenia, February 4, 2004 (p. 180).
42. Audience granted by His Holiness Karekin II to Victor Rossi, the Ambassador of the Republic of Poland to Armenia, February 4, 2004 (p. 181).
43. Audience granted by His Holiness Karekin II to Vladimir Pryakhin, February 5, 2004 (p. 181-182).
44. Audience granted by His Holiness Karekin II to the delegation headed by Vladimir Chube, the Governor of Rostov, February 11, 2004 (p. 185).
45. Audience granted by His Holiness Karekin II to the delegation headed by Ali Yunessi, the Information Minister of the Islamic Republic of Iran, February 26, 2004 (p. 182-183).
46. Audience granted by His Holiness Karekin II to Boris Spaski, the 10th world chess champion, March 7, 2004, (p. 183).
47. Audience granted by His Holiness Karekin II to Nicholos Nicholosishvily, the Ambassador of Georgia to Armenia, March 9, 2004 (p. 183-184).
48. Audience granted by His Holiness Karekin II to Ferents Contra, the Ambassador of Hungary, March 10, 2004 (p. 184).
49. Audience granted by His Holiness Karekin II to Solomon Passi, the Minister of Foreign Affairs of Bulgaria and the current President of OSCE, March 17, 2004 (p. 184-185).
50. Audience granted by His Holiness Karekin II to Andrey Costin, "Vneshtorgbank" CEO and President, March 25, 2004 (p. 185).

51. Very Rev. Fr. Manuel Yergatian enters his eternal rest, February 11, 2004 (p. 186).
52. **VARDAN DEVRIKIAN** - The patriarch of Armenian Manuscriptology has departed from this life. (In memory of Artashes Matevosian who entered his eternal rest on February 3, 2004) (p. 187-188).

53. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during February - March 2004 (p. 189-191).

[1000 դր.]

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"**

ԴԱՄԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ